



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

847

82 1/2
4-78

82
4-78

11 JUN 2005
Yerevan


Արդիւնիք յատկացւում է «Եղբայրական օգնութեան».

ՄԱՐԻԱ ԿՈՐԵԼԼԻ

ՄԻ ՄԱՆԿԱՆ ՀՈԳՈՒ ՊԱՏՍՈՒԹԻՒՆ

ՎԵՊԻԿ

Ո՛չ մանուկների համար



Թաւուելից բարզմանեց

S. V.



Վաղարշապատ

Տպարան Մայր Արքուոյ Մըրոյ Էջմիածնի

1902

Доз. Цензур. 4 Октября 1901 г. г. Тифлисъ.

108650 - 42



ՀԱՅԱՍՏԱՆ
ԱԽՏՎԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

3550 - 78

Վեպիկս թարգմանութիւն և Ազգիացի
յայտնի գրող Մարիս Կորելլու The mighty
Atom (Հզօր չինէ) գլոբոյիկ:

Բնագիրն ունի մեջինակի մետեռեալ
ասխարհանը.

Այս գիրքն ուղղւում է

Այն մեծամիտ յառաջադիմականներին,
որոնք թէ իրենց վարդապետութեամբ և թէ օրի-
նակով նպաստում են

մանուկներին անհաւատ կրելու

անազնիւ գործին,

և որոնք, տարածելով Ֆրանսիայից փոխ առած
անաստուածական գաղափարները—

ձգտում են արմատախիլ անել մանկական հոգուց
տարրական դպրոցներում և միւս բոլոր գրագիտու-
թեան ակդերում

**ԱՍՏՈՒԹՈՅ ՃԱՆԱՉՈՎՈՒԹՅՈՒՆԸ և ՍԵՐ
Ա. ԱՍՏՈՒԹՅՈՅ,**

որ աղնիւ կեանքի միակ, ճշմարիտ հիմքերն են,

որով պատճառ են դառնում

մարդասպանութիւնից առաել զարհութիւնի
յանցանի.



Ա.

Դեւոնի հիւսիսային ափերին ամբողջ
օրը կատաղի փոթորիկ էր։ Միայն այժմ,
երեկոյեան դէմ, մռայլ երկինքը փոքր ինչ
պարզուել էր։ Ալիքները զայրացած գու-
ռում-գոշումով գալիս խիւռում էին ժայռեւ-
րին և փշրւում, բայց քամին զգալի չափով
հանգարտել էր—և արևմուտքում մի նեղ,
լուսաւոր շերտ արդէն ցոյց էր տալիս, թէ
դեռ ևս ամպերի յետեւ թագնուած արեւ-
գակն իսկապէս որտեղ պիտի երևար կրկին,
նախ քան վերջնականապէս մայր մտնելլը։
Հետզետէ բնութեան մէջ ամէն ինչ խա-
ղաղւում էր։ Անձրեից կուչ եկած ծաղիկ-
ներն այժմ աշխատում էին իրենց գետնին
կպած քնքոյշ ցողնիկները բարձրացնել, իսկ

Փոքրիկ մշահաւը ուրախ դուրս թռչելով
այն թփից, ուր փոթորկի ժամանակ ապաս-
տանարան էր գտել, եկաւ նստեց հարևան
տան լուսամուտի առաջ և նախ քան իւր
թաց թեկիները կթափհարէր, ուրախ
ճուղեց, կարծես կամենալով մի ուրիշն
իրեն ուրախակից անել։ Լուսամուտը բաց
էր և ներսը, բացի մի փոքրիկ մանուկից,
ոչ ոք չկար։ Նա նստած էր սեղանի մօտ,
առաջը դրուած էր մի բաց գիրք և մի
մեծ թերթ թուղթ, որի վրայ ինչ որ բան
էր նշանակում մատիտով։ Բառ երեսյթին
նա խիստ զբաղուած էր իւր գործով, բայց
հէնց որ թռչնիկը երգեց, նա խոյն
գլուխը բարձրացրեց և նայեց . . . Սակայն
այդ երկար շտեեց, նա շտապով կրկին
իւր պարապմունկներին գարձաւ և սկսեց
նորից կարդալ բացած գիրքը։ Մի ան-
բացատրելի յուղիչ, դաշտախորհուրդ բան
կար այդ գժկոյն մանկական դէմքի ար-
տայայտութեան մէջ . . . Հետզհետէ գանգ-
րահեր փոքրիկ գլուխն աւելի ու աւելի էր
մօտենում գրքին, քանի ցերեկուայ լոյսն
աղօտանում էր։ Մանուկը անընդհատ շա-
րունակում էր կարդալ և իւր նկատողու-

թիւնները դրել, —իսկ թռչնիկը, որ եկել էր
բացատրելու նորան, որչափ կարող էր, թէ
փոթորիկն անցել է, որ վաղն առաւօտեան
դեղեցիկ, հրաշալի առաւօտ պիտի լինի, իսո-
կապէս այնպիսի առաւօտ, որ բոլոր մանուկը-
ները սիրում են, վշտացաւ, որ իւր խաբրիկը
ընդունուեցաւ առանց հրծուանքի։ Մշահաւը
լուց, սկսեց իւր փետրիկները մաքրել, իսկ
ինքը բոլոր ժամանակ նայում էր մանուկին,
կարծես կամենալով հարցնել։ —«Ե՞զարմանկը,
անձրեն անցաւ, հրաշալի օդ է, ծաղիկները
անմահական հօտ են բուրում, երկինքը լու-
սաշաղախ, ամբողջ բնութիւնը հըճւում է,
իսկ այստեղ՝ Աստուծոյ կենդանի արարածը
նստած մի գրքի հետ (որը, ի հարկէ, Աս-
տուծ չէ ստեղծել) յոդնում և ձանձրա-
նում է և կարծես չէ էլ հասկանում, թէ
ինչ է ուրախութիւնը»։

Այն ինչ այդ ժամանակ արևմուտաքի
սոկեվառ, հրաշաղախ շերտը հետզհետէ
մեծանում և լայնանում էր, իսկ ամբողջ
երկինքի երկարութեամբ, իբր գերբնական
լոյսի շողեր, որ կարծես արքայութեան կի-
սաբաց գոնից են գուրս շողում, ուղղակի
ծովի մէջ էին թափւում լուսաթաթախ

ծիածանի շերտերը, —և յանկարծ, մթագնած
ամպի յետեւից, իւր ամբողջ լուսափայլ
փառքով երեցաւ ինքն արեգակը։ Մի
ակնթարթում ամէն ինչ կերպարանափու-
խուեցաւ։ Կօմիօրատին գիւղը իւր հինաւուրց
եկեղեցով, յարդածածկ փոքրիկ տնակներով՝
ողողուած այդ ոսկեհուր ճառագյթների
շողերով, մի կախարդական տեսք առաւ.
ճառագյթները հազար ու մի գոյն ստա-
ցան և այդ ուրախ ճառագյթներից մէկը
սպրդեց այն մթնած սենեակը, որտեղ նըս-
տած էր միայնակ մանուկը և իբրև լուսա-
փայլ սրաթե հրեշտակի օրհնութիւն, ան-
ցաւ նորա փոքրիկ գլխի վրայով։

Հէնց այդ բոպէին դուռը բացուեցաւ
և ներս մտաւ մի երիտասարդ՝ գլխարկը
ձեռին։

—Ի՞նչ, դեռ դասերի հետ ես, ասաց
նա կարեկցարար Բաւական է, դէն ձգիր
այդ բոլորը։ Փոթորիկը բոլորովին հանդար-
տել է, դնանք, զբոսնենք նաւակով։

Լիօնէլ նայեց նորան շուարած և մին-
չև իսկ երկիւղով։

—Բայց աս թոյլ կտայ, միտոեր Մօնտ-
րոզ։

—Ես նորան չեմ հարցրել, փոքր ինչ
խստութեամբ պատասխանեց Մօնտրօզը
ես ասում եմ, որ կարելի է, և ոչ միայն
կարելի է, այլ նոյն իսկ անհրաժեշտ է։
Ես դեռ ես քո դաստիարակն եմ, և իմաւ-
ցիր, որ ինձ պէտք է լսես և ոչ թէ նո-
րան . . . և նա, հանագով, մատը շարժեց
նորա վրայ։

Երեխան ժպտաց և ելաւ տեղից։

—Այս բոլորը մի քիչ դժուարութեամբ
եմ կարողանում միտքս պահել, ասաց նա,
ցոյց տալով գիրքը և կարծես ներողութիւն
ինդրելով ուսուցչից։ Ի հարկէ, ես ինքս եմ
մեղաւոր. բայց չեմ կարող չասել, որ այս
ամէնը շատ ձանձրալի է, իսկ որ գլխաւորն
է—անսպէտք է։ Օրինակ, ինչին է պէտք,
որ յիշեմ, թէ 1054 թուականին Անդլիա-
յում մի բանի եպիսկոպոսի նրբան հարկ
էին վճարում։ Ճշմարիտն եմ ասում, ինձ
համար բոլորովին նշանակութիւն չունի և
կարծում եմ, որ միշտ էլ ոչ մի նշանակու-
թիւն չի ունենայ։ Ի՞նչ կապ ունի դա
կեանքի հետ։

—Ոչինչ, ասաց ժպտալով Մօնտրօզը,
բայց կրթուած մարդը պէտք է ամէն բանի

մասին գաղափար ունենայ։ Սակայն, հարակերի մասին էլ մի մտածիր, մոռացիր ըստ եպիսկոպոսներին և եթէ կուզես, նոյն իսկ բոլոր թագաւորներին։ Մի վասդ նաև յիր, տես ինչ խղճալի արտայայտութիւն ունիս . . . ինչ կասես, չգնանք միտրիս Պէջնի ագարակը մի բան խմենք։

—Այ ինչ լաւ բան կլինի, զուարթաւդին գոչեց մանուկը։ Բայց առաջ նաւակով զբօսնենք, աւելացրեց նա, շուտով արել մայր կմոնի, իսկ ես այնպէս սիրում եմ գիտել արեի մայր մտնելը ծովի վրայից։

Մօնտրօվը ոչինչ չպատասխանեց և ընակաւ տիսուր մոռրմունքի մէջ, հետեւլով երեւային, որ առանց շտապելու, ճշտապահութեամբ և կարգով ծալում, ժողովում էր ցրուած տետրակներն ու դրգերը։ Վերջառ պէս ամէն ինչ հարկաւոր սարդ ու կարդի բերելով, Լիօնէլը վերցրեց իւր գլխարկը, որ կախուած էր մեխից, փատահութեամբ մօտեցաւ երիտասարդ ուսուցչին և ժպտաւով ասաց։

—Դէ՞հ, պատրաստ եմ։

—Դէ՞հ, պատրաստ եմ, հեղնեց նորան Մօնտրօվը և դիմին գնելով իւր յարդէ

գլխարկը, սանդուղներից ուրախ-ուրախ իւշաւ։

Լիօնէլը կարծես փոքր ինչ վարանելով էր հետեւում նորան։ Երբ նոքա մտան ստուերախիտ ուղին, որ պարտիզից ուղիղ մեծ ճանապարհն էր տանում, նոցա յետեխց ձայն տուեց մի մանկամարդ կին, որ կանդնած էր պատշգամբում և նայում էր ալ-կարմիր, հիւսկէն ծաղկող բաղեղների միշտից։

—Միտր Մօնտրօվ, այս ինչ է, ակնյայտ նի բողոք։ Այդ շատ լաւ է։ Միշտ պէտք է անել այն, ինչ որ մեղ արգելում են անեւլու։ Մնաս բարե, Լիլիա։

Լիօնէլը վերե նայեց, ժպտաց և գրլ-խարկը բարձրացրեց։

—Մնաս բարե, մայրիկ։

Մանկական քնկուց ձայնը առնելուն պէս մի քնքութիւն անցաւ ծաղիկների միշտից նայող գեղեցիկ գէմքի վրայով, որ և արագ ծածկուեցաւ։

Մայր մտնող արեի ճառագայթները հրեղէն լուսով պատել էին Կոմիօրտինի լեռներն ու անտառները, երբ բիւրաւոր աղամանդների պէս փայլվլուն ծովի վրայ

Երևեցաւ փոքրիկ նաւակը, որ արտադ ոլաւ նում էր փրփրացող ալիքների վրայով։ Թիշակներն առել էր Մօնտրոզը և գուարթ ու անվեհեր թիսավարում էր։ Դեկի մօտ տեղաւորուել էր Լիօնէլը։ Նորա մատածկոտ աչերը մի ինչ որ յաղթական ուրախութեամբ հետևում էին իւրաքանչիւր ալիքի, որ զայրոյթով յարձակում էր փոքրիկ մակոյկի վրայ և խորտակուելով՝ բազմերանդ ցայտերով ցրւում։

—Մ-ը Մօնտրօզ, բացադանչեց նա, լաւ է, չէ՞ հրաշալի է։

—Այո, այո, պատասխանեց Մօնտրոզը, ոյժ տալով թիսակներին։ — Աեր ամբողջ կեանքն էլ հրաշալի է, միայն թէ պէտք է օդտուիլ գիտենալ նորանից։

Լիօնէլը չլսեց այդ նկատողութիւնը, նորա ուշադրութիւնն ամբողջապէս գրաւուած էր ջրխոտի երկար թեկով, որ ամեն կերպ աշխատում էր բռնել։ Շատերին այդ լալուն թելը շատ անդուր բան կթուար, բայց Լիօնէլը ըմբռնեց նորա ամբողջ գեղեցկութիւնը, հարխւրաւոր մանրիկ խեցիկ ներ փաթաթուել էին նորան և նոցանից իւրաքանչիւրը՝ փխրուն, քնքոյշ, գեղեցիկ

որպէս մարդարտի գաղտակուր, իւր մէջ բովանդակում էր մի քնքոյշ կեանք, նոյն չափ քնքոյշ, որքան և ինքը . . .

Այդ կենդանի մարմնակաղմների գաղտնախորհուրդ կատարելութիւնը մտածելու առատ նիւթ էր տալիս . . . Եւ, որչափ մանուկը խորագնին էր գիտում այդ թելուկի գեղեցկութիւնը, որ հիւսել էին ալիքները, այնչափ և նորա մանկական հոգին պատում էր անտեսանելիի, անթափանցելիի ստուերը . . . և, այն տանջող, զարհուրելի հարցը, որ այնքան գիտնականներ գերեզման են տարել իրենց հետ առանց լուծելու՝ այժմ չարատանջ կերպով տիրում էր և նորան . . . Բոլոր արարածների նախապատճառը, նոպատակը, խորհուրդը, —օրինակ, գոնէ այս մի հատ, առանձին վերցրած, և ոչ մէկին պիտանի խեցիկների հրաշալի աշխարհը, ինչպէս պէտք է թափանցել այնտեղ . . . ինչպէս կարելի է բացատրել . . . Եւ փոքրիկ մանուկը ընկաւ մտածմունքի ծովի մէջ, և անդիտակցաբար նորա հոգին լցուեցաւ այն անկյոյս թախիծով, որ արտայայտուած է ժողովովի մէջ։ —Vanitas vanitatum, —Ունայնութիւն ունայնութեանց։

Այն ինչ երկնքում գոյները յաջորդում
էին մէկը միւսին . . . ծովի միւս երեսին,
կարծես, արևն ու երկիրը միախառնուել
էին,—յանկարծ պայծառ լուսաւորութիւնը
խաւաբեց—և մեզմիկ մժնշաղը մտաւ իւր
իրաւունքների սահմանը՝ խորհրդաւոր կիսաւ
միգով պատելով ափերը և հեռաւոր լեռա
ները . . . Մօնտրօվը վայր գրեց թիակները
և հրճուանքով զմայլում էր այդ գեղեց
կութեամբ, որ կարծես, յիշեցնում էր նու
րան իւր հայրենիքի՝ նոտանդիայի առաւել
հրաշալի գեղեցկութիւնը։ Ապա նորա հայ
եացը կանգ առաւ իւր փոքրիկ ուղելիցի
վրայ, որ գեռ ևս զբաղուած էր իւր նոր
գտած գանձի զննութեամբ։

—Ի՞նչ է պատահել, Իիօնէլ, հարցը եց
նաև

Մանուկը արագ գարձաւ գէպի նաւ

—Հազարաւոր մանրիկ էակներ, որոնք
ապրում են իրենց սեփական հրաշակերտ
տնակների մէջ, ասաց նաև ժամանես, —նաև
յեցէր. և նա բարձրացրեց իւր գիւտը։ Զէ
որ սա մի ամբողջ քաղաք է, այնպէս չէ։
Եւ ով գիտէ, գուցէ նորա մանրիկ բնաւ
կիչները այնչափ մեծ կարծիք ունին իրենց

մասին, որչափ և մենք մեր մասին։ —Բայց
յանկարծ ժպիտն անհետացաւ նորա խոր-
հուն գէմքից։ Պուր ինչ էք մտածում այս
մասին, մը Մօնտրօվ, ես կարծում եմ, որ
մենք մի առանձին մեծ նշանակութիւն չու-
նինք տիեզերքում, քանի այս մանրիկ էակ-
ները։

Մօնտրօվը ոչինչ չպատասխանեց կո-
րան։ Նա շտապով հանեց ժամացոյցը գըր-
պանից և բացագանցեց.

—Ո՞րչափ ուշ էւ էւ, սիրելիս, քո փոք-
րիկ բարեկամներիդ յետ ուղարկիր իրենց
բնական միջավայրը, և այժմինձ դլուխ կոտ-
րելու հարցեր մի առաջարկիր, այլ աւելի
լաւ կանես թիակներն առնես։

Իիօնէլը ուրախութիւնից շիկնեցաւ,—
բայց նախ քան թիակները կառնէր, նա
հոգատարութեամի ծովային բոյսը յանձնեց
փրփրացող ալիքներին, որոնք հէնց այդ րո-
պէին մի առանձին քնչշութեամի մակոյկնն
փարուեցան։ Ոստիկը հանդարտ լողում էր
ալիքների հետ, Իիօնէլը աչքերով հետե-
ւում էր նորան և եռանդով սկսեց թիավա-
րել։ Նա թիավարում էր իւր անոյժ բա-
զուկների բոլոր զօրութեամբ, իսկ Մօնտ-

բօղը, համաշափելով իւր ոյժերը թոյլ մանական ոյժերին՝ հազիւ շարժում էր թիսկները, բայց արդէն մակընթացութեան ժամանակ էր և յաջող ալիքները արագութեամբ առաջ էին մղում փոքրիկ նաւակը, լիօնէլը բոլորովին կաս-կարմիր էր կտրել, նորա աչքերը փայլում էին, այնպէս որ երբ նա ափ ցատեկց, ուրախ-անհոգ, կենսաթրթիու տեսք ունէր, մի արտայայտութիւն, որ յատուկ է բոլոր մանուկներին—մինչև իսկ նորա փոքրիկ ճակատի կնճիռները համարեա թէ բուլորովին անհետացել էին . . .

—Այ, հիմա մերը մեղ կհասնի, երբ տուն գնանք, ուրախ քրքիջով բացագանչեց լիօնէլը, ցոյց տալով մթագնած երակնքը և իւր ջրացայտ զգեստները:

—Ինչ որ լինելու է՝ ինձ կլինի և ոչ թէ քեզ, ասաց անխոռվ ձայնով Մօնարօզը իսկ որովհետեւ սա իմ վերջին երեկոն է, ուստի և ինձ համար ոչինչ նշանակութիւն չունի:

—Չեր վերջին երեկոն, ախ, ոչ, անակարելի բան է: Դուք այդ չեկը կամենում ասել:

—Հանդստացիր, հոգիս, քնքաբար նաւ-

յելով նորան, ասաց Մօնարօզը գնանք, թէյ խմենք, ես կաշխատեմ ամէն բան ոլարզել քեզ: Տեսնում ես, իմ փոքրիկ, մեր կեանըը այս ծովի վրայ կատարած զրօսանքի պէս է,—ամէն ժամանակ հանդիստչէ, իսկ մենք պէտք է կարողանանք զապել նորան և փոթորկի ժամանակ . . . Քիչ բան է պատահում կեանքի մէջ, ամէն տեսակ վիշտ հանդիպում է, երբեմն ստիպուած ենք լինում բաժանուել մեղ համար ամենաաթանկադին բանից,—բայց երբէք չպէտք է յուսահատուել: Լիօնէլ, իմ սիրելիս, ինձ վիշտ մի պատճուիր, այդպէս մի վշտանար:

3530-28

Լիօնէլը դեռ ևս կանգնած էր լոիկ—նորա գէմքը նորից գունաթափուեցաւ, իսկ փոքրիկ բերանը նորից ընդունեց իւր սովորական լուրջ արտայայտութիւնը:

—Գիտեմ, ծանր արտասանեց նայ ես բառ առ բառ գիտեմ այն բոլորը, ինչ որ գուք կամենում էք այժմ բացարել ինձ, մոք Մօնարօզ: Հայր ձեղ պաշտօնից մերժեց: Եւ այդ բանն ինձ չէ զարմացնում—ես սպասում էի, որ այդ բանը շուտով կը պատահի: Դուք իսկամ բարի էք գէպի ինձ, իսկամ ներողամիտ—այ թէ ինչ . . . Ոչ, ես



չեմ լայ, ճշմարիս եմ ասում չեմ լայ, ասում էր նա, ծածուկ արցունքները սրբելով, դուք այդ բանը մտքներովդ չպէտք է անցնէք,—ձեր նկատմամբ՝ ես ուրախ եմ, որ դուք հեռանում էք սյստեղից, բայց ես ինձ եմ խղճում, շատ, շատ եմ խղճում։ Ես այժմ ամէն բոպէ ինձ խղճում եմ,—բայց չէ որ սա շատ մեծ փոքրոգութիւն է։ Մարկոս Առելիոսն ասում է, որ փոքրոգութեան ամենավայթաբ տեսակը՝ ինքն իրեն խղճան է։

—Ա՛յս, թաղ այդ Մարկոս Առելիոսին, դայրոյթով բացագանչեց Մօնարօղը։

Լիօնէլը ժպտաց մի ոչ մանկական, թախծալից ժպտով։


—Լաւ, այժմ գնանք, ես պատրաստ եմ, ասաց նա։


Հանդարս քայլերով նոքա սկսեցին սարը բարձրանալ. երիտասարդը դնում էր թեթև, հաստատուն քայլերով. փոքրիկ երեխան դժուարութեամբ էր փոխում իւր յոդնած ստները։ Նոքա առաջ էին դնում լուռ, իւրաքանչիւրը խորառուղուած էր իւր մուայլ մտածմանքների մէջ, կարծես, զգալով որ մի չարագուշակ բան է պատահելու . . .

Նոքա ոչ մի խոռը չեն փոխանակել, երբ յանկարծ, յայտնի չէ որտեղից, հորիշդնի յետեւ թագնուող արեկ վերջն հրաժեշտի մի ճառագայթ հրափայլ լուսաւորեց երկիրը, ծովի ու երկինքն, ու նոյն պէս արագ չքացաւ . . . Նոքա նոյն խակ չնկատեցին այն գեղեցկութիւնը, որն ուրիշ անգամ, անշուշտ, կղրաւէր նոցա, հրճուանք կպատճառէր։ Կարելով դիւզի գլխաւոր փողոցը, նոքա ուղղակի դիմեցին դէպի մի փոքրիկ, յարդածածկ տնակ։ Այդ տնակը վերից-վար ամրողապէս ծածկուած էր բաշղեղներով, վարդերով, յասմիկներով, անուշաբոյր դաղձով, որտնց միջից՝ պարփակուած կարմիր ջրկոտինով, համեստութեամբ դուրս էր նոյնում։ Հետեւետ վերտառութեամբ մի ցուցանակաղիր.

Ալարին դա Պէյն
Թարթ ձուեր լաւագոյն աեր,
Թաթայ կարկանդակ.
Թէյ.

Հէնց այդ տնակն էլ մտաւ Մօնարօղն իւր փոքրիկ ուղեկցի հետ։





Բ.

Յսյն իսկ երեկոյեան մ-ը Զօն Վելիս կուրտը, ճաշից յետոյ, որ շատ ուշ էին վերջացրել, աղանդերի էր նստած իւր հիւր սըր Զարլո Լասուելի հետ։ Ա. Զարլո երիւ տասարդ, գեղեցիկ տղամարդ էր, առանձ նապէս ոչ մի բանով չէր հետաքրքրւում, և հասարակութեան մէջ ամէնքին յայտնի անձն էր։ Նա մօտերս էր ծանօթացել Վելիսկուրտների հետ, բայց արգէն տան բարեկամ էր համարւում։ Երբ Վելիսկուրտ ները «սեղօնի» ժամանակ աեզափոխւում էին իրենց՝ Լօնդոնի հոյակապ ապարանքը, Լասուել ժոմանակ-անժամանակ նոցա մօտ

էր վազում և միշտ էլ ցանկալի հիւր էր։ Բայց նորա Կօմմօրտինում յանկարծակի երեալը բալորովին անսպասելի էր, որով հետեւ ամէնքն էր, ինչպէս ինքն էր ասում, կարծում էին՝ թէ նա իւր սեփական կալուածքն է գնացել։ Հենց այդ բոպէին էլ մ-ը Զօն Վելիսկուրտը ձեռք էր չառել նորան, բաւական անշնորհը կերպով ծաղրելով նորա անհաստատաթութիւնը։

Այս-ու, տատանների միջից արտասահնեց սըր Զարլոը, —այդպէս է իմ ընաւորութիւնու երբէք նախօրէքին չգիտեմ, թէ ինչ պիտի անեմ հետեւեալ օրը։ Առ կատարեալ ճշմարտութիւն է, հաւատացնում եմ ձեզ։ Այսպէս պատահեց, ընկերներիցս մէկը հրաւիրեց մի քանի օր հիւր լինել Վօրմուտ դգեսկում, —ուստի ահա այն միակ պատճառը, որ ես այսուեղ եմ այս բոպէիս։

Միարիս Վելիսկուրտը, որ վազուց էր ելել սեղանից և նստած էր բաց լուսաւմուտի մօտ բազմոցի վրայ, այդ բոպէին գարձաւ և ժպտաց . . . նորա ժպիտը հրաշալի էր—խոշոր փայլակինացայտ աչքերը, զարմանալի ճերմակ տատանները այդ ժպիտը գարձնում էին մի շլացուցիչ հրապոյր, որ

կարող էր յազմահարել և դիմթել խրաս
քանչիւք յանկարծակի բռնուազիւ:

—Անշուշա, այնաեղ՝ վօրմատում, ձեզ
մօտ ամենընտիր հասարակութիւն է,—հեզա
նօրէն նկատեց մը վելլակուրաը, խնամքով և
ամենայն հսգատարութեամբ կճպելով տկու
զինները, սր նուրբ քաղաքավարութեամբ
բռնել էր իւր սպիտակ, դաւ խնամած ձեռա
ների երկայն մատներով:—Երեխ բարսնից
ցած մարդ չի լինի—հա, և նա ծիծաղեց
հազիւ լոելի ծիծաղով:

Սըր Զարլոր իւր յուլաբար ցած թաշ
զած կիսափուփ կոսկերի միջից նորա վրայ
մի հայեացք ձգեց, որ անշուշա նորան սար
սուռ կպատճառէր, եթէ նկատէր, —արհաւ
մարհանք, հեղնութիւն, կոսակութիւն, ան
հուն տաելութիւն, —ահա ինչ էր ամիսու
փուած այդ թռուցիկ հայեացքի մէջ, սր մի
վայրկեան նորա դէմքը լուսաւորեց ինչոր
շարագուշակ վայլով . . . Այդ հայեացքը
մարեց նոյն արագութեամբ, ինչպէս և
բռնկուել էր, և նորա անապրեր, անհոգ
պատասխանի մէջ չէր կարելի նոյն իսկ
գմբոհութեան ստուեր նկատել:

—Ճշմարիան ասած, դժուարանում եմ

որոշել: Գիտեմ, որ այնտեղ կայ մի նկարիչ,
այն սնապարծներից մէկը, որոնց «ծագող
տաղանդ» են անուանում: Նորա «ամբարւ
տաւանութեամբ» չափ չկայ: Դղեակում մի
ինչոր որատուէր է կատարում; ի հարկէ ոչ
մի առնչութիւն չունի մեզ հետ, բայց և
այնպէս նա առպում է մեզ հետ և ոչ ծաւ
ուաների: Այսուհետեւ, ինչպէս սովորութիւնն
է, յարդոյամեծար այրիներ իրենց օժոտա
գուրկ, սիրունիկ աղջիների հետ, «յառա
ջաղիմականներից» երկու-երեք ոչ-տղեղ,
երիտասարդուհիներ, որոնք բերել են իրենց
հետ և իրենց հեծանիփեները և առաւօտից
մինչև երեկոյ չափչում են բոլոր շրջակայրը,
յետոյ մի քանի նշանաւոր, խելքները ջրիկցած
լորդեր: Ինչպէս տեսնում էր հրապուրիչ շատ
քիչ բան կայ . . . Այսօր առաւօտեան թէյի
ժամանակ այդ հասարակութիւնը ինձ կատարելապէս ապշութեան վիճուկի հասցեց, —
ուստի և իմանալով, որ գուք այսաեղ էր,
վճռեցի մի փոքր պայտ յանձն առնել՝ ձեզ
այցելելու նպատակով:

—Խիստ սիրալիր է ձեր վարժունքը,
քաղաքավարութեամի սպատասխանեց մը-
վելիսկուրաը, —բայց ներեցէր իմ հետա-

ըլլքիսութեանս հարցնելու, ի՞նչպէս խմա-
ցաք, որ մենք այսուեղ ենք:

Սըր Զարլսը փոքր ինչ կծեց իւր շըր-
թունքները, որ ծածկել կարողանաց հաղիւ-
առփայլող ժողիսը, և անվտութութեամբ
պատասխանեց:

— Ե՛, այսպիսի յետ ընկած անկիւննե-
րում, ի հարկէ, ամէնքն ամէն ինչ գիտեն-
եւ միւս կողմից, երբ ամբողջ Կօմիօրախնի
միակ գեղեցիկ և ընդարձակ տունը դուք
էք վարձել, ապա ուրեմն չեք կարող սպա-
սել, որ անտես կմնաք: Յիբառի որչափ ոի-
րուն է այս հինաւուրց տունը:

— Կատարեալ զօրանոց, հակասեց մո-
վելիսկուրտը, որ ասալին անդամն էր մաս-
նակցում խօսակցութեան և, ակնապիշ նա-
յելով իւր ամուսնուն, ասաց, բոլորավին
խնաւ, խղճուկ և անտանելի կահաւորու-
թեամբ: Անշուշտ, կարելի էր գեղեցիկ զար-
գարել, եթէ մարդ յիմորանաց և մի քանի
հազար ֆունտ ծախսէ նորա վրայ, բայց
այս բոսկէիս չեմ կարող ինձ հաշիւ տալ,
թէ ինչն ստիպեց Զօնին մեր ամառուայ
կացարանի համար մի այսպիսի զգուելի որջ
ընտրել:

— Դուք շատ լաւ գիտեք, թէ ի՞նչն
ստիպեց ինձ ընտրելու, ի հարկէ, ես չեի
մտածում ոչ իմ և ոչ էլ ձեր ճաշակի մա-
սին: Լիօնէլին անհրաժեշտ էր ծովային օդ,
— ես ցանկացայ սովորական ծովային լողա-
րանների ազթուկ-ժխորից և իմ որդու հա-
մար զանազան երեխանների ոչ-ցանկալի ծա-
նօթութիւններից ազատուել, որ կարող էին
ընկերանալ նորա հետ, և Կօմիօրախնում
տուն վարձեցի յատկապէս նորա համար,
որ համարեցի, և այժմ ևս համարում եմ,
թէ Կօմիօրախնը բոլորովին համապատաս-
խանում է իմ բոլոր ողահանջներին: Կօմ-
մօրախնը բոլոր երկաթուղային գծերից
դուրս է, ուստի և հնարաւոր է բոլորովին
առանձնահանալ այսուեղ և ոչինչ չի խանդա-
րիլ Լիօնէլի ամառնացին պարտապմունքների
կանոնաւոր ընթացքը՝ հմւտ գաստիարակի
զեկավարութեամբ:

Այս բոլորը նու ասաց որոշակի, ծանր,
շեշտելով իւրաքանչիւր բառը: Մաս վելիս-
կուրտը անհամբերութեամբ շուռ եկաւ և
սկսեց լուսամտից նայել երեսի վրայ ձգուած
և մացառապատ պարտիդին, ուր առաւօտ-
եան երկար անձրիից թրջուած ծառերի

խիստ սաղարթը նոր հեղիկ ելնող լուսնեակիր լուսով տեղ-տեղ արծաթի փայլ էր ստացել . . . Տիրեց լուսթիւն, որ ընդհատեց վերջապէս ոքր Զարդար:

—Ճշմարիտ է, հարցրեց նա, որ մտագիր էք բաժանուել Մօնարօզից:

—Ես արձակում եմ պ. Մօնարօզին, պատասխանեց Վերիակուրովը և նորա փակ շրթունքների անդուր արտայայտութիւնն առաւել ես անդուր գարձառ: —Մ-ը Մօնարօզին այդպիսի սրաշտօն ստանձնելու համար չոտ երխասարդ է, շատ ինքնափառհանական գուազացիների ընդհանուր ընադին է, խիստ մեծ կարծիք անենալ իրենց մասին: Նա խելացի է, —գորանից զրկել չեմ կարող նարան, —բայց նա Լիօնելին հարկաւոր չափ չէ վարժեցնում աշխատանքի, և նա ինքն էլ մարմնամարդական վարժութիւններին աւելի է դերագասում, քան դասական գիտութիւնները . . . Իսկ ես պինագէս եմ համոզուած, որ Անդիայում խիստ մեծ տեղ են տուել այդ խաղերին, և չեմ ցանկանում, որ իմ որդու ամիսով իսելքը կենդրունացած լինի միայն նորա մկանների մէջ: Նորա մտաւոր ընդունեակութիւնները պէտք է զարդ անան:

—Ի վեսա նորա մարմնական զարդացած մնն, ընդհատեց նորան ոքր Զարդար, —Միւթէ անհնար է համաչափ զարդացնել թէ մէկը և թէ միւսը:

—Այսպէս է իմ մտադրութիւնս և այդպէս է խմ նպատակն, համդխաւոր կերպով ասաց մ-ը Վելիակուրովը, —բայց մ-ը Մօնարօզը՝ նչ խր խառնուածքով, նչ խր գաստիարակութեամբ համապատասխան չէ խմ ցանկութիւններս իրազ ործելու համար Խաղերին այն է, որ նա վերջնականապէս հրաժարուեցաւ ասաջնորդուիլ իմ կազմած ծրագրով, որով որոշում էի որդուս ամոռն այցին պարագաներների սահմանը և համարձակուեցաւ ասել ինձ, —լսում էք, ինձ, —որ Լիօնելին անկարող է անցյնել մի այդպիսի գասընթաց, որ անսպայման կերպով անհրաժեշտ է մանկան համար կասարեալ համդխաս: Կափած չկայ, որ այդ բանը պնդելով ի նկատի ուներ և խր սեփական յարմարութիւնները . . . ի վերայ այսր ամենայնի, ես լսեցի, որի համար շատ եմ ցաւում, որ Մօնարօզը մինչեւ այժմ նախապաշտուած հաւատում է քրիստոնէութիւն ասուած առասպեկտաբանութեան, հաւատում

Ե մի ինչ որ մտացածին Աստուծոյ՝ Տիեզ
զերքի Արարչի և վերջապէս հաւատում է
հոգու անմահութեանը . . . Այստեղ մը
Վելիսկուրան արդէն չկարողացաւ ծիծաղը
զսպել: «Ի հարկէ, այս բոլորը խիստ անաեզի
բաներ են, մինչև այն աստիճան, որ զայշ
րոյթ խոկ չեն շարժիլ, բայց և այնպէս
մանկան գաստիարակութեան գործում դը
ժուար է չափազանց շրջահայեաց, զգոյշ, լիւ
նել . . . սակայն ցաւում եմ, որ ես վազու
րօք չեի լսել այդ Մօնտրօզի վայրենի, յեւ
տագէմ հայեացըների մասին»:

Մ-ը Վելիսկուրան նոյեց ժամացոյցին:
—Կուերէր ինձ, եթէ ես մի քանի բու
պէով թողնեմ ձեզ, տաց նա տեղից ել
նելով,—այժմ ժամը ինն է, և ես պատուի
րել եմ Մօնտրօզին դալ ինձ մօռ՝ առանձ
նասենեալս այս ժամին, որ ստանայ իրեն
հասանելիք ռոճիկը: Վազը՝ կանուխ նա
մեկնում է առաջին ճեպակառքով:

Միստրիս Վելիսկուրան նոյնպէս ելու
և սիդաճեմ, շնորհալի քայլուածքով, առանց
շտապելու, դիմեց դէսի դռւռը:

—Գնանք ինձ մօռ՝ հիւրասենեալը, որը
Զարլս, կըրուցենք փոքր ինչ միտախն,—

դալիութեամբ ասաց նա, նայելով նորան
իւր ուսերի վրայից և պարզելով իւր դիւ
թիչ ժպիտներից մէկը . . . Ես կարծում եմ,
որ դուք շատ ել չեք շտապում Վօրմուտ
դասնալ:

—Ո՞չ, այժմ չեմ շտապում, պատառ
խանեց նու ժպտապէմ, և հետեւց նու
րան . . .

Անցնելով ընդարձակ, դատարկ դահն
լիճով, մտան վեղեցիկ, ճաշակով զարդար
ուած մի սենեակ, որի մեծամեծ լուսա
մուաներից հրաշալի տեսարան էր բացւում
դէսի շրջակայրը:

Մ-ը Վելիսկուրան անցաւ հակառակ
կողմը և մտաւ մի փոքրիկ որջիկ, որ առաջ
մտան էր, խոկ այժմ առանձնասենեակի
պէս մի բանի էր վերածուած: Այստեղ
Մօնտրօզն արդէն սպասում էր նորան:
Մօնտրօզը շատ դժգոյն էր և նորա շրթունքը
ներն ամուր սիմուած էին: Անցնելով նորա
մօսից, Վելիսկուրան անփութութեամբ գը
լուխ տուեց, ապա նստեց իւր գրասեղանի
առաջ, որից հանեց չեքի տեսրը, և չեքի
վրայ տւելի մի խոշոր թիւ դրելով, քան
պիտի համնէր Մօնտրօզին՝ նորան տուեց

թերթիկը, Երիտասարդը նայեց թերթիկին
և ամրազնողէս շառագնեցաւ:

— Ենորհակալ եմ ձեղնից, մշտ վելիս
կուրտ, — առաց նա, և ես խոնարհաբար
կինդրէի տալ ինձ իմ հասնելիք գումարը
միայն, առանց մի սև փող տեղացնելու:

— Ենչպէս, հեղնօրէն բացագանչեց վեշ
լիսկուրտը, շոտանդացին և հրաժարում է
տեղորդ վարձատրութիւնից: Աշմարիս, չը
լինի թէ աշխարհի վերջը հստել է:

Մօնորոզը բոլորովին սպրդնեց, բայց
կարողացաւ զատել իրեն:

— Մատածեցէք շօտանդացիների մտուն
ինչ որ կամենաք, առաց նա անվրդով: —
Նորտ կարող կլինին ապրել առանց ձեր
բարի տրամտգբառթեան ևս, և, անշոշտ,
կարիք էլ չունին, որ ես նոցա գատը պաշտ-
պանեմ: Ես հրաժարում եմ ընդունել այն,
ինչ որ չեմ վաստակել, — իսկ դա՝ մի հրաշք
չէ: Դէպի ձեզ ոչինչ վրդովմունք չեմ զգում
ես, — ինձ պաշտօնից մերժելով, գուք միայն
իմ սեփական դիտաւորութիւնու շտագեց-
րիք — ես ոյլ ես այստեղ երկար մնալ ան-
կարող էիր չեմ կամենում յանցակից լինել
սեփական որդու սպանութեան եղերնաւ-

դործութեան մէջ:

Եթէ փաքրիկ սենեալիր մէջ յանկարծակի
մի ոռւմը պայթէր, մ-ը Վելիսկուրտը սու-
րանից առաւել ինք զինքը չէր կորցնիլ . . .
Նա վեր թռաւ իւր աթոռից և թափով
յարձակուեցաւ Մօնորոզի վրայ:

— Ի՞նչ, ի՞նչ, կատաղութիւնից չնշառ-
սառ, գոզգոչ ձայնով բացագանչեց նա, —
որդես-պահութիւնն, կարծեմ այդ առա-
ցիք: Որդես-պահութիւնն:

— Կարող եմ այդ խօսքերը նորից
կրկնել, անվրդով առաց Մօնորոզը, բայց
նորա երկնադոյն աչերը փոյլեցին ինչ որ
չարտուշակ փայլով և գժգոյն շրթունք-
ները դողում էին ջղաճգաբար, — որդե-
սպանութիւնն . . . Միաներդ սփահեցէք, լաւ
մտածեցէք այդ մասին: Դուք միայն մի
զառակ ունիք, սրասուական երեխայ, սիրու-
զեղ, կարող ընդունակ, — ընդունակ վերին
աստիճանիւ: Եւ դուք նորան վչացնում էք
ձեր դաժան կարգերով, ձեր չափազանց
վեռասկար կրթական «եղանակով»: Դուք
զրկում էք նորան այն բոլոր զուարծութիւն-
ներից, որ անհրաժեշտ է նորա առողջու-
թեան համար, դուք նորան չեք տալիս հառ-

սակալից ընկերներ, դուք նորա մատաղ կեանքն այնպիսի շրջանակի մէջ էք կաշ կանգել, որ այդ կեանքն անվերջ տանջանքի բով է դարձել, և ես պնդում եմ, որ դուք նորան սպանում էք, գուցէ դանդաղ, բայց անխուսափելի կերպով։ Ամէն մի բժիշկ, որ փոքր ի շատէ հասկանում է իւր գործը՝ կհաստատի այն, ինչ որ ես այժմ տառմ եմ ձեզ, — այսինքն իւրաքանչիւր բժիշկ, որի համար ճշմարտութիւնը թանդ է վարձատրութիւնից։

Միստեր Վելիսկուրալ յետ իւր նոր ստորագրած չէքը, բացեց իւր գրասեղանի միւս աչքը, այնուեղից հանեց մի կոյտ թղթագրամ և սկի և, համբելով, շպրտեց սեղանի վրայ։

— Ահա ձեր գրամը, — առեք և այսուհետեւ ձեր հետքն ու փոշին չերևայ այսուեղ, լսում էք, ասաց նա զսպած բարկութիւնից խոպստած ձայնով։ Եւ եթէ միւս անգամ կհամարձակուիք իր դաստիարակ առաջարկել ձեզ որ և է ջենուլմէնի որդու համար, սովորեցէք ճանաչել ձեր չափը և սանձել ձեր անիծեալ շոտլանդական դուռողութիւնը։ Իսկ այժմ, առանց ոչ մի

խոռք իսկ արտասանելու, — դհւրս այստեղից։ Գլուխը սիդօրէն յետ ձգած, Մօնտրոզը նայում էր իւր «նախկին տիրոջն» արհամարհ հանքով, ըմբշամարտի փորձիչ հայեցքով, որ սպատրաստում է կոռուի բռնութիւն, — նորա աչքերը փայլում էին ովակալութեամբ, ձեռքն ինքն իրեն բարձրանում էր, — բայց յանկարծ մի ինչոք թանկագին էակի յիշ շողութիւն անցաւ նորա մոքսվ... նա զըստեց իւր անմիտ կատաղութիւնը և լսու դուրս գնաց սենեակից։

Զօն Վելիսկուրալ դիւական քրքիջ արաձակեց։

— Ա՛յս, դու լսիրշ լակոտ, քրթմնիաց նա, և պէտք է հաւատաս, որ այսպիսի արարածները ստանում են համալսարանական վկայագիրներ և ամէն տեսակ յանձնարարականներ։ Զարմանեք։ Հարկաւ, աչքակապութիւն և հովանաւորութիւն — ուրիշ ոչինչ... Ծոյլ, ոչինչ չիմացող մի սնապարծ, որից աւելի վատթար ընկեր կարելի չէր ճարել իմ Լիօնէլի համար։ Լիօնէլը նորա հետ միայն զուր ժամապաճառ լինել սովորեց։ Եւ ես շատ ուրախ եմ, որ ուսուցչաւ պետ կադմօն-Հօրը համաձայնութիւն յայտ-

նեց մեզ մօտ անցնել ամառնային արձաւ կուրդի ժամանակը,—որ, ի հարկէ, ինձ մի փոքր աւելի թանգ կը նստի,—բայց դորս փոխարէն, անշուշտ, կարող կլինի Մօնտրօզի սխալներն ուղղել և արագ քայլերով լիու նէլն առաջ կը տանի։ Այդպիսի մարդու վրայ կարելի է կատարելապէս վատահ լինել, նոյն իսկ կրօնական խնդիրներում։

Այն մտածմունքը՝ թէ շուտով կդայ նշանաւոր ուսուցչապետը՝ բարերար աղդեացութիւն թողեց մ-ը Վելիսկուրտի վրայ, նա մինչ այն աստիճան հանդստացաւ, որ գիմեց հիւրանոց, ուր կարծում էր, թէ կդտնի ամուսնուն և ուր Զարլսին։ Սակայն սենեակում ոչ ոք չկար։ Ծառան յայնեց, որ սը Զարլսը մի քանի բոպէ առաջ մեկնեց, իսկ միստրիս Վելիսկուրտը միայնակ պարտէղ իջաւ։ Մ-ը Վելիսկուրտը կանգնեց բաց լուսամուտի առաջ, ծծելով ամառնային անուշաբոյր օդը—Առաւօտեան անձրեւ խիստ թրջել էր գետինը, իսկ նա տանել չէր կարող ծառերի թաց տերեների տակ զբոսանքը։ Լուսինն արդէն բաւական բարձրացել էր և գեղեցիկ լուսաւորում էր, —բայց նա լուսնեակ գիշերների գնհատողներից չէր...

Խորհրդաւոր երկիւզածութիւն ներշնչող գիշերային լուսութիւնը պատել էր երկիրը։ Մ-ը Վելիսկուրտը ամենեին տանել չէր կարող այդ լուսութիւնը... Նա հազար գիտմամբ... հազար բարձր, սուր, խոպոտ ձայնով, և յիրաւի հէնց մենակ այդ հազոցը խանգարեց այն հրաշալի, բանաստեղծական ամբողջութեան ներդաշնակութիւնը, որի մէջ անտառները, և լեռները, և ամպերը, և երկինաքը, և լուսինը,—բալորը, բոլորը միացել մի գեղահրաշ միութիւն էին կազմել։ Իւր հազոցով մ-ը Վելիսկուրտը, կարծես, մի հասարակ, սովորական կեանքի տարր մտցրեց այնտեղ, ուր ամէն ինչ սուրբ, գաղափարական և վեհ էր, և—նա մտաբերեց, որ ամուսինը գեռ ևս չկայ... Պարտէզը շատ ընդարձակ էր և բոլորովին երեսի վրայ ձգուած։ Թէև նոր վարձած պարտիզանն ամէն հնարք գործ էր գնում կարգի բերելու, բայց նա հազիւ կարողանում էր ուղիները մաքրել և բանալ—և բոլորովին անզօր էր զգում իրեն մաքառել ընութեան հետ, որ ըստ իւր հաճոյը շաղ էր տուել և զարդարել ծառերն ու թփերը և ամէն տեղ իւր սեփական գեղարտեստագէտի կնիքն էր գրոշմել։

Վայրենի, մացառապատ պարտէղը, ըստ
երկոյթին, շատ էր դուր եկել միտքիս
վելիսկուրտին, —նա այնտեղ էր անցնում
օրուայ մեծ մասը Բայց այն ժամանակից
ի վեր, երբ մ-ը վելիսկուրտը կանգնած
էր լուսամուտի առաջ, նա պարտիզի ոչ մի
անկիւնում չերհեցաւ: Յանկարծ նորա
ականջովն ընկան, սկզբում հազիւ լսելի,
յետոյ բոլորովին որոշակի, ժողովրդական
ինչ-որ ուրախ երգերի բառեր, որ իւր կինը
երգում էր հեռաւոր մի անկիւնից:

Արհամարհոս ժպիտը խեղակերպեց նու-
րա առանց այն էլ տգեղ դէմքը:

—Նա պէտք է փողոցային երդչուհի
դառնար, ասաց նա ինքն իրեն, այդ բանի
համար նա մեծ շնորհք ունի: Եւ երբ մարդ-
մտածում է, որ նա ազնուական ծագումն
ունի և կրթութիւն է ստացել... ի՞նչ հրէ-
շային հակասութիւն:

Նա վայրոյթով փակեց լուսամուտը,
վառեց սիդարը և գնաց իւր սենեակը կար-
դալու երեկոյեան ամենատաղտկալի լու-
գիներից մէկը:



Գ.

Հետեւեալ օրը՝ առաւօտեան եօթը ժա-
մին, փոքրիկ Լիօնէլլ բոլորովին պատրաստ,
նստած էր իւր ննջարանի լուսամուտի առաջ
և անհամբերութեամբ սպասում էր Մօնտ-
րոզին: Նա պատրաստում էր ճանապարհ
ձգել իւր թանգարին ուսուցչին և դժնուում
էր յուղուած դրութեան մէջ . . . Հիանալի
օր էր, արեգակը պայծառ փայլում էր պարզ
երկնակամարի վրայ. թռչունները, կարծես,
աւելի ոգեսորուած էին երգում:

Զանազան զգացումներ յուղում էին
մանկան զգայուն հոգին. նորա համար ծանր
էր բաժանուել իւր ուրախ, սիրալիր, բա-
րեսիրտ ուսուցչից, որ այնչափ դուրգու-

բանկով էր վերաբերում իրեն, և միակն էր, որ ըմբռնում էր իրեն . . . կարծէք, մի առանձին ուրախութիւն էր՝ կամացուկ, սու վորական ժամանակից կանուխ, գաղտուկ վեր կենալ, առանց նորից իրաւունք ստանալու դուրս գալ տնից . . . ուրախալի էր տեսնել՝ թէ ինչպէս չորս աշխոյժ ձի լծած ճեպակառքը՝ քաջարի կառապանով և առաւել քաջարի կարմրաքիթ ուղեցոյցով կը կանգնի փոքրիկ, անշնորհք փոստատան առաջ, որ կրում էր «խաղաթղթի տրցակ» ծխաղելի անունը, և դիտել՝ թէ ինչպէս մ-ր Մօնտրօզը կրաքրանայ վերև իւր նըստելու-տեղը և ուղեցոյցը «տրու-առւ-առւ» կհնեցնէ իւր փողով, և ինչպէս տեղից կը շարժուի հոյակապ ճեպակառքը, և ձիաները կոլացնեն նորան անասելի արագութեամբ . . . Զարմանալի է, որ այս բոլորը մանկան մի առանձին յուզում էին պատճառում . . . Բայց իւր հոգու խորքում նա գուրգուրում էր մի բոլորովին այլ միտք, որ մինչև իոկ Մօնտրօզին չէր յայտնել. նա վճռել էր այդ օրն ամբողջապէս տնից բացակայ դանուիլ . . . Նա դիտեր, որ մինչև ուսուցչապետ Հօրի դալը դաս չի լինի, իսկ ուսուցչապետին

սպասում էին ուշ երեկոյեան՝ մօտաւորապէս ժամը 10-ին, այնպէս որ ամբողջ օրը բոլորովին իւր տրամադրութեան տակ էր— երկար, հրաշալի, տափ օր, և նա ինքն իրեն ասաց, որ կօգտուի նորանից իւր սեփական գուարճութեան համար . . . Նա ամենևին չէր կամենում խարել հօրը, այդ՝ դուրս գնալու, ուր աչքը կտրում էր երթալու պահանջը առաջ էր գալիս մի անբացատրելի, իրեն համար էլ բոլորովին անհասկանալի մի զգացումից,—յոդնել էր նորա հոգին և ծարաւի էր հանդստի . . . ամբողջ գիշերը մտմում էր իւր այս ծրագիրը և որչափ աւելի էր մտածում այդ մասին, այնքան աւելի համոզւում էր, որ մի վատ բան չկայ դորս մէջ՝ Մ-ր և մ-ս Վելիսկուբար միշտ միայն նախաճաշին էին ուղարկում նորա յետից,—ենթագրուում էր, որ օրուայ մնացորդն ամբողջապէս անցնում էր իւր պարապունքներով՝ գաստիարակի հետ. իսկ այսօր, բաղդի բերմունքով, զրկուած էր իւր գաստիարակից, ուրեմն՝ միթէ նա չէր կարող օգտուիլ իւր աղատութեամբ։ Նա դեռ ևս չէր կարողացել մեկնել իւր համար այդ հարցը, երբ Մօնտրօզը հանդարտ ներս

մոտաւ՝ ձեռքին իւր ճամբրուկը բունած։
—Գնանիք, ասաց նա հեղիկ և քնքուշ
թեամբ ժպտալով։—Կամաց, ձայն մի հաշ
նիր, հանդարտ քայլիր, տանն ամէնքը գեռ
ևս քնած են։ Ցանկանում եմ մասնակից
լինել քո այսօրուայ արշաւանքներին։ Միւ
անդամ էլ նախաճաշ անենք միասին մու
Պէջնի մօտ—կարող ենք, ճեպակառքը գեռ
շուտ չի դալ։

Իւր հրճուանքը լուռ, ուրախ մի թուիչ
քով արտայայտելով, Լիօնէլլ սոների մատւ
ների ծայրերի վրայ կամաց հետեւց իւր
դաստիարակին, սանդուղներից կատուի
զգուշութեամբ իջնելով, ուրախութիւնից և
երկիւղից շիկնած, երբ մուտքի ծանր դուռը
զգուշութեամբ ըանալով և կրկին հանդարտ
և զգուշութեամբ ծածկելով դուրս եկան և
երկուսով միայն անուշաբոյր պարտիզի մէջ
մտան։

—Տուէք հապա, ես տանեմ ձեր ճամբա
րուկը, ուրախ և ընտանեբար ասաց Լիօնէլլ.
տուէք, ես կարող եմ։

—Իսկ ես կարծում եմ, որ չես կարող,
ծիծաղելով ասաց Մօնտրօզը։—Աւելի լու
է, դու իմ Հոմերոսը վեցնես։

Երեխան երկու ձեռքով առաւ գիրքը
և տարաւ մի առանձին հոգեղմայլութեամբ,
կարծէք, մի սրբութիւն էր տանում։

—Մ-ը Մօնտրօզ, այժմ դուք ուր պիտի
գնաք, հարցրեց նա, կրկին մի ուրիշ երեւ
խայի հետ պիտի պարապէք։

—Ոչ, ոչ գեռ ևս... ով դիտէ, երբ և
եցէ կարող պիտի լինիմ հանդիպել քեզ
պէս մէկին։ Ի՞նչ ես կարծում։

Լիօնէլլ նախ քան պատասխանելլ՝ լուրջ
մտածեց և վերջապէս պատասխանեց։

—Զգիտեմ, ճշմարիտ։ Անշուշտ կլինին
և այդպիսիները։ Դիտէք ինչ կայ, երբ մարդ
տան միակ զաւակն է, դժուար է նորա հաւ
մար միւս բոլոր մանուկների նման լինել—
պէտք է անդադար աշխատես, աւելի ու
աւելի խելօք դառնաս . . . Եթէ, օրինակ,
ես երկու կամ երեք եղբայր ել ունենայի,
հայշս կկամենար, որ մեղնից իւրաքանչիւրը
խելօք լինէր և մեղ ամենքիս համար ել
հեշտ կլինէր—այն ժամանակ նա մենակ
ինձնից չէր պահանջիլ ամեն բան։ Այ, թէ
ինչպէս եմ հասկանում այս խնդիրը։

—Այ, թէ ինչպէս ես հասկանում
ինդիրը, կրկնեց Մօնտրօզը, ուշադիր դիւ

տելով նորա լուրջ, խոհուն դէմքը։ «Ուրեմն,
դու կարծում ես, որ հայրդ մի ամբողջ
ընտանիքի մտաւոր պտուղները կամենում
է միայն քեզնից քաղել։ Այն, շատ հաւա-
նական է, որ այդպէս էլ է»։

—Իհարկէ, դրականապէս ասաց Լիօ-
նէլը, և դա շատ հասկանալի է, երբ միակ
դաւակն է և նորանից ամէն բան և շատ
ու շատ բան էք սպասում։

—Զափազմնց շատ, ասաց ինքն իրեն
Մօնտրոզը և բարձրաձայն աւելացրեց։ —
Ոչինչ, հոգեակս, մի վրդովուիր—սովորում
ես շատ լաւ, և գիտես շատ ու շատ բան
քան ես գիտէի քո հասակում։ Քեզ շափ
ժամանակս ես ինվերնէս էի, դպրոցում, և
համարեա ամբողջ օրն անց էի կացնում
կռուի մէջ... Այ թէ ես ինչպէս էի դասեր
սովորում։

Նա ծիծաղեց երիտասարդական, վա-
րակիչ քրքիջով և Լիօնէլն էլ ուրախ ծիծա-
ղեց, մինչ այն ասաիճան նորան ծիծաղելի
երեւցաւ, որ երեխան իւր բոլոր ժամա-
նակը կարող է կռուելով անցնել։ Ինչպէս
դարմանալի էր այդ և ինչպիսի նորութիւն։

—Ասացէք, ինդիքս, մ՞-ը Մօնտրոզ,

բացագանչեց նա, ինչ բանի համար էիք
կռում այդքան։

—Օ՛, բաւական էր միայն ցանկութիւն
սննենալ, իսկ առիթ միշտ կարելի էր շատ
հեշտութեամբ դանել, զուարթօրէն բացա-
տրեց Մօնտրոզը։ Օրինակի համար, ինձ
թւում էր, թէ այս ինչ տղայի քիթը բա-
ւական մեծ բան է, —ահա, ես կըռնէի նո-
րա քթից, —և ամէն ինչ արդէն պատրաստ
էր . . . Կոիւն անհրաժեշտ է, եթէ կամե-
նում ենք բարեկամ մնալ։ Է՞հ, հիանալի
ժամանակներ էր, ճշմարիտ, մարդ ուրա-
խութեամբ է մտաբերում։

—Իսկ ես կեանկռում կռիւ էլ չեմ
տեսել, ասաց Լիօնէլը. ինձ մօտ ոչ մի
երեխայ չի էլ եղել, որի հետ կարողանացի
կռուել։

Մօնտրոզը նայեց նորան և նորա ու-
րախ տրամադրութիւնը փոխուեցաւ մի այլ
տրամադրութեամ։

—Ուշադրութեամբ լսիր ինձ, հոգիս,
ասաց նա։ Հէնց որ յարմար առիթ լինի,
ինդիրիր հօրդ, որ նա քեզ ուսումնարան
ուղարկէ։ Ասա նորան, որ դա քո միակ
ցնորքդ է, որ ուսումնարան դնալու համար

Հոգի ես տալիս, խնդրիր, աղաչիր,—յիշիր,
որ ուսումնարանն է միակ վրկութիւնդ։
Դու կատարելապէս նախապատրաստուած
ես, քո այժմեան պաշարով դպրոց կմտնես
իր առաջնակարգ աշակերտ,—և այնտեղ
մաքառելու և յաղթելու առիթ կունենաս
կեանքի մէջ ամէն մէկիս վիճակուած է մա-
քառել, և միշտ նա է յաղթում, ով սովորել
է մաքառել... Լաւ է, եթէ փոքր հասակից
սովորել ենք և այդ դորձը... Ասա քո հօ-
րը, ասա ուսուցչապետին, որ կիսուարինէ
ինձ, որ քո բուռն ցանկութիւնն է մեր հա-
սարակական մեծ դպրոցներից մէկը մտնել,
—իտոն, Հօրբա, Վինչեստեր, միենոյն է
որտեղ կուզէ լինի, նոցանից իւրաքանչիւրից
մնարդիկ են դուրս դալիս։

—Լաւ, կիմնդրեմ, տիսուր ձայնով ասաց
Լիօնէլը, բայց շատ լաւ գիտեմ, որ պիտի
մերժեն։ Հայրս այդ մասին լսել անդամ չի
կամենում։ Հասարակական դպրոցներում
կիւրակի օրերը մանուկները՝ ամենքը եկե-
զեցի են գնում, —այնպէս չէ։ Բայց չէ որ
ձեզ էլ յայտնի է, որ երբէք ինձ թոյլ չեն
տայ՝ այդ բանը... . . .

Մօնտրօղը ոչինչ չպատասխանեց և նորա

լուռ շարունակեցին ճանապարհը և լուռ
էլ հասան մինչև մ-ս Պէյնի տնակը։ Տան
առաջի պատշդամբին կանգնած էր ինքը
բարեսիրտ տանտիկինը սպիտակ չամշիկով
և չթէ նոր զգեստով։

—Բարի լոյս, մ-ը Մօնտրօղ։ Բարի
լոյս, մ-ը Լիօնէլ։ Համեցէք խնդրեմ։ Այն-
ինչ պատրաստ է, սեղանը ձգած է, լու-
սամուտները բոլորովին բաց, իսկ սենեակ-
ների մէջ մեր անուշաբոյր այծտերեկիկի
հոտն է բանել։ Ոչ մի բան չի կարող մրցել
մեր Դեկոնշիրի այծտերեկիկի հետ, դուցէ
միայն Դեկոնշիրի սերուցքը կարողանայ, —
իսկ դա էլ առատութեամբ կդրուի այս
բոլէիս ձեր նախաճաշի սեղանի վրայ։ Ինչ-
պէս երեռում է, ծանր է փոքրիկ պարոնի-
կիս համար բաժանուել իւր բարեսիրտ
ուսուցչից . . .

Այս բոլորն ասաց նա, առանց շունչ
քաշելու, և լոեց միայն այն ժամանակ, երբ
իւր հիւրերին առաջնորդեց իւր ամենալաւ-
սենեակը, իսկ ինքը դուրս թռաւ նոցա-
նախաճաշի պատրաստութեան հոգու քա-
շելու։ Մօնտրօղը մօտեցաւ բաց լուսամու-
տին, և յիրաւի, նորա առաջ, կարծես, ամ-

բողջապէս ծաղկած ու բացուած այծտերեւ
ւիկի ծով լինէր, —հէնց մենակ այդ անուշ
շաբոյր, հրաշալի օդ շնչելը անհուն բաւա-
կանութիւն էր:

—Հրաշալիք է այս Դեկօնշիրը, ասաց
նա աւելի իրեն քան Լիօնէլին: Բայց և
այնպէս իմ Շոտլանդիային չի հասնիլ:

Լիօնէլը նստած էր լուսամուտի առաջ,
նորա գէմքը դալուկ էր և յոգնած . . .

—Դուք շուտով կերթաք Շոտլանդիա,
հարցրեց նա:

—Այն, ես առ այժմ մի քանի օրով մօրս
մօտ եմ գնում: Երիտասարդն առաւել քընքը
շութեամբ նայեց երեսային: Ա՛խ, ինչպէս
կուզենայի քեզ էլ հետո տանել, հեղիկ
աւելցրեց նա, որքան քնքշութեամբ կսկրէր
քեզ իմ մայրիկա:

Լիօնէլը լսեց և ինքն իրեն մտածում
էր, որ բաւական տարօրինակ բան պիտի
լինի այն զգացումը, թէ ինչպէս մի օտար
մայր սկսում է իրեն այնպէս ինչպէս հա-
րազատ մայրն իսկ գեռ ևս չէր սկրել . . .
Այդ բոպէին մ-ո Պէյնը ներս բերեց նա-
խաճաշիկը և իրեն յատուկ սովորութեամբ
մի տեսակ հոգեզմայլ աշխուժով դէս ու

դէն էր ընկնում, ամանները դարսելով: Եւ
յիրաւի, ինչ ասես, որ չկար այդտեղ: Եւ
թարմ ձուեր, և եփած կաթ, և թանձր
սերուցք, և անուշ և թէյ, և տան թխած
հաց, և անուշաբոյր մեղք, և ի լրումն այդ
ամէնի՝ մի կողով լիքը կարմրաթշիկ ինձոր
ու տանձ: Եւ այդ բոլորն որչափ շնորհալի
և ինչքան առատութեամբ էր մատու-
ցուած . . .

Մօնտրօղն ու իւր փոքրիկ բարեկամը
այդ հիւրասիրութիւնն սկսեցին վայելել բո-
լորովին տարբեր զգացումներով. կանուխ-
առաւուեան զրօսանկից յետոյ Մօնտրօղի
ախորժակը խիստ բացուել էր, իսկ Լիօնէլը
երկար զգային յուզուած գրութիւնից յետոյ
չէր իմանում քաղցած է թէ ոչ: Սակայն
իւր թանկագին բարեկամին չվիրաւորելու-
համար, որից շուտով պիտի բաժանուէր,
նա աշխատում էր ախորժակով ուտել: Եթէ
երկուսն էլ կերան վերջացրին, Մօնտրօղը
դարձաւ նորան հետևեալ խօսքերով:

—«Տես, Լիօնէլ, չմոռանաս ինձ: Եթէ
երբ և իցէ մտքովդ անց կենայ տնից
փախչել, —երեխան այդ խօսքերի վրայ
սաստիկ կարմրատակեց, միթէ հէնց այսօր

նա չեր ուզում փախել,—«կամ, կամ—մի ուրիշ բան կպատահի քեզ, իսկոյն ամէն բանի մասին ինձ նամակ կդրես, կուզարկես Շոտլանդիա, մօրս անունով և միշտ անկուրուստ կհասնի ինձ: Համանում ես, քեզ չեմ համոզում, որ փախչես—դա զարհութելի բան է . . . բայց և այնպէս, եթէ կղգաս, որ դասերդ քեզ շատ են նեղում, որ ուսուցչապետ Հօրի ներկայութիւնը քեզ խիստ է ճնշում, աւելի լաւ է փախչես . . . միայն հոգու արխութիւնդ չլորջնես . . . Դարձեալ, սիրելիս, միտք պահիր, որ եթէ գլուխ-պտտելդ էլի կրկնուի, որի մասին դանդաստում էր անցեալ օրը, կամ անցեալ շաբթօւայ ուշաթափութիւնդ դարձեալ կրկնուի—դու այլ ևս այդ հիւանդ դրութիւնդ չպէտք է ծածկես, պարտաւոր ես ամէն ինչ պատմել Հօրդ, որ և կիսորդը դրդակցի բժշկի հետո»:

Լիօնէլը անտարբեր—համբերութեամբ լսեց այդ բոլորը և, հառաչելով, ասաց.

—Եւ ինչու համար են այդ բոլորը՝ Դուք գիտէք, որ ես հիւանդ չեմ—բժիշկը մօտիկ օրերս քննեց ինձ և ասաց, որ ոչինչ չունիմ: Երեկի բժիշկներն էլ շատ խելօքներ

րեց չեն—մայրիկս մի տարի առաջ հիւանդ գացաւ և սոքա ջալալացան բժշկել նուրան, իսկ երբ ձեռք քաշեցին և հանդիսա թողեցին նորան՝ նա առողջացաւ: Այդպէս էլ ամէն բանի համար է—որքան շատ ևս աշխատում, այնքան վաս է դուրս դաւիս . . .

Մօնարքը սովորել էր յաճախակի լսել այս փաքր երեխայից այսպիսի յուսակտուր խօսքեր, բայց այն ուրախ, ամառնային առաւտով, երբ ինքն ևս մասապ ոյժերի բուռն հսանք էր գլում իւր մէջ և ուրախ սրտով տուն էր գնում՝ նոցա մօտ, որմնք սիրում էին իրեն:—Այս միայնակ մնացած մանկան կեանքը և այն յուղիչ հլու-հոգա տակութիւնը, և որ նա գլուխ էր խոնարհում իւր ճակատագրի առաջ,—իւր վրայ շատ ու շատ ծանր տպաւորութիւն թու զեցին:

—Ճնից փախչել, շարունակեց Լիօնէլը կարմիրլով, —ևս զուցէ կարող կլինէի, այն ևս մի քանի ժամով . . . բայց, եթէ ևս իսկապէս փախչելու փորձ անէի, օրինակ, նոււստի լինելու համար, —ինձ կվերաս դարձնէին . . . իսկ եթէ այդ մասին ձեզ

դրէի, դորանով ձեզ իդուր տեղը անհամ
դրութեան մէջ պիտի ձգէի և ձեզ . . . Եւ
րեի, դուք այդ մասին չէք մտածել, մ-ը
Մօնտրօզ, իսկ ես այսպէս եմ դատում:

—Դու շափազանց շատ ես մտածում,
այ որն է ցաւը, Փոքր ինչ վրդովուած հա-
կածառեց Մօնտրօզը:

Նորան, կարծես, ծանր էր թւում,
որ այս 11 տարեկան երեխան, իրենից,
27 տարեկան հասակն առած մարդուց,
աւելի խելօք էր դատում . . . Երկուսն էլ
լուցին:—Մի քանի բոսէից յետոյ Լիօնէլի
փոքրիկ, առող թաթիկը կպաւ Մօնտրօզի
ձեռքին:

—Բայց ես երբէք, երբէք ձեզ չեմ
մոռանայ, Վիշի, — ասաց երեխան, Փոքր
ինչ տատամելով վերջին բառն արտասա-
նելիս, — դուք, չե՞ որ իրաւունք էք տուել
երբեմնակի ձեզ այդ անունով կոչել. դուք
իմ դաստիարակներից ամենից երիտասարդը
և ամենից աւելի բարեսիրոն էք, — և թէն
ես չեմ կարող ձեր բոլոր դասերը միտքս
պահել, բայց ձեր բարեսրտութիւնը միշտ
կյիշեմ և կյիշեմ յաւխտեան:

Տիրապէին և քնքութեամբ էին նայում

Նորա հեղիկ աչերը, դալուկ դէմքն ամբող-
ջովին տակն ու վրայ էր եղել և այդ բո-
պէին նա այնպէս փոքրիկ, խղճալի, միայ-
նակ էր թւում:

—Լաւ, լաւ, իմ անուշիկս, հաւատում
եմ, շտապով ասաց Մօնտրօզը, աշխատելով
ծածկել իւր յուղումը, — տես, իմ խոր-
հուրդս չմուանաս, գրքերի վրայ երկար-բաշ-
րակ գլուխ չկոտրես, դասդ գժուար թուաց
քեզ—դէն ձգիր: Եւ իսկոյն անտառ վագիր:
Կծէծեն—ոչինչ: Աւելի լաւ է ճիպոտի համն
առնել քան հիւանդանալ: Առողջութիւնը
առաջին բարիքն է—ամէն տեսակ հարստու-
թիւններից շատ ու շատ թանկագին:

Այդ բոսէին հեռուից լսուեցաւ ճե-
պակառքի ուղեցոյցի ուրախ փողահարու-
թիւնը, — Մօնտրօզը վեր թռաւ:

— Ետապէնք, ապա թէ ոչ կուշանանք,
բացադանչեց նա:

Երեւեցաւ մ-ս Պէյնը, խորը «կնիքս»
անելով, ժպտալով . . . և ամէն տեսակ բա-
րեմաղթութիւններ անելով:

— Երթաք բարով, երթաք բարով:

— Մնաք բարե, մնաք բարե, ուրախ
բացադանչեց Մօնտրօզը, յափշտակելով իւր

Ճամբրուկը և որագ քայլերով դէղի «խա-
ղաթղթի տրցակը» գիտելով:

Լիօնէլը հազիւ կարողանում էր հետեւ
ւել նորան: Երբ նորա հասան, ճեղակառքն
արգէն պատրաստ էր, աշխայժ ուղեցոյցը
փչում հա փշում էր իւր փողը, բայց աւելի
իւր սեփական զաւործութեան, քան մի
ուրիշ բանի համար:

—Դուք շնոր ուրախ էք, մ.-ր Մօնտրոզ,
որ մեկնում էք, հարցը Ելիօնէլը, երիւ
գոտիք չափազանց ուրախ էք:

—Այն, ուրախ եմ, պատասխանեց
Մօնտրոզը, բայց միհնոյն ժամանակ և շատ
տխուր եմ, որ քեզնից բաժանում եմ, իմ
փարքիկս, ես շատ ուրախ կլինէի, եթէ կարո-
զանայի մի ժամանակ ևս մնու այստեղ՝ քեզ
պահպանելու համար:

—Յիրաւի, հարցական չեշտով ասաց
Լիօնէլը, իպուր գուք անհամգիստ էք մի-
նում իմ մտախն—ինչ կարող է պատահել
ինձ: Երբէք ինձ ոչինչ չէ պատահում—իմ
օրերո մէկը միւսին շատ նման է . . .

—Գէ՞հ, մնաս բարեւ: Մօնտրոզը իւր
Ճամբրուկը յանձնեց ուղեցոյցին և երկու
ձեռքերն ես քննըշութեամբ գրեց մանկան

ուսերին: «Երբ առան կդառնաս, ասա հօրդ,
որ ես բերեցի քեզ ինձ հետ, որ ինձ ճա-
նապարհ ձգես, և եթէ նա այդ ասթիւ կը-
կամենայ ինձնից բացարութիւններ ընդու-
նել նա գիտէ, թէ նամակն ուր պիտի ու-
զարկեւ: Յիշիր, բալոր մեզքն ինձ վրայ եմ
ասնում ես: Մնաս բարեւ, իմ սկսելիս, իմ
թանկագին փոքրիկս, և—և—թող Աստուած
քեզ պահպանէ:

Լիօնէլի շրթունկները ջզաճգութեամբ
դողում էին, նա աշխատամ էր ժպտալ,
բայց մի այնպիսի խզճալի ժպիտ գոյացաւ . . .
արցուներներ էին ցորում աչքերի մէջ . . .

—Երթաք բարեւ, հազիւ շնչաց նա:

Տրու-տու-տու . . . հնչեց փողը: Մօնտ-
րոզն արգէն նստած էր իւր տեղը՝ ճեպա-
կառքի ամենաբարձր տեղում, ուղեցոյցը
աչքերը խոժուեց գիւղական երեխաների
խմբակի վրայ, որոնք հեռու կանգնած,
զմայլելով գիտում էին թէ նորան և թէ
նորս կառքը:

—Հեռու կացէք ճանապարհից,—գու-
ռաց նա և շարժեց երասանակները. ձիերն
արշաւեցին և ուրախ ոլացան:

—Մնաս բարեւ, մնաս բարեւ,—նորից

դոչեց Մօնտրօղը, շաբժելով իւր յարդէ
դլխարկը:

Լիօնէլի պատասխան—ձայնը արդէն
այլ ևս չէր կարող համնել արագութեամբ
հեռացող Մօնտրօղին, ուստի նա իր պա-
տասխան բարձրացրեց իւր փոքրիկ դլխար-
կը,—խղճալի ժպիտն՝ այն ևս անհետացել
էր նորա դալուկ դէմքից, իսկ ճակատի
վրայ, կարծես, փոքրիկ կնճիռն աւելի խոր
ակոս ստացաւ: Նա կանգնած էր անշարժ
և ուշի ուշով դիտում էր հեռուն: Իսկ երբ
ճեպակառքը բոլորովին անհետացաւ աչքից,
նա ցնցուեցաւ, կարծես ինչ-որ երազից արթ-
նացաւ և ձեռքին տեսաւ Հոմերոսը: Մօնտ-
րօղը մոռացել էր դիլքը: Մի քանի դիւ-
զական մանուկիներ կանգնած էին հեռուում,
նոքա նայում էին իրեն, և նա լսեց, որ
նոքա ինչ որ բան են ասում «մեծ անից
եկած փոքրիկ պարսի» մասին: Ինքն էլ նոցա
նայեց: Նա շատ հաւանեց երկու կարմրա-
թշիկ, կլորագէմ փոքրիկների, —և մեծ բա-
ւականութեամբ կխօսէր նոցա հետ, բայց
քաշում էր, բնազդաբար զգալով, որ նոքա
կարող են անտարբեր վերաբերուիլ իրեն, —
և վճռեց, որ աւելի լաւ է միայնակ մնալ և

դնալ իւր դործին . . . բայց նա չէր ուզում
տուն դնալ, — օ, ոչ Միթէ ինքը չէր վճռել,
որ այսօր տօն պիտի լինի իւր համար—կա-
տարեալ տօն, որ լիքն էր սաշդում իւր
համար:

Որովհետեւ նա գիտէց, որ Կօմմօրտինի
հնագարեան եկեղեցին Թեվոնչիրի ամենա-
նշանաւոր հնութիւններից մէկն էր համար-
ւում և որովհետեւ նորա հօր գաստիարակ-
չական եղանակով և նորա հայեացքներով,
Լիօնէլի հետ չէր կաշելի կրօնական հար-
ցերի մասին խօսել—ուստի հասկանալի է,
թէ ինչու նա այդ բոսկէն վճռեց դիմել
ազգակի այնուեց: Եւ այն արցունքները, որ
Մօնտրօղի ներկայաւթեամբ հազիւ պահել
կարողացաւ, այժմ՝ հանդարտ, մէկը միւսի
յետից գլորում էին նորա թախծալից
փոքրիկ դէմքի վրայով, այժմ, վշտագնած,
յիշում էր, որ ալեկոծուած ծովի վրայ մա-
կացիով ուրախ զրուահքներ այլ ևս չեն լի-
նել, անտառի մէջ բուսաբանութիւն ուսում-
նասիրելու նպատակով արած երկար զրօս
սահքներն այլ ևս չեն կրկնուիլ, սաղոթթա-
խիւ ծառերի ստուերի տակ այլ ևս չի
կաշուալ գրաւիչ գեղօններ, — այդ բոլորից

ոչինչ, ոչինչ այլ ևս չետեսիլ, — միայն
կզգայ տռուցապետ Կաղման-Հօրի ճնշող
ներկայութիւնը, որ հաջակ էր ստացել իւր
անբաւ և անչափ գիտութեամբ . . . Այդ
մաքերի ճնշող ազգեցութեան տակ խեղճ
մանկան սիրող կտոր-կտոր էր լինում. գըլ-
խակոր հազիւ հազ նո փոխում էր իւր քայ-
լերը. Գերեզմանատան փայտէ գոնակի մօտ
նո կանդ տռաւ, կամացուկ բարձրացրեց
փականքը և ամէնքից մուտցուած ննջեց-
եաների գերեզմանների թագաւորութիւնը
մտաւ.



Դ.

Հանդարտ, մի տռանձին երկիւղածու-
թեամբ քայլում էր Լիօնէլլ մամապատ
ուղիներով, որոնց երկու կողմը բարձրանում
էին կանաչագարգ գերեզմանները, և կանդ-
տռաւ մի հինաւուրց կոթողի առաջ. նորա
կատարին նոտած էր մշահաւը, սիրուն դայ-
լայլում էր և թագնուած ընկերուհու հետ
երբենիսակի խօսում. թոչնակը վախկոններից
չէր. նո ոչ միայն փախչելու փորձ չէր ա-
նում, այլ տեղիցն անգամ շարժուեցաւ,
երբ Լիօնէլլ մոտեցաւ. Այն կոթողը, որի
վրաց թառել էր նո, ամբողջապէս զուգուել
էր կանաչով, փիլիկի մանրիկ տերեւիկները
և քնքոյշ մտաւուի փնջիկները մի ինչոր
զարմանալի վարպետութեամբ կարողացել

Եին տեղաւորուել մերձ սպաքարի վրայ, մասսամբ շրջահիւս գօտեսրել և մասամբ ել ծածկել էին սեացած, հաղիւ կարդացուող արձանագրութիւնը—

Աստ հանդիի հող մարմին Սիմեոնի Եազի Թամբագործ էր նա աստ ի Կոմմորտինի Հանգեաւ նա ի Տէր ի յայն ուրախ յայս Եթէ ունի տեսանել զՏէրն իւր Յիսուս. 16 յունիսի 1671 ամի. 102 տաշեկան հասակի

Հայր նա ի տան խաղաղորդ Սիմեոնի Լիօնէլը շատ մեծ գժւարութեամբ կարողացաւ ջոկել այս արձանագրութիւնը. նա ստիպուած էց առաջ տառերը վաճակերի վերացել, մինչեւ որ հաղիւ հաղ կարողացաւ բառեր կազմել: Եւ երբ նա արձանագրութիւնը վերջնականագէս կարդաց, այնուամենայնիւ խմառը իւր համար անորոշ մնաց: Նա մտախոհ կանգնել էր, զարմանալով այդ բառերի բոլորովին օտարութիւնութեան վրայ, որով արձանագրութիւնը վերջանում էր, երբ մշահաւը վախեցած ուր ծիչ արձակեց յանկարծ և թուաւ գնաց, խոկ նորա առաջ, կարծես, ուղիղ գեանի միջից բուռած՝ երիեցաւ մի գեղեցիկ, ալեւ

զարդ մարդու գլուխ, որ հետաքրքրութեամբ նայում էր իրեն: Լիօնէլը վեր թռաւ, մի քիչ յետ-յետ գնաց, բայց չվախեցաւ:

—Մի վախենաք, փոքրիկ պարսիկ, արտասանեց գլուխը, ես այստեղ զբաղուած եմ միայն Տվիլի տատիկի համար գերեզմանի վորելով:

Այս բառ երն արտասանող ձայնը հնչում էր շատ մեզմիկ, նոյն խոկ գուրեկան էր այդ ձայնը, այնպէս որ Լիօնէլի բողեական վարահմանկըն անցաւ խալոյն: Նա հետաքրքրութեամբ մօտեցաւ և տեսաւ մի բարձրահասակի, լայնթիկունք, արտասակար գեղեցկութեամբ օժտուած մի տղամարդ, որ կանգնած էր խոր փոսի մէջ,—և բնազդը թեւ լադրեց նորան, որ այդ փոսը պէտք է լինէր հէց գերեզմանի:

—Դուք ինձ ամենին չվախեցրիք, աշոց Լիօնէլը, յարգանքով բարձրացնելով իւր փոքրիկ գլխարկը: Ես միայն վեր թռայ այն պատճառով, որ ձեր գլուխն այնպէս անսպասելի կերպով երեւեցաւ, ես կարծում էի, թէ բացի մշահաւից և ինձնից ոչ ոք չկայ այստեղ: Ի՞նչ մեծ փոս էք փորում:

—Այս, և մարդը ժպտաց քնքոյց, ողոյ-

ծառ, հեղիկ ժպտով՝ Պառաւ Տվլին միշտ
լայն-արձակ տեղ էր սիրում։ Երկնքի այս
քայլութեան բաժին գասնայ նաև Այժմ,
արդէն թողեց-հեռացաւ մեզնից, մի մարդ
չես գանիլ, որ նորա մասին որ և վաս
ըսն կարողանայ տաել . . . բայց թագաւոր
ներն ու թագուհիներն էլ շտո անդամ չեն
արձանանում այդ բանին։

—Նո մեռել է, համդիսա հարցրեց

Լիօնէլը։

—Այս, եթէ ի նկատի սննենանք Երկրային կեանքը՝ նո մեռել է, պատասխան—
տրուեցաւ։—Բայց Աստուած իմ, ինչ բան է
Երկրային կեանքը։ Ոչինչ։ Եւ վերասցի նո-
ցի եւ ոչ և նա, եւ ոչ զիտասցէ զուելի
յնակութեան իւրոյ . . . Երկնից առքայու-
թիւն—ահա ինչի պիտի ձգտենք ամէնքո,
փոքրիկ պարսնիկո, պէտք է որ ու գէշեր
աշխատենք, որ արժանի լինինք մտնել
այնտեղ։

Առանց ընդհատելու իւր աշխատանքը,
նո թանձր մելամաղձիկ ձայնով երգեց իւր
սիրելի օրհներդը, որի մէջ փառարանում էր
Երկնային լուսափայլ հրեշտակների փառքը։

Լիօնէլը նոտեց մօտիկ կանաչապատ դե-

րեղմանի վրայ և, անթարթ, կարծես, քննող
հոյեացընկ, դիտում էր նորան։

—Ինչպէս կարող էր հաւասար դուք
ոյդ անմիտ ցնդարանութիւններին, հարցրեց
նո ձանքախոհ կշտամբանքով, —և դեռ ևս
հոտակին առած մաշդ էր համարւում։

Այդտեղ գերեզմանափարն ընդհատեց
իւր գործը . . . և, գառնալով դէպի նոտ,
անհաման դարմանքով արսեց դիտել փոքրիկ
մանուկին . . .

—Ինչպէս կարող եմ հաւասար այս
անմիտ ցնդարանութիւններին, կրկնեց նո
մեզմիկ։ Յնդարանութիւններին։ Եւ այս փոք-
րիկ արարածն այդպէս է անտառամ մեր
անսատն հաւատը, մեր անյոզգողդ յոյսը
յաւանենական կեանքի նկատմամբ։ Գթա,
Տէր, այս փոքրիկ մանկանը։ Եւ ով կարող
էր քեզ այդպիսի կրթութիւն տալ։

Լիօնէլը խիստ շինեցաւ—այնչափ, որ
քիչ էր մնում արտաստեր, մինչ այն առ-
տիճան ինըն իրեն միտյնակ էր զգում և
այնքան հաճելի էր խօսել այս կենունակ
մարդու հետ, որ այնպէս քնքոյշ մելամաղ-
ձիկ ձայն ուներ, —և յանկարձ՝ ինքը վիրա-
ւորեց նորան . . .

—Ինձ Լիօնէլ են անուանում, Լիօնէլ վելիսկուրտ, տասց նաև մեզմիկ, դպրով ձայնով։ Ես մըր Վելիսկուրտի միակ գուակն եմ, նա է վարձել այս ամսու այն մեծ տունը, այ, —և նա մասով ցոյց տուեց ծառերի յետից երեացով տունը, որի կը տուրն էր երեսում միայն, —և ես, իմ 6 տարին լրանալուց յետոյ, միշտ ունեցել եմ խելացի դաստիարակներ, այժմ շուտով իմ 11 տարին կը անայ։ Նոքա ինձ շատ ու շատ բան են սովորցրել։ Եւ ես նոքա համար ասացի, թէ հանդերձեալ կեանքը դատարկ բան է, որովհետեւ ինձ միշտ այդպէս են ասել։ Ես շատ ուրախ կլինէի իմանալ, որ դու յիրաւի ճշմարտութիւն է, —բայց դա ճշմարիտ չէ, —դա միայն երազ է, պատրանք, առասպելի պէս մի բան։ Հայրս առ սում է, որ մեր ժամանակ այդ բանին այլ ես ոչ ոք չէ հաւատում։ Գիտութեամբ առ պացուցուած է, որ երբ մեղ իջեցնում են գերեզման, —և նա ցոյց տուեց գերեզմանը, որի մէջ կանդնած էր գերեզմանափորը, լսում և ի ներքուստ զարմանում էր, —մենք մեռնում ենք յաւիտեան, և այնուհետեւ երբէք չենք իմանայ, թէ ինչու ենք սոեղ

ծուել, —իմ կարծիքով դա խիստ տարօրին նուի է և շատ, չափազանց անդութ, —և որդերը կուտեն մեզ ի՛, ինչպէս ցնդաբանութիւնն չէ մտածել, որ որդերը մեզ ու տեղուց յետոյ էլ դեռ կենդանի կլինիք։ Ահա թէ ինչու հարցրի ձեզ, թէ ինչպէս կարող էք հաւատալ այդ անմտութիւններին . . . Խնդրեմ, ներեցէք, ինձ, ճշմարիտնեմ ասում, ես ամենեան միտք չունէի ձեզ վիրաւորելու։

Կերեզմանափորը լոեց բովէաշափակ նուրա գրաւիչ գէմքը փոխ առ փոխ արտայայտում էր և ցաւ, և զարմանք, և արգահատանք, և զայրոյթ, բայց կարծես սիրոյ լուսափայլ ժպիտը այդ բոլոր զգացումները կլանել էր իւր մէջ . . .

—Ինձ վիրաւորեցիր։ Ոչ, դու այդ չէիր կարող, փոքրիկ պարսն, եթէ նոյն խոկ ցանեկանայիր անդամ . . . Այդպէս ուրեմն, զումըր Վելիսկուրտի որդին ես։ Լաւ, խոկ ես — Ուութէն Դէյլ, այս եկեղեցու սազմասասցը և ժամկոչը, և գերեզմանափոր, և հիսոն . . . Սատծու տուած ամէն բանն էլ անում եմ — միայն թէ ոյժերս ներեն։ Ահա, տեսնում ես, այս իմ ձեռքերս, —և նա ցոյց տուեց

իւր ջղուտ, ուժեղ ձեռքը, —նորա մինչեւ
այժմ լաւ գործ են տեսել, նորա տուել են
ինձ հոգ և տուն, և հաղնելու շոր էլ նոցա,
որոնք անդին են ինձ համար, և եթէ
Աստուած կյաջողէ, նորա գեռ շատ երկար
տարիներ կծառայեն ինձ. բայց ես գիտեմ,
որ կրոյ ժամանակ, երբ այդ ձեռները կը-
լուածեն կըծըիս . . . է, ինչ արած, — այն
ժամանակ նորա ինձ այլ ես պէտք չեն լի-
նիլ, ես արդէն մի ուրիշ աշխարհում կլինիմ,
այնտեղ կառլրեմ և կմտածեմ և, եթէ
Աստծու համար հաճելի կլինի, նոյնպէս
կաշխատեմ, —որովհետեւ աշխատանքն Առ-
տուած է օրհնել, և հոգիս էլ նոյնը կլինի,
ինչ որ այժմ, —միայն մի խնդիր ունիմ իմ
Ստեղծողից, որ մինչ այն ժամանակ մաքրէ
և լուսուորէ իմ հոգիս . . .

Նա իւր երկնագոյն, պաշլ ու յստակ
աշքերը բարձրացրեց գեղի կապօյտ, յինչ
երկինքը, և այդպէս մնաց մի քանի բողէ,
կարծես մի բան զննելիս լինէր . . .

Մ-ը Դէլլ, ի՞նչ էր ըմբռնում, երբ դոք
ձեր հոգու մասին էր խօսում, —անվասա-
հովթեամբ հարցրեց Լիօնէլլ:

—Ի՞նչ եմ ըմբռնում, իմ սիրելիս,

ասաց նա: Ես ըմբռնում, հասկանում եմ
այն, ինչ որ իմ մէջ միմիայն կենդանի է, —
երկնային կրակի այն կենդանի կայծը, որ
ենքը Տէրն է պարզեել մեղնից խրագան-
չիւրին . . . Ահա թէ ինչ եմ ըմբռնում և
ինչ որ գու էլ կըմբռնես, խեղճ փոքրիկա,
երբ կմեծանաս և կթափանցես Աստծուց ոչ
դժապատութեան գաղտնիքները:

—Իսկ ձեր բարեկամը, մ-ո Տիլլին
նոյնպէս ունէր այն բանը, ինչ որ գուք
հոգի էք անուանում, մի տեսակ սարսումավ
հարցրեց Լիօնէլլ:

—Օ՛, այս, ունէր, և շատ մեծ, և շի-
տակ, և մաքսւր հոգի էք այդ հոգին:

—Բայց գուք ինչպէս կարող էիք իմա-
նալ այդ բանը, պինգեց Լիօնէլլ հիւանդա-
գին հետաքրքրութեամբ:

—Իմ սիրելիս, երբ տեսնում ես մի
խեղճ, շատ խեղճ պառաւ, թէ ինչպէս է
անցնում նա իւր տմբողջ կեանքը զըր-
կանքներով և չարքաշ, ինչպէս նա անար-
ատնչ և արախութեամբ կրում է իւր
խոնարհ և ծանր լուծը, և անուշ ժողովը
չէ բաժանում նորտ շրթունքներից, և
սիրող բաց է բոլոր փոքրերի և որբերի

Համար, և պատրաստ է ամէն մոլորուածի ներել, իսկ իւր սէրը պատրաստ է ամէն մէկի համար,—և նա իւր կեանքի 80 տառ րիների վրայ մի հայեացք ձգելով, միայն մի բան է ասում՝ փառք քեզ, Աստուած, յաղագս ամենայնի . . . , կարելի է հաւատաց յած լինել, որ նորա մարմնի խղճուկ կեղեւից մի ինչոր առաւել վեհագոյն, ինչոր առաւել շահագոյն բան ոյժ էր ներշնչում նորան հաւատարիմ մուլ ինքն իրեն, հաւատարիմ իւր բարեկամներին, հաւատարիմ իւր 8իրոջը . . . ահա այսպէս էր 8վիլի տատիլը . . . Մարմինը նորա համար մի բեռն էր միայն—թուլցած, պարարտացած, ամբողջապէս հաշմացած ոսկիրացաւով, իսկ հոգին՝ օ, նա շիտակ, տոկուն էր շատ Կօմմօրտինում ամէնքն այնպէս լու էին ձևանաշում նորա հոգին, որ չէին էլ միշում այն խղճուկ կեղեւը, որ պատում էր նորան, —ինձ այնպէս է թւում, որ այդ կեղեւը մենք ամեննեին չէինք էլ նկատում: Մեր մարմինը տկար է, սիրելիս, և եթէ մեր հոգին չլինէր, մենք ինչպէս կկառավարուէինք:

—Դորան հաւատում եմ ևս, ասաց

Լիօնէլը հառաջելով, չեմ կարող այդ բանին չհաւատալ, թէ այդ չեն սովորեցրել ինձ եմ մարմինս թուլակազմ է, երբեմն նա ամբողջապէս ցաւում է: Բայց, ևս կարծում եմ, մ.-ր Դէյլ, որ այնպիսի հոգիներ, որոնց մասին այժմ խօսում էիր դուք, անշուշտ բացառութիւններ պիտի լինին, —ինչպէս, օրինակ, երկնագոյն աչքերը, չէ որ ամէնքի աչքերը երկնագոյն չեն, —դուցէ և ամէնքը օժտուած չեն հոգւով: Հայրս խիստ կըարկանար, եթէ նորան ասէին՝ թէ ինքը հոգի ունի, —և ևս դիտեմ, որ նա երբէք իրաւունք չի տայ ինձ հոգի ունենալու, եթէ մինչեւ անգամ ևս որ և է հնարքով կարուղանայի աճեցնել իմ մէջ այդ . . .

Ռուբէնը կանգնած էր վերացած և նայում էր փոքրիկ երեխայի տիսուր, մանկական դէմքին՝ ամնկարագրելի զարմացմանը . . . նա ինքը պարզ, աստուածավախ մարդ էր, ամբողջ կեանքը Կօմմօրտին էր անցրել, անդադար աշխատել իւր օրական պարէնի համար և, բոլորովին գոհ իւր վիճակով, ամեննեին չը հետաքրքրուել, թէ ինչ է կատարւում մեծ քաղաքներում: Ուստի և նա երբէք ոչինչ չը լսել այն օտա-

բոսի, անտեղի վէճերի մասին, որ տեղի է ունենում այն մեծ կենդրոններում, ուր լիքն է ամէն տեսակի ժողովուրդ, որտեղ զանազան անմիտներ հերքելով ամէն սրբութիւն, աշխատում են թշուառ մարդուց խլել և նորս Աստծոն, ուր մամուն ինքն է քարոզում սրբարդութիւն և անառատուածութիւն և ամէն ջննք է գործ դնում տարածել ժողովրդի բոլոր խաւերում այն պիսի գարշելի բովանդակութեամբ գրքեր, որոնցից Ռաբլէն ինքը կը զգուէր և հարկէ, նորա մոռովն խալ չել անցել, որ կարող են գոյութիւն ունենալ այնպիսի կառավարութիւններ, որոնք հոգանաւորութիւն են ցոյց տալիս՝ գասափարակել մանուկներին ստանց որ և է կրօնական կրթութեան։ Նա լսել էր Ֆրանսիայի մասին, բայց նա չգիտէր, որ Ֆրանսիան կրօնը գուրու էր քշել իւր բոլոր գործոցներից, որ արտգ քայլերով նա գտանում է մի բուժարան, որտեղ մանուկները այլտաեռում են և գանձում—գոզեր, մորս գասպաններ, անզգամներ . . . Նորս հաշուապաններ, անզգամներ . . . Նորս հաշուապաններ, մեծ էր գէպի Անդլիան, ինչպէս մեծ էր առ Աստուած,—գէպի հայրենիքը տառ ծած այն ամուր, աննկուն հաւատը, որի մէջ

է ամփոփուած ազգերի բոլոր պյայը, և նա խորապէս, մինչև իւր աղնիւ, ճշմարիտ-կրօնական հոգու խորքը յաւզուած կլինէր, եթէ նորան ասէին, որ իւր սիրեցեալ Անդլիան, որ կործանման ուզին էր լունել այն մարդոց չնորհիւ, որ խոկապէս կոչուած էին նորան աշալուրջ պահպաններու, — Ֆրանսիայից վոխ է առնում նորս անաստուածութեան, սիմոնիզմի և աղաս բարսյականութեան վարդապետութիւնները։ Եւ այսպէս, նորս Գիմաց նստած, փոքրիկ երեխան այժմ նորան մի գերբնական երեսյթ էր թւում . . . Փոքրիկ, գալկահար, շիկահեր գանդուրներով, — կարծես լուսոյ շոզերով, — զարդարուած գէմքը հրեշտակի տեսք էր տալիս նորան, բայց այդ փոքրիկ էտելի ծերացած արտաքինը, սահուն, ծանրաբարոյ զրոյցը և զարմանալի գատուզութիւնները՝ ահա թէ իհան էր զօրեղ տպաւորութիւն թողնում բարի Ռուբլնի վրայ, որ նորան սարսուս էր ազգում . . . Նա մի քանի անդամ ձեռաքով շօշափեց իւր մօրուսը, շուարած, չիւ մանալով ինչպէս շարունակեր այդ օտարուակի խօսակցութիւնը, — նա ինչ կարող էր տակ այն հնարքի մասին, որով կարելի էր «առ

ճեցնելը հոգին . . . թարերազդաբար այդ
գլուխ - կոտրելու խորհրդակցութիւններն
ընդհատուեցան մի շատ փոքրիկ աղջկայ լոյս
ընկնելով։ Նորա սիրունիկ գեմքը, արձա-
պատուած մի ահազին կոյտ թռւխ-թռւխ,
իրար խճճուած, գեղեցիկ գանգուրներով,
կարծես, ահազին սպիտակ լոյն գլխարկի
տակից նայող մի վարդադայն ծաղիկ լինէր,
և ամէն բան մինչ այն աստիճան սիրուն,
գրաւիչ էր նորա վրայ, որ Լիօնէլը կարծեց
թէ Տրովադայի գեղեցկուհին՝ Հեղինէն է
կանգնած իւր տռած նորան երթեր իրա-
ւունք չէին տալիս դիւթական պատմու-
թիւններ կարդալ, այնպէս որ ոչ մի գա-
ղափար չունէր Հեքիաթների, կախարդական
աշխարհի մասին, ուստի և չկարողացաւ
նորա մէջ տռաւել ընական համեմատութիւն
գտնել, — այն ինչ Համերոսից նա բաւական
թարդմանութիւններ էր արել և գխտէր, որ
Եղիականի բոլոր հերոսները իրաւ հետ կը-
ուեցին Տրովադայի Հեղինէի պատճառով և
գխտէր նոյնպէս, որ նա հրաշալի գեղեցկու-
թիւն ունէր։ Այնպէս որ նա հէնց այդտեղ
վճռեց, թէ Տրովադայի Հեղինէն փոքր ժա-
մանակը ճիշդ այնպէս պիտի լինէր, ինչպէս

այս հմայիչ, դիւթիչ փոքրիկ էակը, որ այդ-
ժամանակ կանաչ գերեզմանների վրայով
դիմում էր գեղի իւր կողմը, — և նորան
այնպէս էր թռում, թէ նորա սաներն ամեւ-
նեին չեն կոչում գետնին, որ ամարային
գեփիւռը նորան, ինչպէս մի ծաղիկ, գրկել
և առաջ էր տանում . . .

—Այ և իմ փոքրիկս, բացագանչեց
Դէլլը, մի կողմ ձգելով իւր թիւակը — է՛,
իմ սիրունիկս, ծերունի հօրդ համաշ ու-
տելու բան բերեցիր։

Այս հարցի վրայ փոքրիկ աղջիկը ժըպ-
տաց և այդ ժպիտը մի այնպիսի լուսափայլ
շող ձգեց նորա մեծ, սպիտակ գլխարկի
տակ, որ կարելի էր կարծել, թէ արեն էր
թագյրել այնուեղ իւր ճառագայթները։ Ա-
պա, աղջիկը մի ինչ-որ բազմանշանակ եղա-
նակով բայց և փակեց իւր փոքրիկ բերանը,
դորանով արտայայտել կամենալով, թէ մի
շատ համեղ բան է բերել և բանալով իւր
զամբղիկը, այնտեղից համեց մի աման
անուշաբոյր սուրճ, մի պուտ թանձր սեւ
բուցք և առաջ թիւած երկու մեծ կտոր հաց-
— Հաւանում ես, հայրիկ-ջան, հարցրեց
նա, այդ բոլորը գարսոտելով գերեզմանի

Հուրիւլ:

— Եսատ լաւ է, իմ աղաւնեակ, պատասխանեց Ռուբէնը, նորան թուցնելով օտում, բարձր, շատ բարձր և համբուրելով բարձրածայն նորա երկու այտիկները և ոգետին զնելուց առաջ: — Տես, Ժեսմինստ, այս այնուեղ նոտած է փոքրիկ պարսնը, տես նոնչ ես, խելօք աղջիկ եղիր և դնա նորա մօտ ու տաս: — «Բարի ձեզ»:

Ժեսմինստ այդ յանձնարարութիւնը կատարեց ամենայն ճշգութեամբ: Նա մօտեցաւ այն տեղին, ուր նոտած էր Լիօնէլը, որ զմայլուած հետեւում էր նորան աչքերով, մեկնեց իւր փոքրիկ, կլորիկ թափիկն ու տասց:

— Բարի քեզ:

Նախ քան Լիօնէլն ուշքի կդար, նա թափահարեց իւր գանդրիկներն ու անհետացաւ: Երեխան տեղից վեր թռաւ վարանած ու վատացած: Ռուբէնը ծիծազեց:

— Եսուտ, յետեից լնկիր, իմ քաջիկ: Դէ, վազիր: Նա միշտ այդպէս է առաջին անգամը, — կատարեալ կտուուի ձագուկ է, սիրում է զուարձանալ: Այ նա, այնուեղ անկիւնի յետեն է . . .

Եւ Լիօնէլը վազեց . . . իսկապէս վազեց, մի բան որ շատ հազիւ կպատահէր, — նա իրեն կատարեալ հերօս էր համարում, ճիշդ Եղիսականի մէջ գործող հասակաւոր մարդոց նման:

Իհր Տրովագայի Հեղինէն թագնուել էր անկետն յետելու և նա քաջօրէն վճռեց, որ անպատճառ կը գտնի նորան: Երկար որոշ նելուց և սպիտակ մեծ գլխարկի յետեից ծառերի և գերեզմանների շուրջը երկար պատելուց յետոյ, երբ ի՛նը, բոլորովին շընչ չասպառ, համարեալ ուժասպառ էր եղիլ, առ ինչպէս յատուկ է բոլոր կանանց, թոյլ տոհեց իրեն բոնել և ամաչկոտ հայեացը նայեց իւր փոքրիկ յազմողին:

— Ո՞րտեղացի ես գու, հարցրեց նա, ստամերով նազանքով ձգելով իւր գլխարկի երկար կապը, — գու շատ սիրունիկն ես, այսեղի բոլոր երեխանները ամէնքն էլ այւլանդակ բաներ են:

Որչափ սիրազեղ արտասանեց նա այս բոլորը և որչափ սիրուն տեսք էին ստանում: Նորա վարդագոյն փոքրիկ շրթունքը ներբը, երբ նա խօսում էր, որոնք կարծես համբուրուել էին հայցում: Լիօնէլի մոքովին

անցաւ, որ նո կկամենար համբուրել նորան
և, —այդ միտքը նորան կաս-կարմիր գարձա-
րեց։ Սակայն, Տրովագացի Հեղինէն շարու-
նակում էր գիտել նորան։

— Խնձոր կուզես, հարցրեց նա, իւր
փոքրիկ գրանից հանելով բոլորովին կար-
մրաթշիկ մի խնձոր։ «Ես քեզ կտամ այս
խնձորը, եթէ դու կթողնես, որ առաջ ես
նորա կարմիր մասը կծեմ»։

Նո չարաճճի շարժուածքով կկոցեց
իւր մութ-կապոյտ աշխիները և ժպտաց
այնպիսի սիրահաճ մայիստով, առաջարկելով
նորան խնձորը, որպէս զի թողնէ կծելու
«կարմիր մասը», որ Լիօնէլը բոլորովին
կորցրեց իրեն, մոռացաւ ամէն ինչ, բացի
մի բանից, — ամենահասարակը, որ ինքը
փոքր մանուկ է, իսկ նո փոքրիկ աղջիկ-
Լիօնէլը ծիծաղեց իւր համար բոլորովին
արտասովոր, մանկական ուրախ քրքիջով և
առնելով նորա ձեռքից խնձորը, մօտեցրեց
նորա բերանին, — նո էլ զգուշութեամբ իւր
մանիկ, սուր ատամներով բոնեց «կարմիր
մասը» և կծեց։

— Իսկ մնացածն ինձ, հարցրեց Լիօնէ-
լը, անվաստահութեամբ կոչելով նորա ձեռ-

քին, որպէս զի օգնէ անցնելու լայն, կիսա-
խարխուլ գերեզմանի քարի վրայով, որի
վրայ հաղիւ տեսնեում էր «Մարթա Դումֆիի
97 տարեկան» խօսքերը։ Վազ, շատ վազ էր
ապրում Մարթա Դումֆին, վազուց նա մե-
ռել էր, բայց պէտք է կարծել, որ եթէ նա
արթնանար այդ բոպէին, նորա համար վե-
րաւորական չէր լինիլ տեսնել, թէ ինչպէս
այս փոքրիկ, սիրուն երեխաները թուվուում
են իւր վերջին հանդոսեան տեղի վրայով։

— Այս, մնացածը կարող ես վերցնել
քեզ, զիջողաբար ասաց Ժեսմինան և շողոմ
ժպտով աւելացրեց. իսկ ես դրանուում
մէկին էլ ունիմ։

Եւ որչափ ուրախ քրքիջովին նոքա . . .
առանց մտածելու խեղճ Մարթա Դումֆիի
մասին, նոքա նստառեցին նորա պառտած
սովորը ծածկող կանաչ խոտի վրայ և ու-
ստի-ուրախ գործի կոտոր Ռւզզակի ծառից
պոկած, հիւթալից, թարմ խնձոր ուտելին
մի առանձին մեծ բաւականութիւն էր հա-
մարում Լիօնէլը, իսկ Ժեսմինան մինչ այն
աստիճանն սիրալիր էր գարձել, որ վեհանձ-
նաբար թոյլ տուեց նորան, որ երկրորդ
խնձորի գարմիր մասը» նո կծէ։

—Այժմ զնանք եկեղեցի, ասաց Ժեստինան, հայրիկո գուռը բաց է թողել, գընանք, տեսնենք սուրբ բեմի վրայ դրած սպիտակ, բարձր շուշանները:

Լիօնելը նոյեց նորա խոհուն փաքրիկ դէմքին և մի առանձին շփոթութիւն զգաց... նա հասկացաւ, ի հարիէ, թէ ազդիկն ինչ էր առում, —նա բոլոր ազգերի կրօնական հաւատալիքների հետ ուսումնասիրել էր և քրիստոնէական առասպելաբանութեան պատմութիւնը Ռւսումնասիրութեան հետեւողականութեան և պարզութեան նպատակով նորա համար կազմուած էր առանձին ծրագիր, սրով հաւատալիքների պատմութիւնը բաժանուած էր 12 խմբի.

1. Փթա և եղիպատական դիւցաբանութիւն.

2. Բրահմա, Վիշնու և Հնդկական դիք.

3. Քազդէական և փիւնիկեցոց հաւատալիքները,

4. Յունական և հունական աստուածներ.

5. Բուդդա և բուդդայականութիւն.

6. Կօնֆուցիոս և չինական ազմոնդներ.

7. Մեկուկացոց դիւցաբանութիւն.

8. Օդին և սկանդինավեան հաւատալիքներ.

9. Մահմեդականութիւն և Պարան.

10. Թալմուդ և հրէտական աւանդութիւններ.

11. Քրիստոս և քրիստոնէական դիցաբանութեան աստիճանաբար զարգացումը յունական և հունական հեթանոսութեան ուերակիների վրայ.

12. Գրական վիլլիսովիայութիւն և անխառն բանականութիւն, աղացացանելով, որ այս բոլոր հաւատաները ոչ մի դրական հիմք չունին, այլ միայն մարգկութեան խմացական զարգացման խտիանաբար են հանդիսանում:

Լիօնելի կրթական-գաստիարակչական պարապմունքների մէջ վերոյիշեալ ծրագիրն առաջին տեղն էր գրաւում, նորա տռաջմանը առանձան պարզել էին, որ մեր ժամանակ միմիպյն անսաաշ տղիսութիւնն է հաւատառում գեռ ևս Աստուածային նախապատճառին, որ կրթուած մարգիկ վազուց արդէն հասել են այն եղբակացութեան, որ Աստուած գոյութիւն չունի, որ «առաջին սկզբնապատճառն» է հիւլին, որից առաջ են

գալիս միւս հիւլէները, որոնք անդադար ձևափոխուելով, անդիտակից, առանց մոտածելու, միմիայն նիւթի զօրութեամբ կազմում են աշխարհս, որ յեղափոխական-հիւսն Յիսուսի Աստուածութեան,—Որը, ինչպէս ուսուցանում է քրիստոնէական դիցաբանութիւնը, իւր կեանքով և մահուամբ հաւատացեալներին ցոյց տուեց Երկնից Արքայութեան ճանապարհը,—կարող են հաւատալ միմիայն բոլորովին հասարակ ժողովուրդը և թուլամիտները: Ատկայն, Լիօնելը շատ լաւ դիտէր, որ իւր սիրելի, խելօք և կըթուած Վելի Մօնտրօդն անյողդողդ հաւատում էր այդ «առասպելաբանութեան» սրբութեան, և այժմ էլ անուշիկ ժեսոմինան կրկնում էր «Երթանկը Եկեղեցի» և այդ ասելու ժամանակ, հեղիկ աղաւնեակի պէս փայլեցին նորա աշխիները . . .

—Գնանք, կրկնեց աղջիկը, եկեղեցում հով կլինի, կնսուենք եպիսկոպոսի աթոռի վրայ և դու մի բան կպատմես ինձ հրեշտակների մասին: Դու, իհարկէ, դիտես, որ ամէն գիշեր Աստծու հրեշտակները մեզ մօտ են դալիս երկնքից, իսկ դու քո պահապահ-հրեշտակիդ տեսել եռ:

Միայնակ, ինքն իրեն թողնուած մահկան սիրաը սկսեց տմուր բարախել: Ինչպէս կցանկանար նա հաւատալ երկնային պահապահի դոյութեան, բայց այդ անհնար էր. դա խիստ անմիտ բան է,—բայց միենոյն ժամանակ նա չէր կարողանում առել Ժեսմինային, թէ ինքը չէ հաւատում հրեշտակների դոյութեան, երբ իւր դիմաց կանգնածն իսկ հրեշտակի էր նմանում . . . այնպէս որ առաջարկուած հարցին նա միայն կտրուկ պատասխանեց.

—Ո՞չ:

—Իսկ ես այնպէս էի կարծում, թէ դու տեսել ես նորան, ասաց նա, չէ որ դու լու երեխայ եռ:

—Գուցէ և լաւ չեմ, տխուր ժպառվ պատասխանեց նա, ուստի և հրեշտակները ինձ մօտ չեն գալիս:

—Մայրիկս այժմ հրեշտակ է դարձել, շարունակեց ժեսմինան: Դիտես նա երկար ժամանակ Աստծուց բաժանուած առպետ չկարողացաւ և մի գիշեր, յանկարծ, նորամօտ թռաւ: Հայրիկս ասում է, որ այժմ նա յաճախակի մի քանի բոպէով մեղ մօտ է իջնում, նորան է համբուրում, ինձ է

Համբուրում, թափահարում է իւր մեծ,
սպիտակ սիրուն թևերը և նորից յետ գը-
նում:

—Ուրեմն, նու մեռել է, հարցրեց Լիօ-
նելլը:

—Չէ է, մեզմիկ պատասխանեց Ժես-
մինան, ախր ես քեզ ասացի, որ նու հրեշ-
տակ է դարձել:

—Իսկ նորա հրեշտակ դառնալուց յե-
տոյ դու տեսել ես նորան, հարցրեց Լիօնելլը:

—Ոչ, տխուր հառաջով պատասխանեց
նա, ես դեռ շատ փոքրիկ եմ, և երբեմն
չարութիւն եմ անում . . . բայց, անշուշտ,
ես կտեսնեմ մի օր նորան:

Լիօնելլը ոչինչ չկարողացաւ պատաս-
խանել և մի բոպէից յետոյ նորա եկեղեցի
մոտան:

Հէնց որ բաց արեցին ծանր, կազնի
գուռը, որը կամացուկ կրկին փակուեցաւ
նոցա յետեից, երեսներին մի հաճելի դու-
շութիւն փչեց և անուշաբայր շուշանի հոտն
առան:

Նորա կանդնեցին եկեղեցու մէջ
տեղը, ձեռք-ձեռքի տուած, և խորին եր-
կողածութեամբ, լուս դիտում էին կամ
այն կախարդիչ նկարէն ստուելները, որ

արեի շողը դունաւոր ապակիների միջից
ձգել էր սալայատակին, կամ սեղանի երկու
կողմը սովէ ծաղկամանների մէջ դրուած
բարձր ձինափայլ շուշանները,—որոնք իւ-
րենց մաքրափայլ վայելուչ վեհութեամբ,
կարծես, խորհրդաւոր կերպով յիշեցնում
էին Փրկչի խօսքերը. «Երանի որ սուրբք են
սրտիք, զի նոքա զԱստուած տեսոցեն»:
Վրանչահիւս, մուժ կազնի փայտի վրայ փո-
ւագրուած, նկարներով զարդաբուած հինա-
ւուրց կամարները մեզմում, չափաւորում
էին ցերեկուայ լոյսը. խորհրդաւոր կիսա-
խաւարը և այն առանձնայատուկ լուսութիւնը,
որ յատուկ է միայն ազօթքներով սրբա-
դութուած վայրերին, Լիօնելի վրայ մի բո-
լորովին անծանօթ, աննկարագրելի զմայ-
լանքի տպաւորութիւն թողեցին . . .

Ֆեսմինան ամուր բռնել էր նորա ձեռ-
քեց:

—Գնանք, շնչալով ասաց նա, այնոեղ
աթոսի վրայ մի մեծ, շատ մեծ Աստուա-
ծաշունչ կայ, ես քեզ ցոյց կտամ մի պատ-
կեր,—և նա լայն բաց արաւ իւր սիրուն
ոչըերը, —իմ պատկերս, իմ ամենասիրելի,
ամենաթանկագին պատկերը:

Ի.իօնէլի համար հետաքրքրական է
տեսնել այդ թանկագին իրը և հետեւով
նորան, մի նեղ սանդուղով, որ տանում
էր գէպի աթոռը, ինքն իրեն մտածում էր,
թէ յիրաւի չափազանց անսպասելի, իրեն
համար խոր գաղտնիք մնացած բաներ իմաշ-
ցաւ իւր այսօրուայ տօնին:

Երեսում էր որ եկեղեցու եպիսկոպոսա-
կան աթոռ բարձրանալլ ժեսմինայի համար
սովորական բան էր, նա իսկայն գտաւ ահա-
գին Աստուածաշունչը, մեծ գժուարութեամբ
և հոգածութեամբ վերցրեց այն տեղից,
ուր դրուած էր և երկիւղածութեամբ դրեց
յատակի վրայ՝ թաւչէ բարձի վրայ։ Յետոյ
ինքն էլ նստեց յատակի վրայ և, ուշադրու-
թեամբ թերթոտելով երեսները, Ի.իօնէլին
ասաց, որ նա էլ չոքէ և իւր հետ նայէ
դիրքը։

—Այ, այ դտայ, սրտայոյդ ուրախ
շնչոցով ասաց Ժեսմինան։ —Նայիր։ Տես-
նում ես այս սիրուն Մանուկը, —բայց դու
նորան մի քիչ նման ես, դիտես, ճշմարիսն
եմ ասում։ —Տեսնում ես. իսկ այ այստեղ
այս զգուելի ծերուիները —այ, նոքա ամէնքն
էլ կարծում են, թէ իրենք շատ, շատ խե-

լոք են։ Իսկ սիրուն Մանուկն ասում է նու-
ցա, թէ նոքա որչափ յիմար են, որ նոքա
ոչինչ չեն հասկանում իրենց գրքերից և որ
Աստուած շատ աւելի խելօք է նոցանից, և
գթասիրտ, և բարի . . . եւ, տեսնում ես,
նոքա էլ բարկանում են. և այնպէս զար-
մանում են, որ նա իրենց հետ այդպէս է
խօսում, քանի որ նա միայն մի փոքրիկ
մանուկ է։ Իսկ նա, նա ամեն բան գիտէ,
ինչ որ այս չար, վատ ծերերը չեն կարող
իմանալ։ Եւ այդ բոլորը նորանից է, որ
նա փոքրիկ — Յիսուսն է . . .

Պատկերը ներկայացնում էր Քրիստոս-
սին՝ տաճարում օրէնքէտների առաջ կանգ-
նած բողէն — և Ի.իօնէլը դիտում էր այդ
նկարը մի առանձին, զգածուած հետաքըր-
քրութեամբ . . . Դեռ ևս փոքր մի մանուկ
էր և արդէն կարող էր ուսուցանել դի-
տուններին։ «Թէև, մտածում էր Ի.իօնէլը
իւր անմիտար կասկածամութեամբ, դու-
ցէ, նոքա ոչ մի դիտութիւն էլ չունէին,
ուստի և գժուար չէր նորա համար, ուսու-
ցանել նոցա։

Ժեսմինան սրտի ուզածի չափ դիտելով
և զմայլելով նկարով, դիրքը ծածկեց, երա-

կիւղածութեամբ գրեց առզը և իւր փոքրիկ
խօսակցի կողքին նստեց՝ աթոռի վերին
աստիճանի վրայ:

—Ահունդ ինչ է, հարցրեց նա:
—Իիօնէլ, պատասխանեց երեխան:
—Իիօնէլ, զարմանալի անուն է, —ինչ
քան է Իիօնէլ, ծաղիկ է:

—Ոչ, քո՞ անունդ է ծաղիկ:
—Այս, իմ ծննդեան առաւօտը հէնց
մեր յասմիկի թուփն էլ ծաղիկց, դորս
համար էլ անունս Ժեսմինա՝ Յասմիկ են
գրել: Իմ անունս ինձ առելի է դուր դա-
լիս, քան թէ քոնդ:

—Ինձ էլ է դուր դալիս, ժպտավէմ
պատասխանեց Իիօնէլլ: Մայրիկս ինձ Իի-
լիս է կրնչում:

—Այդ անունն ինձ դուր է դալիս:
Սիրուն անուն է, —այսուհետեւ ես էլ քեզ
այդպէս կրանչեմ — Իլլիս, ասաց Ժեսմինան
և փաղաքշանկըով գրկելով իւր թեկիներով
նորա վիզն՝ ասաց, «այժմ, Իլլիս, ինձ հա-
մար, մի հէքիւթ ասա»:



b.

Իիօնէլը շփոթուած նորան էր նոյում,
—ինչ պիտի պատմէր նորան: Նա մի այնա-
պիտի բան չգիտէր, որ կարող լինէր զբա-
զեցնել փոքրիկ աղջկանը... ինչպէս լու էր
զգում իրեն, երբ նա իւր վզովն էր փա-
թաթել փափիկ բազուկները, որքան լու
էր նորա փոքրիկ, սիրուն դէմքի մերձա-
ւորութեան զգացումը, իսկ նորա աչքերը՝
նրչափ հրաշալի էին: Երբէք, Երբէք իւր
կեանքում այդպիտի աչքը զեռ չէր տե-
սել, մինչեւ իսկ իւր մօր աչքերն անդամ
այն հրաշալի գեղեցկութիւնը չունէին: Ժես-
մինայի պայծառ շողարձակ աչքերը փայլում
էին այն անխուսվ, հեղիկ լուսավայլով, որ
միայն փոքր մանուկիների անմեղ հայեացք»

ների մէջ են ցոլում, մեր հոգին զմայլելու
չափ յուղելով . . . Մի քանի ծաղիկներ,—
իսկ գորա ևս շատ քիչ են,—իրենց մաքուր,
քնքոյշ գեղեցկութեամբ յիշեցնում էին
մանկական այդ հայեացքը,—մտախոհ բազ
մերանու մանուշակները, քնքոյշ-կապտաւուն
զանգակիկները, սիրուն, ժպառն անմոռուկ-
ները՝ սոքա ևս նոյսում են մեղ նոյնպիսի
վստահութեամբ և պարզութեամբ,—և Ժեռ-
մինայի աչերը նոյնպէս յիշեցնում էին այդ
ծաղիկների ամբողջ գեղեցկութիւնը . . . Լիօ-
նէլլ մի անգամ էլ յիշեց Տրովայի Հեղինէն-
—Հը՛, ի՞նչ է, չպիտի՞ պատմես, մի-
րողէաչափ համբերութեամբ սպասելուց յեռ-
տոյ հարցրեց նաև Դա ի՞նչ գիրք է ձեռիդ-
եւ նա իւր վարդագոյն փոքրիկ մատը կպցրեց
այն գրքին, որը Լիօնէլլ բոնել էր:

—Հոմերս է, պատասխանեց Լիօնէլլ,
իմ դաստիարակս առաւուեան ճեպակառ-
քով գնաց այսակղից և այս գիրքն էլ մօ-
ռացաւ, այժմ ողէոք է իրեն ուղարկեմ
գիրքը փոստով:

—Իհարկէ, ողէոք է ուղարկել, հաւա-
նութիւն տուեց Ժեռմինան:—Իսկ ի՞նչ բան
է Հոմերոսը:

—Նա նշանաւոր բանաստեղծն էր, բու-
լոր բանաստեղծներից ամենահինն էր, որ-
չափ յայտնի է, նորա հայրենիքը Յունաս-
տանն էր, բացատրեց Լիօնէլլ, և ապաւոմ
էր մեզնից շատ, շատ կանուխ: Այս գրքի
մէջ նա պատմում է Տրովադա քաղաքի
պատերազմը,—դա մի վիպական բանաս-
տեղծութիւն է:

—Ի՞նչ բան է վիպական բանաստեղ-
ծութիւնը, հարցրեց Ժեռմինան,—յետոյ ել
ի՞նչ բան է Տրովադա քաղաքի պատերազմը?
Լիօնէլլ հազիւ լոելի ձայնով քմծիծաղ
տուեց:

—Դու չես հասկանալ, սիրելիս, եթէ
ես նոյն իսկ բացատրէի քեզ, հովանաւորող
շեշտով արտասանեց նա, —նա իրեն բոլո-
րովին չափահաս էր զգում այս միամիտ
մանկան մօտ:—«Հոմերոսը գրել է սուանա-
ւորներ, դու գիտես ի՞նչ բան է սուանա-
ւորը»:

—Իհարկէ, գիտեմ, ասաց նա զլուխը
նորա ուսին թեքելով: Ես շատ սուանաւոր
եմ սովորել, կուզես մէկն ասեմ.

Դուք որ մանկանց կոչում էիր գետի Քեզ,
Դուք, ով Փրկիչ, տես ի՞նչ խեղճ ու փոքր եմ ես,

Աղաչանքիս ձայնին, Յիսուս, Դու լսիր,—
Ով քաղցր Յիսուս, ինձ էլ Քեզ մօտ ընդունիր:
Եւ նա նայեց նորան իւր վարդաշաղ
ժպտով:

—Լաւ ասացի, հարցրեց նա:

—Նատ լու, մտախոհ պատասխանեց
Լիօնէլը, թախծաղին մտածելով, որ իւր
հայրը «վայրենի» էր անուանում նոցա, որոնք
հաւատում էին Քրիստոսին . . .

—Լաւ, ուրեմն, պատմիր ինձ այդ Հու-
մերոսի և Տրովագայի պատերազմի մասին,
ասաց նա կատուիլի նման սիրազստիլ լի-
նելով նորան:—Պատմածդդ անշուշտ հրեշ-
տակների մասին կլինի:

—Ոչ, պատասխանեց Լիօնէլը, բոլորը
դիւցազն-հերոսների մասին պիտի պատ-
մեմ, —և նոքա ամէնքն էլ կուռում էին
իրար հետ մի իշխանուհու պատճառավ, որ
Հեղինէ էր կոչում և զարմանալի գեղեց-
կութիւն ունէր:

—Ինչո՞ւ էր թողնում այն իշխանուհին,
որ նոքա կուռեն, լուրջ գէմքով հարցրեց Ժես-
մինան, նա, ուրեմն, չարասիրտ էր, եթէ չէր
խղճում խեղճ հերոսներին. նա աւելի լաւ
կանէր, եթէ նոցա ամէնքին էլ հաշտեցնէր:

—Բայց նոքա չէին կարող, հասկանում
ես, ասաց Լիօնէլը, նոքա իրենք չէին ու-
ղում այդ բանը:

—Բայց այդ հերոսներն էլ զարմանալի
մարդիկ են եղել, ասաց Ժեսմինան: Նոքա
այժմ որտեղ են:

—Օ՛, նոքա վազմւց շատ վազուց են
մեռել ամէնքն էլ, ծիծաղեց երեխան, —
իսկ ոմանք հաւատուիացնում են, որ նոքա
ամենէին գոյութիւն էլ չեն ունեցել:

—Օ՛, ուրեմն գոքա «Կատուն կօշիկ-
ներով» հերիաթի նման պատմութիւններ
են, ասաց Ժեսմինան, և քո գիրքն էլ,
իմինի պէս, կախարդական պատմութիւն է:—
Միայն իմ «Կատուն կօշիկներով» աւելի
հետաքրքրական է քան քո Տրովագայի պա-
տերազմները: Իսկ գու ծանօթ ես իմ կա-
խարդական պատմութիւնների գրքի հետ:

Լիօնէլը երբէք չէր աեսել այն, ինչ որ
Ժեսմինան «կախարդական պատմութիւնն-
երի գիրք» էր անուանում, նոքա հայրն էլ
Անդլիայի գործոցներից մէկի աեսչի ոլ-
ֆոլմանի կարծիքին էր, որ ապել էր իւր շըր-
ջալսերականի մէջ, թէ «կախարդական պատ-
մութիւնները թէ բարոյական և թէ մտաւոր

ղարդացման վրայ կորստաբեր ազգեցութիւնը ունին, որովհետեւ բոլորովին հակասական բովանդակութիւն ունին, քանի ինչ որ գիտութիւնն ու փորձն են ապացուցանում»։ Եւ այսպէս Ժեսմինայի հարցին Լիօնելլ միայն բացասական պատասխան կարող էր տալ։

—Եթէ այդպէս է, ուրեմն ես քեզ կպատմեմ որ և է բան իմ գրքից, ասաց Ժեսմինան։

Լուրջ և մտախոհ գէմքով, իւր աչերը ուեւոելով գէպի հեռուն՝ անհուն տարածութիւնը, կարծես, այնուո՞ իւր առաջ պատկերացաւ ինչ որ երկոյթ, նու հանդիս ձայնով ոկսեց։

—Կար մի փոքրիկ ազդիկ և կար նոյն պէս մի փոքրիկ տղայ, —ինձ ու քեզ չափ, նոքա շատ սիրուն և բարի էին, նոքա մի ծերունի հօրեղբայր ունէին, չար, չափազանց չար մի մարդ։ Հօրեղբայրը նոցա տեսնել չէր կարող, որովհետեւ նոքա բարի էին, իսկ ինքը չար էր, և ահա մի գեղեցիկ օր նու տարաւ նոցա մի մութ, իսր անտառ, որտեղ արևի շողքն էլ չէր ընկնում, և խեղճերին այնուղիւ թողեց։ Երբ որ նոցա միայնակ մնացին, —նոքա շատ դէս ու դէն

ընկան, շատ ման եկան այս ու այն կողմը և տեսան, որ այդ խոր անտառից այլ ևս գուրս գալ չեն կարող . . . նոքա շատ էին յոդներ, և շատ էլ քաղցած էին, ուղում էին ուտել, —է, և նոքա գրկեցին իրար, այ այսպէս, և Ժեսմինան աւելի մօտեցաւ նորան, —ազօթեցին Աստծուն և քնեցին և հէնց այդտեղ երկուսն էլ մեռան, և Աստուած էլ, երկուսն էլ, տարաւ իւր մօտ երկինք։ Իսկ գորա համար անտառի բոլոր մշահաւերն այնպէս տիսրեցին։ Նոքա թռան, եկան նոցա մօտ և նոցա ծածկեցին սիրուն, կանաչ, կարմիր տերեկներով, —Աստուած էր հրամայել մշահաւերին, որ նոցա այդպէս թագեն, որովհետեւ նոքա բարի էին, իսկ նոցա հօրեղբայրը շատ չարն էր, —մշահաւերն էլ այնուղիւ արեցին, ինչ որ Աստուած էր հրամայել իրենց։

Պատմութեան վերջին նորա ձայնը հետ գչետէ աւելի թռուլացաւ և նա հազիւ լսելի ձայնով հարցրեց նորան, իւր ծանրացած կոպերի տակից հազիւ նայելով։

—Պատմութիւնս լաւն էր։

—Ետա լաւն է, պատասխանեց Լիօնելլը. այդ բողեին որչափ մեծ էր զգում

իրեն նորանից, Եւ անդիսակցաբար նորան
աւելի ամուս գրկեց, կարծես, ինչոր բանից
պաշտպանել կամենալով նորան . . .

—Ես կարծում եմ, ասաց նա կիսա-
քուն, որ քո Տրովական յիմար պատե-
րազմներդ տարան քունս . . .

Նորա կիսաբաց փոքրիկ բերնից և հան-
դիսու, խաղաղ ճնշառութիւնից երեսում էր,
որ նորա քունը տարաւ իսկոյն։ Լիօնէլք
նստած էր անշարժ, հոգածութեամբ գրկած
պահելով նորան իւր թեով և մտախոհ դի-
տելով շուրջը։ Նորա գիմաց ուղղակի երե-
սում էր խաչկալը, որտեղ նկարուած էին
տասներկու տուաքեալների պատկերները.
Նա նպում էր նոցա ինչ-որ փորձիչ հայեաց-
քով։ Իհարկէ ինքը գիտէր նոցա պատմու-
թիւնը.—դիտէր, որ նոքա ամէնքն էլ Գա-
լիլիայի ծովակի հասարակ, պարզ ձևորմներ
էին, որ նոցա կոչեց Յիսուսը, հիւսն Յով-
ոէփի որդին, և որ նոքա հետեւում էին նո-
րան ամէն տեղ, երբ նա քարոզում էր
Սիրոյ նոր, տարօրինակ վարդապետութիւնը,
որ կեզծիքի և չարիքի մէջ թաղուած աշ-
խարհին խելագարութիւն էր թւում։ Նոքա
խեղճ, աղքատ և սովորական մարդիկ էին,

նոցա մէջ չկային ոչ թագաւորներ, ոչ զօ-
րավարներ, ոչ հերոսներ, և ոչ էլ աչքի էին
ընկնում ոչ իրենց աղնուական ծագումով,
ոչ ուժումնասիրութեամիւ, և սակայն՝ նորա
մարդկութեան պատմութեան մէջ այնպիսի
նշանակութիւն ունին, որ նոյն խոկ ամե-
նանշանաւոր թագաւորներն անդամ չեն
ունեցել։ Որքան տարօրինակ է այդ, շատ,
չափազանց տարօրինակ, մտածում էր Լիօ-
նէլք, —բայց ամէնից աւելի զարմանալին
այն է, որ մի հասարակ մարդ, հիւսնի որ-
դի, կարող էր ստիպել հաւատալ իրեն,
ինչպէս Աստուծոյ և որ գէպի նա ունեցած
հաւատն, ահա, տասն և ինն գար անյոզ-
գովդ է մնացել։ Բայց նա ինչ է արել։
Ոչինչ բայցի բարութիւնից ի՞նչ էր ուսու-
ցանում նա։ Միայն ինքնազոհութիւն և սէր։
—Լիօնէլի բոլոր գաստիարակները, որոնցից
իւրաքանչիւրը իւր տեսակէտից յղկէլ էր
նորա մանկական միտքը, ամէնքն էլ համա-
ձայն էին այն կէտում, որ խոստովանում
էին նազովրեցի Յիսուսի մէջ իմաստութեան
վեհագոյն տիպար, որբութիւն և բարու-
թիւն։ Բոլոր ամենամեծ փիլիսոփաներից
մտածողների, գիտնականների մասին, —նոյն

իսկ Սովորատէսի և Պղատօնի մտսին կարելի
է պարսաւանքի և մեղադշանքի մի կէտ
գտնել։ Քրիստոսի մտսին ոչինչ չի կարելի
ասել . . . Նորա պէս ոչ մի ժամանակ ոչ
ոք չէ եղել։ Լիօնէլը հառաջեց և նորա աշ-
քերն առանձին գոհունակութեամբ յառած
սպիտակ, բարձր շուշաններին. — այդ մաքուր
բուրմունքի ծաղկեթափակները, խրաբան-
ջլորն իւր բարձր, կանաչ ցողունից, կար-
ծես, իրենց ամբողջ գեղեցկութիւնը անխօս
զոհ էին մաստուցանում իրենց գեղեցկու-
թեան Արարչին . . . «Նայեցէք գաշտային
շուշաններին, ինչպէս են աճում նոքա՝ ոչ
աշխատում են և հիւսում», իսկ Ես ասում
եմ ձեզ, որ նոյն իսկ Սովորմնը իւր բոլոր
փառքի ժամանակ չէր հագնուում այնպէս,
ինչպէս նոցանից իւրաքանչիւրը» . . .

Լիօնէլը առաւել ամուր գրկեց փոքրիկ,
քնած Ժեսոմինային . . . այդ բապէին նորա
հոգին սիրոյ և խաղաղութեան այնպիսի պա-
հանջ էր զգում . . . Արեգակն ուղղակի լու-
սաւորում էր երկու փոքրիկներին ոսկեփայլ,
միապազաղ լուսով և թւում էր, թէ նորա
հրափայլ ճառագայթները Փրկչի գեղի փոք-
րերն ու անօդնականները տածած սիրոյ հա-

դրդիչ լարերն են, որ նոքա առանց բա-
ռերի քարոզում են այն սուրբ բառերը.
«Թոյլ տուելք մանուկներին գալ ինձ մօտ և
մի արգելէք նոցա, որովհետեւ այդպիսինեռ
բինն է Աստուծոյ արքայութիւնը»։

Լիօնէլը խոր մտածութեան մէջ ընկաւ
և նորա քունը կամաց-կամաց սկսեց տա-
նել, երբ եկեղեցու գուռը կամացուկ բաց-
ուեցաւ և Ռուբէն Դէլլը եկեղեցի մտաւ.
նորա հետ կար և մի ուրիշ մէկը՝ աւելի
երիտասարդ, որ գիմեց ուղղակի գեղի եր-
գիների դասը, ուր զետեղուած էր երգե-
հոնիք. Ռուբէնը երկիւղածութեամբ գլխարկը
հանած, աչքերով իւր աղջիկն էր որոնում։
Լիօնէլը տեսնելով նորան, նշանացի հառ-
կացրեց, որ Ժեսոմինան քնած է, և նա էլ
զմայլուած այդ գեղեցիկ պատկերով, զգու-
շութեամբ՝ սոների մասների ծայրի վրայ
մօտեցաւ այնտեղին, ուր մանուկները նըս-
տած էին իրար գրկած. — «Երկու փոքրիկ
սիրուն թռչնակների պէս», մտածեց ինքն
իրեն, և խեղճ, գալկահար երեխան այս
անգամ շատ ուրախ-զուարթ թուեցաւ նու-
րան։

Հէնց այդ ըստէին ձայների ալիքները

լուսվեցին օդը . . . դաշնակահարի վարպետ
մատների տակից ներդաշնակութեան հու-
սանքներն աւելի ու աւելի էին զօրանում
և Բախի ֆուգի բարդ մեղեղին մի առան-
ձին գեղեցկութեամբ էր հնչում զօրեղ եր-
գեհօնի ներդաշնակ, վայելուչ հնչիւններից
Լիօնէլը յանկածակի վեր թռաւ—Ժեսմի-
նան արթնացաւ: Աչքերը շփելով իւր վափ-
լիկ բռունցքներով, նա յօրանջեց, աչքերը
կլոցեց և, տեսնելով հօրը, ժպտաց իւր լու-
սափայլ ժպտով:

—Մենք անսառի փոքրիկ մանուկներն
էինք, այնտեղ էինք, սկսեց քնքանեռով բա-
ցարել Ժեսմինան,—և սպասում էինք, որ
մշահաւերը դան, մեղ ծածկեն, բայց, երկի,
նոքա չկարսղացան տերիներ բերել այս վակ
լուսամուտներից:

—Այո, շատ դժուար կլինէր, բարեսիրտ
ժպտով առաց Ռուբէնը, —սակայն, իմ փոք-
րիկ չարածճի, իջիր աթոսից, ճաշի ժամու-
նակ է, տուն պէտք է դնալ:

Ժեսմինան վեր թռաւ և շտապ-շտապ
իջաւ սանդուղներից: Լիօնէլը հետեւց
նորան:

—Ասի, դնանք մեղ հետ, սիրովիր ա-

սաց նա, —հայրիկ, միթէ նա չէ գալիս մեղ
հետ: Նա այնպէս լաւ երկխայ է:

—Եթէ կրայ, իհարկէ, մենք էլ շատ ու-
րախ կլինենք, սպասախանեց Ռուբէնը, բայց
նա փոքրիկ պարսն է, նա ունի հայր, մայր,
որոնք, գուցէ, սպասում են նորան:

Լիօնէլը լուս, գլխիկոր կանգնած էր,
նոքա տոռն են գնում, այս բարեհողի ժամ-
կոն ու իւր սիրունիկ աղջիկը . . . ինչպէս
միայնակ զգաց նա իրեն նորից, —ինչպիսի
սառնութիւն պատեց նորան կրկին . . . իսկ
հրաշալի հնչիւնները գեռ ևս ողսղում էին
ուր բարձունքից և նորա մէջ օտարոտի, մինչ
այդ ժամանակ իրեն անհասկանալի զգա-
ցումներ էին զարթեցնում: Նա ուղում էր
եկեղեցում միայնակ մնալ, որովէս զի աշխա-
տէ ըմբանել, թէ ինչ դապանիք ունին այդ-
ձայները, որ առանց բառերի խօսում են . . .
նորան այնպէս չէր թւում; թէ հրեշտակնե-
րի փառաբանութիւնն է, —բայց չէ որ հրեշ-
տակներ չկան, չկան. նորան չէր թւում թէ
երկնից Աչքայութեան գոներն են բացւում,
—բայց երկնից Աչքայութիւն՝ չկայ: Այդ-
ասուածածային հնչիւնների մէջ նոյն իսկ Առ-
տուծոյ ձայնը չէր լուսում, —բայց նա գիտեր,

որ Աստուած չկայ . . . նա ծանր հոգոց հաշնեց . . . արտասուրի երկու խոշոր կաթիլ դրսուեցան նորա աչքերից և ընկան նորա բրդէ բաճկոնակի վրայ։ Ժեսմինայի բազուկը ները մի ակնթարթում դրկեցին նորան։

—Այս, սիրելիս, իմ սիրունս, մի լար, շնչում էր նա քիշշանկով նորա ականջնն, — լաց մի լինիր, մենք միասին կերթանք հայրիկի մնա, նա քեզ հետ լաւ կվարուի, իսկ ճաշից յետոյ քեզ ցոյց կոտամ իմ թանկապին, պառաւած ձիս։

Լիօնէլլ ակամայից ժպանց, բայց նորա պթունքները դեռ ևս դողում էին ջղաձգօսքն։ Խեղճ երեխայ։ Դժուար թէ ինքը կուրուանար ըմբոնել իւր յուդման պատճառը, — թէ ինչու իւր սիրտը հիւանդագին ճմլուեցաւ և արցունքները յանկարծ գլուխուեցան նորա աչքերից, ինչու նա այդշափ բուռն կերպով զգաց, որ գժուար է ապրել այս սառն, անդութ աշխարհում, . . բայց և այն պէս նա շատ դոհ էր ժեսմինայից . . . Ուու ըէն Դէյլլ ուշադիր դիտեց նորան։

—Ռւզնում ես դալ, ճշմարիս, մեզ մօտ և միասին ճաշել, հարցրեց նա, մենք հասարակ մարդիկ ենք, մեզ մօտ ամէն բան ազ-

քատիկ է և պարզ և եթէ չես քաշուիլ, խնդրեմ չնորհ բերել։

—Ես շատ չնորհակալ եմ ձեզնից, շատ կցանկայի ձեզ մօտ դալ։ Տեսնում էք, ես այսօր բոլորովին միայնակ եմ, իս նախկին դաստիարակը գնացել է այսօր առաւօտեան, իսկ նորա տեղն եկադ դաստիարակը պիտի դայ միայն երեկոյեան, — իսկ այժմ ես գործ չունիմ անելու, առ այժմ դասեր չունիմ պատրաստելու և ինձ համար բոլորովին միհենոյնն է՝ այսուեղ կլինեմ, թէ տանը ևս ինքս այսօր ինձ համար տօն նշանակեցի, — այդ տաելիս նա ուղղակի նայեց Դէյլլ աչքերին, — և ես կամենում եմ, որ դուք ես, մըր Դէյլլ, իմանաք, որ ես այդ արել եմ առանց հօրո գիտութեան և թոյլուութեան։ Այսպէս եմ յոդնել գլքերից։ Այսպէս կկամենայի թարմ, ազատ օդի մէջ լինել . . . իհարկէ, այս բոլորն այժմ իմանալով, դուք, գուցէ, այլ ևս չէք կամենայ ինձ ձեր տունն ընդունել, — այն ժամանակ ես ամբողջ օրն անստառում կանցնեմ, կամ թէ մենակ կը մնամ այսուեղ եկեղեցում։ Ես շատ կցանկայի եկեղեցում տեղի երկար մնալ . . .

—Ազգէն յոդնել է գլքերից, կարեկ-

ցարար արտասանեց բարի Դէյլը։ Դու, իմ կարծիքով, դեռ այնքան փոքր ես, որ դրբերը գեռ չեն մախչիլ քեղնից։ Բան թէ ահա տառաւմ մենակ պիտի պտտես, աւելի լաւ է դնանք ինձ ու Ժենմենայի հետ մեզ մօտ, —միայն, տես, հօրդ կատես, թէ ուր և ում մօտ ես եղել, այդ է պայմանա։

—Եհարկէ, կտաեմ նորան, հաստատապէս պատասխանեց Լիօնէլը։ Ես միշտ ամէն ինչ ասում եմ նորան, որքան էլ այդ բանը անախարժ լինի նորա համար։ Կարծէր, նա միշտ նեղացած է լինում ինձնից, ինչ էլ որ անում եմ; —բայց այդ առաջ է գալիս նորանից, որ նա ինձ բարիք է կամենում։ Նա լաւ մարդ է և խոր կեանքում ոչ մի վատ բան չէ արել։

—Այդ գէսպառմ նու միայնակ է իւր տեսակի մէջ, չորշոր պատասխանեց Ռուբէն։ Գնոնք, փոքրիկ պարսնիկս, ես քեզ ցոյց կտամ մեր եկեղեցին, ինձնից լաւ ոչ ոք չձանաշում նորո՞ն։

Նոքա երկիւզած լուռթեամբ պտտաւմ էին, միայն Ռուբէնը կիսաձայն բացատրութիւններ էր տալիս, ինչ որ պէտք էր բացատրել, երբ նա Լիօնէլի ուշադրութիւնն էր

հրաւիրում հինաւուրց տաճարի զանազան արժանայիշատակ կէտերի վրայ։

—Է, հաւանեցիր մեր եկեղեցուն, փոքրիկ պարսնիկ, հարցըրեց նա երբ նոքա վերանցըրին գիտելը։

—Շատ հաւանեցի, պատասխանեց մասնուկը, բայց աւելի գուր եկաւ ինձ երաժշտութիւնը, լսեցէր, ոս ինչ է ածում այժմ; և խոր գալիսհար, յուզուած գէմքը վերը բարձրացրեց։

—Դու օրհներդ է, որ մենք միշտ երագում ենք օրհնութեան ժամանակ, —«Տէրք քո Ռուբը օմեաններից լսիր մեր ձայները», պատասխանեց Ռուբէնը։ Սա մի հրաշալի շարական է, որի երգերու ժամանակ թէ սիրոն ու հոգին, թէ ձայները հաւասարապէս մասնակցում են։ Բայց, սիրելիներս, արդէն ժամանակ է, առն գնանք ճաշելու։

Նոքա գուրս եկան եկեղեցուց։ Այժմ՝ կէսօրուայ շողին արեն աւելի էր տաքացանում, ծաղիկներն աւելի անոյշ էին բուրում և մեղոններն անշարժ օդի մէջ անդադար բղզում էին։ Դերեզմանատանից գուրս գալով, նոքա անցան մեծ, բանուկ փողոցից և սկսեցին բարձրանալ մի նեղ փողոցով, որի եր-

կու կողմը շինուած էին հին ձեի, մի ուրիշ՝
ինքնուրոյն տեսակի տներ, մի ինչոր տա-
րօրինակ կերպով իրար վրայ յենուած։ Այդ
անակներից մէկը միւսներից մի քիչ հետու
էր շինուած, մի փոքրիկ պարտիզի մէջ, որ
լիքն էր յասմիկի թփերով, գորտ առաջ
Ռուբէնը կանդինեց և դուռը ծեծեց։ Դուռն
խիզին բաց արտ մեծ ապիտակ դոդոցով,
տարիքն տռած մի կին։ Նա մեծ զարմանքով
դիտում էր Լիօնէլին։

— Հօքիր Կէտ, հօքիր Կէտ, արախ յու-
ղումով ըլլըլացրեց Ժեսմինան, — տեսնում ես
այս փոքրիկ պարսնիկին, նա այնպէս
լաւն է, այնպէս բարի, ամբողջ տռաւոտը
անտառում խաղ էինք անում, խաղացինք
և Տրովական պատերազմ, այժմ նա մեղ
հետ պիտի ճաշէ, իսկ ճաշից յետոյ ես նորան
պիտի ցայց տամ իմ պատաւ ձիւսկաւ

Հօքաքոյր Կէտը, ինչքան էլ ուզեց և
տշխտտեց, բայց ոչինչ բան չը հասկացաւ իւր
փոքրիկ եղբօր-աղջկայ պատմութիւնից և
հարցական հայետցրով նայեց Ռուբէնին։

— Սա փոքրիկ մ-ը Վելիսկուրան է, ա-
սաց ժամկրչը, այն մ-ը Վելիսկուրանի որդին,
որ վարձել է այն մեծ տունը։ Նա յոգնել է

իւր գասերից և կամեցել է այսօր տօն սահմաններ իւր համար, — ահա այժմ՝ էլ նա ովեա-
տի մեղ հետ ճաշէ, իսկ յետոյ էլ կլսազայ
Ժեսմինայի հետ։

Հօքաքոյր Կէտը քաղցր ժպտաց և մին-
չե իսկ փոքրիկ մ-ը Վելիսկուրան առաջ յար-
դանքով «կնիք» արեց։

— Ներս հրամեցեք, որո՞ւ, չնորհ արէք,
ասաց նա, նստեցեք, ինդպետն ձեր տունը
համարեցեք։ Ճաշն արդէն պատրաստ է,
սպասելու կարիք չկայ։ Միայն ովէտք է մի
քանի բաղէ Ռուբէնին միջոց տալ, որ ձեռ-
ները լուանայ և յետոյ սեղանն օրհնէ։ — Իսկ
գու, սիսելի Ժեսմինա, գլխարկդ հանիք և
հանդիս նստիք, անուշիկս։

Ժեսմինան խիզին հանեց իւր մեծ,
ապիտակ գլխարկը և հանեց այնպէս շատ-
պելով, որ քիչ էր մնում մի երկար խոսքովիս-
կի հիւսակ պոկեր հետը, որ խճճուել էր
գլխարկի կապերի հետ։ Լիօնէլը մինչեւ իսկ
երկիւղից ճաց նկատելով այդ և ամենայն
հոգատարութեամբ օդնեց նորան ապատակ
այնքան ցաւ պատճառով խճճուած հիւսակից։
Առանց գլխարկի Ժեսմինան տեղի ոքանչելի
էր։ Լիօնէլը ճաշի ժամանակ նորտ մօտ նըս-

տեց։ Սեղանը ծածկուած էր մաքուր տիռուցով, բաժինները դրուած էին, —սպասում էին միայն Ռուբէնին, որ ձեռները լուարով շտապով դարձաւ։ Հօրաքը Կէտը սեղանի վրայ դրեց տպուրի ոկաւառակը, որից տաք գոլորշին քուլս-քուլս բարձրանում էր։ Ռուբէնը զլուխը խոնարհեց և երկիւզածութեամբ արտասանեց. «Տէր Աստուած, արժանի արա մեզ չնորհակալ լինել Քեզ այն բոլորի համար, որ այսօր ստանում ենք Քեզ զանից»։ Ժեսմինայի քաղցր ճայնը արտասանեց «Ամէն», և ամէնը սեղան նստեցին Ռուելիքն ամենապարզ կերակուր էր, միայն թարմ էր և մննդարար։ Հօրաքը Կէտը հրաշալի տանտիկին էր և յայտնի էր ամբողջ դիւզում խւր պատրաստած տանձի մաճառով։ Նա մի փոքրիկ բաժակ ածեց գուրանից, խոնարհուելով հրամցրեց Լիօնէլին, խնդրելով համը տեռնել։ Լիօնէլն ամենայն ախարժանօք խմեց բոլորը և մտածեց, որ Օլիմպոսի աստուածների վայելած նեկտարը հազիւ այսչափ լաւը լինէր։ Նա, ի մեծ զարմանու խր, զդաց, —որ ախորժակը բացուել է։ Ամէն բան, ինչ որ տալիս էին խեղճ Ռուբէն Դէյլի ճաշի ժամանակ, նորան խիստ

համով էր թւում։ Ճաշը վերջացնելուց յեւ տայ, ամէնըն ելան, և Ռուբէնը նորից գլուխը խոնարհելով, արտասանեց. «Տէր Աստուած, արժանի արա մեզ չնորհակալ լինել Քեզ այն բոլորի համար, որ այսօր ստացանք Քեզանից», —և փոքրիկը նորից երկիւզածութեամբ կրկնեց՝ «Ամէն»։ Ապա Ռուբէնը, ընդհատած գործն սկսելուց առաջ, նստեց խր ծխամնութելք քաշելու, խոկ ժեսմինան հազիւ մի կերպ հանելով վրայից փոքրիկ գողնոցը, որ ճաշին կապել էին, բոնեց Լիօնէլի ձեռքից և քաշ տուեց տան յետեի բակը, ուր սիդաճեմ պտտում էին մի քանի առ քաղաղ՝ շրջապատուած հլուհնազանդ հաւերով։

—Ահա իմ պառաւած ձիուկս, տեսնում ես, այ, այնտեղ պատի յետել, բացագանչեց Ժեսմինան, իմ բարի, սիրուն ձիուկս։

Այդ ձիուկը ոչ այլ ինչ էր, բայց եթէ հնամաշ մի խաղալիք, որ մի ժամանակ, ճուճանոցի վրայ ամրացրած արշաւող ձի էր ներկայացնում . . . բայց աւազ, այժմ խեղճ չորքտանին զրկուել էր և աչքերից, և բաշից, և պոչից, և առհասարակ մի շատ ողոր

մելի բան էր ներկայացնում: Յայց այդ բու-
լորը ոչ մի ազգեցութիւն չէին թողնում
Ժեսմինայի դէպի նա տածած խանդադա-
տանքի վրայ . . .

—Օ՛, իմ սիրելի ձիուկո, քնքշանքով
շնչում էր նա, շոյելով նորա պարանցը,
դու գիտե՞՞ ինչու եմ սիրում քեզ,—որով
հետեւ դու թշուառ ես, նորա համար, որ դու
բացի Ժեսմինայից ոչ ոքի պէտք չես . . . դու
էլ շոյել նորան, աւելացընց նա՝ դասնալով
Լիօնէլին, —նա այնպէս թշուառ է, հնա-
ցած . . .

Լիօնէլը, չնայելով իւր լրջութեան և
այնքան շատ գրքեր կարգալուն,—կատա-
րեալ սրացայզ—համակրանքով վերաբերուե-
ցաւ այդ մանկական զուարծութեան և ինքն
էլ քնքշաբաշ գրկեց կիսախարխուլ խաղա-
լիքը:

—Այ, այդպէս լու է, թաթիկներով
ծափ տալով բացագանչեց Ժեսմինան, այժմ
նա կատարելապէս բազգաւոր է: Այժմ նա
մեզ հետ զուարթ կարշաւէ:

Եւ նա աբագ թռաւ իւր սիրելի ձիու-
մեջը և, յետ ու առաջ ճնճուելով, երեա-
կայում էր, թէ սրաբշաւ գնում է: Լաւ է,

հա, աղաղակում էր նա, բոլորովին շնչառ-
պառ: Նորա մազերը շաղ էին անցել և ծա-
ծանում էին քամուց, այտերը շառագու-
նել, աչքերը ծիծագում էին՝ արացողելով
արևի շողերը, որ կարծես ուրախութեամբ
խաղում էր նորա հետ:—Հիանալին, հիա-
նալի ձի է: Լիլիա, այժմ դու հեծիր:

—Ինձ այնպէս է թւում, սիրելիս, որ ես
շատ մեծ եմ, անվստահութեամբ հակաճա-
ռեց նա, —վախենամ, որ քո ձիուդ համար
ծանր կլինիմ ես:

—Ոչ, ոչ, ծանր չես լինիլ, ասաց Ժես-
մինան, գետին ցատկելով. Է, վարձիր,
նստիր:

Ինչպէս կարսղ էր Լիօնէլը հակառակել
նորա ցանկութեանը: Նա մի ոտք ձգեց ձիու-
վրայով և, նմանուելով Ժեսմինային, ցոյց
էր տալիս, որ ինքն էլ սրարշաւ վաղում է.
Ժեսմինան թռչկոտում էր չորս կողմը և
այնպէս բարձրագոչ, ոգեռուուած ճայներ էր
համում, որ աքաղաղները սաստիկ շփոթ-
ուեցան, սկսեցին անզուսպ աղաղակ բարձ-
րացներ, թևերը թափահարել, կանչել հաւե-
րին, որոնք աւելի բարձրաձայն կչկաց բարձ-
րացըներն, քան աքաղաղները . . . Այնպիսի

աղմուկ ու ժխոր տիրեց, որ Ռուբէնը վրայ հասաւ իմանալու թէ ինչ պատահեց և տեսնելով թէ բանն ինչումն է, ինքն էլ բարձրածայն ծիծազեց և երեխաներից պաշկաս չէր լինդում, զանազան զուարծաբանութիւններով գրդելով փայտէ ձիուկին ցոյց տալ իւր բոլոր չնորդքը վերջապէս խաղը վերջացաւ և Լիօնէլը ուրախ-զուարթ բարի ձիուկը յանձնեց Ժեսմինային, որն իսկոյն մի բուռը թարմ խոտ դէմ արեց նորան:

—Այժմ, իմ փոքրիկ պարոնիկս, ես կերթամ և գերեզմանատանը կմնամ մինչե երեկոյ: Դու գիտես, թէ որտեղ կարող ես գտնել ինձ: Դուցէ դու կկամենաս մի փոքր էլ մնալ Ժեսմինայի հետ. նա, համարեա, միշտ միայնակ է այն օրուանից, երբ զրկուեց մօրից և, կարծեմ, ինքդ էլ յաճախակի միայնակ ես մնում, և երկուսիդ միասին խաղալը ոչ ոքի վնաս չի պատճառի: —Բայց խոստացիր, սիրելիս, որ մինչեւ արել մտնելը ձեր տանը կլինիս:

—Այս, մ-ը Դէյլ, խոստանում եմ և իմ չնորհակալութիւնս եմ յայտնում ձեզ, պատասխանեց Լիօնէլը: Ես այսօր շատ

շատ երջանիկ էի . . . Դուք չեք կարող երեւ ւակացել, թէ մինչ որ աստիճան ուրախ եմ, որ այսօր ձեզ հետ անցրի: Կաշելի է, որ մի ուրիշ անդամ ևս այցելեմ ձեզ և Ժեսմինային:

—Իհարկէ, կարելի է, սիրայօժար պատասխանեց Ռուբէնը, միայն թէ հայրդ հակառակ չլինի այդ բանին: Ամէնից առաջ կարեոր է այդ ինդիրը պարզել:

—Այս, իհարկէ, արտասանեց Լիօնէլը և նորա ուրախ դէմքի վրայով ինչ-որ ստուեր անցաւ: Նա շատ լաւ գիտէր, թէ հայրն ինձ կատէր, ինչպէս կնայէր ժամկոչի և նուրա գեղեցիկ աղջկաց հետ կապած ծանութութեան վրայ . . . Նա այդ մասին ոչինչ չասաց և անվրդով բաժանուեցաւ Ռուբէնից: Ռուբէնը գնաց և երեխաները միայնակ մնացին: Ուրախ-զուարթ դրութեան փոխարինեց հակագարձ զգացում . . . Ժեսմինան ոչ միայն լուրջ գիրք ընդունեց, այլ նայն խոկ փոքր ինչ տիրամած էր . . . նոքան երկար ժամանակ լուս նստած էին, վերջապէս Լիօնէլը խոր հառաջ արձակելով, ասաց.

—Ժեսմինա, ես այժմ շուտով պէտք է բաժանուեմ քեզնից:

— Իսկ դա քեզ համար ծանր է, հարցւրեց նա:

— Ետո ծանր է, պատասխանեց Լիօնէլը, չափաղանց ծանր:

— Ինձ համար էլ, խոստվանեց նա, ես լաց կլինիմ, Լիլիտ, երբ դու կդնաս . . . իսկ դու, երբ տուն հասնես, դու էլ լաց կլինիս . . .

— Ոչ, ժեսմինա, ես չեմ կարող լաց լինել, ասայ նա գառն ժպտով, ես շատ մեծ եմ, ինձ չի սազիլ այդ բանը:

— Մեծ ես, կրկնեց նա, բայց դու ինձ նից մի քիչ մեծ ես:

— Այս, բայց դու ազջիկ ես, ասաց Լիօնէլը, ազջիկները կարող են լաց լինել, իսկ տղաներին ամօթ է, Բայց, երբեմն, երբ ոչ չէ տեսնում, ես էլ եմ լաց լինում . . .

— Իսկ ես այսօր տեսայ թէ ինչպէս էիր լաց լինում դու, տիրադէմ դիմուց նա, դա եկեղեցումն էր, ճաշի գալուց քիչ առաջ: Ասա, ինչու էիր լալիս:

— Չդիտեմ, պատասխանեց Նա և նուրա աչքերը ուեւուցան դէպի հեռուն . . . Ես կարծում եմ, որ երաժշտութիւնն էր պատ-

ճառ . . . Ես երաժշտութիւն շատ եմ սիրում, բայց նորա մէջ մի ինչոր տիտոր, շատ տիտոր բան կար . . . մայրիկս հրաշալի ձայն ունի, — և երբ նա երգում է, ես ուզզակի անկարող եմ լինում լսել, — իսկոյն ինքոս ինձ այնպէս ընկճուած, միայնակ, խղճալի եմ զգում . . .

Ժեսմինան քնքոյչ հոգածութեամբ նայում էր նորան և իրեն այնպէս էր թըւում, որ նա օտարութի աղայ պիտի լինի, եթէ նա իրեն ընկճուած և միայնակ է զգում հէնց նորա համար, որ մայրը երշգում է: Եւ նա գիտմամբ փոխեց խօսակշութիւնը:

— Ես ճանաչում եմ այն մեծ տունը, որտեղ դուք եք բնակւում, բացառէց Ժեսմինան, և գիտեմ թէ կանաչ ցանկապատի մէջ որտեղ բացուածք կայ, այնաեղից ներս կալրծնեմ և կդամ քեզ մօտ ուզզակի պարտէզը: Ես ուզում եմ մայրիկիդ տեսնել:

Ժեսմինայի այդ ցանկութիւնը բոլորու վին շփոթեցրեց Լիօնէլին. Նա տիտոր նայեց նորա քնքոյչ-երկնապոյն աչքերին և ասաց:

— Ժեսմինա, սիրելիս, չանես այդ բանը: Այդ բանի համար քեզ միայն կպախա-

բակեն։ Մայրիկո չի պախարակիլ, բայց
հայրս, անշուշտ, կպախարակէ։

Ժեսմինան փոքր ինչ մտածելով, նկա-
տեց սեփական արժանապատութեամբ։

—Կնշանակէ . . . քո հայրդ՝ չար մարդ
է . . . ինչու պիտի պախարակէ ինձ, երբ
ես միշտ աշխատում եմ խելօք լինել, —
հայրիկո ինձ երբեք չէ պախարակում։

Լիօնէլը լոեց։ Աղջիկը աւելի պինդ
գրիեց նորան։

—Ես պետք ե քեզ նոշից տեսնեմ,
Լիլիա, մղկաւալով արտասանեց նա, —իսկ դու
այլ ես չես կամենում ինձ տեսնել։

Նորա ձայնը մինչ այն աստիճան սրտա-
յոյզ էր հնչում այդ բառերն արտասանե-
լիս, որ Լիօնէլի սիրտը յուզումից տրսփում
էր . . .

—Այս, սիրելիս, իմ սիրելի փոքրիկ
Ժեսմինա, ուզնում եմ կրկին տեսնել քեզ,
—և կտեսնեմ . . . քեզ մօտ յաճախակի կը
գտմ, միասն էլի կիսազար, խոստանում եմ։

—Արի, խնդրեմ, արի, ասաց նա, ու
բովհետեւ ես քեզ սիրում եմ, Լիլիա . . .
դու ուրիշ երեխաների նման չես, —դու
լաւն ես, ես էլ լաւն եմ . . .

—Այս, սիրելիս, դու շատ լաւն ես,
ես էլ լաւն եմ . . .

—Այս, սիրելիս, դու շատ լաւն ես,
ծաղկի պէս սիրուն։

Նա նայեց նորան և մնաց յառած՝
նայելիս, և այնքան երկար լոեց, որ նա
վերջապէս հարցական հայեացքով իւր զար-
մացած աշերը դարձրեց նորան։


—Ինչի մասին ես մտածում, Լիլիա-ջան։

—Քո մասին, Ժեսմինա, քնքանկով
պատասխանեց երեխան։ Ես մտածում եմ
քո և ծաղկիների մասին։

Եւ իւր գանգրահէր գլուխը թեքելով
դէպի աղջիկը համբուրեց նորան, աղջիկն
էլ նորան համբուրեց։

Հանդիսաւ տարուբերւում էին խնձու-
րենու ճիւղերը, որի տակ նստած էին նորա,
թռչնակներն ուրախ ճռւռովում էին իրենց
անարուեստ երգերը և այնպէս էր թւում,
թէ Աստուծոյ ստեղծած աշխարհի գեղեց-
կութիւնը անմեղ ուրախութեան կախար-
դական ցանցով փաթաթել էր այս երկու
փոքրիկ մանուկներին, որոնց մօտեցրել, բա-
րեկամացրել էր ամսոնային պայծառ տուա-
ւուը . . . բայց աւազ, այդպիսի առաւօտ

այլ և ոչ չի տեսնիլ նա, որպէսկամ Աստուծոյ
ստեղծած աշխարհն ուրիշ է, —իսկ մարդ-
կանց յեղափոխած աշխարհն՝ ուրիշ . . .
Բազմաթիւ վոքրիկ ոտների համար ծանր և
դժուար է յառաջանալ այն քարքարոս նեղ
կածանով, որ ցոյց է տալիս ներկայ ժամա-
նակի անմտութիւնը, անմիտար և վհատե-
ցուցիչ է այն ամենը, ինչ որ կեանքը խոս-
տանում է տալ ապագայում այս խեղճ,
վոքրիկ չարքաշ-մշակներին, և երեխն պէտք
է չնորհապարտ լինենք մահուան բարի
Հրեշտակին, որ անհուն դժառատ սիրուց
դրդուած, խլում է «այս վոքրիկներին» տ-
պականող միջավայրից և վերառաքում գէպի
նա, Որը այնչափ սիրեց նոցա, որ տասց.
«Ճեսէք, չարհամարհէք այս վոքրիկներից և
ոչ մէկին, որովհետեւ տառւմ եմ ձեզ, որ
նոցա Հրեշտակիները երկնքում միշտ տես-
նում են իմ Երկնաւոր Հօր Երեսը»:



9.

Արեն արդէն մայր մանելու մօտ էր,
երբ լիօնէլը տուն գարձաւ երբ, քայլերը
յամբացնելով նա մօտենում էր պարտիզին,
տեսաւ, որ պարտիզի դուան մօտ կանդնած
է խր մայրը, որ անշուշտ սպասում էր
երեն: Նորա աննման գեղեցկութիւնը հիա-
ցրեց մանկանը: Նորան այնպէս թուեցաւ,
թէ սյուպիս երբէք չէր տեսել նորան . . . նո-
րա փարթամ, ոսկեդպիս մազերը մայր մանող
արհի շողերի տակ հուրհուքում էին, իսկ
լուսափայլ աչքերը, գէպ հեռուն ուղղուած
ախուր և մելամազձիկ հայեացըր այնպիսի՝
խորին քնիքութեամբ ուեւուեցան խր վրայ,
երբ նա մօտեցաւ այն տեղին, ուր կանդնած
էր խր մայրը: Նա մեկնեց խր սպասակ,
չքնաղագեղ ձեռքը և մեղմիկ հարցրեց,

—Ի՞նչ է նշանակում սա, Լիլիա, ամշը բողջ օրն ուր էիր անհետ եղել։ Հայրդ սաստիկ բարկացած է, —քեզ սրոնեցին առ մին տեղ և գիւղում տեսել էին, որ տեսել են քեզ, ինչպէս առաւտեան շատ վաղ դու ճանապարհ ես ձգել մ՝ թ Մօնտրոլին մինչև ճեպակառը, ու այնուհետեւ ինչոր փողոցային մանուկների հետ վախել ես «պահւըտուկի» խաղալու։ Ճիշդ է։

—Ոչ, մայրիկ, այդ ճիշդ չէ, պատառ խանեց մանուկը, այսինքն, այնքան էլ ճիշդ չէ, և նա պատմեց նորան համտում և հանդամնորէն՝ թէ ինչպէս է անցրել նա տիրող օրը և իւր պատմութիւնը վերջացրեց այս բառերով. «ահա, մայրիկ, ճշմարիս այս և. բորբն այսպէս է եղեք։

Մ-ո Վելիսկուրաք խանդաղատանիքով նորա գլուխն իւր թիկ մէջ առնելով և մի ինչոր խորհրդաւոր ժողիս երեսին, քնքար բար տասց։

—Իմ խեղճ Լիլիա, ուրեմն դու յոդ նել ես, իմ մանկիկ, և վճռել, որ մի օր գօնէ քո ցանկացածի պէս քեզ համար տօն սարքես . . . ես չեմ կարող դատապարտել քեզ . . . ես կարծում եմ, որ եթէ ես ել

քո տեղը լինէի, նոյնը կանէի, բայց հայրդիստ զայրացած է, նո անպատճառ ցանականում էր, որ դու դիմաւորէիր ուսուցչապետ Հօրին։

—Բայց, մայրիկ, չէ որ ուսուցչապետ Հօրին սպասում էիր երեկոյեան 10 ժամի մօտերը։

—Այս, ամէնքն այդպէս էլ սպասում էին, բայց բանից գուրս է գալիս, որ նա մի ինչոր բանով տանջւում է, ոսկրացաւով է թէ մէջքացաւով, չեմ խմանում, բայց վերան բողէին վճռել է, որ մրակուց խուսափելու համար գայ ցերեկը և ոչ թէ գիշեւը։ Այդէն մօտ երկու ժամ է, որ նա առանձնացած խօսում է հօրդ հետ։

Լիօնէլը, մի բողէաչափ լսելուց յետոյ, հարցրեց։

—Իսկ նա մէմ նման է, մայրիկ, դու տեսան նորան։

—Իհարկէ, ես տեսայ նորան—հանդիսաւոր կերպով բերեցին նորան և ներկայացրին ինձ։ Ասացիր, ինչի նման է։ Ծ., ինչպէս տաեմ քեզ, —կապիկ և ուզափ միշն ակզը բանող մի կենդանու, բայց ճշգուշ թեամբ որոշել դժուար է։

Նա ծաղրական-արհամարհական եղանակով ժպատաց, իսկ Լիօնէլը վշտացած և շուարած՝ տխուր-տրտում գլուխը կախ ձգեց . . . մայրը գաղտադողի մի հայեացք ձգեց նորա վրայ և խղճահարութեան զգացումը տակին ու վրայ արեց նորա սիրով,— նա անձկութեամբ մատեցրեց մանկան գլուխն իւր լրջքին և կաթոգին համբուրեց . . . Մանկան նրբաղդած սիրով մինչ այն առարիճան յուզուեցաւ սիրոյ և վաղաքշանիք այս արտասովոր և անակնկալ արտայայտութիւնից, որ նա բարորդին գունաթափախուեցաւ և յուզումից ամբողջ մարմնով սկսեց դողալ։

—Ես կամենում էի տուել, իմ ազաւ նեակո, շարունակեց նա, գեռ ևս գրկած պահելով նորան, որ նա նման է այն բոլոր ծերունի գիտնականներին, որոնք վաղուց արդէն ամէն ինչ մառացել են, բացի իրենց ցից և իրենց գշքերից,—նոքա, ինչպէս գիւտես, շատ սակաւ է պատահում, որ օժտուած լինին գեղեցկութեամբ։ Նա շատ իւելօք է,—և քո հայրը երեակայում է, որ նա հանճար է, նոյնպիսի կարծիք ունին նորա մտախն և Օքսֆորդում ու Քէմբրիշ ջում։ Բայց քանի որ նա այսուղ է, ոլէոք

է հաշտ վարուել նորա հետ, Լիլիան՝ —Գիտեմ, մայրիկ, հաղիւ շնչաց նաւ նա քնքաբար իւր շրթունքներին էր կպցրել մօր սպիտակ ձեռքը, որ վաղաքշաւ բար գրուած էր գեռ ևս իւր ուսին, և անշողող, վճռական ձայնով ասաց.

—Ես կարծում եմ, որ ամէնից լան այն կլինի, որ այժմ և եթ գնամ հօրո մօտ և տուեմ, թէ ուր էին Որչափ էլ բար կահայ նա, բայց հօ չի սպանիլ ինձ, իսկ եթէ սպանէ էլ,—իւր համար վատ կը լինի և ոչ ինձ համար։

Ցինիկ արամաբանութեան այս խօսքը բավկա տխրագին ժպատալով մօր երեսին բաժանուելու բողէին, նա արագ քայլերավ գէպի տուն գիմեց։ Մու Վելիսկուրան անշարժ կանգնած մնաց իւր տեղը, մտամուր թերթուուելով իւր գօտկում եղած վարդի թերթիկները, առանց աչքը գարճնելու իւր հեռացող մանուկից։ Երբ երեխան անհետացաւ, նա յանկարծակի շուռ եկաւ և ջերմ արցունքները գուրս ցայտեցին նորա աչքերից . . .

Այն ինչ Լիօնէլն այդ ժամանակ հասաւ իւր սենեակի դուռն տուալ և թխկացրեց։

—Մաէք, գոչեց նորան այնքան ծանօթ
անհաճոյ ձայնը:

Նա ներս մտաւ: Մ-ը Վելիսկուրով
ցատկեց իւր նստած տեղից, նա, կարծես,
մարմնացած բարկութիւն էր:

Ա-ա, այդպէս, մեծարդոյ պարսն,
գոռաց նա: Վերջապէս գանուեցմք: Ուր
էք կորել վաղ առաւօտից: Եւ ինչպէս հա-
մարձակուեցաք գուրս գալ տնից առանց իմ
իրաւունքի . . .

Լիօնէլլ նայում էր ուղղակի նորա աշ-
քերին, —և այսում էր բոլորովին հանդիսա,
արհամարհանքի օտարութի զգացում տածե-
լով գէպի այդ կարմրագէմ մարդը, որի
լեզան շփոթուել էր անզուսպ բարկութիւ-
նից, և որն օգտում էր իւր բազմամեռայ
փորձառութիւնից, իւր կրթութիւնից, վեր-
ջապէս իւր ֆիզիքական ոյժից, որպէս զի
տանջէ և չարչարէ փաքրիկ երեխային . . . Այդ
զգացումը՝ բարի զգացում չէր, մանաւանդ
որ այդ կարմրագէմ մարդը իւր հայրն էր,
—բայց վաստ էր, թէ լաւ էր այդ զգացումը,
սակայն այդ էր զգում միայն, ուստի և
առանց ամենափոքր զգնումն իսկ զգալու,
բոլորովին անտարբեր, պատասխանեց:

—Ես յոդնել եմ: Ինձ պէտք էր թարմ
ոդ և հանդիսա:

—Հանդիսա: Մ-ը Վելիսկուրով սար-
սափելի շուռ տուեց աչքերը և իւր շապկի
օձիքը բռնեց, կարծես զգալով, որ այդ օս-
լայած վզնոցը կամ կտրաքուի կամ իրեն
կվեզգի . . . «Հանդիսա», կրկնեց նա: Ի՞նչ
հանդսութիւն է պէտք այս տեսակ ծոյլի
համար: Այդպէս կարող է խօսել միայն
թշուառ փաստաբանը, որ կվամենայ որտեղ
և մի տօն օր կորչել: Քանի այսուեզ էր
պարսն Մօնտրօզը, գուք շարունակ բարե-
հածում էիք հանդիսա վայելել: Եւ դուք
կարծում էք, թէ ես իզուր փող կշպրտեմ
ձեզ առաջնակարգ կրթութիւն տալու հա-
մար, որ դուք ձեր ամօթալի, երախտամոռ,
զգուելի արարքներով . . .

—Առաջնակարգ կրթութիւնը նա՞ է,
յանկարծ գուրս թուաւ Լիօնէլլ բերնից,
բոլորովին անսպասելի կերպով նայն իսկ
իրեն համար, —և նա ցոյց տուեց լուսա-
մուտի մօտ նստած անձնաւորութիւնը և
որին նա ուշադշութեամբ զիտում էր, գըտ-
նելով նորս մէջ գծեր, որ կապկի և ուզտի
մէջին ինչ որ բանի էին նմանեցնում նորան:

Մ-ը Վելիսկուրտը չեր հաւատում իւր ականջներին և բառ չեր գտնում իւր սոս-կումն արտայայտելու համար . . .

—Ի՞նչպէս եք համարձակւում, մեծար-դոյ պարո՞ւ ի՞նչպէս եք համարձակւում այդպիսի նկատողութիւն անել:

—Դա նկատողութիւն չէ, այլ հարց է. ես չգիտեի, որ այդ չի կարելի—նոյն սառ-նասրտութեամբ պատասխանեց Լիօնէլը:

—Ես չափազանց ցաւում եմ, պարո՞ն ուսուցչապետ, —ասաց մ-ը Վելիսկուրտը, գառնալով լուսամուտի առաջ նոտող անձ-նաւորութեանը, —որ ձեր առաջին ծանօթու-թիւնը ձեր ապագայ սամիկի հետ ձեզ վրայ շատ ճնշող և ծանր տպաւորութիւն պիտի թողնէ . . . իմ որդիս, —սա է որս դիս, այս վերջին ժամանակներս մինչ այն առտիճան վոխուել է, որ ճանաչել չի կա-րելի, բայց ես յոյս չեմ կորցնում, պա-րո՞ն ուսուցչապետ, որ դուք չեք մերժիլ անշուշտ զբաղուիլ, նորան ուղղութեան բերելու:

Ուսուցչապետ Հօրը մարած ժպիտ արձակեց և առաց.

—Իհարկէ, իհարկէ, բայց չեմ կարող

թագցնել ոչ ձեզնից և ոչ ինձնից, որ սկիզբը շատ վատ է, չափազանց վատ է:

—Ինչո՞ւ, աշխատմով հարցը Լիօնէլը ենջու լու չէ հանդիսաւ վայելել, երբ զգում ես, որ հանդստութիւն է պէտք: Ահա ես այսօր հանդստացայ և այժմ գասերս աւելի լու կսովորեմ: Ես այսօր Կօմիօրտինի եկե-ղեցու ժամկոչի հետ երկար խօսակցութիւն ունեցայ, ճաշեցի նորա մօտ. նա շատ բարի և շատ խելօք մարդ է:

—Խելօք, Կօմիօրտինի ժամկո՞չը. —բարձ-րածայն, կատաղի քրքիջ արձակելով, կրկնեց մ-ը Վելիսկուրտը: Տեսնենք դեռ ևս ինչե՞ր պիտի լսե՞նք: Հիանալի ծանօթութիւններ ունիք, խօսք չունիմ: Որքան դրամ է ծախ-սուած ձեր կրթութեան, դաստիարակու-թեան վրայ և եթէ քննելու լինինք՝ իր ինչ . . . ինչո՞ւ համար . . .

Լիօնէլը գտնասուեց և նորա դէմքը եւր նախկին սովորական տխուր կերպա-րանին առաւ:

—Իհարկէ, կարիք էլ չկայ ինձ վրայ այդչափ դրամ ծախսելու, ոչինչ չի դուրս դալ դորանից, մեղմիկ ասաց նա: Ես յոդ-նել եմ, շատ եմ յոդնել, գուցէ և հիւանդ-

եմ, չդիտեմ, միայն գիտեմ, որ ես այնպէս չեմ, ինչպէս միւս բոլոր մանուկները և այդ բանն ինձ շփոթութիւն է պատճառում։ Եթէ գուք թոյլ տայիք ինձ, գոնէ մի առ ժամանակ հանդոսանայի, գուցէ դործն աւելի լաւ կերթար։

—Հանդատութեան ծարաւն, ինչպէս երեսում է, —թունալից ակնարկով նկատեց ուսուցչապետը, —այս երիտասարդ պարսնի բնութեան պահանջն է կազմում։

—Անուղղայ ծուլութիւն, ահա թէ ինչ, խսութեամբ վրայ բերեց մ-ր Վելիսկուրատը։ Այդ ծուլութեանն աւելացել է, ի մեծ զարմանս իմ, և անասելի յանդկնութիւն, ինչպէս ինքներդ կարող եք եզրակացնել, վկայ լինելով իմ որդու այսօրուայ վրդու վեցուցիչ վարմունքին Քաղցն ու միայնութիւնը, յօւսամ, նորա վրայ կարեոր ազգեցութիւնը կթողնեն և կստիպեն նորան վաղուայ պարապմունքներն սկսելուց առաջ խելքի գալ։ Մարմնական պատիժ ես չեմ ընդունում իմ որդու դաստիարակչական դործում, և կարծում եմ, որ մենաւոր բանատարկութիւնն ու քաղցը ամենափառաւոր միջոցներ են անզուսպ և սանձարձակ բնաւ-

ուրութիւնները զսպելու խնդրում։

Աւսուցապետը, ի նշան իւր համաձայնութեան, գլուխը խոնարհեց և մ-ր Վելիսկուրատը ձայնը բարձրացնելով՝ ասաց.

—Լիօնէլ, եկէր իմ յետից։

Լիօնէլն անտարբերութեամբ հետեւց հօրը, որ տարաւ նորան վերին յարկը, հենց փոքրիկի ննջարանը երբ ներս մտան, մ-ր Վելիսկուրատը ամենայն հոգատարութեամբ փակեց լուսամուտը, որոնեց և գտաւ լուց կին և դնելով իւր գրպանն, ասաց.

—Այսուեղ կմնաք մինչև վաղի առաւ շոտ, հասկանում էք Կարծեմ, բաւական ժամանակ կդանէք ձեր այսօրուայ գովիվի արարքները մի առ մի քննելու, և յուսով եմ, որ ձեր խորհրդածութիւնները ձեզ կառաջնորդեն մինչև զղջումն։ —Իսկ եթէ մոքներովդ կանցնէք լաց լինել, կամ որ և է խաղ սարքել այստեղ, այն ժամանակ . . .

—Եւ ինչո՞ւ էք գուք այդպիս խօսում, ընդհատեց նորան Լիօնէլը, գուք հօ շտալու դիտէք, որ ես երբէք այդպիսի բաներ չեմ անում։

Մ-ր Վելիսկուրատը վոքր ինչ շփոթուեցաւ, —նա զղջում էր, որ երեխան ճիշդ է

ասում, և յիշաւի, նա շատ լաւ դիմէր, որ
Լիօնէլը երբէք չէր կորցնում իրեն։ Իռղէտ-
չափ լուսութիւնից յետոյ նա նորից դարձաւ
երեխային և խստութեամբ ասաց.

—Վերջին անգամ հարցնում եմ ձեզ,
այսօր ինչո՞ւ էիք փախել մինից։

—Ես արդէն ասացի ձեզ, յոդնած ձայ-
նով ասաց Լիօնէլը. այն պատճառով, որ
ես յոդնել եմ, յոդնել դրքերից և ամէն
բանից. ինչ որ կայ նոցա մէջ՝ միայն խառ-
նաշփոթութիւն է և հակասութիւն, հակա-
սութիւն և խառնաշփոթութիւն . . . ուրիշ
ոչինչ, և ինչո՞ւ համար է այս բոլորը՝ կմեռ-
նենք՝ և ամէն ինչ կմոռանանք, ինչ որ մի
ժամանակ դիմէինք . . . այնպէս որ աշխա-
տանքն էլ իդուր և դիմութիւնն էլ աւե-
լորդ է . . .

—Ա՛յս, յիմար գու, յիմար, կոշառւ-
թեամբ բացադանչեց մ-ը Վերիսկուրալ. մեռ-
նելուց առաջ գեռ ևս պիտի ապրենք, իսկ
կեանքի մէջ հարկաւոր է, որ իմանանք թէ
դրքերում ինչ է դրուած, և այդ խօսքերն
արտասանելիս նա արագութեամբ դիմեց
դէպի դուռը, որը շրմկոցով վրայ բերեց և
կողակց։

Լիօնէլը, միայնակ մնալով, մօտեցաւ
լուսամուտին։ Հօր հետ ունեցած ընդհաւ-
ումը բոլորովին աւճասպառ էր արել նորան,
—բայց այդ բողէին նա իրեն համարեա եր-
ջանիկ էր զգում, նա չէր ափսառում, որ
այդ ուրախ, նշանաւոր օրը նա պիտի վեր-
ջացնէ կատարեալ խաւարի և միայնութեան
մէջ։ Նա չէր վախենում ոչ խաւարից և ոչ
միայնութիւնից և կարծում էր, որ աւելի
հաճելի էր միայնակ մնալ, քան այն նոր եւ-
կած անճնաւորութեան հետ լինել որն այն-
քան անդուր թուեցաւ իրեն . . . և ակա-
մայից նորա առաջ պատկերացան ուսուցաւ-
պետի պազած, փոքրիկ չար աչքերը, նորա
երկարաւուն, կնճիռներով ծածկուած դէմքը
և խայթող, թունալից և անկենդան ժողի-
ուրը։ «Բնաւ նման չէ նա սիրելի Ուուրէն
Գէլին» մտածում էր մանուկը։ «Այս Ուու-
րէնը կարող էր ինձ շատ բան սովորեցնել,
—նա չի կարդում ոչ յունարէն, ոչ լատինեւ-
րէն, բայց նա օգնեց ինձ, որ ես հասկանամ
թէ ինչ բան է կեանքը . . . ախ, ինչողէն
կուզէի իմանալ թէ ինչ է կեանքը, նոյնպէս
և թէ ինչ է մահը . . . նա աչքերը վերին
դէպի երկինք յառեց, և երկար, երկար նու-

յում էր երկնքի կազմակինը «մնչպէս կցանկայի, որ խևացէս հրեշտակներ լինէին, շնչաց նա ինքն-իրեն, կիսաձայն, —և մինչեւ անդամ այնպէս եմ կարծում, որ նորա գոյութիւն ունին . . . սիրելի Փեսմինան հաւատում է հրեշտակներին, —ևս էլ կիսմենայի հաւատալ, եթէ միայն կազմանայի . . .

Փոքր առ փոքր նորա հայեացքն անամով երկնքից դարձաւ հեռաւոր լեռներին, դաշտերին և կանգ առաւ մեծ, ընդարձակ պալտիզի՝ ծառերի և թփերի վրայ։ —Պարտիզի հեռաւոր ուղիներից մէկի վրայ մի սպիտակ բան անցաւ, —այդ սպիտակ շորից նա խօսյն ճանաչեց մօրը, —նա հանդարտ յետ ու առաջ էր գնում ուզու վրայով, նորա հետ էր և սըր Չարլս Լասենը։ «Երեխ ճաշելու է եկել նա, մտածեց Լիօնէլը. մ-ը Մօնտրօֆն ասաց, որ նա այստեղ մօտիկ տեղերից մէկումն է ապրում։ Զարմանալի բան է, ինչու չեմ սիրում ես նորան» . . . Հետզետէ մութը կրտում էր։ Աստղերը մէկը միւսի յետեից երեսում էին, թափանցիկ մշտշմութի մէջ ազօտ առկայծելով։ Լիօնէլը մտախոհ հետեւում էր նոցա և խըր հոգեկան խաւարի մէջ հետզետէ, մէկը

միւսի յետեից ծագում էին այն հարցերը, որոնց պատասխան տալ կարող է միայն նա, ով նաևսուով է ճանաչել այն վեհ ճշմարտութիւնը՝ թէ մեր կեանքը միայն սկզբնակողութիւնն, նախապատրաստութիւն է յահայենականութեան մէջ կատարեալ յինեւու համար, և որ այդ սկզբնաւորութիւնն ու կատարելութիւնը՝ ամբողջապէս Աստուծոյ ձեռքին է։ Այն մարդիկ, որոնք գաւախաւակել են իրեն, այդ կռուանը, այդ յոյոը անխիզ կերպով խլել են նորա մասադ կեանքից, և այժմ այդ կեանքը, ինչպէս ճշակառը ծագիկ, խըր մէջ ոյժ չեր զգում չոր ու ցամաք գիտութիւնների և խորագէտ խնասութիւնների փաշիներից վեր բարձրանալ։ Ազօթել ոչ սք չեր սովորեցրել նորանց նորան բացարել էին, որ կան մարդիկ, որոնք ազօթում են, բայց այդ սովորութիւնը պահպանում է միայն «ժողովրդի» համար, որ ժողովրդի ստորին խաւերը, ամբոխը մինչ այն աստիճան չեն զարդացել, որ կարողանան դէն ձգել այն նախապաշարումներն ու ձեւականութիւնները, որին նոքա ընտելացել են դարերի ընթացքում, —բայց սովորեցրել էին, որ այդ սովորութիւնն, ըստ ինքեան,

մի անմիտ բան է։ Եթէ միանդամ ընդ միշտ
յայտնի է, որ բնութեան օրէնքներն ան-
խալսու են, — ապա անմտութիւն չէ մտածել,
թէ աղօթքը կարող է որ և է բան փոխել
այդ տեղ, անմտութիւն չէ մտածել, որ
բնութեան կոյր, խուլ ոյժերը կարող են նկա-
տել մարդկային տանջանքներն ու կատարել
նոցա խնդիրքն ու աղօթքը, երբ ինքը մար-
դը՝ համեմատած տիեզերքի հետ միայն ա-
րեի շողի մէջ երեացող ամենափոքը, չնչին
փոշու չափ մի բան է, կամ մրջնանոցի մի
մրջիւն։ Արագ ըմբռնելով մարդկային ոչնչու-
թեան միտքը, Լիօնէլը հարց էր տալիս իրեն.
ուրեմն ինչո՞ւ մարդս այդքան բարձր է գնա-
հատում ինքն իրեն։ Եթէ նորա նշանակու-
թիւնն էլ նոյնչափ է, որչափ մրջիւնինը կամ
չնչին ծիզն ու շիզը, էլ ինչո՞ւ համար է պէտք
նորան գիտութիւնը, — և չարախնդաց ծաղը
չէ, որ նորան կատարելագործուելու ձըդ-
տումն է շնորհուած, ոգեստուելու և ստեղ-
ծագործելու ոյժ է պարզ հուած, երբ գիտու-
թիւնն ասկացուցել է, թէ նա ոչ այլ ինչ է,
բայց եթէ մի անարդ ոչնչանալու սահմանուած
մի հակ։ Մանկան հոգու մէջ արդէն բայն էր
դրել չարագործ ձեռքով սերմանուած այն

բողոքի սազմը, որ առաջ է գալիս, երբ
չկայ ոչ հաւատ, ոչ յոյս, և յոգնած, չա-
րատանիջ հոգին ոչ մի պատասխան չգտնելով
իւր հարցերին, անկարող լինելով անձամբ
բացատրելու կեանիքի դաշտնիքը, գալիս
յանդում է այն մտքին, թէ ոչ մի աարեղին
ոյժ չէ կարող իրեն, — եթէ ինքն այդ կամեա-
նում է, — վերջ գնել իւր ձեռքով այս ան-
պէտք, աննպատակ կեանիքին, որ գոյութիւն
է ստացել միայն մի բութ, անդիտակից ոյժի
չնորհիւ . . . Գիշերուայ մութն տեղի ու տ-
ւելի էր կոխում, — վերջապէս բալորովին
մթնեց, — խոկ Լիօնէլը գեռ ևս նոտած էր
լուսամուտի առաջ, խորասուզուած իւր խո-
հերի մէջ և նոյն խոկ չէր էլ մտածում պատ-
կել քնել։ Շուտով սե երկնքի վրայ երեկո-
ցաւ սպիտակի, կարծես ցնորական մի փայլ,
— երեցաւ գժոյն լուսինը և մի ինչո՞ր
ախրամած փայլ լուսաւորեց ծառերի կա-
տարները, լճակները, պարտիզի բարձրու-
թիւնները, կապտաւուն խաւարը ծածկել էր
անշարժ մթնոլորտար, ինչո՞ր կախարդական
և մեզի բնաւորութիւն տալով այդ բոլորին.
Հեռու մի անկիւնից լուեցաւ սոխուկի եր-
թը, բայց անոյժ, նուազուն, տոանց զգաց-

—0՝ վերջապէս երևացիր, իմ քաջ,
ասաց ուր Զարլսը, բարեսրտութեամբ ժըպշ
տալով. մայրիկդ քեզ է ուզարկում այս,—
բռնիր, և նա ճարպկութեամբ ձեռքին
բռնած կապրցը լուսամուտով ներս ձգեց—
Սանդուիչ է, կարկանդակ և տահձ, տես, բռ
լորը պիտի ուտես: Ծերուկը խրոխտում էր
թէ քեզ քաղցած կտանջէ, այժմ նա փա-
կուեցաւ իւր սենեակում, այն իշխ գլուխ
ուսուցապեսի հետ,—նա ոչնչից տեղեկու-
թիւն չի ունենալ:—Մայրիկը խնդրում է,
որ ի սէր իւր բոլորն ուտես: Յտեսութիւն:

Լիօնէլը լուսամուց հանեց իւր գալ-
կահար գէմքը:

—Սըր Զարլս, սըր Զարլս, կամացուկ
կանչեց նա ճառից արագութեամբ իջնող
բարոնին:

—Ի՞նչ է, ձայն ոտոեց սըր Զարլսը:
—Խնդրեմ, մայրիկիս իմ կողմից շատ
ու շատ չնորհակալ եղեք,—և ասցէք նու-
րան, որ ես իրեն շատ, շատ եմ սիրում...

Սըր Զարլսը շուռ եկաւ,—զարմանալի
էր նորա գէմքի արտայայտութիւնը,—և
ամօթ, և զզչումն, և քնքանկը, ամէն ինչ
կար այդ գէմքի վրայ . . .

մունքի,—և լոեց . . . Լիօնէլը կամենում էր
բանալ լուսամուտը, որպէս զի լոէ այդ եր-
գը, սակայն մտարերելով, որ լուսամուտը
վասկել էր հայրը, վճռեց, որ աւելի լաւ է
ձեռք չտայ: Սակայն քանի կամաց-կամաց
ոկտեց յաղթահարել նորան . . . և մտածե-
լով փոքրիկ, սիրելի Ժեսմինայի մասին՝ նա
նիրհեց: Պինդ և երկար քնած էր նա, նըս-
տած աթուի վրայ, գլուխը յենած պատին և
երազում տեսաւ նոյն Ժեսմինային, բայց
բոլորին անսովոր պայմաններում: Նա ե-
րազում էր, որ ապառաւ ձիուկը փոխուել
էր կենդանի ձիու, որն արժանի էր իւրա-
քանչիւր հերսոնի պատերազմի դաշտ առաջ-
նորդելու:—Յանկարծ նա վեր թռուտ և
զարթնեց, մէկը կամացուկ, բայց լուելի ձայ-
նով կանչում էր իրեն, —«Լիօնէլ, Լիօնէլ»
նա տեղից ցատկեց և, և զարմանս իւր, տե-
սաւ սըր Զարլսին, որ ճարպկութեամբ կտե-
լէր լուսամուտի առաջ բարձրացող բարձր
կոճենու ձիւզերից մէկին: նա ձեռքին ու-
նէր մի փոքրիկ կապոց և ինչոք խորհրդա-
ւոր նշաններ էր անսում ձեռներով: Զիմանա-
լով ինչնի բացատրել այդ ամէնը, Լիօնէլը, առ-
ունեց ձայն հանելու, բայց արեց պատաւ հանը:


— լաւ, շատ լաւ, սիրելի մանուկ, կառ
ուրմ նորան։ Բարի գիշեր։

— Բարի գիշեր, պատասխանեց Լիօն
նէլլ և գեռ մի-երկու բոսկէաչափ էլ մնաց
կանդնած լուսամուտի մօտ, ծծելով գիշեր
բային թարմ օդը, որի մէջ զգացւում էր
ծովի մերձաւոշութիւնը, զարմանում էր այն
ճարպկութեան վրայ, որ սըր Զարլու ցոյց
էր տալիս ճիւղից-ճիւղ անցնելու ժամանակ
և ինչպէս առանց ձայն համելու ցած իջաւ։

Երեխան վակեց լուսամուտը, շօշափեա-
լով դաստ յատակի վրայ ընկած կապոցը և
լուսամուտի առաջ պատրաստեց նորա մէջ
եղած բուլոր համեզ բաները, լուսնի լուսով
նա սկսեց կամաց-կամաց ուտել և զարմա-
նում էր իւր ախորժակի վրայ։ Նա չէր
հասկանում, որ դորա պատճառը թարմ
օդում, աղատ անցրած օրն էր, — և երբ նա
նորից ձեռք կասնէ իւր ձանձրալի դրբերը,
կսկսէ իւր սրտամաշ ամենօրեայ պարապ-
մունքները, նորից կսկսուի այն գամդաղկու-
տութիւնը, այն անստարբերութիւնը, որ
խլում էին ոչ միայն նորա ախորժակն, այլ ե-
տեղից անդամ շարժուելու ամէն մի ցան-
կութիւն։ Բայց ինչ էլ որ լինէր, — այդ րո-

պէին՝ լուսնի լուսով, այդ բոլորովին անակնա-
կալ հիւրասիրութիւնը նորան սքանչելի էր
թւում։ Բոլորովին գոհ, հանուեցաւ և
պառկեց քնելու։ Նա շուտով քնեց, և լուսնի
արծաթափայլ շովերը թափանցելով վարա-
գոյրներից զուրկ լուսամոխց, գաղափողի,
հեղիկ լուսաւորում էին նորա սիրուն, ման-
կական գէմքը։ Երեսում էր, որ քաղցր
անուրջների աշխարհումն էր, — նա ժպաց
երազում այն հրաշալի, կէս-զարմացած,
կէս-խորհրդաւոր ժպաով, որ կարելի է տես-
նել միայն քնած մանուկների և նոր վախ-
ճանածների շրթունքների վրայ։





Է.

Հետեւալ առաւոտեան ուսուցչապետ
Կաղմօն-Հօրը նստած էր դասարան անուան
Նուած սենեակում և սպասում էր իւր սու
նիկին։ Սենեակը մեծ էր, ցածլիկ և գերա-
նակալ առաստազով՝ Հենրիկոս Ռ. ճաշա-
կով։ Գատելով նորա կերտուածքից, նա
մի ժամանակ ծառայելիս է եղել իբր մո-
ռանատուն և հանդերձատուն։ չորս կող-
մից՝ պատերի առաջ դարսած էին ահագին
կաղնի պահարաններ, լսյն դարակներով,
իսկ առաստաղի կոճերի մէջ տեղ-տեղ
ամրացրած էին մեծ-մեծ երկաթէ կե-
ռեր, որ ծառայում էին մի ժամանակ եղ-
նիկի փթաչափ ապուխտները կամ նոյն իսկ
ամրող եղնիկներ կախելու համար։

Ուսուցչապետ Հօրը բարձրահասակ էր,
ուստի և այդ կեռերի դասաւորութիւնը
բաւական անյարմար էր թւում նորան . . .
հէնց այդ առաւոտ արգէն իւր ճաղատ գլուխը
մի քանի անդամ թխկացրել էր այդ կեռերին,
—նա յարձակուեցաւ յանդուգն կեռի վրայ,
իբր մի թշնամու վրայ՝ որին անպատճառ
տեղահան պէտք էր տնել, բայց երկաթը
չհաճեց հնադանդելու և իդուր նա միմիայն
իւր ձեռքերը հանկառել առեց և ժաման
վաճառ եղաւ անհաւասար կոռուի մէջ . . .
նա վրդովուեցաւ այս պատահարից, —մանր
բաներն, առհասարակ, վրդովում էին նո-
րան։ Նա նոտեց լուսամուտի մօտ գրուած
միակ յարմարաւոր աթուի վրայ, պարտիւ-
զում, հէնց լուսամուտի առաջ, պարտիվպաշ-
նը խոտ էր հարում, թարմ, հէնց նոր հա-
րած խոտի հոտը լիշեցրեց ուսուցչապետին,
որ նա կարող էր ջերմախտ ստանալ . . .
«Յիմարութիւն չէր իմ կողմից, որ համա-
ձայնեցի այսպիսի մի խուլ անկիւն դալ,
վնթիվնթում էր նա նկըն իրեն»։ «Ի նկատ
առնելով քաղաքից ունեցած հեռաւորու-
թիւնը և միւս ըոլոր անյարմարութիւնները,
պէտք էր կրկնակի ոռճիկ պահանջէլ» Այս

Վելիսկուրաք կատարեալ ցանցառ է, — նա երեակայում է, որ բանից տեղեկութիւն ունի, բայց ոչինչ էլ չգիտէ. նորա կինը գեշ զեցկուհի է, բայց լպիրշ է, առհասարակ այդ տիպարի բոլոր կանանց նման, իսկ երեխան՝ կատարեալ աւանակ է . . . Ի՞նչ ասես, խելքներին զօռ են տուել մարդիկ և սկսել գիւղական առանձնութիւնը գու վաբանել . . . Այսօր, գեռ լյոր չբացուած, զարթեցրեց ինձ աքաղաղի անվերջ երգեցալութիւնը, — չեմ հասկանում ինչո՞ւ համար են սկահում մարդիկ այդպիսի անմիտ թռչուններին, — այնուհետեւ թշուառական կով սկսեց իւր բառաչսցը, իսկ թռչունների անվերջ ճռուողիւնը . . . դա արդէն կատարեալ համագիւարան է: Հինց այսօր և եթ կը կարգագրեմ, որ կարտեն իմ լուսամուտի առաջ բունող բաղեցաւոր բոյս սերը, նորա կատարեալ բոյն են և՛ միջառաների և՛ թռչունների համար, — որքան շուտ աղասուեմ, թէ մէկից և թէ միւսից՝ այնքան աւելի լաւ»: Նա գրանից հանեց չափառանց աչք-ծակող գունաւոր մեաաքսեայ թաշ կինակը, բարձրաձայն քիթը մարդեց և, մոռարերելով, որ կարող է ջերմախտից բռնուիլ.

Լուսամուտը փակեց: Ապա նա փոեց երէկ երեկոյեան մ-ը Վելիսկուրաքից ստացած մեծ թերթ թռուղիմը, — Ի.իօնէլի՝ գիտութեան բուլոր ճիւղերից, անցածի համառօտ ծրագիրը: Նա խորասուզուեց այդ թղթի մէջ, կիսելով իւր կնճոստ ճակատը: Կարգալու ժամանակ նա աչքերը կկոցում էր, թարթում, բարկացած՝ յօնքերը կիտում էր, շրթունքները չպչպացնում, փոնդացնում, անհամագիտա շարժումներ անում և անդադար պատառում աթուի վրայ և մի զարմանալի-անճոռնի բան էր ներկայացնում ինքն իրեն, որից յիրաւի զարհուրել կարելի էր . . . Նա չնկատեց, թէ ինչպէս դուռը կամացուկ բացուեցաւ և նոյնպէս հանգարտ փակուեցաւ և ներս մտաւ Ի.իօնէլը: Ի.իօնէլը զարմացած նայում էր նորան և մանրակիլիս գիտում... այդպէս անցաւ մի քանի լոսղէ և Ի.իօնէլն արտասանեց:

— Բարի լյո, պարմն ուսուցչապետ: Ուսուցչապետը վեր թռաւ, ուզզուեցաւ, երկար ուսները մի կերպ աղասեց աթուի տակից, ակնոցներն ուղղեց և չոր ու ցամաք պատասխանեց, ուղղակի իւր սանիկի աչքերին նայելով.

—Բարի լոյս՝ Յուսամ, որ պատրաստ
էք սկսելու ձեր պարագմունքները և ձեր
վատ տրամադրութիւնն արդէն անցել է և
դիշերս քնել՝ մոռացել էք:

—Չեմ մոռացել, որովհետեւ քնել-մոռա-
նալու ոչինչ չկար, անվրդով պատասխանեց
Լիօնէլլ, —և հայրս էլ այդ բանը շատ լաւ
գիտէր: Յիմարութիւն չէ ուրիշներին մե-
զադրել այն բանում, ինչի մէջ ինքներս ենք
մեղաւորչ Բայց այդ բոլորն արդէն անցել
է, —այդ երեկ էք, իսկ այժմ այսօր է, —և
ես բոլորովին պատրաստ եմ սովորելու:

—Շատ հաճելի է լսել, —և ուսուցչա-
պետը ժպտաց իւր դալուկ ժպտով: —Դուք
նախաճաշէլ էք:

—Այն:

—Եւ բաւական հանդսացել, հարցրեց
ուսուցչապետը ծաղրով շեշտելով վերջին
բառը:

—Չգիտեմ, —հաւանական է, որ ոչ...
դանդաղ արտասանեց մանուկը, ես շատ
անդամ եմ մտածել, որ կլամենայի քնել
և քնել ամբողջ օրերով առանց զարթնե-
ւու...:

—Այ, թէ ինչ, և ուսուցչապետը փըսթ-

կացրեց, ի նշան իւր խորին արհամարհանկիւ-
ննշուշտ դուք քնաթափութեան ենթարկվ-
ուող կենդանիների դասին էք պատկանում:

—Ամենայն հաւանականութեամբ, պա-
տասխանեց Լիօնէլլ ցինիկ անտարբերու-
թեամբ: Նորա քնում են ամբողջ ձմեռը,
գտ շատ հաճելի բան կինէր և շատ նե-
ղութիւնից ու չարչարանքից կազատէլլ:
Միթէ դուք երբէք չէք յոդնում:

—Մարմնով, այս, պատահում է, որ
յոդնում եմ, պատասխանեց ուսուցչապետը
խոժոս. Հայեացք ձգելով նորա վրայ, —մա-
նաւանդ երբ գէպք է լինում յամառ բնա-
ւորութիւններ վերակրթել: Իսկ բարոյապէս,
ես երբէք յոդնած չեմ լինում: Այժմ, երեխ,
կբարեհածէք զբաղմունքի կոչել:

Լիօնէլլ ժպտաց, գանդրահեր դուխը
վեր բարձրացրեց և ասաց.

—Օ՛, այժմ հասկանում եմ: Դուք նո-
ցանից էք, որոնց կոչում են՝ երգիծաբան: Զեզ հաճոյը է պատճառում ինձնից հար-
ցնել «կըարեհաճիմ արդեօք» դասերս սկսել,
երբ դուք շատ լաւ գիտէք, որ ինձ պէս
մանուկը, այսպիսի գէպքերում, չի կարող
ունենալ իւր սեփական ցանկութիւնը և

պարտաւոր է կատարել այն, ինչ որ հրաշմայում ենք ես գիտեմ ինչ բան է երդիշանկը։ Այ, օրինակ, Յոբնազը՝ երդիշարան էր։ Ես մի անդամ դրել եմ նորա բնաւորութեաննկարագիրը։ Նու սկսեց բանաստեղծութիւնից իսկ յետոյ դադարեց գեղեցիկ, բանաստեղծական բաներ դրել այն մարդոց համար, որոնք չեին կամենում և չեին կարող ըմբռնել այդ, —ուստի և սկսեց ծաղրել այդ մարդիկներին։ Նորան Եգիպտոս ուղարկեցին այն բանի համար, որ համարձակուել էր ծաղրել Ագրիանոս կայսեր սիրելիներից մէկին, —և առում են, թէ նա մեռաւ յոդնածութիւնից և չափազանց դրգուտած դրութիւնից, բայց ես կարծում եմ, որ, աւելի շուտ, նա մեռաւ ծերութունից, —չէ որ նա 80 տարուց աւելի ասպեց, —նա մինչև անդամ ձեզնից աւելի հասակաւոր էր։

Ուսուցչապետը կատարել էր դայրոյթից։

—Հասակաւոր, ես կարծում եմ, շատ հասակաւոր էր, դեռ շատ ժամանակ կանցնի, մինչև որ ես 80 տարեկան դառնամ։

—Միթէ, շարունակեց անմեղութեամբ կիօնէլը, ի՞նչ արած, ես գասում էի միայն

արտաքինից, —ձեր արտաքինը սարսափելի ծերացած է ցոյց տալիս ձեզ, —դուրս համար էլ սխալուեցայ ես։ Այժմ դուք ինձ հարցեր կտաք, թէ ես կարող եմ նախ հարցնել այն բանի մասին, որ ինձ խիստ անհանդստացնում է։

Ուսուցչապետն անբաւական դէմքով պատասխանեց.

—Ես ենթագրում եմ, որ դուք ինձ բաւական հարցաքննեցիք, այժմ ես պիտի քննեմ ձեզ։ Ես պէտք է իմանամ, դա կարեոր է ինձ համար, թէ դուք որքան էք յառաջադիմել ձեր պարագմունքների մէջ, նախ քան ես կմկնեմ ձեզ հետ առաջ գնալ։ Ձեր հօր կազմած համառօտ ծրագրից, որ բաւական լաւ է կազմուած, երեսում է, որ դուք յունաբէնից և լատիներէնից որ և է լան պիտի իմանաք, որ դուք բաւական բան անցել էք մաթեմատիկայից և շատ բան պիտի իւրացրած լինիք պատմութիւնից։ Կանգնեցէք ուզիլ, որտեղ կանգնած էք, ձեռքներդ դրէք մէջքներիդ, —մտաների ջղաձգական շարժումներ տանել չեմ կարող, —և երբ կալատասխանէք, նայեցէք ու զիդ աչքերիս։ Ես իմ սեփական դասաւան-

դութեան եղանակն ունիմ, որին դուք պէտք
է համակերպիք:

—Իհարկէ, զուարթագին պատասխա-
նեց Լիօնէլը, իւրաքանչիւր գաստիարակ իւր
սեփական եղանակն ունի և երբէք նա նման
չէ լինում միւսին: Ակզբում դժուար է լի-
նում ըմբռնել, բայց եռ միշտ աշխատում
եմ բոլոր ոյժերովս, որ հասկանամ:

Ուսուցչապետը ոչինչ չպատասխանեց
դորան և սարսեցնող եռամնգով սկսեց իւր
հարցաքննութեան գործը: Նո բոլորովն
ապշած էր մնացել իւր աշակերտի խելքի,
զարդացման և նուրբ ըմբռնողութեան վրայ-
Բանից երևեցաւ, որ այս մանուկն այժմ
շատ աւելի բան գիտէր, քան ինքը՝ երբ
20 տարեկան էր: Սակայն նա ծածկում էր
իւր զարմանը անմատչելի խստութեան
դիմակի տակ: Որքան Լիօնէն աւելի էր ար-
տայայտում իւր կիրքերն, այնքան ուսուց-
չապետի փափագն աւելանում էր զբաղուել
այս շատ մեծ արդիւնք խստացող էա-
կով: Այդպէս է չնորհալի, ընդունակ երեւ-
խաների վիճակը, —որքան արագ են ըմբռ-
նում, այնքան աւելի են լցնում, խճողում
նոյն դլուխը և վերջ ի վերջոյ ոչ ուղեղը,

ոչ սիրալ չեն դիմանում, անյաջողութիւնը
հետևում է անյաջողութեան և ի վերջոյ
առաջանում է ամենով մարմահազմի վերջ-
նական կազմալուծումն . . . Մեր կեղծ յա-
ռաջադիմական դարսում բազդաւոր են մի-
այն լութ, անընդունակ մանուկները, որ
չեն կարող լաւ սովորել, քնում են դասի
ժամանակ, կտրում են քննութիւններին և
ճիպոս ուտում, — որ շատ աւելի լաւ է
«գլուխը լցնելուց»: Ամենայն հաւանակա-
նութեամբ ապագայում նա՝ այդ բթամիուը
ամէն բանում կդերազանցէ այն առաջին
աշակերտից, որ ծանրաբեռնուել է պար-
գևատրութիւններով, որ այժմ արհամար-
հանքով է նայում նորան, — շատ հաւանա-
կան է, որ շատ աւելի յաջող կլինի և,
գուցէ, նոյն խել աւելի խելօք: Փոքրիկ չա-
րաճին, որին մայր-ընութիւնը, անտառն
ու մարգագետիններն են հրապուրում, երբ
նա դաս պիտի պատրաստէ, որը յանդգնու-
թիւն ունի աւելսրդ համարել չահասիրու-
թեամբ ուսումնասիրել մեռած լեզուները,
քանի որ այդ լեզուներով երբէք չպէտք է
խօսէ, որը չդադարելով յարազուարձ կենա-
սունակութիւն պահպանելուց, անտրտունչ

կրում է իւր բաժին արժանի պատիժը, — ընդունակ է իւրենից մարդ ստեղծելու, թէ կառի գաշտում տառելող ուժեղ դուրս կը դայ՝ թշնամիներին ոտնակոխ անելով, և թէ կեանքի ասպարիզում, խոչընդումների դէմ մաքառելով, որոնց անշուշտ ոյժ և կարուզութիւն կոննենայ յաղթահարելու։ Ուսուցումներ, այն եղանակով՝ ինչպէս այժմ է կատարւում, սպանում է մարդու մէջ ամէն մի անհատական ինքնուրոյնութիւն, — «գլուխը-լցնելու» դատապարտուած թշուառ զոհերը երբէք չեն կարող ունենալ ոչ մոքի պարզութիւն, և ոչ մարմնական ոյժեր։

Ուսուցչապետ Հօրը «գլուխը-լցնելու» կողմնակից էր, մարդկային ուղեղը նորա համար մի յարածաւալ պարկ էր, որի մէջ ոյժով կարելի էր լցնել ամէն տեսակ բան. կդիմանայ՝ շատ լաւ, կնշանակէ լաւ կտորից է, չի գիմանալ, — կնշանակէ կտորը վասն է եղել, և ոչ ոք մեղքը չունի այդտեղ . . . նորա մարած աշքերը կենդանացան, դեղն նած, ուկրուտ այտերը կարմրեցին. — Իխոնէլի հիանակի պատառխանները, պատմական փաստերի ծշմարիտ և հետեւզական մեկնութիւնները, այն արագութիւնը, որով նա

ըմբռնում էր ամենախտոն խնդիրների խմառը, և որ խկոյն լուծումը էր, — այդ ամէնը մանկավարժին հրճուանք էին պատճառում։ Այն միտքը, թէ փոքրիկ մանկան ցոյց տուած այդ աստիճան զարդացումն անընական է, մի երկու անգամ անցաւ նորա մոքով . . . ի թիւս միւս գիտութիւնների նաև ուսումնասիրել էր և բժշկականութիւն, — նաև լսել էր և ուզեղի յոդնածութեան հետևանիքների, նեարդային համալիւնդրոնների, ուզեղային հիւանդութիւնների մասին. — բայց նա իրեն թոյլ չուուեց երկար կանգ տանել այդ մոքի վրայ . . . Ընդհակառակը նա սոխուց մանկան աշխատել մի 20 տարեկան, ուժեղ և ամրակազմ երկտասարդի ոլէս ծշմարիտն ասած, Իխոնէլի մէջ չէր էլ երկում ամենեին յոդնածութեան ամենափոքը նշմար սննդամ. — նախորդ օրուայ հանդիսան ու ազատութիւնը մինչ այն աստիճան կազզուրել էին նորան, որ այն բոլորն, ինչ որ առաջ անտառնելի խառնաշփութեան էր թւում, այժմ շատ պարզ և հասարակ էր երկում, և բացի գորանից մի տենդային զգացում և ցանկութիւն էր տիրել՝ իւր նոր

դաստիարակին զարմացնելու։ Այսպէ, աշխոյժ, ճարտարարուեաս հետեւում էին պատասաւսնեները պատասխանների յետինց. — Լիօնէն ինքն իրեն վրայ զարմացած էր մնացել։ Վերջապէս տռաւուեան զբազմունքները վերջանում էին։ Ուսուցչապէս Հօբը, մի տեսակ գժկամակութեամբ, յայտնեց որ ինքը գոհ մնաց։

— Սակայն, աւելացրեց նա, ինձ մատդուք պարտաւոր կիոնիք աւելի լուրջ պարագել։ Ես այս բաղեիս կդրեմ, թէ ինչ պիտի կարգաք այս երեկոյ և ինչ պիտի պատրաստէք վաղուայ համար։ Ինացէք, որ ես նոյնչափ խստավահանջ եմ գէպի մըտքերի պարզութիւնը, որչափ և բառերի և խօսքի պարզութիւնը, — ես պահանջում եմ հասկանալ և ոչ թէ անգիր անել։

— Բայց չ՞ որ այժմ իմ պարագմունքներս ամառնային պարագմունքներ են, մըտախոհ նկատեց Լիօնիքը, այդ մասին ձեզ հախսպառշացրել են։

— Իհարեկ, այս Զեր այժմեան պարագմունքները համեմատաբար շատ աւելի թեթե են, քան այն, ինչ որ մենք կունենանք ուսումնական տարին սկսելուց յետոյ։

Դուք դպրոց մտնելու համար էք պատրաստում . . .

— Ոչ, ես սաստիկ կիսափագէի, բայց . . . — Եաւ, լաւ, ընդհատեց նորան մանկապարժը, այժմ թոյլ տուեք ինձ փոքր ինչ կշռագատել։

Նա սկսեց հետեւեալ օրուայ համար դասեր գրել, իսկ Լիօնիքը կանգնած նորամուռ հետեւում էր նորա երկար, սովորում մտներին, որոնք շարժում էին զրիչը։

— Երբ դուք այդ վերջացնէք, կարելի է ձեզնից խնդրել բացատրել այն, ինչ որ ինձ համար այնքան ցանկալի է դիտենալ։

Ուսուցչապէտը հետաքրքրութեամբ նաշյեց նորան։ Նա, հէնց այն է, ուզում էր բայցասական պատասխան տալ, բայց այս դիրահամբոյր, հնագանդ, և այնովիսի ընկունակութիւններով օժտուած մանկան հետ ունեցած հաղորդութիւնը մի կերպ մեղմացըրել էր նորա յարատե դրդուող վլանկը, որ շարունակ ունէր այս մերժաւմանակի դիտինէսը։

— Կարելի է, իհարեկ։ — Ուսուցչապէտը դրիչը ցած գրեց, թիկն տուեց աթոռի մէջըն և, բանալով իւր բարակ շրթունքը

ները, որով կամենում էր խրախուսող ժպիտ տուած բերել, առաց, առացէք, տեսնեմ ի՞նչ բան է այդ:

Ի իօնէլլ մօտեցաւ նորան և, նայելով իւր մելամաղձիլ-մտածիոտ աչքերով, հանգարտ ձայնով առաց.

—Դուք շատ խելօք մարդ էք, այնպէս չ՞։ Անդիպյում ամէնքից տւելի խելօք, ինչպէս ինձ առել են, այդ բոլորը ձեզ վաշ դուց յայտնի է, խել ինձ առ խիստ յուշ դում-զբաղեցնում է . . . Ահա թէ ի՞նչ կկամենայի խմանալ՝ որտեղ է Հիւլէն:

Ուսուցչապետն այնպէս տհաբեկուեցաւ և սարսաց, որ աթոռից խել վեր ցատկեց . . .

—Որտեղ է Հիւլէն, կրկնեց նա, ի՞նչ յիմարութիւններ էք դուրս տալիս դուքք ի՞նչ էք կամենում առել դորանով:

—Ոչ, դա յիմարութիւն չէ, հաստատապէս պատասխանեց Ի իօնէլլ, դա չի կարող յիմարութիւն լինել, որովհետեւ դորս մէջ է այն բոլորի պատճառն, ինչ որ դոյտւթիւն ունի: Դուք և ես, մենք, չ՛ որ կենադանութիւն ունինք, և ապրում ենք աշխարհումն, մեղ նման նոյնպէս կենդանու-

թիւն ունեցող արարածները նոյնպէս ապրում են այնտեղ: Բայց դրերն ապացուցանում են, որ մեր երկիրը մի ամենավորը մոլորակ է, բոլոր մոլորակներից ամէնից աննշանը, որ կան միլիօնաւոր, միլիօնաւոր այլ մոլորակներ, որոնք շատ ու շատ մեծ են նորանից: Նայեցէք մեր արեգակնեն: Առանց նորան մենք, անշուշտ, տարել չենք կարող, բայց մենք գիտենք, որ նա միայնակը չէ, որ կան միլիօնաւոր այլ արեգակնային համակարգութիւն, առանձին-առանձին աշխարհներ: Եթէ այս րողորը ոչ այլ ինչ է, եթէ ոչ հիւլէներ և առած են եկել հիւլէներից, —ապա ուր է նա, այդ զարմանալի, մանրիկ, փանաքի, առաջին Հիւլէն, որը առանց խմանալու թէ ինչ է անում, առանց որ և է կողմանակի ցուցմննքի, չունենալով ոչ սեփական բանականութիւն, ոչ սեփական գատողութիւն, այսպիսի հրաշագեղ ստեղծագործութիւն է յառաջ բերել: Եթէ դուք կկարողանաք բացատրել ինձ՝ թէ որտեղ է դանւում նա, —արդեօք չելք բացատրիլ նոյնպէս և այն, թէ որտեղից է յառաջացել նա:

Ուսուցչապետ Հօրը կարծէք սարսա-

վահար էր, այսպէս էր նայում նա մանուկին, — նա և՛ շփոթուել և՛ նեղն էր ընկել...

— Դիտէք, շարունակեց Լիօնէլը, ես այս մասին չեմ խօսիլ, եթէ լսած չլինէի, թէ դուք այդպէս խելօք էք, — ես միշտ սպասում էի մի շատ խելօք մէկին . . . իմ նախկին գաստիարակո, որ նոր հեռացաւ, մը Ռօնտրօղը, բոլորովին տարբեր հայեցքներ ունէր, քան գիտնականները, — նա հաւատում էր Յստծոն, ինչպէս հաւատում են հասարակ, տղէտ մարդիկը: Բայց նորանից առաջ ես ունէի մի ուրիշ գաստիարակ, խխտ զարդացած մի մարդ՝ մը Սկիտանունով, նա՝ ինչպէս ինքն էր ասում, դրական փիլիսոփայութեան հետեւզ էր, և ահա նա է, որ ինձ շատ ու շատ բաներ է պատմել հիւլէի մասին, նա մինչև խկ ինձ ցոյց տուեց հիւլէի մեծացրած նկարը, որ տեսել էին խոշորացուցով, — մի շատ ծիծագաշարժ, երկարաւոն բան է, մարդու կողի նման, ինչպէս որ նկարուած է իմ մարդակազմութեան գասագբրիս մէջ, և նա ինձ բացարարում էր, որ այդ հիւլէների պատահական միաւորութիւնից աշխարհներ են դոյտնում . . . այդ բոլորն ինձ սաստիկ զար-

մացնում էր, և ես չեմ կարողանում երեւակայել, թէ ինչպէս է, որ այդ առաջին հիւլէի պէս չնշին բանը, կարող էր որ և է բան մտածել ինքն իրեն, աշխարհներ ստեղծել, լցնել նոյց մարդիկներով, որ քանի՛քանի՛ անդամ տեղի մեծ են իրենից . . . բայց շատ զուարծալի մարդ էր այդ մը Սկիտը, նա շարունակ կրկնում և պնդում էր թէ՝ ամէն ինչ ոչինչ է, և ոչինչն ամէն ինչ է, և այդ բանն այնքան էր կրկնում և հէնց ինքն այնքան էր ծիծագում դորա վրայ, որ վախենում էի, թէ չլինի խելագարուի յանկարծ, և աշխատում էի նորս հետ այլ ես այդ խնդրի մասին խօսք չըքանալ. — բայց դուք, իհարկէ, կարող էք այդ բոլորը բացարել ինձ, չ՞ որ, յիրաւի, շատ հետաքրքրական է խոկապէս իմանալ, թէ յիրաւի որտեղ է գտնուում այդ առաջին հիւլէն և այժմ ինչ է շինում նա:

Եփոթուած ուսուցչապետը մեծ դըժուարութեամբ ինք զինքը հաւաքեց և չորչոր պատասխանեց.

— Դուք կամենում էք իմանալ այն, ինչ որ ոչ ոք չփխտէ: Թէ յիրաւի կայ նախասպատճառ, դա պարզ է և կասկածել չէ կա-

ըելի, բայց նրանք է նա, և նրանդից,—դու
մի անլուծելի գաղտնիք է:

Լիօնէլի տխուր, մտախոհ փոքրիկ դէմքն
առելի ևս մուայլեց:

—Դուք այդ անուանում էք ճախաւ
պատճառ», ասաց նա, բայց դուք հաւա
տացած էք, որ այդ նախապատճառը հիւ
լէն է:

—Ոչ ոք ոչ մի բանի մէջ հաւատացած
լինել չէ կարող, ասաց ուսուցչապետը, յօն-
քերը կիսելով՝ Մենք կարող ենք միայն
դուշակել՝ կուտհել, առաջնորդուելով նորա-
նով, ինչ որ հետազոտած է բնական դի-
տութիւններով:

Երեխան դաւնութեամբ, համարեա
արհամարհանքով, ժամաց:

—Ուրեմն բանն այդպէս է հա՛մ, —դուք
«գոհշակում» եք», կուտհում էք, որ կայ
հիւլէ, իսկ ուրիշները «գոհշակում» են» որ
կայ Աստուած . . . Կնշանակէ, ոչ ոք ոչինչ
էլ չգիտէ . . . Ըստ իս, մինչև անդամ մեծ
յիմարութիւն է երեակայել, որ հիւլէն կա-
րող է ամէն բանի պատճառը լինել, —աւելի
պարզ և բնական չի լինի՝ եթէ ասենք մեղ
ու մեղ, թէ ամէն բանի պատճառը մի էակ

է, —բանական, մի կատարեալ էակ:

Աւսուցչապետն այստեղ ընդհատեց նո-
րան և արժանապատութեամբ ասաց.

—Դուք դեռ ևս շատ փոքր էք այդ-
բաները հասկանալու համար . . . դուք չեք
կարող թափանցել այժմեան գիտական
յայտնագործութիւնների խորքը. և դատել
այդ մասին ձեզ պէս մի փոքր երեխայի
հետ, ծիծաղելի կլինէր:

—Ոչ, ծշմարիսն եմ ասում, ծիծաղելի
չէ, տիրամած հակածառեց Լիօնէլը, որով-
հետեւ ես չափազնց անբաղդ երեխայ եմ . . .
Ես շատ բանի մասին եմ մոտածում: Եթէ
Ես բազգաւոր լինէի՝ չէի մտածիլ: Մը-
Մօնտրոզն ինձ ասում էր, որ երեխանների
մեծամասնութիւնը ոչնչի մասին չէ մոտա-
ծում և այդ պատճառով էլ նոքտ ամէն
բան աւելի գիւրութեամբ են ըմբռնում,
քան ես, բայց ինչ պիտի անել, երբ ես
չեմ կարող չմոտածել . . . Գիտէք, —և նորս
մանկական փոքրիկ, դժգայն գէմքը մի ա-
ռանձին սրտայոյզ արտայայտութիւն ստա-
ցաւ, —ապրել՝ շատ էլ չեմ ուզում: Երբ
դդում ես, որ հիւլէի ստեղծագործութիւն-
ների ամենաշնչին մտսնիլին ես, այն հիւլէի,

որը մինչև իսկ ստեղծագործելիս չդիմէր, թէ ինչ է անում . . . որքան աւելի միսիթաշրական կլինէր զգալ, որ այդ անողը՝ մի եակ, անձն է, որը դիմէ, թէ ինչ է անում և ինչ է կամենում: Եւ աւելի բար չէր լինի, եթէ բոլոր դիմնականները համաձայնէին այն կէտում, թէ առաջին պատճառը ոչ թէ հիւլէն է, այլ խորհող էակ . . .

—Հիւլէն կարող է էակ լինել, իսկ էակը՝ հիւլէ, արտասանեց ուսուցչապետը, մոռանալով, որ նա վճռել էր այդպիսի մի փոքր երեխայի հետ պատճառաբանութիւնների և հիմքերի վէճի մէջ չմտնել:

—Այ, դա նման է մը Սկիտի ասածին՝ թէ ոչինչն ամէն ինչ է, և ամէն ինչք ոչինչ . . . Նկատեց Լիօնէլը: Ես այդ բանը հասկանալ չեմ կարող, և որչափ աւելի եմ մտածում, այնչափ առաւել զգում եմ, որ միայն կատարեալ անձը կարող էր ստեղծել ծաղիկները, հրաշալի երկինքը, երգեցողութիւնը և ամէն ինչ . . . և ես հաւատում եմ, ճշմարիտ հաւատում եմ, թէ քանի որ դիմութիւնն այժմ այսպիսի զարմանալի դիմեր է անում, նա կդանէ շուտով, որ հիւլէն էակ, անձն է, կատարեալ էակ, որ

դիմէ թէ ինչ է անում և մնաց եսս ճանաչում է, որը մեզ խզճում է և կամենում է օդինել, որովհետեւ սիրում է այն ամէնը, ինչ որ ինքն է ստեղծել . . . Եւ ուքան լաւ կլինէր այդ, ուրախ բացագանչեց մանուկը:

Դողը բանել էլ ծերունի գիտնականին, նա սարսաւոմ էր այս օտարութիւնները լսելով . . . Այն ենթադրութիւնը, թէ ինքը դիմութիւնը կդանէ, որ հիւլէն էակ է, նորան սարսափ էր ներշնչում . . . և անցած-գնացած ոչ-ցանկալի յիշողութիւններ ինքն իւրենց յարութիւն էին առնում նորա հոգու մէջ, նա իրեն տեսնում էր՝ ոչ այն գիտութեան անհոգի, անկենդան անձնաւորութիւնը՝ որպիսին էր այժմ նա, այլ փոքրիկ մանուկ, որ ազօթք էր մրմնջում մօր հետ նորան, Որի գյութթիւնն այժմ փոքրիկ Լիօնէլը նաև կերպով նախազգում էր, — մի ամենակաշող, ամենագետ Աստուած, որ ճանաչուեցաւ ի դէմն Քրիստոսիւ — Բայց սարուելով ներկայ գարու հոսանքներից, նա գլուխ բարձրացրեց Աստուածային գիւտութեան գէմ և վազուց արգէն ծաղրում, այսպանում էր նորան, ամէն-մի չարա-

միտ փարխեցու արժանի կատաղութեամբ։
—Այժմ այդ կատաղութիւնը հետզետէ
առելի ու աւելի էր աճում և հասել էր
մինչ այն աստիճան, որ նա կկամենար մի
լաւ թափահարել այս փոքրիկ արարածը, որ
այդպէս անխոռով կանդնած էր իւր առաջ
սարսուռ ազգող, անլուծելի հարցեր յաշ
րուցանելով։

—Վաղուց արդէն պէտք էր այդպիսի
դատողութիւններին վերջ տալ, խստու-
թեամբ ասաց ուսուցչապետը։ Եթէ դուք
մի ամբողջ տարի շարունակ ինձ հարցեր
տայիք, ես ձեզ ուրիշ որ և է բան չեի կա-
րող պատասխանել քանի «դիտութիւնն ա-
պացուցել է», որ բոլոր կրօնները առասպել-
ներ են և խաբէութիւն, միայն տղէտ անձ-
նաւորութիւնները կարող են իրենց համար
Աստուած Հնարել, —այդ բանը մեղ լու-
յայտնի է։ Մեզ յայտնի է, որ բոլոր ստեղ-
ծագործութիւնները հիմնուած են միայն
Հիւլէների պատահական միաւորութիւնների
վրայ, —բայց թէ որտեղից են յառաջացել
նոքա՝ մարդկային միտքը անկարող է հա-
սուլ լինել դորանու Մենք չդիտենք ինչո՞ւ և
ինչ նպատակի համար ենք ասպրում։

Լիօնէլը սաստիկ դունաթափուեցաւ։
—Եթէ այդպէս է, ապա չարժէ առզ-
բել . . . ասաց նա թոյլ ձայնով։ —Էլ ինչո՞ւ
համար են մարդիկ ծնւռում, եթէ անհպա-
տակ է ապրելը, եթէ ոչ մի բան իմաստ
չունի և ապագան նպատակ չունի, ինչ
կարիք կայ տանջուելու և չարչարուելու։ Եւ
որքան անգութ է այդ, և ըստ իս, վերին
աստիճանի անմիտ։

—Այն ինչ որ դուք չեք հասկանում,
դորա մասին ձեր ունեցած կարծիքը ոչ մի
նշանակութիւն չունի, հանդիսաւոր կերպով
նկատեց ուսուցչապետը։ Մենք կեանք ու-
նինք և, քանի որ կենդանութիւն ունինք,
պարտաւոր ենք խելացի կերպով կարգադրել
մեր ժամանակը։

—Բայց ձեր կարծիքն էլ ոչինչ նշանա-
կութիւն չունի, միամտաբար նկատեց Լիօ-
նէլը։ Հիւլէն ձեր մասին ևս նոյնչափ է
հոգում, որչափ և խմ մասին, թէև դուք
խելօք եք, խև ես մի անմեղ մանուկ, —
նորա համար բոլորովին միհնոյն է, նա մի-
այն պատուել և պատուել դիտէ, և նոյն
խև իւր մասին ոչինչ չդիտէ . . . Եւ
միհնոյն չէ, թէ մեր կեանքն ինչի վրայ կը

գործադրենք, — կմեռնենք և ամէն ինչ կվեր~
ջանայ: Կլամենայիք մեռնել:

— Ի՞արկէ, ոչ, սբոնեղած պատասխա~
նեց ուսուցչապետը, ոչ մի մարդ, որի խելքը
տեղն է, չի կամենայ մեռնել: Ես մտադիր
եմ ապրել այնչափ, որչափ հնարաւոր է:

— Միթէ: Եւ ինչքան տարօրինակ է
այդ: Ահա ես բարորդին այլ տեսակ եմ
մտածում, — ինձ թւում է, որ ես ուրախու~
թեամբ կը մեռնէի, քան կուզենայի ապրել
մինչեւ ձեր տարիքը և դաւնալ այնպէս, ինչ
պէս այժմ դուք էք:

— Այդ ինչ է, բարկութիւնից գունա~
տած, խստութեամբ հարցրեց ուսուցչապե~
տը, դուք արդէն յանդդնութիւն ակսեցիք:

— Ո՛, ոչ, ոչ, աշխուժութեամբ վրայ
բերեց երեխան: Միթէ ես որ և է անքա~
զաքափար բան ասացի: Ճշմարիան եմ ա~
սում, ես ոչ մի գիտաւորութիւն չունեի,
ներեցէք, խնդրեմ: Ես միայն կարծում եմ,
որ սարսափելի բան է այդչափ երկար, եր~
կար ապրել, այդչափ շատ աշխատել և
առնջուել, — և բոլորովին իդուր . . . ուստի
և ես չեմ կամենում ձեզ չափ ապրել:
Դուք, կարծեմ, պատրաստում էիք որպա~

տէղ իջնել, ահա ձեր գլխարկն ու ձեռնու~
փայտը, — և նո այնքան շնորհալի կերպով
տուեց այդ բաները նորան, որ կատազած
ուսուցչապետը միանդամից չիմացաւ ինչ
ասէր նորան: Նո գլխարկը գլուխը քաշեց
և խոր հայեացը խոժոռեց փոքրիկ փիլի~
սոփայի վրայ:

— Կարդացէք այն, ինչ որ նշանակել
եմ՝ Կեսարի Յիշատակարանի մէջ, ասաց
նա, այդ ընթերցանութիւնը ձեզ կոմա~
փեցնէ: Դուք հակումն ունիք երազելու և
երկալայտական աշխարհում թափառելու, —
իսկ այդ ես չեմ կարող թոյլ տալ: Կանդ~
նեցէք փաստերի ամուր հոգի վրայ, — լու~
իւրացրէք փաստերը, այն ժամանակ, դու~
ցէ, ձեզնից կարողանամ մի բան դուրս
բերել: Բայց այսուհեահ այլ ես ոչ մի յիշ~
մարտութիւն չլսեմ ձեզնից, — ոչ հիւճների,
ոչ տիեզերքի մասին: Ձեր դորձն այս աշ~
խարհումն է, իսկ այն աշխարհից դուրս
դործ չունիք:

Այս խօսքերի վրայ նո սենեակից ելաւ:
Լիօնէլլ մոտախոհ նայում էր նորա յետելից:
«Որքան տարօրինակ է և ծիծողելի, մտա~
ծում էր նո, որ մարդիկ միշտ բարկանում

են, երբ զգում են, որ սխալում են . . .
Ուսուցչապեսն էլ դիմէ ինձ նման, որ ամէն
բան պատճառ ունի: Բայց պինդ բոնել է
իւր տեսութիւնը և մինչ իւր համար
պարզել էլ չէ կարող՝ թէ հիւլը է այդ, թէ
էակէ ԱՇ, օրինակ, Խուրէն Դէյլը, նա հա-
ւասում է, թէ դա էակ է: Որչափ կցան-
կայի մի անդամ էլ տեսնել Դէյլին, մի
երկու-երեք հարց կառաջարկէի . . .» Նա
խորը հառաջեց և տեսնելով, որ սենեակի
մէջ տօթ է՝ լուսամուտը բաց արաւ, ար-
դէն կէս օր էր, արեւ խիստ այրում էր,
թմբերի վրայի ծաղիկները անդօր կախել
էին իրենց գլխիկները, թուչուններն ամէնքն
էլ լուկ էին և ծածկուել ծառերի ստուեր-
ների մէջ: Կողմնակի, ստուերաշատ ուղու-
վրայ Լիօնելը նկատեց ուսուցչապետին, որ
իւր հօր հետ գնում-գալիս էր, — նորա
տաք-տաք խօսում էին, — նայելով նոցա
վրայ՝ տիսուր ժպտաց, նորա խօր մասին են
խօսում, մտածեց նա: Ուսուցչապետը հա-
զորդում է, որ ես տարօրինակ երեխայ եմ;
զարմանում է, թէ ի՞նչորդ բան է, որ ես
կամենում եմ իմանալ, թէ մենք ինչու ենք
ապրում և հիւլէի մասին հարցեր եմ տա-

մա . . . ի՞նչ արած, գուցէ, գա խկապէս
ոտարուսի էլ է, և, իհարկէ, ես նոցա ձանձ-
րոյթ եմ պատճառում այդպիսի հարցեր
տալով, — բայց ես ի՞նչ անեմ, — ես այնպէս
ուզում եմ այդ իմանալ . . .» Ապա, որով-
հետեւ նա շատ հնագանդ և շատ էլ բարե-
խիղճ երեխայ էր, լուսամուտից հեռացաւ,
նստեց սեղանի մօտ և բաց արեց կեսարի
թիշտակարանի մէջ նշանակած զլուխը,
Դորս վրայ նա համբերութեամբ աշխատեց,
մինչ որ ճաշի կանչեցին:



տեսակէտից։ Այնպիսի աշաղին քայլերով
էր «քարում» նա, որ Լիօնէլի մանրիկ սու-
ները հազիւ կարողանում էին համել նորա-
յետից։ Սանիկի և գաստիարակի մէջ այլ
ևս ոչ մի խօսակցութիւն չէր լինում . . .
Խեղճ երեխան նոր հասկացաւ լոելու խմա-
տութիւնը և իւր բոլոր խոհերը ինքն իրեն
էր խորհում։ Երեխմն, գիշերներն, այդ խո-
հերը խանդարում էին նորա քունը, մի
տարօրինակ, բութ ցաւ յառաջացներով
նորա գիլտում։ Այժմ միշտ թոյլ ու դահ-
գաղ էր, յոդնած և այլ ևս չէր ցոյց
տալիս այն փայլուն ձիքերը, որ այնպէս
զարմացրին իւր գաստիարակչին իրենց ծաւ-
նօթութեան առաջին առաւօտեան, —այժմ
նա հազիւ-հաղ առաջ էր գհում, և ուսուց-
չափեալ զայրայթով յայտնեց նորան, որ
սիսալուել է նորա նկատմամբ . . . Օր օրի
վրայ այնպէս էր թւում խեղճ երեխյին,
թէ իւր գասերն առելի ու առելի են զըմ-
ուարանում; —այն ահագին քանակութեամբ
տեղեկութիւնները, որ նա պարտաւոր էր
խրացնել, շփոթուել և կարծես բոլորովն
անհետացել էին նորա յիշողութիւնից, և նա
կամաց-կամաց բոլորովին կորցրեց պարա-

Չանձրալի միակերպութեամբ անցնում
էին օրերը։ Լիօնէլի միակ զբաղմունքն էր
գասեր պատրաստել, իսկ միակ զուարծու-
թիւնը՝ ուստ ցչապետ Կապմօն-Հօրի հետ
մեծ, փոշոտ ճանապարհի վրայ մօտ մի ժամ
կատարած զբօսանքը։ Ուստ ցչապետը ոչ
անսատներում, ոչ մարդագետիններում ոչ
մի հրատուրիչ բան չէր գտնում, ծովը ա-
տելով առում էր և լոկ այն միաքը թէ
կարելի է նորա վրայ երկար զբօսանք
կատարել՝ սարսափ էր աղջում նորան, նա
ընդունում էր միտին «քալեր» կիզող արեի
ճառապայմների տակ՝ առողջապահական

պելու բոլոր սէրը Երբեմն նա մի օտար լոտի զգացման էր ենթարկում, որ նորան սառտիկ վախեցնում էր, Երբեմն, նա մի վայրինի ցանկութիւն էր զգում բարձրածայն գուալու, լուսամոխց գուրս ցատկելու, — մի խօսքով մի անմիտ բան անելու . . . Այդպիսի վայրկեաններին նա ամուր սեզմում էր իւր այրուսդ ձեռքերը, շրթունքներն ամուր իրաց էր կողյում և աշխատում էր խորասուզուել տուած կամերի մէջ, — բայց իւր սեփական յուզման ջզային երկիւզը այնքան մէծ էր, որ նա գոզում էր ամիսոջ մարմառվ և ստից-գլուխ սառչում . . . Երբեք չէր գանդատում նա, երբեք չէր կորցնում իրեն, — միայն աչքերն էին, որ մի աւելի խորացնին հայեացք էին ընդունել, — և փոքրիկ բերանի արտայայտութիւնն առաւել լուրջ կերպարանիք էր ընդունել: Մի գեղեցիկ ամսունային առաւօտ, բազզը խղճաց նորան, թոյլ տալով որ թառուցիկ ուրախութիւնը նորան էլ այցելէ: նորահայրն ու ուսուցչապետ Հօրը անսպասելի կերպով վճռեցին երկուսով միասին այցելել Լիմուտ, այսպէս կոչուող «Անդլիսկան Զուիցերիտն»: նորա պէտք է մեկնէին վաղ-

առաւօտեան ճեղակառքով, գիշերէին լիւմուտում և վերադառնային հետեւալ առաւօտեան: Լիօնէլին ծանրաբեռնեցին ամէն տեսակ դասերի բաւականաչափ պաշարով և խիստ, շատ խիստ պատուէր տուին պարատիզի ցանկապատից գուրս չգալ: Մու Վենիսիուրալ առաւօտեան իւր Լօնգոնի ծանօթներից մէկի հետ գնացել էր մի տեղ և սովորում էր միայն ուշ գիշերը:

— Եւ այսպէս, գուրք մնում էր մենամենակ ամբողջ տան մէջ, տասց մուր վելիս կուրուլ իւր զուարձալի ուղեորութիւնը սկսելուց առաջ և իւր փոքրիկ որդու վրայ խոսժու հայեացք ձգելով: — դա մի փաստոր փորձաքար կլինի ձեր հնագանդութեան համար, ես ենթադրում եմ, որ դոք հասկանում էր, թէ ինչ է նշանակում — աղնիւ խօսքը:

— Ես նոյնով ենթադրում եմ, որա սասախանեց մանուկը թոյլ ժպիտով:

— Աւստի և ինդրամ եմ ձեզ տալ ձեր աղնիւ խօսքը, — շարունակեց հայրը, — որ Դոք պաշտիզից չէք գուրս դայ, զրօննելու համար պարտէզը բաւական ընդարձակ տեղ է, և եթէ դոք բարեխզծութեամբ կզբազ-

ուիր այն դասերով, որ ձեզ տուել են, հազ
զիւ թէ ժամանակ կունենաք դատարկա-
պարտ թափառման համար։ Գիւղական փո-
ղցային մանուկների հետ վազվզել և ոչ մի
նոր ծանօթութիւն ըլինի ժամկոչների հետ։
—լո՞ւմ էք։

—Լուսմ եմ, սկսածախանեց Ախոնէլլը
—Եւ գո՞ւք, իսոսամում էք պարտիզից
չելնել։

—Ազնիւ խօսք եմ տալիս,—և Ախոնէլլը
նորից ժպտաց, բայց այս անդամ կէս-արև
համարհոս ժպտով։

—Պարտի զգացումը խիստ զարդա-
ցած է նորա մէջ,—մէջ մտու ուսուցչապե-
տը, կիտելով թաւ յօնքերը,—դա նորա
բնաւորութեան ամենից առելի նկատելի
կողմն է։

Ախոնէլլ մնացել էր լուս։ Նորան այլ և ո
ոչինչ չէր մնում առելու։ Եթէ նա խօսք բա-
նար այն մասին, ինչ որ ծանրացած էր իւր
սրակի և հսկու վրայ, նորան չէին կարող
հասկանալ, նոյն իսկ չէին էլ լոիլ։ Հասակա-
ւոր մարդիկ միշտ մի տեսակ անփութու-
թեամբ են վերաբերում փոքրների վշտերին։
Այն ինչ մանկական վշտերն և նոյնչափ

լուրը, նոյնչափ դառն կարող են լինել, ինչ
քանի և վաղուց վշտերի և տանջանքների մէջ
միտուած հասակաւորներինը, — դուցէ նոյն
իսկ, մանուկների մէջ դա առելի ուժգին է
հնչում, . . . որովհետեւ փոքր հասակի համար՝
վիշոր սարսափելի, բոլորովին անակնեկա
նոր է, իսկ ապագայում ևս նա սովորա-
կան ընկեր է դաւանում։ և նորա յաճախու-
կի, երբեմն ամենօրեայ այցելութիւններն
եսկ՝ մեղ այլ ևս շատ քիչ են զարմացնում, . . .
Երբ, վերջապէս, հայրն ու ուսուցչապետը
մեկնեցին, և նա իւր աչքերով տեսաւ թէ
ինչպէս իրեն արդէն ծանօթ նոյցա տանող
ճեպակառըն անցաւ տան մօտով, — նա տեհ-
մի ազատ շունչ քաշեց և հոգու վրայից,
կարծես, մի ծանր ընան ընկաւ։ Նա լուսու-
մուտից զլուխը գուրս հանեց, ուրախու-
թեամբ ներջնչեց տուառուեան թարմ օդը,
Ըսւրջ, փոքրիկ դէմքը մի ակնթարթում կեր-
պարանափոխ եղաւ և մի ինչոր անմեղ—
մանկական բան արտայայտուեցաւ նորա
վրայ։ Որքան ափսոսում էր նա, որ իւր մայրը
տանը չէ, — նա կլամենար, հենց նոյն բո-
պէին, վազել նորա մօտ, կրկնին և կրկնին
համեսուցել նորա սիրունիկ, գեղեցիկ գէմքը,

որ այնքան քնքշանքով փայլեց իրեն տեսնելիս, այս նշանաւոր երեկոյեան։ Բայց գուցէ, իւր մօր բարեկամները երկար չեն պահիլ նորան, մտածում էր նու։—և այն ժամանակ նու միջոց կտանի գեռ ևս խօսակցել նորա հետ՝ քնելուց առաջ։ Եւ մի անուշ, չերժ զգացում հեղիկ սովորեց նորա սիրով, —որ նա՝ իւր սիրելի, անուշիկ, գեղեցկուհի-մայրիկը, սիրում և իրեն, թէ դժուար էր հաւատալ այդ բանին . . . Նատեսած կժուար . . . մայրիկը շատ հազիւկ պատահէր, որ խօսէց իրեն հետ, երբէք ցանկութիւն չէր յայնում տեսնել իրեն և, կարծես, նոյն խոկ մոռացել էր իւր գոյութիւնը . . . Բայց և այնպէս, Լիօնէլը չէր կարող մոռանալ, թէ ինչպէս նա այս նշանաւոր երեկոյեան համբուրեց իրեն, որքան քնքշանը, անպատճմ քնքշանը էին փայլում նորա աչքերի մէջ . . . Այն օրից արդէն երկու շաբաթ էր մացել, երկու երկար, անդադար աշխատանքի շաբաթ և այն ևս ուսուցչապետ Կաղմօն-Հօրի շաբանակ ներկայութեան լուծի տոկ։ Լիօնէլը ծանր հառապեց . . . Սակայն, այսօր, ամբողջ օրն իւրեն էր, սիրոն ուզածի չափ պիտի փայելէր

այդ օրը Արհն այնպէս ուրախ էր փայլում, խոսն այնպէս բաց-կանաչ գոյն ունէր, լեռներն ու ձորերը, գաշտ ու ձորերը քողարկող ոսկեհար շամանդազը ամէն ինչի այնպիսի կախարդական տեսք էր տուել, որ Լիօնէլն անկարող եղաւ գիմագրել բնութեան այդ հրապուրիչ ձայնին և վճաեց, որ գտաերը պատմիզում պատրաստէ։ Սեղանի վրայ ուսուցչապետի ձեռքով իննամբով գասաւում գրքերի կցանց մի երկու-երեք գիրք ընտրեց և գուրս թռաւ։ Մի ըստեց յետոյ արդէն նա իւր սիրած ծառուզու մէջ էր. նա զուգահեռակի գնում էր վարդենիների անկարանների ուզգութեամբ, որ ձգւում էին նոյն խոկ պարտիզի ցանկապատի երկարութեամբ։ Սպիտակ, կարմիր, գեղին հրաշալի վարդերի ծով էր այգանեղ, — նորա կարծես սիրալիք ժպիտ էին ուզգարկում իրեն, երբ նա մօտեցաւ նոցա, սքանչանալով նոցա դեկեցիս թեամբ, խոկ նոցա նուրբ բուրմունքը ինչ-որ փարդագոյն երազներ ու յոյշեր էին յարուցանում . . . նա բոլորովին մոռացաւ իւր գրքերը, այսինքն մոռերեց միայն նորա համար, որ հեռաւում եղած նստարանի վրայ գնէր, — յետոյ բոլու-

բավին մեկնուեցաւ արեի ճառապայմաներից ջերմացած, փափուկ խոտի վրայ, և ձեռնեսը դլսի տակը գներավ, սկսեց անժարթ նոյել դէսի անհատանելի, անսուհման կապոյտ երկնակամարի խորքը,—ահա այնուեղ բարձր, շատ բարձր, համովիստ լոզում էր մի փոքրիկ, թափանցիկ ամսի քուլա, —նորանից ցած, բայց գարձեալ շատ բարձր, թըռչում էր աշակաթիւ ծիծեռնակը, իսկ հէնց իւր դլսի վերեք՝ երկնքի բարձունքում, ու զազուած և յափսացած արեի ճառապայմաներով, արտուտիկը բարձրածայն երգում էր իւր հոգիացնող, ոչ-երկլային երգը՝ Ծառերի տեղեներն՝ իրենց, կարծես, նկարչի վրաձինից ելած, նորը գծադշութեամբ, որոշ շակի երեւում էին անշարժ օգի մէջ,—ամէն ինչ զարմանալի հանգստութիւն էր վայելում, և բնութեան այդ գեղեցկութիւնը, որ մարգու ներկայութեամբ չէր նոեմանում, մանկան զգայուն հոգին մի տառնձին յուղամամբ էր լցնում: Եթէ, յանկարծ, այս անգորդութեամբ մէջ լսուեր իւր հօր ձայնը, մտածում էր նա, որպիսի ու ստուեր կընկը նէր այս բոլոր գեղեցկութեան վրայ և մի անդամից կը խաւարեցնէր բոլորը . . .

Մոխրագլուխ տորտիկը իջել էր խոտերի մէջ, բոլորովին մօտեցել իրեն, և իւր կմոր, փայլուն, սեռակ աչքերով՝ փորձչի հայեացքով գիտում էր իրեն, —որա երեալը ըլլանդարեց ամբողջ գեղեցկութեան ներս դաշնակութիւնը, իսկ իւր հօրը երեան գտալ կանոնարէր . . . ինչով պէտք էր բացառութիւնը . . . նա սկսեց վերլուծել իւր այդ զգացումը և նորից խոռվայրզ հարցեւը զլուխ բարձրացրին նուաս սրտում, —արդեօք հայրն իրեն սիրում է, —աշդեօք մայրը սիրում է: Ինքը պարտաւոր է սիրել նույտ: Եւ ով ինչ օդուտ կունենայ այդ բանից:

Մինչդեռ նա այսպէս մեզմիկ երադում էր, մէկը, յանկարծ, նորա անունը առեց:

—Լիլիա, Լիլիա:

Լիօնելը վեր ցատկեց, նոյեց չորս կողմը, —ոչ ոք չէր երեւում ոչ մի տեղ:

—Լի-լիա:

Այս անգամ այսպէս ծորելով կանչելլու, կարծես, լսում էր հէնց ցանկապատի յետից, այնաշեղից, որտեղ վարդերն էին բուսած և կանաչի ու Դեփոնշերի մարդերի ու ձորերի գեղեցկութիւնը կազմող վայրեւ

մանրիկ ծաղիկների խիտ և միապաղաղ զանգուած էին ներկայացնում։ Նա աւելի մօտեցաւ, շարունակելով չորս կողմը գիտել և յանկաք տեսաւ մի փոքրիկ, վարդակարմիր գեմք, որ զգուշութեամբ դուրս էր նոյնում յասմիկի թաւ սոսերի միջից և ժպտում էր նորան իեւ-չարաճճիկ, իեւ-վասեցած, ուրախ ժպտով։

—Լիլիս, այ, տես, տես, ես քեզ տեսնում եմ; —և փոքրիկ գեմքը կահաչ թաւուտի և ծաղիկների միջից աւելի դուրս պրծու։ —Լիլիս։

—Ժեսմինա, սիրելի, սիրելիս, բացառ գանչեց Լիօնէլը, ուրախութիւնից շինհելով սիրունիկ ացնկանը նկատելիս, որին այլ և յոյն չունէր տեսնելու։ Եւ ինչպէս հասարդու այստեղ։ Ճանապարհն ինչպէս գտար։

Փոքրիկ միտո Դեյն խոկոյն չպատասխանեց։ Չորս կողմը նայելով՝ հարցրեց։

—Չեմ կարող միթէ այստեղից դուրս դալ, —և ցանկանում եմ տեսնել մայրիկիդ։

Լիօնէլն խոկոյն կշռագատեց, որ Ժեսմինայի ցանկութիւնը կատարելն անվտանգ չէր, —կարելի է, որ պարտիզանին և ծառաներից մի երկուսին էլ պատուիրած է

Գիտել իրեն, —իւր մասին նա ամենին չէր վախենում, ըայց նա չէր կամենաց խեղճ մուբէնին և նորա փոքրիկ աղջկանը փորս ձանքի մէջ ձղել։ Նա չողեց ծաղկող յասմիկի և Ժեսմինայի տուած և դէպի իրեն քաշելով սիրուն դէմքը՝ քնիքաբար, խիստ քնիքաբար համբուրեց . . .

—Մայրիկս այսօր տանը չէ, ասաց նա համարեա շնչալով, վախենալով, որ կարող են իրեն գաղտագովի լսել. նա միայն գիշերուայ մօտերը կիերագառնայ։ Հայրս և Կաստիարակու էլ զնացել են և ես բոլորով վին մենակ եմ։ Ես խոստացել եմ պարտիզաց դուրս չերեղաւ և կիսակ, Ժեսմինա։ Ինչպէս է մը Դէյլի տոողջութիւնը։

—Լաւ, շնորհակալութիւն, արժանապատութեամբ պատասխանեց Ժեսմինան։ Հայրիկս այժմ զբազուած է, —նա մի ուրիշ գերեզման է փորում; —փոքր, շատ փոքր մի գերեզման, նոյնչափ փոքր մի մանկիկի համար։ Այդպիսի գերեզմանը շնորհաւ մաս սիրուն է վինում։ Նա հառաջեց և մատը իւր փոքրիկ բերնին գնելով, իւր երկնազոյն աչքերը երկինք բարձրացրեց, կարծէս որատես հը-

բեշտակ լինէր։ «Լիլիա, ի՞նչ է պատահել
քեզ, յանկարծ հարցրեց նա անհանկսուա-
թեամբ։ —ինչքան սպիտակ ես դու, բոլորու-
վին սպիտակած, գիտես, Լիլիա, դու խոկ
և խոկ նման ես իմ մայրիկին, երբ նա եր-
կինք թռաւ։

Լիօնէլը ժպատաց։

—Այս գիրջին ժամանակներս ես շատ
և շատ եմ պարապել, պատասխանեց նա.
Երբ շատ գիրք ես կարգում, միշտ յոզնում
և գունատում ես։ Դու գիրք ամենին չես
կարգում։

Ժեսմինան գլուխը բացասաբար շար-
ժեց։

—Ես գեռ ես կարգալ չգիտեմ, խառ-
տովանեց նա, ես միայն վանկերով հա-
զիւ եմ կաշգում, —իմ կախարդական պատ-
ճութիւնների գիրք բոլորը կարող եմ; խոկ
Աստուծոյ գիրքը հօդաբոյր կէտն է կարգում
ինձ համար։

Կախարդական պատճութիւնների գիրք
և Աստուծոյ գիրք —այդուեղ սկսում և
այդուեղ էլ վերջանում էին Ժեսմինայի ծառ
հօթութիւնները . . . Լիօնէլը ժպատաց, ակա-
մայից մտաբերելով ուսուցչապետին և երե-

ւակայելով թէ որպիսի՝ արհամարհանքով
կվերաբերուեր նա թէ փոքրիկ աղջկանը,
թէ կախարդական պատճութիւնների գրքին
և թէ Աստուծոյ գրքին։ Դեռ ևս շարունա-
կելով չոքած մնալ նորա առաջ, հանգաբա-
սնցըրեց Ժեսմինայի երկար հիւսակներից
մէկը ճիւղերի մէջ և փաթաթեց այն ծառ-
պինների շուրջը, որ նոյնպէս նորա անունն
էին կրում։

—Եյժմ դու չես կարող գնալ, զուտը
թագին բացագանչեց նա, դու միմ փոքրիկ
սորիուհին ես։

Աղջկելը ուսի վրայից նայեց նորա աբա-
ծին և զուտթ քրքիջ արձակեց, —և մինչ-
դեռ նա ծիծալում էր, նորա սիրուն այտիկ-
ները, կարծես, ամբողջապէս փոսիկներով
էին ծածկուել . . . Բոլորովին դո՞ւ խը նոր
վիճակով, նա աւելի յարմարաւոր կերպով
տեղաւորուեցաւ կահանչների գրկում՝ ուրա-
խութիւնից զունդունալով վարուժանի նման։

—Ես քեզ չսատացի, որ յանկապատի մէջ
մի բացուածք կայ, որտեղից ես կարող եմ
ներս սողալ, տաց նա յազթական եղանա-
կով։ Ահա հէնց այս է այն բացուածքը։ Նա
միշտ եղել է, —և ես յաճախ եկել եմ, երե-

զեռ ևս այստեղ ոչ ոք չէր առլում, և
վարդեր եմ քաղել։ Այստեղ շատ, շատ
վարդ կայ։

Նա հարցնելով ասաց այդ։ Լիօնելը
հասկացաւ ակնարկը և, արագ վեր թռչե-
լով, մի ահագին փունջ քաղեց կիսարաց
հրաշալի վարդերից և նորից ծունկի գալով,
առաջարկեց նորան։ Նա իւր փոքրիկ պնջիկն
ամբողջապէս թաղեց անուշաբոյր թերթիկ-
ների մէջ։

—Ա՛յս, որչափ հրաշալի է, ասաց նա
հառաջելով։ Դու շատ լաւ, շատ լաւ տղայ
եռ, —ես սիրում եմ քեզ իսկ ապա որտեղ
են քո ծրովական պատերազմներդ։

Լիօնելն ուրախ քրքջաց։

—Այնուեղ, որտեղ միշտ եղել են և
որտեղ էլ միշտ կմնան։ —Հոմերի վիպական
երկերի մէջ Դարձեալ նոյն հին պատմու-
թիւնն է։

—Այս, գարձեալ նոյն հին պատմու-
թիւնը, մի առանձին, իսկամ ծիծաղելի կեր-
պով կրկնեց Ժեսմինան, յիշում եմ կար մի
չարասիրտ իշխանուհի, կային և . . . Ա՛յս,
Լիլիա, տես, տես՝ մեղնւն . . .

Աղջիկը բոլորովին կուչ եկաւ, կրծքին

կպցնելով իւր վարդերը և նորա սիրունիկ
դեմքը կատարեալ զարհուրանք էր արտա-
յայտում խոշոր, համարձակ մեղուի առաջ,
որը բարձրաձայն բզզալով, պտտում էր նո-
րա գլխով, —անշուշտ, չլարովանալով պար-
զել իւր համար, թէ ծաղիկ չէ նա, և իւր
մէջ մեղքի անուշութիւն չէ պարունակում-
—Լիօնելը զինուելով վիլիկի երկար տերե-
սով, քաջութեամբ պաշապանում էր իւր
փաքրիկ ստրկուհուն թեաւոր թշնամնուց, —
վերջապէս մեղուն զգալով, որ այս հրաշալի
արարածներն այնու ամենայնիւ ծաղիկներ
չեն, յուրաքար և առօք-փառօք հեռացաւ, . . .

—Ինչ վատն է, ասաց Ժեսմինան, աշ-
քերով հետեւելով հեռացող մեղուին։ Պար-
աիդի բոլոր ծաղիկները նորանն են, բաւա-
կան է էլի . . . իմններից ինչ է ուզում։

—Իհարկէ, վատն է, համաձայնեց Լիօ-
նելը, —և այդ բոպէին իրեն որչափ բաղ-
դաւոր էր զգում . . . և ձեռներով հե-
ռացնելով կահաչն ու ծաղիկները, որ կիսով
չափ ծածկում էին իւր հարեանին, նա աւելի
մօտ նստեց նորան։ —Ասա, Ժեսմինա, մի-
թէ, ճշմարիտ, դու ամբողջ դաշտը միայնակ
անցար։

—Այս, ինքնաբաւական կերպով պատասխանեց նա, գաշտով աւելի մօտիկ է քան ճանապարհով։ Երբեմն այնտեղ շատ շատ կովեր են լինում, — եռ վախենում եմ նոցանից, — և չեմ կարողանում անցնել, իսկ այսօր կովեր չկային և բոլոր ժամանակն այնպէս վազում էի, որ շատով դամ քեզ մօտ, Լիլիտ, — և այդ տաերթ ժամանակ քընդշաբար նոյեց նորան, — իսկ դու երբ կդասինձ մօտ։

Լիօնէլի ուրախ դէմքը մթագնեցաւ։

— Զգիտեմ, Ժեսմինա, տիրագէմ պատասխանեց նա, . . . ախ, ի՞նչպէս կլամենայի դալ։ Վազուց կդայի, եթէ հնարաւոր լինէր . . . իսկ այժմ՝ այնքան դասեր ունիմ, — բայց այս էլ կայ, որ առանց ուսուցչաւ պետի ինձ ոչ մի տեղ չեն թագնում։

— Ուսուցչապետ . . . նա ձվ է, հարցըց Ժեսմինան։

— Եմ դաստիարակո, նու շատ լսելոք մարդ է, ինձ դաս է տալիս։

— Միթէ չէր կարելի, որ ուսուցչապետն ինքն էլ դար քեզ հետ մեզ մօտ։

— Ոչ, սիրելիս, նու չէր կամենայ, նու սորովինակ մարդ է։

— Հասկանում եմ, ընդհատեց Ժեսմինան, դլուխը շարժելով։ Նա չար մարդ է, — ճիշտ այնպէս, ինչպէս անտառի մանուկների հօրեղբայրը, ինչպէս քո հայրը։ Դու առաջիր չէ, որ հայրը ինձ կյանդիմանէր, եթէ եռ ցանկալատի բացուածքով անցնէի։

— Այս, և հաւատացած եմ, տասց Լիօնէլլը։

— Ռերեմն, նա չար մարդ է, շատ վատ մարդ, վճռեց աղջիլը և ձայնը ցածացնեւ լով տեղացրեց, « Փեղճ, խեղճ Լիլիտ, ինչ քան մեղք եմ դալիս քեզ . . . »

Նորա ձայնը մի առանձին քնքանիք և մելամաղձութիւն էր արտայայտում։ Լիօնէլլը զգում էր, որ իւր աչքերն արտասուակալում են։

— Ենչու, իմ սիրելի, դողդոջ ձայնով հարցըց նա, և իւր յուղումը ծածկելու համար — սկսեց յասմիկի սոսին փաթաթած հիսուկն արձակել։

— Ուսովհետեւ դու միայնակ ես, և ես վախենում եմ, որ ինձ այլ ևս երբէք չես տեսնիլ . . .

Եւ նորից բարձրացրեց նա իւր երկնաւոյն աչքը կապուտակ երկինքը, կարծես,

լեռնային աշխարհի հեռու բարձունքից մի հրաշալի բան դիսի իրենն էր հրաւիրում նորան . . . Լիօնէլլ իւր ձեռքերի մէջ առաւ փոքրիկ աղջկայ թաթիկները, նորա սիրառ վշտալի կերպով կոկծաց, բայց այդ վիշտն այլ վիշտ էր . . .

—Իմ անուշիկ, պէտք չէ այդպէս խօս սել, մեզմիկ արտասանեց նա: Ամենայն հաւանականութեամբ ես գեռ ևս շատ յաճախ կուեսնեմ քեզ,—երբ, նոյն խոկ, Կոմինը ունից կզնանք մենք, ես քեզ երբեք չեմ մոռանայ, —ես կվերտառնամ քեզ մոտ՝ երբ կմեծանամ:

Աղջիկը մոտավոր նորան դարձրեց իւր տիկները:

—Մինչեւ դու կմեծանաս, Լիլիա, շատ շատ ժամանակ կանցնիք

Լիլիան լուռ էր: Իհարկէ, իրաւոնք ունէր նա այդպէս ասելու: Նոտ, շատ ժամանակ կանցնի, մինչեւ որ ինքը «կմեծանայ», —բայց գեռ ևս խնդիր է, երբ և իցէ այդ ժամանակը կհասնի: Նա զգում էր, որ երբեք չէր կամենայ «մեծ» լինել. «Փոքրիկ» լինելն անդամ նորա համար շատ ու շատ ծանր էր . . . Նա մինչեւ խոկ երեակայել չէր

կարողանում, որ հնարաւորութիւնն կունենայ առլել երկար, երկար տարիներ, գործի ու աշխատանքի մէջ, միմիայն նորա համար, որ հասնէ այն հասակին, երբ մարդիկ «մեծ» են լինում, և իմանալ, որ այնուհետեւ ևս նոր աշխատանքի ու նոր տանջանքների երակար տարիների մի շաբթ կդայ, մինչեւ որ վերջապէս կհասնէ ծերութիւնը, —և ամէն ինչ կվերջանայ, գերեզմանը և մոռացութիւնը կվլանեն այն, ինչ որ երբեմն գյուտաթիւն ունէր . . . Նա դիմէր, որ մարդկութեան մեծամասնութիւնը ապրում է, առանց մի բաղէ անգամ՝ յուզուելու իւր այդ ճախտագրով. —բայց նա՝ իւր նկատմամբ, դարձուրում էր նորանից . . . Եթէ մտհուանից յետոյ մի նոր կեանք կոկտուեր, —որպէս պիսի լուսով կլուսաւորուեր այն ամէնը, ինչ որ այժմ այնքան խորհրդաւոր, անհաս էր. —բայց գիտականներն այդ յոյսը խօրտակել էին, ազգաբարեկով՝ որ մտհուամիւ վերջանաւմ է հոգու կեանքը . . . Խոր և մոռայոյլ խոհերի մէջ ընկղմած, նա գեռ ևս շարունակում էր չոքած մնալ Ժեսմինայի առաջ, բռնելով նորա փոքրիկ ձեռները, —խոկ սա այնպիսի լրջութեամբ էր նոյում:

նորան իւր խոշոր լուսափայլ աշքերով, — և
երկուան ևս լուս էին, կարծես զգալով, որ
մի անյայտ բան մօտենում; վարւում է
նոցա . . . Ապագայի ստուերն էր ար-
դեօք, որ խորհրդաւոր կերպով այցելում
էր նոցա, թէ դա ստուեր չէր, այլ մի լու-
սաւոր ամող, որ մեզմիկ մօտենում էր նոցա,
որպէս զի հովանաւորէ և երկնային ուրա-
խութեամբ պարփակէ նոցա . . . Անհնար
էր թւում, որ այս երկու մաքուր, նորածիլ
կեանքերն ևս, ժամանակին, ընկնէին ընդ-
հանուր հոսանքի մէջ, որպէս զի առանց
խնայելու գարի կրափիտ աղդեցութիւնը նո-
ցա վրայ ևս դնէ իւր կնիքը. — մարդ վրդով-
հում՝ և, երբ մտածում է, թէ այս մտա-
խո՞, այգչափ գիւրազգաց, բանաստեղծա-
կան հոգու տէր երեխան մեր ժամանակի
մարդոց սովորական տիպերից մէկը պիտի
գառնայ, իսկ աւելի վրդովիչ էր այն
միտքը, թէ այդ հրաշագեղ փոքրիկ աղջիկը,
որի աշքերում նոյն իսկ ինքը երկնքն էր
ցոլում, կդառնայ մեր ժամանակի իսեսաց
տիպերից մեկը, — որ նոցա երկուսի մէջ
կմարէ այն որբազան հուրը, որ այժմ վառ-
ւում էր իւր մեզմիկ և պայծառ լուսով . . .

Է՞նչ էր սպասում ապագայում այս մահուկ-
ներին: Ո՞վ կարող էր դուշակել այդ . . .
. . . Ստկայն, Ժեսմինան շարժուեցաւ
իւր կահաչ բնի մէջ: — Ես հէնց հիմու կերթամ, Լիլիտ, ու-
սաց նա: — Ի՞նչու այդպէս շուտ, բացագանձեց
Լիլիան, քիչ էլ մնա: — Զի կարելի, յարեց նա, ես խոստացել
եմ հայրիկիս, որ ճաշից առաջ նորս յետեից
դնամ: այժմ նա սպասում է ինձ: — Ճաշից
յետոյ նորից արի, խնդրում
էր երեխան, ժամը չորսին վերագարձիր, ես
այսուեղ կլինիմ: Կապասեմ քեզ: — Լաւ,
Լիլիտ, կտշատաեմ: — դուցէ
կգամի, բայց կարող է պատահել էլ, որ չկա-
րողանամ գալ, գուցէ անկարելի կլինի, ասաց
նա հառաշելով: Բայց ես հաւատացած եմ,
որ շուտով նորից ովտի տեսնեմ քեզ, —
չեմ սպասիլ, որ գու «մեծանոս»: Միմիայն
չմոռանաս ինձ, Լիլիտ:

— Քեզ՝ մոռանալ — ոչ, ոչ, — աշխատով
յարեց երեխան, ուղղելով փոքրիկ աղջկայ
գլխարկը, երբէք, երբէք քեզ չեմ մոռա-
նայ, սիրելի, անուշիկ, իսր պատիկ Ժեսմինայ:

ԺԵԱՄԲԻՆԱՆ ՀԵՂԻԼ ԺԱՊԱՊՐՀ
—ԿԱՐԱՋԵԽԱՌ ՄԵԼ ԷԼ ՀԱՄԲՈՒՐԵԼ ԻՆՃ,
ԼԻԼԻԱ, ՄԵՂՄԻԼ ՀԱՐՋՐԵԼ ՆԱՏ:

Իբր պատասխան գորան՝ Լիլիան ամուր
դրկեց նորան և քնքոյշ, քնքոյշ համբուրեց
նորա վորքիլ այտերը, որ ծաղկիների միջից
գէպի իրեն էին ուղղուած:

—ՄԻԱՍ-ԲԱՐԵ, ԼԻԼԻԱ-ՂԱՆ, ասաց նա
և չորեքթաթ տալով սկսեց կանաչի տակից
դուրս սողմալ:

—ՄԻԱՍ-ԲԱՐԵ, ԺԵԱՄԲԻՆԱ-ՂԱՆ, բայց
ոչ ընդ երկար, պատասխանեց նա:

—Ոչ ընդ երկար, կրկնեց նա, միայն
չմոռանաս ինճ, Լիլիա-Ղան:

—Երբէք, — հաստատ ձայնով կրկնեց
մանուկը տիսրագէմ ժպարով նորան և
դիտելով նորան խիտ կանաչ ցանկապատի
միջից, որի յետեռունն էր կանդնած արդէն
աղջիկը: Մեզմիլ քայլերով անցաւ նեղ կա-
ծանով և յանկարծ շուռ եկաւ, — արագու-
թեամբ նորից յետ եկաւ վաղելով և, եր-
կու թաթիկնելով նորից յետ տանելով
յասմիլի ոստերը, նորից նայեց ինը ծա-
ղիկների միջից նարան:

—Լիլիա, միաս-ԲԱՐԵ, Ոչ երկար ժա-

մանակով, — ասաց նու և ապա անհետայաւ:
Նորից միայնակ մնալով, Լիօնէլն ար-
դէն այլ ևս այնպէս չէր զգում իրեն, ինչ-
պէս այդ տռաւոտ մինչեւ իւր սիրունիկ,
փոքրիկ հիւրի գալը, — ԺԵԱՄԲԻՆԱՆ, կարծես,
իւր հետ տարաւ բոլոր ուրախութիւնները,
— ամէն ինչ չորս կողմում փոխուեցաւ, և
խաւարեց . . . ինչ ուրախութեամբ կվաղէր
այժմ ինքը նորա յետելից Որքան զուար-
ձալի կլինէր համնել նորան, — մի անգամ
ևս մի ամրագջ, զուարիթ օր անցնել: Յայց
նու մտարերէց այն խօսքը, որ տուել էր
հօրը . . . Արսափելի թախիծ պատեց նո-
րան, նա փորձեց գրքերը վերցնել և պո-
րապել, — բայց իզակ, նորա մտքերը թա-
փառում էին հեռու, մի անորոշ տեղ, և
ոչնչի վրայ չէր կարողանում կենդրունակալ:
իւր նստած նստարանի հէնց գիմնաց երկու-
բաց-կապոյտ, փայլուն թիթեռնիկ, կարծես,
երկու թեաւոր ծծմօրիկ լինէին, ուրախ-
զուարիթ թռվում էին օդում, կարծես,
երար հետ խաղալով: Երկար մտամոլոր գի-
տում էր նոցա, ակամայից զմայլելով նո-
ցանով, — և յանկարծ, — նորա հոգին առաջին
անգամ զգաց բնութեան անխոռվ անտար-

թիրութիւննը, և դարձուրեց... «Մէկի վիճակը
ոչնչով չէ հետաքրքրում միւսին», մտածում
էր նա, «ինչ էլ որ պատահի մարդուն, թըռ-
չունները կշարունակեն երգել, իսկ ծաղկինե-
րը ծաղկել թիթեռները չեն դադրիլ ուրախ
թրփուալուց և արեն էլ կշարունակէ պայծառ
լուսաւորել,—և հէնց այդ պատճառով է, որ
նորու վճռել են թէ բոլորի պատճառը հիւ-
լին է, իսկ հիւլէից ինչ կարեկցութիւն կա-
րելի է սպասել»։ Նա վեր կացաւ տեղից և
հանդիսա քայլերով գիմեց դարպասից գէպի
տուն ձգուող ստուերախիտ, լայն, լորենի-
ների ծառուղին։ Փակ դարպասի միւս կողմը
նա տեսաւ մէկին, որ կանդնած վան-
դակապատի առաջ՝ ձեռքսով անհասկանալի
նշաններ էր անում իրեն։ — Նա քայլերն
արադացրեց, բայց յանկարծ ցնցուեցաւ և
կանգ առաւ... նորա առաջ կանդնած էր
այն թշուառ արարածներից մէկը, որոնց
վրայ նոյն իսկ մարդկային պատիկը որոնելը
դժուար կլինէր, դա հաշմացած առներով և
ձեռներով մի խեղանդամ էր։ Արսափելի
դուրս ընկած աչքերը նայում էին վայրե-
նալար, գէմքը՝ գեղնած, հողագոյն, ինչպէս
մեռելինը լինի, և որուած էր այդ առաջ-
առ մասը մասը միայն այն ժամանակ,

ձառնի ծամածութիւններով բացւում ու
անկապ, անսովոր ձայներ էր հանումք-
թշուառ արարածի գլուխը ջղածդարար տա-
տանեռում էր մի կողմից միւսը, ձեռքին
բանած էր մի զամբիւզ՝ լիքը հրաշալի սպի-
տակ վարդերով և կաշմիր ինձորներով։ —
այդ հրապութիչ գեղեցկութեան և թարմաւ-
թեան զուգագիտութիւնն առաւել անդժառ-
չար էր ընդգծում թշուառ աղքատի զարհու-
րելի անձունիութիւնը, — նա շարունակում
էր իւր կծկուած ձեռներով և խեղած ժրպ-
առով իւր մօտ կանչել լիօնէլին։ Բայց մանու-
կը, բոլորովին սառած երկիւզից, գամուել
էր իւր տեղը, կարծես, բուսած լինէր այդ-
առող։ — Նա բոլորովին անշարժ, սարսափած
հայեացրով գիտում էր իւր առաջը, և յան-
կարծ, որչափ ոյժ ունէր, յետ՝ գէպի տան
փախու և կանգ առաւ միայն այն ժամանակ,
երբ վազեց վերև և ինքզինքը իւր սենեա-
կի մէջ դտաւ։ — Նորան տիրել էր ջղային
ցնցումը և նա չէր կարտղանում զապել իւր
մէջ յառաջացող զզուանքի ու զազիր գար-
շանքի զգացումը։ «Հէնց այդպէս է, հէնց
այդպէս էլ ովհանի լինի, ընդհատ-ընդհատ
խօսումը էր նա ինքն իրեն, չէ որ հիւլին է

ամէն ինչ ստեղծել, և հասկանալի է, որ
նորա համար ամէն բան, ամէն ինչ հաւա-
սար է», . . . նա աչքերը ծածկեց իւր ձեռ-
ներով, աշխատելով մոռանալ այդ սարսա-
փելի դէմքը, որ հէնց նոր էր տեսել, —տաշ-
քութիւնից գլուխն այրում էր, արինը
զարկում էր քներակների մէջ, նորա առաջ
իւր բոլոր մերկութեամբ կանդնում էր երկ-
րային, միայն երկրային գոյութեան տագ-
նապը, և այդ զարհուրելի տագնապը ճնշ-
շում էր նորան ամբողջապէս, —չարչարուել,
հիւանդութիւն և տանջանք, և յետոյ՝—
մոհ և նորա հետ էլ—վերջ . . . կնշանակէ
մեր կեանքը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի զար-
հուրելի տանջանք, որ թէ բարիների և թէ
չաշերի համար վերջանում է պատռհասով,
դիմատմամբ, մարդիկներին ըռնի են քաշ
տալիս և բերում տանջելու, —նորանց չայ-
շարում են, տանջում, տպա սպանում, և
այդ բոլորն այնպէս, առանց պատճառի,
աննպատակ . . . Եւ յիբաւի, կեանքն այդ-
պէս չպէտք է թուայ այն մարդիկների հա-
մար, որոնք նորա միջից հանել են Աստծոն,
կամ նորան վերաբերում են ինչպէս մի
անյայտ մեծութեան: Իմոնէլ վեր կացու-

և սկսեց նեարդային յուղմամբ պտտել սե-
նեակում: «Որքան անդութ բան է այդ, յուղ-
ուած և զայլացած մտածում էր նա, որ-
չափ ցած, անսպնիւ գործ, —ստիպել մեզ
ապրել՝ հակառակ մեր կամքի: Մենք եր-
բեք չենք խնդրել որ մեզ կեանք պար-
գեն: ինչու են ոտել մեզ այդ կեանքը:
եթէ որ և է պատճառ լինէր . . . Բայց այդ
էլ չկայ: Ահա, Ռուբեն Դէյլ հաւատում է,
որ կայ պատճառ, ուստի և ասում է, որ
ամէն ինչ լաւ է, —բայց նա տղէտ է և ո-
չինչ չգիտէ . . . Հետաքրքիր է, ինչ կամքը
նա այն ազքարի մասին, կարող կլինէր նա
բացարկել, թէ ինչո՞ւ նորա Ասուռածն
ստեղծել է այդպիսի մի զարհուրելի էակը:
Այստեղ, ըստ երեսյթին, մի միտք ընդ-
հաւեց նորա խորհրդածութիւնները, նա
արագ գուրս զնայ և ցած իջաւ: Նա ման
եկաւ բոլոր սենեակը, աշխատելով գտնել
այն գիրքը, որի մասին յանկարծ մտարե-
րեց, —բայց ոչ հօր առանձնասենեակում, ոչ
հիւրասենեակում, ոչ մօր առանձնարանում
չկարողացաւ գտնել այն գիրքը: Ասդա մի-
ջնացքով անցաւ գետի խոհանոցը, այնտե-
ղից գուրս կանչեց աղախիններից մէկին,

որ իրեն միւսներից աւելի սիրալիք էր զիշրաբերւում:

— Ի՞ւսի, հարցվեց նա, Նոր կտակաւընդ սնիք և կաշող էր մի քանի ըսպէսվ չնորհել ինձ:

— Ամենայն ուրախութեամբ, մոր Լիօննէլ բարեսրառութեամբ ժպտալով ասաց Լիսովն, ես այս ըսպէխո կրերեմ իմ նոր կտակաւանս, որ ես ընծայ եմ ստացել դպրոցն աւարտելու ժամանակ:

Նա հեռացաւ և շուտով վերադարձաւ, հոգատարութեամբ ձեռքին բռնած նուրբ թղթի մէջ փաթոթած մի դիրք:

— Տեսնում էր, որքան սիրուն է նա, ասաց նա, թուղթը վեր բարձրացնելով, ինդրեմ, սիրելիս, թանաքի բծեր չժափեթ վրան և, երբ կդանել, ինչ որ հարկաւոր է ձեզ, նորից յետ բերեք:

Ենորհակալութիւն յայտնելով Լիսովն և խոստանալով գիրքը լաւ պահպանել, Լիօննէլը վերադարձաւ խր սենեակը: Նա դուռը վակեց, նստեց գրասեղանի մօտ, նորս սիրոը սաստիկ տրոփում էր, գիրքը լաց արեց . . . և շուտով գտաւ այն, ինչ որ որսնում էր՝ տասը բորոտերի բժշկութեան

ոլոտմութիւնը: Բորսոտթիւնն, ինչպէս բաշասրել էին իրեն, բոլոր հիւանդաթիւններից ամենազարհութելին էր, — այդ հիւանդութիւնը և ժամանդական և ստացական-վարտկիչ էր, — նոր մարդկային պատկերն այլանդակում էր մինչ այն աստիճան, որ գժուար էր լինում ճանաչել . . . սակայն Քրիստոս երրեք չեր զգում և երես չեր դարձնում այդ գժբազգ նահատականերից: Ինդհակառակը, նա բժշկում էր բոլոր խրմօտ եկածներին և իւր մօտից գարձնում էր արդէն նոցա ուրախութեամբ համակուած . . . մի անգամ միայն, երբ տասը բոշոտները սրբուեցան, միայն մէկը նոցանից, ինչպէս ինքն է ասում, փառք տուեց իւր Բարերարին . . . — Լիօնէլը աղօտ կերպով զգում էր, որ այդ պատմութեան պարզ բառերի միջ ծածկուած է մի այլ բան, մի աւելի խոր միտք, որ գեռ ևս անմատչելի էր իւր հասկացողութեանը . . . Գլուխը սկսեց ցաւել, մոքերն ինչոր շփոթ գասաւորութիւն ստացան, — նա կամացուկ վակեց գիրքը և խորը հասաչ քաշեց: «Ամէն ինչ այստեղ այնպէս գեղեցիկ է, սասց նոր ինքն իրեն, բայց ինձ համար չէ սահմանուած կարգաւ

լու . . . չ որ հայրու տսում է, որ այս բուրը սուս է,—և իմ գլուխից մէկում, որի հեղինակը շատ խելօք մարդ է, ասուած է, որ ամէնից հաւանականն այն է, որ Քրիստոս երբէք չէ ել եղել, նորան ստեղծել են իրենք՝ Պետրոսն ու Պօղոսը՝ ԱՌ, մարդի խմանար գոնէ, թէ ինչ բանի հաւատայ, — խակ գիտնական փաստերի ու բացատրութիւնների մէջ ոչ մէկը համաձայն չէ միւսնին, — ամէն ինչ կատարեալ խառնաշվոթութիւն է ներկայացնում, ուր որ ել նայելու լինիք:

Նա նորից ցած իջաւ, որոնեց Լիւսին և, շնորհակալութիւն յայտնելով, գիրքը վերպարձրեց:

—Ի՞նչ, գտանք, ինչ որ որոնում էիք, մը Լիօնէլ, հարցրեց նա:

—Ո՛չ, ոչ-կատարելապէս, պատասխանեց նա և, թէև գէմ ընկնելով, բայց հաստատ ձայնով, աւելացրեց: Լիւսի, ճանաչչում էք այն գժբազգ աղքատին, որ վարդեր ու խնձորներ է ծախում, նա այս բողեիս այստեղ էր՝ գարպասի յետել, — ինչ սարսափելի գէմք սնի նա . . .

—Այս ճանաչում եմ նորան, լսեղծ

մարդ, իսրին արգահատանկով ասաց աղջիկը ես շատ յաճախ եմ տեսնում նորան, նա յիմար է, «իսենթ» է, բայց աղքատ չէ: Թէև նա խելքի նշան ամենելին չունի, բայց չափազանց բարի սիրո ունի և նա էլ, իսր տեսակէտով, գիտակցում է թէ որն է լու և որն է վատ, — չի կամենում ոչ ոքի վրայ ծահրացած լինել: Մարդ չի կարողանում հասկանալ, թէ ինչպէս է ապլում նա, — երկի, ինքը Տէրն է պահպանում նորան . . . բացի նորանից, ուրիշ ոչ ոք հօ չունի . . .

—Ինքը Տէրն է պահպանում նորան . . . ինչ է նշանակում այս . . .

Լիօնէլը իւր սինեակը դարձաւ տիսուր, մտախոհ: Նորու ճաշը բերեցին հէնց իւր սինեակը. ճաշեց և նստեց դասեր պատրաստելու: Նա պարապեց, աչք չէկուացնելով գրքերից մինչեւ այն բռպէն, երբ զգաց, որ աչքերը մթնեցին և գլուխը սաստիկ պտոյտ եկաւ: Վախենալով թէ կարող է նույից կրկնուել ուշաթափաթիւնը, նա շատ պող պարտէղ իջաւ և այդտեղ մտարերեց միացն, որ ժամը չորսն արգէն անցել է և այդ ժամին էր խոստացել Ժեսմինան՝ թէ կոպյաց: Նա դիմեց գէտի կահաչ ցանկապատը

և այնտեղ համբերութեամբ սպասեց մինչեւ
հինգ ժամը Բայց փոքրիկ, սիրելի աղջկը
չերեցաւ . . . վշարյած, վրդովուած նա
տուն գարձաւ Լիւսին մասուցարանով թէյ
ըերեց նորա համար և արդահատանքով ու
ցաւակցաբար նայեց խեղճ երեխայի յոդ-
նած գէմըին:

—Գիտէք ինչ, մ-ր Լիօնէլ, ասաց նա,
եթէ ձեր տեղը լինէի, ես այսօր աւելի կա-
նուխ կատակէիւ զշմարիան եմ առում; ձեր
գէմըը բալորավին գագրած, կատարելապէս
խնջացած տեսք ունի:

—Ես կամենում եմ սպասել մայրիկին,
պատասխանեց Լիօնէլը:

Երեսում էր, որ Լիւսին շատ էր ան-
հանդատացնում այդ մտադրութիւնը:

—Օ՛, շատ լաւ կլինի՝ եթէ այդպէս
չանէք, բացադանչեց նա: Ձեր հայրիկին, ան-
շոշա, շատ կրարկանայ ձեզ վրայ, եթէ այդ
բանն խնանայ: Դուք դիտէք, որ ժամը 9-ին
դուք արդէն պատկած պիտի լինիք, իսկ
մայրիկը 11-ից տուած չի վերադառնայ:
Առելի լաւ է պատկէք, բայի, խելօք եղէք,
թէ չէ մեզ ամենքիս էլ կհամնի:

—Լաւ, ասաց Լիօնէլն անտաշըերաւ-

թեամբ, իսկապէս միհնոյն բանն է, չէ՞ որ
Առրս՝ մայրիկիս համար միհնոյն է . . . եթէ
նա . . . — բայց հենց այդ բապէին, իրեն
համար ևս բալորավին անսպասելի կերպով,
իւր շրթունքները դողացին և նա հեկե-
կաց . . .

Բարեսիլս Լիւսին ամսուր, գոլովանկով
դրկեց նորան:

—Ի՞նչ պատահեց ձեզ, սիրելիս, ինչ
պատահեց, շշնչում էր նա, կրծքին սեղմե-
լով խեղճ, հեկեկացով մանկանը: Տէր Աս-
տաւած, ինչպէս էլ զաղում էք: Հանգստա-
ցէք, հոգիս, լաց մի լինէք, մի լաք այդ-
պիս . . . և այդ բալորն այդ ուսումնոցն է,
Երեք խեղճ երեխային չեն թունիլ ոչ
հանդատանայ, ոչ զուարճանայ: Ինչպէս ափ-
սոսում եմ, որ մ-ր Մօնարօղը գնաց:

—Ես էլ, ասաց Լիօնէլն արտասուա-
խան, ես նորան շատ էի սիրում:

Լիօնէլի գլուխը թեքուած էր բարի
Լիւսիի ուսին, — նորա կարելցութեան ան-
միջական մերձաւորութիւնը մի անդորրա-
ցուցիչ ազդեցութիւն թողեց խեղճ մանկան
վրայ և կամաց-կամաց նորա արցունքներն
ակսեցին նուազել: Դեռ ևս հեծ կլտալով, նա

մեքենայօրէն սկսեց ձեռքով շօշափել Լիւսիր կրծքի քորոցը և յանկարծ ժպտաց, — Կօմը մօրտինի սոկերչի գեղարւեստական դորձը ներկայացնում էր մի սիրտ, որի մէջ ցցուած էր մի դաշոյն, և վրան փորագրուած էր «Լիւսիր»:

— Զեղ ով է ընծայել այս բանը, հարցը նայ:

— Ինձ համար նախասահմանուածը՝ նշանածու, քրքչալով պատասխանեց նայ: Դաշնյնը՝ ես եմ . . . Դա նշանակում է, թէ ես խոցել եմ նորտ սիրով, ծիծաղելի է, չէ:

— Ետո, չափազանց ծիծաղելի, ասաց Լիւնէլը և համարեա ուրախ որամադրութեամբ ծիծաղեց:

Լիւսին ուրախ քրքչաց:

— Այ, այս բանը ես կպատմեմ նորան: Խոկ նա՞ ինչպէս կը բարկանայ . . . Այդմ ինչպէս էր, սիրելիս, մի քիչ բաւացազ ։ . . .


— Այսուն, և Լիւնէլը աշքերը սրբեց նորտ դոդնոցով ու ժպտաց նորան:

— Դուք իրաւունք ունէիք, Լիւսի, եռ միայն մի փաքք յագնել եմ, — այժմ ամէն ինչ անցաւ, կարելի է թէյ խմել:

Քանի որ բարի Լիւսին նորտ մօտ էր,

նա այնպէս էր ցոյց տալիս, թէ խմում է ախորժանքով, բայց հէնց որ նա դուրս դնաց, թէյը կիսատ թողնելով, վեր կացաւ, մօտեցաւ իւր սիրած տեղին՝ լուսամուտին և, նորից խորասուզուելով իւր տիսուր խուհերի մէջ, անշաշժ նստեց, մինչև որ արելը մայր մտաւ և խաւար երկնակամարի վրայ տառզերը փայլվեցին: Երբ նա, քնելուց առաջ, փակում էր իւր լուսամուտը, մօտիկ անտառից լսուեցաւ բուի ողորմագին կանչինը: «Որչափ թախածալից է այդ ձայնը» մտածեց նայ: «Դուցէ, նա էլ, ինձ նման, չէ կարողանում ըմբռնել, թէ ինչո՞ւ համար է ստեղծուած ինքը, գուցէ նա էլ զգում է, որ հիւէն—անխիղճ, անդութ է»:





թ.

Չոյելով իւր յոդհածութեանը, Եխունքն այդ գիշեր երկար ժամանակ չկարողացաւ քնել, — մի բան տարօրինակ և համաշափ կերպով բազիսում էր նորա գլուխ մէջ և թոյլ չէր տալիս քնելու... և թուռմ էր իրեն, թէ այդտեղ պտտում է, կարծէք, մի փոքրիկ ազօրիքի անիւ, որ շարունակ պտտում էր իւրաքանչիւր շրջագարձի ժամանակ՝ և իւր իմացածից մի մաս դուրս էր ծորում, — պատմութեան, աշխարհազրդութեան, քերականութեան, լսուներէնի մասներից... և ինքն իրեն մտածում էր, — ինչ միտք ունի այդ, ինչ պիտի դուրս գոյ դորանից, երբ և իցէ այդ մասնիկները կը-

միանան և մի ամբողջութիւն կկազմեն . . . Ապա նորա միտքը կենդրուացաւ այն պատմական գէպքերի վրայ, որտեղ ամենից աւելի տպաւորուել էին իւր յիշովութեան մէջ. նա մտաբերում էր, թէ ոչչափ տանջանք, վիշտ, նեղութիւն է կրուած «Հաւատքի» համար, քանիքը մաշգիկ զոհ են բերել այդ բանի համար իրենց կեանքը, — «Ի այդ ամէնը բոլորովին իզուր, մոտածում էր նա, չէ որ այժմ ամբողջ գիտական աշխարհը հասել է այն կէտին, որ բոլորովին բացառում է ամէն մի հաւատ . . . և որպիսի մէծ յիմարութիւն էր, որ ՈՒխարդ-Առիւծի Սիրտը այնքան հոգուերի մէջ ընկաւ Փրկչի Գերեզմանի համար, — երբ այժմեան բոլոր գիտականներն ապացուցել են, որ Եկոքը Քրիստոս ոչ այլ ինչ էր, բայց եթէ «առասպես բարանութիւն» և որ, հենց այդ պատճառով, ոչ մի Փրկչական Գերեզման դոյսութիւն ունենալ չէ կաշով... և ինչպիսի պարզամիտ, նոյն իսկ տգէտ, թագաւոր էր այդ ՈՒխարդը իւր անդադար «Par la splendeur de Dieu» երգումավ... * երկի նա չէր ել կաս-

* Ե գտուս Առողջածոյ:

կածում, որ ամէն ինչ ստեղծել է անմիտ հիւլէն, որի մէջ ոչինչ «splendeur» լինել չէր կարող . . . Եւ կամաց-կամաց, իւր համար իսկ աննկատելի կերպով՝ Ոիշարդ-Առիւծի Սիրով, և splendeur de Dieu, և հիւլէն, և Ժեոմինա Դէյլը, և աշխարհագութեան մասնիկները, և Կառմօն-Հօր ուստիցապեսի տղեղ դէմքը, որ մի տաշօրինակ զուգագիրութեամբ «գիւղական խենթի» զարհուրելի դէմքն էր ստացել,—այդ բոլորը ձուլուել, խառնուել և մի հուշային խառնաշփոթութիւն էր դարձել . . . Անուի պայտաները հետզետէ պակասում էին, դանդաղում . . . Նու գալարել էր աղալուց . . . —և մանուկը քննեց այն ծանր, մահու քնով, որ առաջ է բերում բարոյական յոդնութիւնը . . . Նու մինչ այն աստիճան խորն էր քնած, որ «Լիլիա, Լիլիա» կանչող ձայնը, նորա դիտակը ցութեան մէջ հնչում էր այն աղօտ, խուլ ձայնով, որ լուռում է միայն երազների մէջ, —և այդ ձայնը ոյժ չուներ զարթեցներունորան։ Մի քանի անգամ այդ ձայնը կըրկնեց նորա անունը, —վերջապէս նա զարթնեց. քնից ծանրացած աչքերը տրորելով, աննկարագելի սարսափով տեսաւ, որ իւր

անարի վրայ՝ դէպի ինքը թեքուած, կանգնած է մի անձնաւորութիւն . . . Անեւակը բոլորովին խաւար էր, միայն լուսնի շեղակի ճառագայթներից մէկն ընկել էր պատի վրայ, —և նախ քան Լիօնէն, այդ ճառագայթի օգնութեամբ, կկարողանար որոշել խորհրդաւոր այցելուի ով լինելը, որ խանդարել էր իւր հանդիսար, —մէկի քնքոյշ բազուկները փաթաթուեցան նորա պարտնոցով, մէկի քնքոյշ ձայնը շնչաց.

—Լիլիա, իմ Լիլիա-ջան, ինչպէս վախեցրի ես քեզ, իմ անուշիկ, թամնկագին զաւակու, —միթէ չես ճանաչում ինձ . . .

—Մայրիկ-ջան, որասայսզ արտասանեց երեխան և ուրախութեան բաւոն ազգեցութեան տակ վեր թռաւ անկողնից և ընկաւ նորա դիրկը։ «Անուշիկ մայրիկս, որ քան բարի ես, որ եկաւ ինձ մօտ։ Լիւսին ասաց քեզ, որ ես չեմ կամենում պառկել մինչեւ քո վերագարձու։

—Ոչ, Լիւսին ինձ ոչինչ չեմ առել, պատասխանեց մոռ Վելլիսկուրալը։ Իմ խեղճ զաւակու, որքան նիհարել ես դու, —միայն ոսկուներդ են մնացել . . . չմրնես, իմ անուշիկս, թռող ծածկեմ քեզ։ Եւ իւր կրծքին

սեղմելով նորան, փաթաթեց իւր մորթէ կը կնոցի մէջ, որ դեռ ևս ժամանակ չէր ունեցել հանելու՝ սենեակ մանելուց ի վեր։ «Իոլ այժմ, սիրելիդ իմ, հանդիստ նստիր և ոշագրութեամբ լսիր ինձ»։

Լիօնէլը անհուն երջանկութիւն էր զգում . . . նա ազօտ կերպով գիտակցում էր, որ մի խորհրդաւոր բան կար այդ գիշ շերային, անժամանակ այցելութիւն մէջ. բայց այդ բանը նորան չէր խոռվում,—այդ բովէին նորա ուրախութիւնը կատարեալ էր . . .

—Ե՞նչքան փոքր ես դու դեռ ևս, նոր կատեց մայրը, քնքաբար ժպտալով։ Գիշ շերային շապկով դու կատարեալ «բալիկ»— նորածին մանուկի ես նմանում, այն փոքրիկ, բոլորովին պատիկ «բալիկին», որին ես ձեռաներիս վրայ էի պահում, որն իմ պարծանքն էր . . . Լիլիտ, շաբունակեց նա, ձայնը ցածացնելով և խօսելով ընդհատընդհատ և շատապով,—ես հեռանում եմ տնից, սիրելիս, մի առ ժամանակ . . . Հիւր եմ դնում . . . մի բարեկամի հետ, որ ցանկանում է իմ երջանկութիւնս . . . բաղդնին շատ քիչ է ժամանակել, Լիլիտ . . . Քո

հայրը զարմանալի ընդունակութեան և նըշ շահաւոր առաքինութիւնների տէր մի մարդ է . . . թէ մէկի և թէ միւսի նկատմամբ՝ ես նորա ընկերը չեմ, չեմ կարող մրցել նորա հետ,—ուստի և լինում են բոպէներ, երբ նորա հետ ապրելն ինձ համար անտանելի է դառնում . . . նա չէ ցանկանում, որ ես երգեմ, որ ես ուրախ մինիմ, ճիշդ այնպէս, ինչպէս որ չէ կամենում; որ գու ևս ուրիշ մանուկների հետ ուրախ խաղաս . . . բայց դու, դու դեռ ևս փոքրիկ ես, քեզ համար դեռ կանուխ է, որ ապրես կեանքի բոլոր պահանջներով,— դու երբ և իցէ, իհարկէ, կըմրնես թէ ի՞նչ է նշանակում առածում . . . դեռ կիմանա և այն, իւր ժամանակին, որ երբ մարդիկ շատ տիրում են և այդ տիրութիւնից պատրաստ են մինչեւ իսկ իրենք իրենց վրայ ձեռք բարձրացնել, բժիշկները, նոցա վրբկելու համար, պնդում են և ստիպում, որ նորա իրենց կենցաղի եղանակը փոխեն, նոր տպաւորութիւններ ստանան . . . աեսնում ես, իմ Լիլիտ, ահա հէնց այդ բանն էլ պէտք է այժմ և ինձ . . . հօրդ պէտ առաքինի մարդիկ երբէք կարիք չեն զգում

ապաւորութիւնների վոփոխութեան,—ըսյց
ևս առաքինի չեմ . . . և ևս պաղակում
եմ . . . ևս . . .

Որդին չթողեց, որ նու վերջացնէր իւր
խօսքը, նու թփրտաց ինչպէս վիրաւորուած
թոջնիկ, նորա համար շատ ծանր էր մօր
վերջին խօսքերը:

—Ա՛յս, մայրիկ-ջան, դու շատ բարի
ես, աննման, բացագանչեց նու:

—Աչ, ոչ, Լիլիտ, —ես կամենում եմ,
որ դու ես գիտենաս, թէ իմ մէջ ոչինչ
լու բան չկայ . . . ես վատ, անսիրտ, դու^ա
տարկ կին եմ . . . ես ոչ ոքի չեմ սիրում . . .
այս, այս, ոչ ոքի . . . մինչև իսկ իմ հարա
զատ, հոգուս-հատոր զաւակս անդամ եր
բէր չեմ սիրել և չեմ էլ սիրիլ . . .

Մօր ձայնը դողում էր. —Նու չկարու
գացաւ շարունակել և բոլորսին խղուեցաւ . . . նու խանդագին վարուեցաւ զաւակին և անվերջ, կաթոգին համբոյրներ դրոշ
մելով նորան, ամուր, ջղածգաբար կուրծքին
էր սեղմում . . . Այդ բոակին լուսինը երեւցաւ ամպերի յետեկից և լուսաւորեց նորան:
Լիօնէլը նկատեց, որ մայրը մինչ որ աստիւ
ճան դալկագէմ էր, և ի՞նչպիսի արտասու-

վոր, չարագուշակ կերպով էլն վայլում նորա
խոչըր, հրաշալի աչքերը, —նու չհամարձակակ-
ուեցաւ պրապտալ տեղից, չէր համարձակակ-
ուում բառ իսկ արասանել. նու զգում էր,
որ մի զարհուրելի բան պիտի կատարուի,
նորա սիրու անհանդիստ տրոփում էր. նու
դողում էր ամբողջ մարմնով:

—Մրսում ես, հոգեակս, մեզմիկ հար-
ցրեց մայրը, դեռ ես ամուռ գրկած պահե-
լով նորան: Նու նորից ծածկեց նորան՝ վատ-
թաթելով իւր մորթէ կրկնոցի քղանցքով և
քնքանկըով տապաց. —Այս, այդպէս, այդպէս
իմ մանկիկս, այդպէս լու կլինի, այդպէս
աւելի լու է . . . իսկ այժմ թող ասելիքս
վերջացնեմ: Դու գիտես, Լիլիտ, որ երբ
բոլորսին փոքր էիր, դու ամբողջապէս իմն
էիր, —այդ էր պատճառը, որ ես այն ժաւ-
մանակ ուրախ էի ապրում: Ինքս էլ համա-
րեա երեխայ էի, երբ դու ծնուեցար. —որ-
չափ վարդագոյն էին, լուսափայլ իմ ըոլոր
յոյսերաւ Եւ որպիսի երանութեամբ էի երա-
զում իմ մանկիկի ապագայի մասին: Իմ
մանկիկս էլ այնպէս հիանալին էր, —փափ-
միկ, առողջ արիւն էր կաթում; ուրախ,
Դուարթագին: Այս, ինչպէս հալարտ էի ես

նորանով, ինչպիսի խանդոսութեամբ էի վերաբերում գեղի նա: Աչ որի ձեռքը, բացի իմից չեր կարող կզշել նորան: — Ես մտքովս անդամ չեր կարող անցնել, որ օտար, վաշճում մի կին կարող կլինի իրաւունք ունենալ իմ զաւակիս մտսին հոդատար լինելու . . . Այս, եւր դու սկսեցիր վարդ առ փոքր խոսիլ, ես վճռեցի, որ երկար-երկար ժամանակ պիտի չթողնէի քեզ որեւ է ուսում տան, պիտի սպասէի՝ որ դու բոլորովին մեծանաս, բոլորովին ամրապնդուիս, — Ես ինք էլ կամենում էի սւրախանալ և զուարձանալ, կամենում էի, որ զաւակիս էլ ամբողջ օրը խառզայ և կայտուէ: Բայց հայրդ բոլորովին այլ կերպ տնօրինեց, աղդելեց ինձ որ ուշախանամ, իսկ քեզանից՝ կամենում էր դիտնական պատշառել . . . Եւ այսպէս, կամաց-կամաց, զաւակիս խեցին ինձնից . . . Ալլար բում ես խիստ կարօտում էի նորան: տանջուում էի տեսնելով թէ ինչպէս օրէցօր նոր գունատում և տիրագէմ էր դառնում: — Իսկ յետոյ ես հասկացայ, որ ես չեմ կարող ոչինչ փափսիել ասսի և, — Ես բոլորովին անտարբեր դարձայ . . . իսկ այժմ ես կատարելապէս անտաշըեր եմ, ոշովնեահ զու-

մեծացել ես, լիլիս, և ես խստավանում եմ; որ քեզ բոլորովին պիտանի լինել չէմ կարող: Իմ ամէն մի միջամտութիւնս քո դաստիարակութեան գործի մէջ միայն դրդում է հօրդ, — այսուեղ ես ինձ բոլորովին աւելուգ անձն եմ համարում, ուստի և վճռեցի գնալ . . . Հիւր, կկամենայի գնէ փոքր ինչ ուրիշ բանով զբազուել . . . Եւ այսօր էլ ես տուն չեր վերագառնայ, բայց . . . Հօ չեր կարող վերջին հրաժեշտ չտալ զաւակիս: Օ՛, ոչ, դա իմ ոյժերիցո վեր կինէր . . .

Նորա ձայնը նորից ընդհատուեցաւ և արցունքները, խոշոր, կիզիչ արցունքները, մէկը միւսի յետելից գլուրուում, ցած էին իջնում նորա լուսագեղ աչքերից՝ լիօնէլի գանդուրների վրայ:

— Մայրիկ, իմ անուշիկ մայրիկս, միշտէ գու այժմ՝ գիշերը կերթաս, ողորման գին տաց նա: Մայրիկ, գու անսպատճառ պարտաւոր ես գնալ:

— Այս, պարտաւոր եմ, արտասաւակալ ոչքերավ, անհուն թախճալից ժպտով արտասանեց նա: Ես կամենում եմ գոնէ մի անդամ փորձել կետնրիս ընթացքում, թէ

ինչ բան է երջանկութիւնը, և այդ երջանակութիւնը կունենամ՝ նա իմն կլինի: Ես կամենում եմ, քեզ նման, Լիլիա, ինձ համար մի տօն սարքել, ինչպէս գու էիր սարքել անցեալ անդամ,—մի ամբողջ, վաստառ օր, առանց դասեր և դաստիարակներ ունենալու:

—Օ՛, մայրիկ-ջան, ինձ էլ վերցրուքեղ հետք Ես այնպէս սիրում եմ քեզ . . .

—Դու այնպէս սիրում ես ինձ . . . և ինչ բանիս համար, իմ խեղճ զաւակաւ ինձ չպետք է սիրել, Լիլիա . . . վաղը հայրքեղ կրացատրէ թէ ինչու . . .

Մի բոպէաշափ լուեց նա, և դրովանից մի փոքրիկ ծրար հանելով, մեղմիկ շարունակեց.

—Լիլիա, այ ես կամենայի, որ դու այս բանը սլահամելիք,—մինչև . . . մինչեւ իմ վերագրածը . . . սա միակ իրն է, որ յիշատակ է մնացել ինձ մօտ իմ մանկիկից: Ես քեզ արգեն պատմեցի, որ ես շատ էի հպարտանում իմ մանկիկով,—և ահա, ենթագրելով, որ ամբողջ Լօնդոնում նորա փոքրիկ սպիտակ զգեստի համար արժանաւոր գեղեցկութեամբ և ճաշակով գոտկացու

ժապաւէն չեմ գտնիլ, ուստի և յատկապէս պատուէր տուի ֆրանսիայում, տոանձին՝ յատուկ պատրաստել տուած նկարով, այս ժապաւէնը,—ակեսնում ես, նու բաց-կապտաւուն, իսկ այդ երկնագոյն տեղի վրայ հիւսուում են սպիտակ յասմիկի ոստեր: Ես այս քո բարձի տակը կը գնեմ, իսկ վաղն առաւօտեան կթագցնես, որ հայրգչունէ: Զեմ ուզում հետո տանել այնտեղ, ուր գնում եմ . . . ինձ համար ոնտանելի վիշտ կլինէր նայել սորան, —այնուողի . . .

Նա ցնցուեցաւ . . . և առաւել ամուր սեղմեց զաւակին իւր կրծքին, և նորան իւր ձեռքերի վրայ առնելով նորից,—կարծես նա այն փոքրիկ մանկիկը լինէր, որի մասին նոր յիշեց, —հոգատար զգուշութեամբ բարձրացրեց նորան և նորից զրեց իւր փոքրիկ մահճակալի վրայ, քնքշաբար ասելով.

—Պառկիք, իմ անոյշ փոքրիկս, պառկիք քո փափուկ, ազուամաղ բունիկիդ մէջ:

Սրտամաշ թախծով և մի աղահութեամբ նայում էր նա իւր զաւակի գժգոյն, փոքրիկ գէմքին, որ լուսնի լուսով տուտել դալկաղէմ էր երեսում և յանկարծ սարսաւ

փահար աշտառանեց.

—0°, սա ինչ լան է։ 0°, Լիլիա, Լիլիա, գու նման ես մեռած երեխայի... իմ անդին գանձու, —իմ մեռած մանուկու...

Եւ բարձրածային հեծկլտալով, նա չուքեց... երկար, շատ երկար լալիս եր նա ոյզ գրութեամբ, կարծես նորա սիրալ կտոր-կտոր եր լինում... Լիօնելի զգայուն սիրալ ամրողջտալէս հալումաշ եր եղել... և թւում եր նորան, թէ հարիւրապատիկ աւելի հեշտ եր մեռնել քան մէկ ել տեսնել այդ սրտայոյզ տաճանքը։

—Մի լար, մայրիկ-ջան, ախ, մի լաց լինիր այդպէս, իմ անոյշ մայրիկ, վերջապէս հազիւ-հաղ լոելի ձայնով տուց նա գողգոջ, կտրտուոզ, աղերսագին ձայնով։

Մայրն արտգ բարձրացրեց գլուխը, շտապով սրբեց աչքերը և ջլածգարար ծիծագեց։

—Չեմ լայ, չեմ լայ, սիրելիս, տուց նո, ինքու ել չդիմեմ թէ ինչու լաց եղայ, —չ որ ես բազգաւոր եմ, կտարելապէս բազգաւոր։ Ես վաստառը, հրաշալի տօն կունենամ; —իսկ յետոյ, ինչ կուզէ պատահի, —ինչ համոր նոյնն է։ Առաջ ես այս բանը

չեի տոիլ, բայց ինձ սովորեցրին ուրիշ բաների... և այժմ ամէն ինչ նոյն է ինձ համար աշխարհիս վրայ... .

Սովորական, կոտրտուոզ, ոզբուն շարժումով նա ուզզեց իւր թաւշէ փոքրիկ դիմարկը, որ նորա խոպապիկ մազկերեց թերքուել եր մի կողմէ։ Մի չարագուշակ բան եր փայլում նորա հրապուրիչ ոչքերի մէջ, —և Լիօնելը նոյելով նորան, բնազդմամբ հասկացաւ, որ ոլեաք եր փրկել նորան, իրեն անկյայտ մի չարիքից... .

—Մի գնար, մայրիկ, միա գոնէ մինչեւ վազը, մի թողնիկ ինձ, աղերսում եր նա, պարզելով գէսի նորան իւր նիհար բազուկ-ները։

—Իմ սիրելի, եթէ իմ մէջ սիրո լինէլը, ես քեզ չեի թողնիկ... բայց չկայ... Մտարերիր, —ոչ մի կտոր չէ միացել նորանից։ Յիշիր այս և մի ափսոսար իմ մտամին... Աւելի հեշտութեամբ են ապրում այն մարդիկը, որոնք սիրո չունին։ Բայց կար ժամանակ, որ ես ել ունէի այդ սրբատից... կրտկոտ, կիզեչ, բաշի սիրո, դեղուն քնքշութեամբ, սիրով և նահատով... այս, Լիլիա, հաւատով։ Կար ժամանակ, ոչ

քո մայրիկը այն աստիճան տխմար էր, այնչափ անդարդացած, որ հաւատում էր Աստուծոյ: Դու գիտես, թէ մինչ ո՞ր աստիճան հայրդ զայրանում է նոցա վրայ, որոնք հաւատում են Աստուծոյ, —նա շուտով սովորեցրեց ինձ ազատուել այդ անմտութիւնից, իսկ փոխարէնը, —ոչինչ չտուեց ինձ... Մարդսարսափում է, երբ մոտածում է, թէ ինչ կպառնայ կեռնիքը, երբ նորա մէջ չկայ ոչ նպատակ, ոչ յոյս, երբ միակ մղիչը —պատշաճութիւնն է: Բայց բաւական է, —խեղճ զաւակս, դու չես կարող հասկանալ ինձ. ես քեզ հետ երբ հասակաւորի հետ խօսեցի, այն ինչ դու գեռ ես փոքրիկ մանուկ ես... ժամանակ է, մնաս բարե, իմ անուշիւր Սիրիք ինձ այսօր, սիրիք մինչեւ վաղն առաւոար, —ինձ համար մեծ բազդաւորութիւն կլինի, երբ մտաքերեմ, թէ դու գեռ ես սիրում ես ինձ: Մնաս բարե:

Երեխան երկու թեով փարուեցաւ մօր պարանոցին, ազիսդորմ կրկնելով.

—Իմ անուշիկ, իմ մայրիկ-ջան, մի դնար:

—Զեմ կարող, Լիլիտ, ես կիսելագարուեմ, եթէ այժմ այսուեղ մնամ, մինչ այն

աստիճան յոգնել եմ . . . մահու չափ յոգնած եմ . . . իմ անգին դանձ, իմ թանշկագին փոքրիկս, իմ զաւակս, մի բռնիքինձ, թաղ, մոռացիքինձ . . . այլ ես տանել չեմ կարող . . .

Եւ նա փոքր ինչ կոշտութեամբ հրեց նորան իրենից: Երեխան տարակաւոանքով տիրադէմ նոյեց նորան և հարցրեց:

—Ինչու բարկացար, մայրիկ, ես քեզ ցաւեցրի:

—Այս, այս, դու ցաւեցրիք ինձ. — և նորան այնողէս թուեցաւ, թէ նորա հրաշալի աչքերը, կիսախաւարում փայլող տառզերի պէս, փայլվեցին՝ և ժպտացին. — քս մատիկներդ յանկարծակի խճճուեցան մտզերիս և քաշեցին ինձ, ինձ այնողէս թուեցաւ, թէ սիրու էին կորատում . . . բայց ինպիրն այն է, որ ես սիրու չունիմ, ափր . . . նըշը, այս ինչ է:

Լուեցաւ մօտեցող կառքի անխւների ձայնը, —նա ուշադիր ականչ դրեց և որտաւորովի սպասվական յուղում արտայայտուեցաւ իւր գէմքի վրայ:

—Դու սովորել ես ֆանտիստիան յեղափոխաթեան մասին, Լիլիտ: Իհարկէ, սովո-

րել ես, ինչեր-չես սովորել, իմ խեղճ զաւակու . . . յիշում ես, թէ ինչպէս էին ուղարկում մահապարտների յետեից, սրբէս զինոցա գլխատելու տանեն,—ահա այժմ էլ այդպէս իմ յետեիցո են ուղարկում, և ես գնում եմ մահուան գատապարտուելու, բայց գնում եմ կամաւոր կերպով և ոչ ստիպմամբ:

—Ոչ, չես գնայ, չես գնայ, ես չեմ թողիլ քեզ, զարհուրած և կատաղած գուշեց Լիօնելը, անկողնից վեր ցատկելով:

Մի ակնթարթում մօր գեղեցիկ, դրաւիչ գէմքը, կարծէք, կերպարանափոխուեցաւ,—ոչ-բարի զգացման ստուեր անցաւ նորա վրայից:

—Յանկուգն երեխայ, տասց նու կըտքուկ և սասնութեամբ, պառկիր այս բուպէիս և քնիք, —ապա թէ ոչ շատ կափառսամի, որ եկայ քեզ հրաժեշտ տալու:

Երեխան մեղմիկ շուռ եկաւ նորանից և գէմքը թաղցրեց բարձերի մէջ, որ չտեսնէր այդ զարմանալի աչքերի արտայայտութիւնը, որի մէջ թագնուած էր անհուն և քնիքանք և՛ չարութիւն, —և միտնդամից պատեց նորա սիրտն իրեն վաղուց ծանօթ

այն ճնշող, սովանիչ գիտակցութիւնը, թէ ինքը իւր մօր համար ոչինչ էր, անհշան մի բան . . .

—Լիլիա, ես չեի կամենում քեզ վիրաւորել, մեղմիկ նորից հնչեց մօր ձայնը, և նա թերուելով, գորովաճքով վայրիայեց նորա գանգուրները: Ներիր ինձ: Համբուրիր ինձ, սիրելիիւ:

Նա լուսթեամբ գրկեց նորան:

—Լիլիա, եթէ իմ մէջս սիրտ լինէր, նա այժմ վշրուած կլինէր . . . շնչալով տուց նու: Մնաս-բարե, զաւակու: Մնաս-բարե, իմ վաքրիկ մանկիկու: Աիրիր ինձ մինչև վազը . . .

Մայրը դուրս ողբծաւ նորա գրկեց և յառաջ քան որդին կարող էր ուշքը վրան հաւաքել, անհետացաւ . . . Մի բողեի չափ նա մնաց պառկած, անշարժ, շոնչը պահած, ապա վեր թուաւ անկողնից, և ըստ կոտն, շապկանց վաղեց գէտի գուռը: Անհոգուղի վերին բաժնում կանգ առաւ՝ սարսափով գիտելով իւր չորս կողմը, ամէն տեղ տիրում էր խաւարը, ամէն ինչ քուն էր մտել լուսթեամն գրկում:

—Մայրիկ, կանչեց նա կիսաձայն:

Հեռաւում լսուեցաւ դուան ճռուոց և
նորից փակուեցաւ . . .

—Մայրիկ . . .

Պատասխան չկար: Նա կանգնած էր
մեխուած, հիւանդադին, ջղային յուզմամբ
ականջ դնելով իւրաքանչիւր շշնչիւնի. —
յանկարծ նա շատ պարզ լսեց գէպի կօմք
մօրտին դնացող և արագութեամբ հեռացող
կառքի անիւների ձայնը, —իսկոյն յետ վա-
ղեց իւր սենեալը, լուսամնաւը լայն բաց
արեց և գլուխը դուրս հանեց: Լուսինը
բարձրացել էր երկնակամարի վրայ, ամէն
ինչ երկում էր, համարեա, ցերեկուայ
նման, —ամէն առարկայ երկում էր պարզ
գծագրութեամբ, բայց ոչ մի տեղ կենդանի
մարդու հետք չկար . . . Նա աչքերը պայ-
ծառ երկինքը ձգեց: Ուզիկ նորա գէմ ու
գէմ պայծառ փայլում էր մի հրաշալի
տառզ, փայլուն լուսինն ամենին չէր նսե-
մացնում նորան. —կարծէր թէ երկնային
տաճարում վասուող մի կանթեղ լինէր:
Բուերը ազիտզում ձայնում էին իրար. չղջիկ-
ները անելուի կերպով սուրում էին ծառերի
ճիւղերի մէջ, որոնց կատարները հազիւ-հազ
օշորուում էին ծովից փչող թեթև զեփիւ-

ովց: —Ինչ որ գերեզմանական ստոնութիւնն
պատեց լսեղճ մանկան . . . և մի անդամ
ևս մի յուսակառուր, ազեխարշ ձայն գուրս
թռաւ նորա ըերնից.

—Մայր իմ, օ, մայր իմ . . .

Արտասուրքը հեղեղի պէս դուրս ժայթ-
քեց նորա աչքերից, —նա շօշափելով հասաւ
իւր անկողնին, ընկաւ նորա վրայ, բարձ-
րաձայն հեկեկաց, և հեծկլտալով էլ, վեր-
ջապէս, քնեց:



Նա միայն յոգնած ձայնով պատառ
խանեց։

— Ոչինչ չեմ կարող տաել, ինչ ովկու
տաեմ ես։ Դու իմ գործո չե։

Լիւսին մտորանքի մէջ էր ընկել, —
յայտնէլ նորան այն, ինչի մասին տանն
ամէնքը խակապէս կառկած էին տանում, որի
մասին ամբողջ գիւղն արդէն խօսում և
դառնում էր։ «Ոչ, չեմ կարող . . . վճռեց
նա ինքն իրեն, — չեմ կարող վշատցնել նու-
րան։ Եւ, գուցէ, խեզճը չըմբռնէ էլ, —
խեզճը գեռ գասեր ունի ովարասանելու,
գու միայն կխանգարէ նորան, — միւս կողմից,
շուտով ամէն բան կխմանայ . . .»

— Ես ենթագում եմ, որ ձեր հայրիկն
ու ուսուցափետք կգանձնից եկամուգ եկող
առաջին ճեղակառքով։

— Այո, հաւանական է, անսարքեր ովա-
ռասխանեց Լիօնէլը։

— Ահանելի է ինձ համար այդ Լին-
տօնը շարունակեց Լիւսին, ըստ իս գու մի
անպէտք, խօնու գիւղի-կտոր է, ոչ մի
յարմարութիւն չկայ այնուղ։ Եւ ինչ կայ
նորանով հիանալու, չեմ հասկանում։

Նա վորբ ինչ կանդ առաւ, և յանկար-

Փ.

Հետեւալ առաւօտը Լիօնէլը դարթնեց
սովորական ժամկին, — նա սովորականից ա-
ւելի գունաթափ էր և աւելի լոիկ, բայց
նա այնպէս էր սովորել իւր մէջ թագցնել
իւր բոլոր յոյզերն ու զգացումները, որ
այժմ ևս ոչ կարիք էր զգում, և ոչ էլ ցանչ
կութիւն, մէկին տաել հաղորդել, թէ ինչ
պիսի տանջանքներ է կրել գիշերը։ Այդ բո-
պէին ներս մտաւ Լիւսին և մասուցարա-
նում թէյլ նորա տռաջ դնելով, մի առանձին
հապճեպով տասց։

— Զեր մայրիկը երեկ գիշեր տռն է
դարձել և գիշերն էլ նորից մէկինել, մը-
Լիօնէլ, ինչ կտորէք դուք այս մասին։

ծակի տւելացրեց, անդիտակցաբար տարշումով այն զգացումով, որ ամբողջապէս դրաւել էր իւր ուշ ու միտքը:

—Իսկ ձեր մայրիկը, մոռացայ ասեմ, թողել է հայրիկիդ անունով մի նամակ.— նա դանւում է դրաւեղանի վրայ առանձ նաև ենեակում:

Իխօնէլը լուռ մնաց, ցոյց տալով, որ խիստ զբաղուած է իւր նախաճաշով: Իխուսին, բողէաչափ կանգնելով, դլսի ընկաւ, որ երեխան արամագիր չէ խօսելու, և գորս դնաց,

Եւ յիրաւի, այդ բողէին նոյն խոկ բարեսիրու լիւսիի ներկայութիւնը ծանր էր նորա համար,— նա կամենում էր մեն—մենակ մնալ այն մտքերի հետ, որ գեռ ևս չէր կարողացել կարգաւորել: Մօր գիշերային խորհրդաւոր այցելութիւնը, նորա օտարութիւնակցութիւնը, արտասուքը, խանդավառ համբոյները,— այդ բոլորն այժմ՝ լոյս ցերեկով՝ կարծէք երազների և տեսիլքների աշխարհումն էր տեսնել... և եթէ իւր բարձի տակի կապտաւոն երիզը չլինէր, չէր էլ կարող հաւատալ այն բանի իրականութեանն, ինչ որ յիշում էր այժմ, այն-

քան մորմնքով ու վշտով . . . նա անորոշ կերպով զգում էր, որ այդ սարսափելի դիշերուայ դադանիքի լուծման մէջ թագնուած է մի զարհուրելի բան . . . և այդ բանը բերում է նորան անխուսափելի դասնութիւն և կոկիծ, և նա վախենում էր պարզել ինքն իրեն՝ թէ դա իսկասպէս ինչ վիշտ ու կոկիծ կարող էր լինել... Որպէս զի այդ միտքը հեռացնէ իրենից, նա մի առանձին մուլեցնութեամբ սկսեց իւր պարապմունքներով զբաղուիլ: Դրում, թարգմանում, խորասուզում էր ամենագյուար թուաբանական խնդիրների լուծման մէջ, իւր մանկական միտքը հիւանդոս լարման ծայրայեղ աստիճանի հասցնելով,— մինչեւ ոչ լսեց լինածնի ճեպակառքի ծանօթ փողի ձայնը իւր լուսամուտից տեսնում էր, թէ ինչպէս ծանրաբեռնուած ճեպակառքը օրօրուելով մօտեցաւ Կոմիօրտինի կառքերի կայարանին և ինչպէս գուրու եկան նորանից մը Վելիսկուրալ և ուսուցչապետը: Իխօնէն աչքերը չէր հեռացնում նոցանից, ահա երկուսն էլ մօտեցան գարսամին, մտան պարտէզ, աւելի ու աւելի են մօտենում,— ահա տուն կմտնեն այս բողէիս . . . և սրասարով լմիռուեց,

թէ ըոսկեան նաւառ, որ այս ըոսկեից նա
տակն ինչ կիմանայ... Գոան զանգակլը հնչեց
կատաղութեամբ,— Լիօնէլը վեր թռաւ և
սպասում էր . . . աղա լուսեցաւ իւր հօր
ձայնը:

— Լիօնէլ, Լիօնէլ, դոռում էր նա, շըն-
չապառ լինելով կատաղութիւնից մրտեղ
է, ուր է կորել այդ փողոցային տղան,
փախել է ինչպէս փողոցային մի թափա-
ռաշընիլ,— իսկ նորա մայրն էլ փախել է
ինչպէս . . .

Նա ժամանակ չւնեցաւ վերջացնելու
ոկտած նախագասութիւնը: Լիօնէն արդէն
կանգնած էր նորա տռաջ:

— Ես այստեղ եմ, ասաց նա երկխղից
գողգոջ ձայնով,— նա համոզուած էր, որ
հայրը յանկարծակի խելագարուեցաւ . . .
կատաղութիւնից բոլորովին կաս-կարմիր
կորած, մը վելիսկուրտն այնպէս էր կը ճա-
տացնում ատամները, այնպէս գաղանաբար
չուել էր աչքերը, ու կատարեալ սարսափ
էր աղջում իւր փոքրիկ սրդուն, որին տես-
նելու բոսկին նորա գէմքն առաւել գաղա-
նային տեսք ստացաւ: Յօհերը կատաղաբար
պաստելով, նա խոսքոտ ձայնով արտասանեց:

— 0', դուք այստեղ էք: Տեսել էք
դուք,— այդտեղ նա կանու տռաւ՝ հաղիւ
կարողանալով շունչ քաշել,— տեսել էք դուք
երեկ երեկոյեան ձեր մօրը:

— Այս, հաղիւ լսելի ձայնով արտասա-
նեց երեխան, ես տեսայ նորան այս գիշերը
ես քնած էի արդէն, երբ նա մօտու եկաւ,
նա ինձ զարթեցրեց և հրաժեշտ տռաւ
ինձ:

— Հրաժեշտ տռաւ, և միայն այդքան...
որիշ ինչ անցաւ ձեր մէջ . . . Դէ, շուտ,
տաս վերջացրու, դոռում էր կատաղաբար
մը վելիսկուրտը:

— Նա ասաց նոյնպէս, շարունակեց Լիօ-
նէլը, որ հիւր է գնում իւր մի բարեկամի
հետ, որ իրեն կերջանկացնէ, — մը վե-
լիսկուրտի բերնից զարհուրելի մի անէծք
փրթաւ, իսկ ուսուցչափեալ բարձրաձայն
հաղաց, որպէս զի փոքր ինչ անլսելի գարճներ
այդ բառերը,— և, և ասաց, որ այժմ նա
շատ անբազգ է, որ կարիք ունի փոքր ինչ
զուարծանալու: Դարձեալ ասաց, որ այնտեղ
երկար չի մնայ և յետոյ շատ, շատ լաց եղաւ,
և ինձ համբուրում էր . . . 0', տացէք
ինձ, ինդրում եմ, տացէք, ինչ է պատա-

Հեր—ինչ է նշանակում այս բոլորը . . .

Նորա գլուխը պատուեցաւ, նա տառահուեցաւ և քիչ մնաց վայր ընկնէր:

—Այս, ես կասեմ ձեզ, կատագութեան նոր թափով գոռաց մը Վելիսկուրարը: Ես ձեզ կասեմ ճշմարտութիւնը, —իսկ նա միայն և միայն ստել է: Չեր մայրը զգուելի արարած է . . . Չեր մայրը—ստոր կենդանի է, —նա՝ անհառակ կին է . . . նա խայտառակեց և ինձ և ձեզ Դուք հասկանում եք, թէ ինչ է նշանակում, երբ կինը թաղնում է ամուսնուն, և ինչպէս գող՝ թագնուելով գիշերային խառարի մէջ, փախչում է մի ուրիշ տղամարդու հետ: Դէ, իմացէք այժմ, այդ է արել ձեր մայրը . . . Այս «բարեկամը» որ նորան պիտի երջանկացնէ, —դա պարոն լասուելն է, բարձր շրջանի անզգամբի և լիստուածի մէկը, —նորա հետ է փախել նա, և երբէք այլ ևս չի վերագառնալը Երբէք չմտարերէք նորան, երբէք չարտասանէք նորա անունը: Իմացէք և մոքներումդ լաւ պահեցէք, այս օրուանից դուք այլ ևս մայր չունիք . . .

Լիօնէլլ վեր բարձրացրեց իւր փոքրիկ, դողացող ձեռները, կարծէք, նոցանով կաւ-

մնում էր պաշտպանուիլ անտեսանելի հարաւուածներից, —նորա սիրոն անկանոն և խիստ զարկում էր, բոպէաչափ նորա հայեացքն անյոյս արտայայտութեամբ կանգ առաւ ուսուցչապես Կաղմօն—Հօրի վրայ, և նորան այնպէս թուեցաւ, որ դիտնականի խոժոռ դէմքը կարելցութեան սէս մի բան է արտայայտում: —նա կամենում էր մի բան ասել, բայց չկարողացաւ, —ամէն ինչ նորա առաջը և շուրջը պատաժ էր մշուշով, միայն հօր զարհուրելի գէմքն ու նորա խօսքերի զարհուրելի նշանակութիւնն էր, որ սարսուռ աղղող պարզութեամբ որոշակի պատկերացած էր նորա առաջ:

—Դուք դիտէք, ինչ է նշանակում խայտառակուած կեանք, շարունակեց մը Վելիսկուրարը: Թէ դուք գեռ ևս շատ փոքր էք, բայց և այնպէս պատմութիւնից զիտէք, որ եղել են կանայք, որոնք աւելի շուտով յանձն են առել մեռնել, քան խայտառակուել: Չեր մայրն այդպիսիներից չէ: Նա չէ թագցնում իւր խայտառակութիւնը, նա պարծենում է նորանով: Վազ ժամանակները նորան կկապէին նախատանաց սիւնից կամ մարակի հարուածներ կտային:

Այս լոռքերն ասելու ժամանակ նա բարձրացրեց աչ ձեռքը, կարծես, բռնած էր անտեսանելի մի մարտկ, որով կամենում էր պատճել իւր մեղանչած կիոջը—երբ դուք հասակաւոր մարդ կդառնաք, դուք միմիայն նորա մասին յիշելու ժամանակ, ձեր մօքը մտարերելու ժամանակ՝ կլարմրէք,—նա անպէտք արարած է, նա . . .

Բայց այսուել Լիօնէլը բռնելով նորա ձեռքից, սիրո կտրոսզ ձայնով բացադահչեց.

—Օ՛, բաւական է, բաւական Զեմ կարաղ այլ ևս լսել այդ . . . ևս սիրում եմ նորան։ Այն, սիրում եմ,—և երբէք չեմ դադարիլ նորան սիրելուց . . . նա համբուրում էր ինձ, նա դրկում—դգում էր ինձ,—և այդ բոլորը՝ շատ ժամանակ չէ, որ նա սիրում էր . . . Մոռանալ այդ բոլորը՝ ևս չեմ կարող, և ճշմարիտն եմ տուում չեմ կարող՝ ևս սիրում եմ նորան։ Մայրիկ, օր մնայր իւր իւր իւր իւր . . .

Նո անորոշ կերպով տեսաւ, թէ ինչպիսի տեսելութեամբ էին վառում իրեն ուղղուած հայրական աչքերը, աղօտ կերպով յիշում էր, ու լսեց թէ ինչպէս ուշ

սուցչապետը յանդիմանական ձայնով արա տասանեց.


—Բաւական է, ինչ էք ուղում նորանից,—հանդիսա թողէք երեխային։

Եւ յանկարծ, նորան այնպէս թուեցաւ, թէ իւր հօր գէմքը տճում, ընդունում է գերբնական չափ, և մի անդիմադրելի ցանկութիւն տիրեց իրեն,—վախչէլ այսուղից. բայց ուր ինքն էլ չգիտէր,—նորա համար բոլորովին միհնոյն էր,—միայն փախչէր, հեռանար, հեռանար որչափ կարելի էր շուտով . . . և նա սկսեց փախչել . . . գուրս փախաւ տնից, հասաւ Կօմիօրտին և այնտեղ, խելագարի նման, վաղում էր ուղեղ փողոցի միջով, մինչև որ պատահեց վերջապէս նորան իւր միւս ծանօթ կլարին դա Պէյնը, որին Մօնտրոզի հեռանալուց յետոյ այլ ևս չէր տեսել,—նետուեցաւ նուրա գիրկը և բարձրաձայն աղաղակեց.

—Ա՛խ, միս Պէյն, չէ որ այդ բոլորը սուտ է՛ Օ՛ տասցէք ինձ . . . այդպիսի բան լինել չի կարող . . . իմ մայրիկս ընդ միշտ չէ դնացել, չէ՛ Օ՛, ոչ, ոչ,—նա ինձ սիրում է, չէ՛ որ ես գիտեմ այդ . . . նա ինձ չէր թողնիլ, չէր չգիլ . . . տասցէք ինձ, սիրելի,

սիրելի միսս Պէյն, դուք, ի՞նչը կէտ, չէք կարա-
ծում, որ նա,—վաստ կին է . . .

Միսս Պէյնը նոյեց նորան և մի ակն-
թարթում նորա կանացի սիրով լսմբանեց
խեղճ երեխայի հոգին պատաժ ամբողջ
տանջանքը,—նորա կասկածների, վշտի, կա-
տարեալ միայնութեան ամբողջ զարհուրելի
դրութիւնը . . . փոխանակ պատասխանելու,
նա լայն սպարգեց իւր թիւնքը,—բայց Լիօ-
նէլը պատասխանի էր սպասում,—և, եր-
կիւզից գողալով, նա կարգաց այդ պատաս-
խանը նորա տիսրագէմ աշքերի անվերջ
խղճացող հայեացքի մէջ . . . կարծէք կեանքը
դադարեց նորա մէջ . . . նորան թուեցաւ
թէ երկինքը, հեռաւոր ծովը, ամէն ինչ
յանկարծակի կուլ գնաց խաւար անդունդի
մէջ, որ այս բողէիս, իրեն ևս կուլ կը-
տայ . . . նա կամեցաւ առաջ սլանալ,—և
անդգայացած կլարինդա Պէյնի ոռքերի մօտ
դլրուեցաւ:



ԺԱ.

—Աւելի լու կլինի, եթէ նորան մի
քանի օրով ուրիշ տեղ տանէք, ասում էր
մը Գարալէյ, գիւղական ուրախ, ըարեսիրտ
բժիշկը, մի ձեռքով զննելով Լիօնէլի թոյլ
բազկերակը, իսկ միւսով իւր ժամացոյցը
բոնելով՝ Անհրաժեշտ է նորա ամբողջ կեն-
ցաղավարութիւնը փոխել,—որ և է կերպով
ստացած ալպաւորութիւննելը մսուցնել
տալ: Նա զլային կաթուածի նման մի բան
է ստացել,—այս—այս—շատ ցաւալի է . . .
ևս արդէն գիւղումն իմացայ . . . զարհուրելի
է, — գմբազգաբար այդ ընտանեկան որբա-
տայոյզ գէպքերն այժմ այնքան յաճախակի
են պատահում . . . երեակայում եմ, թէ
մինչ որ տոտիճան վշտացած էք . . .

Այս ընդհատ խօսակցութիւնն ուղղուած էր մշտ Վելիսկուրտին, որը մերթ գունատւում, մերթ կարմրում՝ էր տարբեր զգացումների ազդեցութեան տակ, չէր կարուզանում տիրապետել իրեն, և չէր թագնում թէ կատաղութեան մինչ որ աստիճանի էր հասել թէ հոջ ամօթալի արարքից և թէ որդու անսակնունելի հիւանդութիւնից— Լիօնէլին, բոլորովին անզգայ գոռութեան մէջ, բերել էր մի հասարակ կի՞ն՝ դրկած,—այդանձը, որ գիւղում կաթ ու ձու վաճառելով էր զբաղւում, հանդիսաւոր կերպով իրեն անուանեց՝ Կլարինդա Կլիվերլի Պէյն,—զարմանալի է, թէ մինչ որ աստիճանի կարող է հասնել Դեվոնշիրի դեղջուկների տիրարութիւնը, և... այդ—կի՞նը պրակերես կերպով արտայայտեց իրեն, —իւնեն Զօն Վելիսկուրտին իւր ցաւակցութիւնը, — և առ համարձակուեցաւ մինչեւ իսկ, ինը որդումասին, այն էլ ծառաների ներկայութեամբ, տաեր.

—Տէր Աստուած, Դու Քո ողորմութիւնն անպակաս անես այս խեղճ, որբացած թունակից:

Կլարինդա Կլիվերլի Պէյն կոչուող անձ:

Նաւորութեան այս անսպասելի արարքը մինչ այն աստիճան յանդուցն էր, որ մը Վելիսկուրտը իսկայն, նորա հեռանալուց անմիշապէս յեասց, կարգադրեց, որ այլ ևս նուրան իւր տան շէմքից ներս չժողնեն: Յետոյ կացգադրեց, որ մարդ ուղարկեն Կօմիօբամինի գլխաւոր բժշկի յետելից: Բժիշկն անմիջապէս հասաւ, և շուտով Լիօնէլին ուշըի բերեց: Այժմ երեխան պառկած էր կիսաբաց աչքերով, չնչառութիւնը գեռ. ևս սինկանոն էր և երեւում էր, որ խիստ մեծոց էր գործ գնում, որ մտարերէ, թէ խակապէս իւնչ և պատահել իրեն . . .

—Այս, մտախոհ արտասանեց բժիշկը, զգութութեամբ բարձրացնելով Լիօնէլի կոսպէրը և գիտելով նորա բըերը,—այս, ևս խորհուրդ կացի ձեզ շուտով մեկնել, հէնց որ ձեզ համար յարմար բռպէ գտնէք . . .

—Յարմար, —չժողնելով որ բժիշկը խօսքը վերջացնէ, զայրոյթով բացագանձեց մը Վելիսկուրտը, երբէք յարմար չի լինիլ: Ոչ մի տեղ տանելու մտադրութիւն չունիմ նորան, —իմ սեփական գործերու էլ շատ քիչ չեն, իսկ միւս կողմից գու բոլորովին կիսանդարէր նորա գտաերի ամբողջ ընթացքը:

—ԱՇ թէ ինչ . . . և բժիշկ Գալուսլելը
ակնապիշ նայեց նորան՝ դուք գիտեք, —
վճռեցէք, ինչպէս կամիք, բայց ես, ինչպէս
բժիշկ, պարտաւոր եմ ձեզ նախագուշաց-
նել, որ եթէ երեխային հենց այժմ այս-
տեղից չհեռացնէք և չհոգաք նորա տպա-
ւորութիւնները փոփելու, թարմացնելու
մասին, նորան ուղեղի բորբոքման վտանգ է
սպառնում, և — իմ խորին համոզմամբ, նա
անկարող կլինի այդ հիւանդաւթիւնից աղա-
տուել։ Գառերի մասին խօսք լինել անդամ
չի կարող։

Բժիշկը իւր խոշոր քնքոյց ձեռքը գրեց
երեխայի փոքրիկ դժգոհն ճակատին և գո-
րովանքով փայփայեց նորա վրայ թափթափ,
իրար խճճուած գանգուրները։ Մ-ը Վելիո-
կուրոը խոժոսեցաւ։ Նա միանգամից մի
տառելութիւն զգաց դէպի բժիշկ Գարտլելը։
Նորա թափանցող, երկնագոյն աչքերի ար-
տայայտութիւնը, որոնք այնպէս աներկիւ-
զաքար և ուղիղ իրեն էին նայում, — դուք
չեկու իրեն։ Նա մի առանձին հանդիսա-
ւորութեամբ հազար և պազ-պազ ասաց։

—Կիործեմ համոզել Կաղմօն-Հօր ու-
սոցչաղետին ուղեկցել որդուս, եթէ դուք

ասում էք, որ այդ տեղափոխութիւնն ան-
հրաժեշտ է։

—Անպայման անհրաժեշտ է, պատաս-
խանեց բժիշկը, դեզով գուալ մօտեցնելով
երեխայի շրթունքներին, — շատ հեռու տեղ
տանել՝ կարիք չկայ, առ այժմ պէտք է
խուսափել իւրաքանչիւր յոգնածութիւն
պատճառելու հանգամանքից։ ԱՇ, «Կլիվերլի»
նորա համար լաւ կլինի, — թող իւր գառ-
տիաբակի հետ այնակղ գնայ, այնակղ և
խաղաղ է և աղատ, արձակ Ուրբան շուտ
ուղարկեք, այնիքան լաւ նոյն խոկ այսօր
կարելի է սարքել այդ բանը։ Դուք ինքներդ
նորա հետ զնալ չեք կարող, այնպէս չե-։

—Անկարելի է, գոււարութեամբ ծած-
կելով իւր դժգոհութիւնը՝ պատասխանեց
մ-ը Վելիոկուրոը, — ես պարտաւոր եմ դոր-
ծերով քաղաք հանդիպել, ես պէտք է տես-
նեմ իմ հաւատարմատարներին։

—ԱՇ, այն, հառկանալի է, — հաս-
կացրեց բժիշկը և գլուխ շարժումով, — այդ
դէպիքում թողէք գաստիարակն երթայց
Բայց այժմ որո՞ղ է գանւում նաւ ես պէտք
է խոնեմ նորա հետ։

— Ուստիցաղետ Կաղմօն-Հօրն այժմ,

փրուն համդիսաւորութեամբ տասց մ-ը
վելիսկուրոը, այժմ գտնուում է գասարա-
նում, եթէ հաճելի է ձեզ, եռ ձեզ կառաջ-
նորդեմ նորա մօտ:

—Սպասեցէք մի բողէ: Բժիշկն աչքի
անցրեց Լիօնէլի փոքրիկ, խեղդուած սե-
նեակը և արագութեամբ բոլորովին բաց
արեց լուսամուռը:

—Թարմ, մաքուր օդ, լու սնունդ, կա-
տարեալ համդիսու, —ահա թէ ինչ են պէտք
այժմ փոքրիկին, տասց նա, նորան պէտք
է ցրուել, դուարճութիւններ տալ, բայց չը-
պէտք է մենակ թողնել . . . Աւզարկեցէք
նորա մօտ, գոնէ, ծառաներից մէկին:

—Աւզարկեցէք Լիւսին, մահճակալից
լուսեցաւ Լիօնէլի թոյլ ձայնը:

—Խ՞նչ տասցիր, իմ քաջիկ, նորից հար-
ցրեց բժիշկը, թերուերով դէպի նա, ում
ուզարկեհիք:

—Լիւսին, կրկնեց Լիօնէլը, նա բարի
է, և եռ սիրում եմ նորան:

Բժիշկ Գարտէլը ժպտաց:

—Նատ լու, կդայ Լիւսին, ձեր ցան-
կացած անձնուորութիւնն այս բողէիս կդայ
ձեզ մօտ: Իսկ այժմ ինչպէս էք դդում ձեզ,

Արելիա:

—Առաւել լաւ, չնորհակալ եմ ձեզնից-
ի յիւսաւի նորա հեզիկ աչերն արտայայ-
տում էին խորին երախտագիտութիւն, —
բայց եռ մոռանալ՝ դեռ ևս չեմ կարող . . .
ինձ համար գժուար է մոռանալ . . .

Բժիշկը ոչինչ չպատասխանեց դորան,
այլ միայն մի առանձին քնքշանքով ուղեց
փոքրիկ հիւսնողի գլուխտակի բարձերը: Երբ
Լիւսին կամացուկ ոլլուեցաւ սենեակը, որ-
պէս զի բժշկի պատուերի համաձայն նոտէ
Լիօնէլի անկողնի մօտ, Լիօնէլը պատկած էր
փակ աչքերով, արտասուքի երկու խոշոր
կաթիլ դողում էին նորա երկայն արտեա-
նունքների վրայ, բայց նորա կանոնաւոր շըն-
չառութիւնը ցոյց էր տալիս, որ նա արդէն
քնել է . . . Այդ մանկական դէմքի արտա-
յայտութիւնը մինչ այն աստիճանն սրտայալ
էր, որ նորան տեսնելու ժամանակ բարի
Լիւսիկ աչքերը արցունքով ոզոզուեցան:
Երկար ժամանակ նա հանդարտ լալիս էր:

—Եւ ի՞նչպէս արաւ նա, ինչպէս կա-
րողացաւ թողնել այս փոքրիկ, սիրուն ման-
կիկը, գոպուած հեծկլուոքով հարցնում էր
նա ինքն իրեն: Հեռանալ նորանից (ակնար-

կելով մ-ը Վելիսկուրտին)՝ դա հասկանալի է, թէև գարձեալ լաւ բան չէ, —ըայց իւր հարազատ զաւակը ձգել հեռանալ —դա մեղք է: Եւ ինչպէս կարողացաւ նա . . .

Խեղճ, անմեղ լիւսիւ ինչպէս երեսում է, առիթ չէր տնեցել կարդալու իբաէնի երկերը, և ծանօթ չէր բարոյականութեան օրէնքների մասին եղած նորագոյն հայեցք ների հետ: Եթէ նա կրթուած լինէր այժմ մեան բարոյական-փիլիսոփայութեամբ, նա մ-ս Վելիսկուրտի արաշքը կանուանէր — ազատութիւնը կապտելու դէմ արտօ մի ազնիւ բողոք և նորա մէջ զգայնականութեան պահանջների օրինական դսհացումն կտեսնէր . . . Բայց լիւսին խեղճ, անուս աղջկի էր, կանացի սիրող սրտով, —և հաւատում էր մայրական սիրոյ սրբութեանը, ինչպէս հաւատում էին հնումը՝ ց՚իրսենեան ժամանակները:

Մինչ այդ, բժիշկ Գարալէյը պատիւ ունեցաւ ներկայանալու ուսուցչապետ Հօրին, —որ, ըստ երկոյթին, շատ էլ չղարմացքեց իրեն, նա, մինչև անդամ՝ համարձակութիւն ունեցաւ նշանաւոր գիտնականի հետ առանձնակի խօսակցութիւն ունենալու

ցանկութիւն արտայայտել, —այսինքն, ոչ մ-ը Վելիսկուրտի ներկայութեամբ, որին դայրացած և վարանած մ-ը Վելիսկուրտը շտամպէլ ուրախութեամբ չհամաձայնեց: Քոնն ըստ պէի չափ խօսքը ակցութիւնից յետոյ բժիշկ կը մեկնեցաւ:

Լիօնէլլ գեռ ևս շարունակում էր քնել: Փամը երեքին լիւսին զարթեցրեց նորան, որպէս զի մի բաժակ տրդանակ տայ խմելու: Աղջանակը շտամպ համուլ երեցաւ Լիօնէլին և լիւսին, ուրախացած նորա ախորժականվ, սկսեց զրուցել նորա հետ:

—Ի՞նչ կատէք սորան, միստր Լիօնէլ, սկսեց նա, ալսր, այն վսենթը, որին դուք երեկ տեսաք, ձեզ համար ահագին քանակութեամբ ծաղիկներ է բերել, տեսէք, —և նա կարմիր, այլ և սպիտակ վարդերի մի մեծ և համարի վունջ մօտեցրեց նորա անկողնին: Մենք սկզբում չենք կարողանում հասկանալ՝ թէ նա ինչ է ուզում, իսկ յետոյ հասկացանք, երբ մի քանի անգամ կրկնեց «փոքրիկ մանկան, փոքրիկ երեխայի համար»: Խեղճին մի առանձին բաւականութիւն պատճառելու համար մենք ծաղիկներն առանձնակի երեխնք ձեր սենեակը, —ոչ

մի կերտ չհամաձայնեց փող առնելը նա տես
սել էր, թէ ինչպէս մ-ս Պէնը գրկած բերել
էր և կարծել էր, թէ գուք վախճանուել էք:

—Միթէ, մտախո՞չ հարցրեց Լիօնէլը:
Եւ այդ պատճառով է բերել իւր ծաղինեւ-
րը . . . խեղճ, զարհուրելի է նորա գէմքը.—
բայց երեսմ է, որ նա բարի է . . . խեղճն
ինչով է մեղաւոր, որ իւր արտաքինն այդ-
պէս է . . .

—Իհարկէ, մեղաւոր չէ, համաձայնեց
Լիսին: Տիրոջ համար բոլորովին նոյն է,
թէ մենք ինչ արտաքին ունինք,—նա հո-
գում է միայն այն բանի համար, թէ «ի
մեդ, ի ներքո» ինչ կայ:

Խորին թախիծ պատեց մանկան աչքե-
րը—նա մոտերեց իւր մօրը . . . Արդեօք
Աստուած է հոգում նորա մասին, թէ կայ
միայն մի Հիւլէ, ոչի համար ամէն ինչ հա-
ւասարապէս ահաւարել է—և մահը, և
մեղքը, և վիշտը: Օ՛, եթէ նա կարողանար
վերջնականապէս իմանալ, որ ամէն ինչի
պատճառն Աստուած է—Աստուած՝ ամե-
նակարող, ամենապէտ, ամէն ինչ ներող,
ոիրող, ինամածու և գթած, ո, որպիսի
Ներմեռանգութեամբ կազօթէր նորան իւր

թշուառ, կորստի մատնուած, դեղեցիկ մայ-
րիկի համար, ինչպէս կինդրէր նորանից,
որ աղաւոէ նորան և իւրեն վերադարձնէ . . .
Սակայն՝ նա չէր կարողանում կենդրոնա-
նալ իւր այդ խորհրդածութիւնների վրայ.
—Լիւսին խանդարում էր իրեն, նա սաս-
տիկ զբազուած էր նորա սենեակում, ժողո-
վում, գասաւորում էր նորա իրեղէնները
փոքրիկ ճամբրուկի մէջ,—յետոյ իրեն ստե-
պեց անկողնից ենել, թէի հազիւ հաղ էր
կարողանում ոտքի կանդնել, հագցրեց իրեն,
և, ի մեծ զարմանս իւր, բերեց վերարկուն
ու գլխարկը,—հէնց այդ բոպէին էլ գուան
մէջ երեցաւ ուսուցչապետ Կադմոն-Հօրը:
Լիօնէլը զարմանքավ նկատեց, որ նա էլ էր
վերարկուով, ձեռքին բռնած իւր լայնեղը,
ճանապարհորդական գլխարկը, բայց ամէնից
աւելի զարմանալին նորա բարի, քնիքոյց
ժպիտն էր, որ լրաւաւորում էր գիտնականի
կնճիւններով ծածկուած գէմքը, նոր, մինչեւ
այդ ժամանակ չեղած կնճիւններ յառա-
ջացնելով նորա լայն բերանի շուրջը:

—Դէ, բացագանչեց նա խրախուսա-
կան ձայնով:—Ի՞նչ վկատ, աւելի լու է
հէնց այժմ:

—Այս, չնորհակալ եմ ձեզնից, մեզմիկ
պատասխանեց Իիօնէլը, միայն դեռ ևս
գլուխս փոքր ինչ պտտում է:

—Դատարկ բաներ են դպրաւ Շուտով
կանցնի, —ժպտալով ամբողջ բերնով և ամէն
ջանք դործ դնելով փաղաքշուտ երեալ, ու
սուցչապետը շարունակեց, —կարող էր բարձ
րանալ, մէջքիս նստել:

Իիօնէն աչքերը չուց նորա վրայ և
նոյն խոլ ժպտաց:

—Իհարկէ, կարող եմ Բայց դա . . .
ինչու համար:

—Դէ, արագ Սպասեցնել մի տար:
Բարձրացէք, ամուր բռնեցէք: Ես ձեզ այս
պէս մինչև փակ-կառքը պիտի տանեմ:

Բոլորովին այլայլուած ու ամօթահար,
զարմանքից ինքն իրեն կորցրած, երեխան
խոնարհ հնազանդութեամբ կատարեց տուած
պատուէրը, և այդպիսի օտարոտի եղանաւ
կով իջաւ մինչև մուտքի պատշգամքը, որի
առաջ արդէն սպասում էր ճանապարհոր
դական մեծ, լայն լանդոն: Ուզդակի ու
սուցչապետի մէջքից Իիօնէլին իջեցրին
կառքը, թաղեցին բարձերի ահագին կոյտի
մէջ և ամէն տեսակ տաք վերմակներով ու

ծածկոյներով փաթաթեցին: Լիւսին գեռ
ևս շարունակում էր կառքի մօտ դէս ու
դէն ընկնել բոպէ առ բոպէ այս կամ այն
իրն էր խծկում կառքի մէջ և բացարձակա
պէս նաղանք էր ծախում կառապանին, չքաշ
ուելով նոյն խոլ ուսուցչապետի ներկայու-
թիւնից: Ծառաներից մի-երկուուր դուրս
եկան փոքրիկ պարոնին ճանապարհ ձգելու,
—վերջապէս ամէն ինչ պատրաստ էր, կա-
ռապանը սանձափոկերը շարժեց, Լիւսին
բացագանչեց:

—Երթաք-բարի, միստը Իիօնէլ, վե-
րապարձէք բոլորովին առողջացած:

Զիելը շարժուեցան, —և նորա ոլացան
Կօմիօրտինի ճանապարհով. շուտով հեռու,
իրենց ետեր թողեցին և Կօմիօրտինը, և
փոքրիկ նաւահանգիստը, և այն ամէնն, ինչ
որ ծանօթ էր Իիօնէլին: Մ-ը Վելլսկուրար
դուրս չեկաւ հրաժեշտ տալու իւր փոքրի-
կին: Թէհ Իիօնէլը նկատեց այդ, բայց
չվատացաւ դուրսից: Նու այժմ հոմագիտ
պառկած իւր բարձերի վրայ և առանց մի
խօսք արտասանելու, միայն երբեմնակի,
դաղտագողի նայում էր ուսուցչապետին,
որ նստած էր բոլորովին ուղիղ, առանց

յենուելու որ և է բանի և դիտում էր
ակնոցների միջից շրջապատի բոլոր առարչ
կաները, այնպիսի մարդու աշտայայտու-
թեամբ, որ թափանցել է տիեզերքի սահեղ-
ծագործութեան խորհուրդներն ու դադու-
նիքները և այդ նկատմամբ ամենենին մտա-
զիր չէ դատարկ վիճաբանութիւնների մէջ
մտնել . . .

Նորա Կօմիօրտինից արդէն բաւական
չեռացել էին, երբ, վերջապէս, Լիօնէլը
վճռեց հարցնել.

—Բայց ուր ենք դնում մերք:

—Կեվերլի, պատասխանեց ուսուցչա-
ովեալը, հայեացը գարձնելով գէպի ինքն
ուղղած փառիլ գէմքը: Բայց այսօր դեռ
չենք հասնիլ, պէտք կլինի գիշերել իլլիրա-
կօմիչ:

—Իսկ հայրս՝ նո էլ կդայ կլեվերլի:

—Ոչ, նո Լօնդօն է գնում, դործ ունի
այնտեղ և կմնայ մօտ ասոն օր, իսկ մենք
այդ ժամանակ կլինենք կլեվերլի:

—Հասկանալի է, հազիւ ձայնեց Լիօ-
նէլը:

Նո մտածում էր իւր մօր մասին . . .
աշտառաքի խոշոր կաթիլներ երեցան

նորա աչքերում և նո շտապով երեսը շուռ
տուեց: Նո մտածում էր, թէ կարողացաւ
ծածկել իւր յուղումը գաստիարակից,—բայց
պատում էր: Ուսուցչապէտը շատ լաւ տե-
սու, թէ ինչպէս փայլեցին այդ չդորուած
արցունիքի շիթերը, որոնք նորա սրտի մէջ
մինչ այդ ժամանակ իրեն բոլրավին ան-
ծանօթ մի զգացում զարթեցըին . . . քանի՛,
քանի անդամ նո անտարբեր հանդիսառես
է եղել անմեղ կենդանիների անդամառու-
թեան, քանի անդամ հանդիսա սրտով գի-
տել է իւր իսկ ձեռքսվ գնդասեղի վրայ
անցրած խեղճ թիթեռնիկի մահամերձ տան-
ջանքները,—իսկ այժմ . . . մանկական վիշտը
տակնուփայ արեց նորա հոդին, անհօւն
ցաւակցութիւն պատեց նորան . . . և, ով
գիտէ, —գուցէ, հէնց այդ բազէն միայն
բաց արաւ նորա առաջ երկնիքի Արքայու-
թեան մուտքը, որ նո այնքան յամառու-
թեամբ մերժում էր . . .

Այդ ժամանակ, Կօմիօրտինի ամսյա-
ցած տան մէջ, մը Վելլսկուրալ փակուած
իւր առանձնասենեակում, շտապով գբում
էր իւր հաւատարմատարներին, տեղեկաց-
նելով նոցտ թէ մտադիր է իսկայն ամսու-

նարութիւն պահանջել Ելեհս վելիու
կուրտից, մատնացոյց անելով ողբ Զարլո
Լասոնելին, որից պէտք էր պահանջել այս
դործի առթիւ կարեոր բոլոր տեղեկութիւնն
ները:

Վերջացնելով այս դործին վերաբերեալ
գրութիւնները, նաև գանգազօրէն դուրս
հանեց սեղանի աշքից մի համակ, որ թու
զել էր իրեն խո կինը և սկսեց մոտագուռ
թեամբ մի քանի անգամ կարգալ.

«Զեզնից հեռանում եմ, գրում էր
նա, առանց խղճի խայթ զգալու և առանց
ամօթալի համարելու այդ: Քանի ես հա-
ւատարիմ էի ձեզ, դուք իմ կեանքը մի
անվերջ ասնիջանքի բով էիք գարձրել: Աւ-
րախ եմ, որ ինձնով ձեր դուռդ ամբար-
տաւանութիւնը ոռնակուս կլինի, որ հինց
ինձ է վիճակուած ձեզ խայտառակ անել,
ձեր անունը ցեխի հետ հաւասարեցնել:
Դուք իմ մէջ սպանեցիք ամէն-մի բարի
զգացում, դուք հեռացրիք ինձ իմ զաւա-
կիցո... Դուք խլեցիք ինձնից իմ նասծուն...
Այժմ ես դուրի եմ ամօթի զգացումից, և
ոչ էլ կարող եմ խո պարտիքս ըմբանել...
Սըր Զարլոը ձեզ առում է նոյնչափ, որչափ

ես եմ առում ձեզ, այդ է իմ աչքում
նորա գիշաւոր արժանիքը: Թէ նա ինչ է,—
այդ ես լաւ գիտեմ, ինչպէս գիտեք և
դուք... Երբ գուք կըաժանուիք ինձնից,
նա չի ամուսնանալ հետո,—և ինքս էլ եր-
բեք չի համաձայնիլ ամուսնանալ նորա
հետ ևս համաձայնեցի նորա տարվածուն
վինել այն մի տարուայ հեշտութեան, զուար-
ծութեան և աղատութեան փոխարէն, որ
ովիտի տայ ինձ,—իսկ այնուհետու ի՞նչ կլինի
իմ կեանքս,—ես չգիտեմ և չեմ էլ կամեա-
նում իմանալ: Գուցէ, այդ բոլորին կհետեւէ
զզումն, դուցէ մահ,—բոլորովին միհնոյն է
ինձ համար: Ինչ որ լինելու է՝ կը լինի:
Այժմ կամենում եմ տպել և ծարաւի եմ
զուարծութեան և հեշտութեան: Եթէ գեռ-
ես մի բան կարող է պահպանել ինձ,—դա
այն սէրն է, որ ունիմ գէպի իմ զաւակս,
սակայն դուք սխառեմատիքաբար, օրէցօր
իմ և նորա մէջ սպանէշներ էիք կադ-
նեցնում... Սակայն, չէ որ կար ժամնակ,
ու ես էլ սիրում էի ձեզ... ձե՛զ... մինչ
որ աստիճան ծիծաղելի է այժմ յիշել այդ-
անմուռութիւնը:

Յիշեցէք, իգուք չէ, որ կիսնէն իմ դա-

ւակս է, —նա կժառանգէ այն զգացումը,
որ ես տածում եմ դէպի ձեզ, —վաղ թէ
ուշ նա կազառուի ձեր ճանկերից, —և այն
ժամանակ՝ կայ Աստուած թէ Աստուած
չկայ, —դուք կհնձէք այն բոլոր անէծքնեւ
րը, որ դուք այնքան առատաձեռն ցանում
էիք: Թող այս բոլոր անէծքները վարձահաւ
տոց լինին ձեզ այն բոլոր ձեր կրած հոգ
ոերի համար, որ պատճառել է ձեզ՝ նա,
որ կոչում էր

ձեզ նախկին ամսուին
Ելենանու:

Կրկին ու կրկին անգամ էր կարգում
մը Վելիսկուրան այս խօսքերը, որ պատ-
կերանում էին նորա առաջ այնպէս, որ
կարծէք, հրեղէն տառերով էին դրոշմուած...
«վաղ թէ ուշ, բայց նա կազառուի ձեր
ճանկերից»: Այդ տառերը հնչում էին իբրև
մի ահոելի գուշակութիւն . . .

—Ոչ, ոչ, բարձրածայն արտասանեց
նա, եներով իւր տեղից և նամակը գաղանի
դարակի մէջ թագցնելով ասաց, —«Թող ինքն
ուր ուզում է կորչի: Թող այն ճանապարհը
բռնէ, ինչ որ բռնում են իւր նման արտ-
բածները: Թող փողոցային ցեխի հետ խառ-

նուի և անհետ կորչի ու մոռացուի: Բայց
մահուկը, —իմն է: Նա ինձնից չի աղտառուիլ:
Նորան կդարձնեմ այն, ինչ որ եմ ու
գումար»:





ԺԲ.

Խեղճ Կլեվերլի, — հրաշալի Կլեվերլի, —
բանաստեղծներին ոգեսոցելու համար ստեղծ-
ծուած Կլեվերլի, այժմ ինչ դրութեան ես,
ինչ ես գարձել՝ Խոնջացած ողին այլ ես
քեզնում ցանկալի հանդուռան չի գտնիլ.
նոցա համար այլ ես աղմուկներից հեռու,
հեռու տանող, երազների հրաշալի աշխարհ
չես ներկայանում, — «ամբոխի» ձեռքը քեզ
ես կպաւ և այդ հպումը միանդամից խա-
րան դրեց քս չընազ գեղեցկութեան վրայ-
քս, մի ժամանակ լուռ, խաղաղ փողոցներ-
սում, ուր կենդանի ծաղիկների անվերջ
գուասանակ էր ներկայանում, այժմ ծանր
ոտքերի աղմկող դոփիւն և խոպոտ ձայ-

ների անմիտ կանչ ու դոչ է լուսում, —
ծաղիկների մէջ թաղուած տների լուսա-
մուտներից՝ այժմ բթացած դէմքեր են
դուրս նայում, — ամէն քայլափոխում, քո՝
իրենց համար անհասկանալի գեղեցկութեան
վրայ աչքները պռստած, այժմ կոշտ-կո-
պիտ արարածներ են վիստում . . . Խոզերի
վոհմակների պէս, որ յանկացակի ներս է
խուժում մի չընազ պարտէզ, սանատակ
տուին քո խորհրդաւոր լուսութիւնը և
կոխան դարձրին քո կախարդական ծա-
զիկները Սակայն բնութիւնը երես չգարձ-
րեց խը գուրգուրած-փայփայած անկիւնից
և, կարծես, գեռ ևս լուսում է նորս քըն-
քոյշ, պաղատառզ ձայնը. — «Թնայեցէք, ինու-
յեցէք Կլեվերլին», աղերսում է նաև «Թող
այդ անհամսպիստ ջոլիքը մի ուրիշ տեր՝ այլ
աշխարհում վազէ գլխաղատառ, — եթէ այդ
է արգէն նորս կոչումը, — թող Հոռմում
ջարդէ նա խը զելտերի շները՝ բոնուած
անմիտ զուարձութեամբ, Կօլիզէի քարե-
րին զարկելով, թող Միլանում փորձեն բարձ-
րանալ հրաշալի Տաճարի զանդակատան
ամենաբարձր կէտը, որպէս զի այնուել
խծընեն իրենց չնչին անունները, — թող

սվիմքոների դէմ ծամաժութիւններ կտա
տարեն և բուրգերի վրայ քերքրեն և դրաշ
մեն իրենց ամօթալի արձանագրութիւնները.
—բայց իմ Կլեվերլին ազատեցէք նոցանից:
Կլեվերլին մի խէք ինձնից Թոյլ տուէք, որ
նա անդորրութեան մէջ պէճնէ իւր ծաղիկ-
ները և դեղեցկութեամբ հաղցնէ-զարդարէ
և ալիքները, և ծառերի սաղարթը, և դաշ-
տերի բոյսերը,—որպէս զի այդ բոլոր գե-
ղեցկութիւնը՝ անձագանք գանելով իմ Կլե-
վերլիի բնտկիչների որտում, սովորեցնէ
նոցա լինել և ուժեղ, և մարուր, և հաւա-
տարիմ . . . բայց աւագ, ոչ ոք ականջ չէ
դնում այդ խօսքերին . . . հրաշագեղ Կլե-
վերլիի համար ևս հասել է օրհասի ժամը, —
նորան կպատ «ամբոխի» ձեռքը:

Լիօնէլը բոլորովին ինքնուրոյն կեանք
էք վարում: Նա և ուսուցչապետը ապրում
էին վերին տատիճանի ծիծաղաշարժ սե-
նեակներում: այդ սենեակների թէ յատակ-
ները, թէ առաստաղները մի առանձին, զար-
մանալի թեքուածք ունէին, իսկ պատերն
ամլողապէս զարդարուած էին բազմաթիւ
մեծ-մեծ ծակերով, — որ, ընդհանրապէս,
սենեակներին երկրտշարժից աղատուած

փոքրիկ կացարանների տեսք էք տալիս,
ամէն ըան այնտեղ մի առանձին հրապոյր
ունէր և կոկիկ էշ, իսկ ոչ դիսաւոչն էք,
այն է, որ միւս բոլոր տեղերի նման չէր:
Այդ սենեակների տան տիրուհին զբաղւում
էք հացագործութեամբ, բայց դա չէր միայն
նորա զբաղմունքը: Մաքուր, արագաշտի,
նա միանդամյն կատարեալ հասկացողու-
թիւն ունէր առողջապահութեան մտան և
սենեակները օշինակելի, կանոնաւոր վիճակի
մէջ էց որպէսպանում: Իւր վարձակալների
մտան նա օր ու գիշեր հոգում էք, ակա-
նաւոր գիաննականին ցոյց տուած յարդանք-
ները սահման չունէին, — իսկ դէպի Լիօնէլը
տածած սէզը, որ իւր հեղութեամբ և դու-
րեկան տեսքով բոլորովին նուածեց նորա
սիրով, — ամենաքիչքոյց բնաւորութիւն էք
կրում: Երբէք նա այլ անուն չէր տալիս նու-
րան, քան «թանդադին մանկիկ» և այդ
արտայայտութիւնը, երբեմնակի, Լիօնէլին
խիստ մտածելու առիթներ էք տալիս . . .

Միթէ, յիրաւի, նա գեռ ևս այնքան
փոքր երեխայ էք: Զէ որ նա արդէն տառ-
նումէկ տարին էք մտել . . . իւր մայրիկն
այն գիշերը իրեն իւր թանդադին «բալիկ»

Էր անուանում,—բայց դա դեռ ևս ոչինչ
չէր ապացուցանում . . . մտաբերելով մօր
արտայայտած քնքաշնկները՝ նորա սիրան
արիւնով էր լցւում . . . և նա աշխատում
էր չմտաբերել, թէ ինչպես, ամբողջապէս
ողղուած լուսնի ազոտ լուսով, նա նայում
էր իրեն՝ վերջին համբոյքը գրոշմելով . . .
բայց արգեօք, յիրաւի, դա վերջին անդամն
էր,—կտեսնէ արգեօք դեռ ևս նորան երբ
և իցէ,—հարցնում էր ինքն իրեն անհուն
թախծով . . . Մտքերի ծովու ընկնելու հա-
մար նա այժմ շատ ու շատ ժամանակ ունէր,
—ուսուցչապետը կատարեալ ազատութիւն
էր շնորհել նորան և առհասարակ վերին առ-
տիճանի սիրալիր էր դէպի ինքը: Լիօնէլն
զգում էր այդ և շնորհապարտ էր: Երեք
յիշատակութիւն անդամ չանելով իւր շնոր-
հակալիքի մասին, նա այդ բանն արտայայ-
տում էր իւր յատուկ եղանակով, ամէն օր
նա ամենայն հոգատարութեամբ մաքրում
էր ուսուցչապետի անձունի, լայնեղը զըլ-
խարկը և մատուցանում նորան, ինամբով
ուղղում և դուրս էր քաշում նորա լայն,
գունաւոր ձեռնոցների դուրս-ծալուած մատ-
ները, և ամենայն ճշտապահութեամբ դնում

նորա սեղանի վրայ, նա ջանք չէր լինաւ
յում մաքրելու նորա ձեռնավայտի արծա-
թէ դրական և երբէք չէր մտանում, ճաշից
առաջ, ամենագեղեցիկ ծաղիկներից կազ-
մած մի փնջիկ մատուցանել: Յիրաւի, ար-
ժէր զարմանալ և այն վարանման վրայ,
որ արտայայտում էր նշանաւոր գիտնականը
իւր մասին ունեցած հոգատարութեան և
այն մեզմիչ ազգեցութեան վրայ, որ արտա-
յայտուեցաւ նորա մէջ: Ուսուցչապետն այն-
քան փոխուել էր կլեվերլիսում անցրած այդ-
անվրդով, խաղաղ ժամանակամիջոցում, որ
շատ անդամ սկսում էր իւր երիտասար-
դական, վազուց անցած հին-հին յիշողու-
թիւնների մէջ մուացուած կախարդական
պատմութիւնները վերակենդանացնել . . .
մտաբերած կտորներն ամենայն հոգատա-
րութեամբ աշխատում էր կարգաւորել,
որպէս զի հետաքրքրական պատմութիւն-
ներով կարողանար շահագրգուել և զրա-
զեցնել լիօնէլին: Մի անդամ մըր Հօրնի
մաքրով անցաւ «գիւթական գունաւորու-
թեամբ» պատմել նորան «Պաիմէայի և Սի-
լոց» գասական վիպական աւանդութիւնը,—
կամենում էր փորձել, թէ ինչպէս կըմբռնէ

մանուկը նորա խորհրդաւոր խմասոր։
 Առաջօտեան զբուանքը կատարելուց
 յետոյ նորա նստեցին հանդստանալու մի
 կանաչ բլրակի վրայ, որտեղից ծառերի երես-
 րուն սաղարթի միջից երեւմ էր հեռաւոյ,
 կապուտակ ծովը։ Եւ այստեղ, իւր խոսուա,
 կոշտ ձայնով, որին իզուր էր աշխատում
 գոնէ փոքր ինչ քնքոյշ ու մեզմ արտայայ-
 տութիւն տալ, ուստիցապեալ պատմեց
 Պախիսէայի երջանկութեան հոգեգմայլ պատ-
 մութիւնը, — մինչ այն օրհասական գիշերը,
 երբ, նոտ վառելով իւր կանթեզը, բարձրաց-
 րեց, որպէս զի քնած խորհրդաւոր, երկինա-
 բնակ էակի դիմագծերը աչքերով տեսնէ...
 — գզրդաց, որստաց երկինքը — տիրեց խո-
 րին խաւար — կանթեզը վայր ընկաւ նորա
 ձեռքից և հանդաւ . . . կէս գիշերային խո-
 զաղութեան մէջ, կարծես, լսուեցաւ հուժ-
 կու թեերի սուրոց։ — Ել՛ շշ . . . գա Սէրն էր,
 որ վերացաւ . . . մնաց միայն Պախիսէան . . .
 Եւ այն օրտանից՝ նոտ մեն-մենակ է, ար-
 ցունք է թափում և որոնում այն, ինչ որ
 կորցրել էր ինքը — ինչ որ ճաշակել էր և որ
 այլ ևս չեր կարտղանում դամել . . .

Լիօնէլը լսում էր, չնչառութիւնը պա-

հած, — նորա թափանցող հայեացքը մերթ
 մոտախո՞ւ ուղղւում էր հեռուն, մերթ ուշա-
 դիր կանգ էր առնում ուստիցապեափի կըն-
 ծիւներով ակօսած գէմքի վրայ։ Երկար ժա-
 մանակ լուռ էր և վերջապէս խօսեց։

— Որչափ հրաշալի է . . . ինձ շատ գուր
 եկաւ այդ հեքիաթը, — բայց նորա խմասոր
 ըսլորովին լուրջ է, չէ։ Կարո՞ղ եմ արտա-
 յայտել ձեզ այն ամենը, ինչ որ մտածում
 եմ այդ մասին։

Ուստիցապեալ գլխով նշանացի դրա-
 կան պատասխան տաւեց և Լիօնէլն ոկսեց
 մեզմ, մտախո՞ւ ձայնով.

— Տեսնում էր, Պախիսէան չէր իմաննում,
 — և նոտ կամեցաւ զիտենալ . . . նոյնը չեմ
 անում և ես, և գուք, և ամէնքը։ Այն
 ժամանակ մենք ևս վառում ենք մեր կան-
 թեզները և աշխատում ենք գիտել, թէ ինչ
 կայ մեր շուրջը և, գուցէ, երեակայում
 ենք, թէ գտանք Հիւլէն — և յանկարծ խո-
 ւարը պատում է մեզ, — և մենք մեռնում
 ենք — մեր կանթեզները հանդչում են։ Բայց
 թեերի սուրոցը՝ մենք չենք լսում . . . Եթէ
 մենք լսէինք այդ, այսինքն թեերի սուրո-
 ցը, մենք կզգայինք այն ժամանակ, որ Մէկի

մեղ հետ էր և հեռացաւ մեղնից, —և ինչ
պէս լրդիմէինք մենք —այնուշը, նորա յեւ
տեից . . . գուցէ, երբ մենք կմեռնենք, մենք
կլոենք թեւերի սուրոցը, և այն ժամանակ
մենք կիմանանք այն, ինչ որ այժմ ըմբռնել
չենք կարողանում, որովհետեւ մեր կանթեղը
ներն այնքան կանուխ են մարում . . .

Ուսուցչապետը ոչինչ չհակածառեց, նա
ոչինչ չէր կարող ընդիմաբանել այն բանին,
ինչ որ երեխան այնքան տրամաբանութէն
մեկնեց: Լիօնէլը բարձրացրեց իւր փոքրիկ
դէմքը և ձայնն աւելի ևս ցածրցրեց:

—Իսկ նոցս համար, որ հաւատում են
Քրիստոսին, —ահա նոցս համար և գոյու
թիւն ունի —թեւերի սուրոցը, նոքա լսում
են, որովհետեւ, չէ որ նոքա առում են —
«Յարեաւ ի մեռելոց և համբարձաւ ի յերա
կինս», —և նոքա միշտ զգում են, որ կայ
Մէլը, Արի յետելից նոքա կամենում են
գնալ . . . որքան ուրախառիթ է, անշուշտ,
այդ զգացումը նոցա համար:

Այստեղ ուսուցչապետ Կաղմօն-Հօրը,
Եթէ ազատութիւն տար իրեն, ամեւ
նայն սիրով յանձնառու կլինէր բարդ պատ-
ճառաբանութիւնների մէջ ընկնել, —ըայց

այդ փոքրիկ, վասուժ երեխայի ներկայու-
թեամբ, որին ընկճել էր վիշտը, նա չվասա-
հացաւ բացատրել իւր մասյլ տեսութիւնն-
ները և բարեսրտութեամբ լոեց:

—«Ուսպիսի՛ գարհութելի ոձիր և կրծել
այս մասնուկին սոսաց որ եւ և հաւատա-
լիրի», յանկարծ անցաւ նորա մաքովը, կար-
ծես մի անտանելի, շլացուցիչ լուսավ լու-
սաւորելով նորա միտքը . . . և նորա սիրով
անտանելի ցաւով կծկուեցաւ . . . Բոլորովին
Ձմած այս նոր, իրեն բոլորովին անծանօթ,
զգացման արտայայտութիւնից, նա աշխա-
տում էր յազթել նորան, —ըայց, նոյն իսկ
թաղնուած լինելով նորա հոգու գաղանա-
րանում; Նա, հակառակ նոյն իսկ իսրա-
ֆի, գիտակցել էր տալիս իւր գոյութեան
մասին, այնպիսի մոտքեր յարուցանելով,
որոնք խոռվում և շփոթում էին նորան:
Յանդուգն, ձեռք չքաշող ներքին ձայնը նման-
օրինակ մի շաբք հարցեր էր տալիս. —«Ղաւ-
բան է ոչնչացնել իլել հաւատը, երբ նորա
փախարէն —ոչինչ չունիք տալու»: «Հաւա-
տի տեղ մենք բանականութիւնն ենք դնում»
պատասխանում էր ուսուցչապետը: «Բայց,
շարունակում էր ձայնը, հեշտ է բանակա-

նութիւնը գլորել իւր գահից վիշտը—յաղթահարում է նորան, կիրքը—ընկճում է Սիրոյ հրճուանիքը անմտաբար՝ մեզքի, յուս սահատութեան, մահուան անդունդն են գլորում . . . և այն ժամանակ ի՞նչ կարող է անել բանականութիւնը։ Միայն լոկ հաւատը կարող է փրկել, —հաւատ գեղի Սիրոյ Առառածը—և այն խօռքերը թէ ոյ որ կայջակղեցն այս վտրքներից մեկին, որ հաւատում է ինձ, —առելի ուս կիհանը, և յօ այդպիսին իւր պարաւոցից կրսիր ջրադացի քարը և յ խեղուիր ժողի խորքում»—ողետք է յաւիտեանս անէծք գառնան այն մարդիկների գլուխն, —այր թէ կին, —որոնք գործով, կամ անձնական օրինակով կաշխատեն խախտել և անհետ կրցնել կիհանական կոռուի մէջ հալումաշ եղած, վշտացած ու հեծող ամէն մի մասդու այս միտել յիհակէտը։

Այսպէս էր գատում ներքին ձայնը, —աւատցշապեալ շատ պարզ լսում էր այդ և այն եղակացութեան էր գալիս, թէ իւր մուաւը պժերն, ըստ երեսյթին, գաւաճանում են իրեն . . . ինչ որ մի օտարութի բան էր կատարում նորա ներքին աշխարհում, —

մի բան, որ նա չէր կարող սահմանել խօռքերով, —մի բան, որ ժամանակին կարող էր նորան առաւել խմաստոն դարձնել, քան եթէ երը և իցէ ինքն իրեն համարել էր։

Կլեվերլիում անցրած այս խաղաղ, բուլրովին աղատ՝ տօնական օրերին Լիօնէլը յաճախ իշնում էր ծովեզերքը և այնուեղ երկար ժամերով նստում էր զլուցելով նաւատիների հետ, որոնք շատ էին հաւանել և սիրել փոքրիկ պաշտնիկին։ Կամենալով նորան զուարձութիւն պատճառած լինել, յաճախակի իրենց հետ էին առնում նորան, երբ հեռու, ծովն էին գնում որսի, —բայց այդ զրուանդները շատ էլ կենաստու աղդեցութիւն չէին անում Լիօնէլի վրայ, այդ զրուանդներից նա միշտ վերադառնում էր մի տեսակ տիսուր և թալիացած։

Այդ պարզ մարդիկը միշտ որ և է սիրութիւնութեան մի անհամանում պաշար ունէին, կամ նաւաբեկութեան, կամ ինեղդուածների և ալիքների չնորհիւ ափնետուածների մասին, —լսելով այդ պատմութիւնները, Լիօնէլը սառում էր երկիւղից և մի ինչ-որ ատելութեամբ էր նայում նենագուոր ծովին։ Եւ նույից այն սրտամաշ և

Հաղետանջ հարցը—ինչու համար է այս բոշ
լորը—գլուխ էր բարձրացնում նորա ներսը
ի՞նչ միաք ունի առըել, յուսաւ սիրել և
աշխատել . . . նորա սրտում թափծալից
հնչում էր անմիսիթար պատասխանը . . .

Մի օր՝ երեկոյեան դէմ, մինչև արել
մայր մտնելը, Լիօնէլը, սովորականի պէս
գնաց ծովափն զբոնելու, —եղանակը բա-
ւական խառնուած էր, նաւակների մեծ
մասը հաւաքել էին նուարտանների տակ,
որոնցից մէկի տուաջ հաւաքուել էին նա-
ւագներն, ինչպէս նկատեց Լիօնէլը։ Ամէնքն
էլ ինչ-որ յուղուած վիճակի մէջ էին երե-
ւում և զարհուելով, աշխատում էին այն
նուարտանի տակը նայել, որի մօտ հաւաք-
ուած էին։ Լիօնէլը, համարեա, մօտեցել էր,
երբ նոցանից մէկը նկատելով նորան, նշանա-
ցի հասկացըեց, որ մօտ չէայ։

—Ի՞նչ է պատահել, յուղուած հարցըեց
Լիօնէլը, —մարդ է խեղդուել։

—Ոչ, ոչ, փարբիկ պարսն, պատասխա-
նեց ծերունի նաւասանն, այս անդամ մե-
զաւորը մեր ծովը չէ։ Բայց դոք այսաեղ
դործ չունիք, ձեր տեղը չէ . . . սա եկուոր-
ներիցն է երեւում, երեխ ճանապարհորդ է

հաւանականօրէն, —նա դհացել և ծերունի
Դաւթի նուարտանի տակը կախուել է . . .

—Կախուել է, բացագանչեց Լիօնէլը,
սարսուելով, բայց ինչպէս է կարողացել
անել այդ։

—Եսենք, մի գժուար բան չէ, —բա-
ւական է գօտի և մեխ լինի։ Նա երկուսն
էլ ունեցել է, օգակ է շինել, առաստաղին
մի մեխ է խփել, անց է կացրել այնտեղ, —
և, արգէն պատրաստ է . . . Երբ նորան հա-
նեցին, արգէն կենդանութեան նշայիներ քը-
կային, —այժմ էլ իդուր են աշխատում ուշըի
լորել . . . Սակայն, փարբիկ պարսն, տեղի
լու է տուն երթաք, —այստեղ՝ ձեր տեղը
չէ։ Փախէք խալոյն, այ այդպէս։ Միւս կող-
մից, եղանակը ցուրտ է, այսօր ձեղ ծովը
տանել չենք կարող։

Լիօնէլը լուս լսում էր և, առանց խօս-
ուելու, հերեւելով ձինորսի խորհրդին, յետ
գարձաւ, ուղղուեց գէպի գիւղը, դնում էր
հաստատուն քայլերով, սիրան անհանդիսա-
տվութեամ էր, վառ երեւակայութիւնն այն-
քան կենդանի կերպով պատկերացրեց նորա
առաջ նուարտանի տակ կախուած մեռածի
զարհութելի պատկերը, որ ամբողջ մարմանը

դողաց և ակամայից կանդ առաւ ու յետ
նայեց, ծովը սկսել էր ալեկոծուիլ: Ահադին
ալիքները, որ քամին ովկիանոսից մղում
բերում էր, բուռն թափով ավն էին դի-
մում, աշխատելով հասնել իրար և միմեանց
առաջ կտրել,—և սպիտակ վրփուրը, դե-
ղանկար ալեծածան գծերով լիզելով նոցա
ահարկու կատարները, մի հրեշտային փայլ-
փլաղ ուռկանի էր նմանում, որ կարծես,
ձգուած էր խեղճ, անօգնական մարդիկնե-
րին բռներու և խեղդամահ անելու նպատա-
կով . . . Եւ մի անդամ ևս, բայց առաւել
զօրեղ չափով, բնութեան անդամ անտար-
բերութիւնը սարսափով պատեց խեղճ ման-
կան հոգին . . .

Երեկոյեան թէյի ժամանակ, նորա գէմքն
այն աստիճան յոդնած ու խղճալի էր, որ
ուսուցչապետը, վրդովուած, նայեց նորան
խը ակնոցների միջից և հարցրեց,—ի՞նչ է
պատահել: Նա մի անդամից չկարսղացաւ
բացարել և, վերջապէս, ասաց, որ նա
սաստիկ խղճահարուեցաւ տեսնելով նուար-
տանի տակ կախուած գժբաղդ մարդուն:

—Ի՞նչ գժբաղդ, նրանեղ, մի է կախուել,
վախեցած հարց ու փորձ էր անում ու-

ուսուցչապետը:

Լիօնէլը մանկաման տեղեկութիւն
տուեց, ինչ որ դիտէր, և մեծարելի ման-
կավարժը հանդսացաւ, սկզբում նա խստ
տակնուվրայ եղաւ, երբ խմացաւ որ իւր
փոքրիկ սանիկը կախուած մարդու դիսկ է
տեսել, և այժմ շատ դո՞ն էր, որ այդ ան-
հանդսառութիւնն աւելորդ էր:

—Ի՞նչ, կախուելով մեռնիլն—ամենա-
հեշտ մահն է, անտարբեր սառնասրուու-
թեամբ տաց նա: Այդպիսի մահն համա-
րեա, տանջանկ չէ պատճառում: Պէտք է
ենթագրել, որ այդ մարդը թոկից-վախածի
մէկն է եղել, որը գրամ չէ ունեցել և չէ ել
խմացել, թէ նրանդից ճարէ:

—Բայց սարսափելի չէ, հարցրեց Լիօ-
նէլը, զարհուրելի չէ, որ ամբողջ աշխար-
հում գտնէ մի բարի մարդ չգտնուեցաւ, որ
այն գժբաղդին այդօրինակ մահից փրկէր:

—Իհարկէ, դա զարհուրելի է թւում,
քնիքանքով համաձայնեց ուսուցչապետը—
այժմ նա միշտ սիրալիր էր վերաբերուում
Լիօնէլին,—բայց, խկապէս, ով դիտէ: Մահը
բոլոր չարիքներից վատթարագոյնը չէ,—
մենք ամէնքս պիտի մեռնիկը,—խկ ումանկը

ցանկանում են իւրեաց ժամանակից կանուխ մեռնել, —այդպիսիների համար շատ մեծ վիշտ կը լինէր, եթէ նորա արգելէին հառնել «ցանկալի» վախճանին։ Զինացիներն ու ճապնացիներն, ինչպէս զիտէք գուրք ձեր գրբերից, իսկապէս ոչինչ նշանակութիւն չեն տալիս մահուան գործողոթեան, —այնտեղ ինքնասպանութիւնը նոյն իսկ որոշ յարգանք է վայելում։ Այս գեղքում, այդ տարրաբազու մարդը կախուելու բոլոր յարմարութիւններն անեցել է, —թոկ և մեխ և, առանց երկար մտածելու՝ կախուել է։ Սակայն, սրբինների նկատմամբ նու անկաղաքավար է գտնուել, —որպէս զի ոչ-ոքի աւելորդ նեղութիւն չպատճառէր, նա պէտք է ուղակի ծովը նետուէր, —ելքն ամէն տեղ միհնոյն է։

Լիօնէլը ոչինչ չպատասխանեց։ Այդ խօսակցութիւնը նա այլ ևս երբէք չէր նորոգում և գիւղում ոչ ոքի հարց ու փորձ չարեց «անյայտ մարդու ինքնասպանութեան մասին»։ Հետեւալ առաւօտեան արգեն, տեղական բոլոր թերթերում, այդ մասին տեղեկութիւններ կային։ Բայց եղելութիւնը խորը տպաւորուեցաւ նորա զգայուն հոգու

մէջ, —նա երբէք յիշատակութիւնն չէր անում՝ այդ մասին, ուստի և աւելի ու աւելի խորն էր տպաւորում նորա յիշողութեան մէջ։

Քսան օդ բացակայելուց յետոյ, վերջապէս, ուստիցապետն ու Լիօնէլը Կոմիզը տին գարձանի թէի Լիօնէլը գեռ ևս շատ նիհար և շատ լժկոյն էր, բայց, ընդհանուր առմամբ, բաւական կազմուրուել էր, աչքերի տիսուր արտայայտութիւնը չէր փոխուել և նորա վիշտը գարձեալ նոյնն էր, — բայց նորա մեզմիկ հեղութիւնն այժմ բայց էր ստանում ինչ-որ յուսոյ շողերից . . . նա ինչ-որ բան էր սպասում ապագայից և երազում էր . . . նա ցանկանում էր տսանել, — ուստի շատ, շատ, որպէս զի շուտով հասնէ ուսանելու ծայրը և մարդ գառնայ . . . Իսկ յետոյ, որտեղ էլ գտնուեր իւր մայրը, անպատճառ որսնէր, գանէր նորան և համոզէր, որ տուն գտանայ: Ճանապարհին նա, հարեւանցի կերպով, յայտնեց ուստիցապետին իւր մտադրութեան մասին՝ որչափ հնարաւոր է, ջանասիրութեամբ ձեռք զարկէ դասերին, բայց ուստիցապետը մի ինչ-որ անտարբերութեամբ վերաբերուեցաւ այդ ցանկութեանը: — Իհարկէ, տաց նա, գուրք կարող էք

կամաց-կամաց շարունակել ձեր մի քանի
զբաղմունքները, բայց միանդամից կողէել՝
կարիք չկայ: Օրինակ, վազն ամբողջ օրը
կարող էք ոչինչ չանել և առաւտոից որ և է
զբօսանք կատարել: Եթէ կամենաք, վերցրէք
հետներդ որ և է գիշք,—երեսն էլ չնայէք՝
մի մեծ դժբաղդութիւն չի լինի: Որովհետեւ
դուք հիւանդ էիք, ուստի և մենք էլ
շատ զու չենք տայ մեր աշխատանքներին,
թէ չէ, ով գիտէ,—բժիշկը նորից իւր յար-
ձակումը կդորձէ մեղ վրայ:

Նու ժպտաց իւր նոր ձեռք բերած բարի
ժպտով, և լիօնէն ևս ուրախ ժպտաց նու-
րան, —այնպիսի ուրախառիթ միաք յղացաւ
նորա դլսի մէջ: Նու ազատ ովհափ լինի,
ամսոնային այդ ուրախ, զուարթ առաւտոն
ամբողջապէս իրեն էր պառկանելու և, —և
նու կդնայ իւր սիրելի, փորչիկ ժեսմինայի
մօտ: Որչափ կզարմանայ նա: Ինչքան կու-
րախանայ: Ինչպէս նորա փոքրիկ դէմքը,
յանկարծ, ամբողջապէս կփայլէ, և ժպիտը
կլսազայ նորա երեսին, և դիւթիչ փոսիկներ
կերեան այտերի վրայ, իսկ երկնագոյն աչ-
քէրը, ինչպէս կշողան նորա . . . եւ իւր
ոչքերն էլ շողացին, դէմքը շիկնեցաւ, —և

սովասովական թրթիու ուրախութիւնը ամբ-
բաղչապէս տիրեց նորա էութեանը, այնպէս
որ երբ մահում էին ծանօթ լորենիների
ծառուղին, նա, համարեա, բազգաւոր զգաց
իրեն, որ տուն է վերադառնում:

Մ-ը վելիսակուրտն արդէն վերագարձել
էր լօնդօնից և լիօնէլին հանդիպեց սառն
արժանապատութեամբ:

—Նոտ ուրախ եմ, որ ձեզ այդչափ
կենառնակ զիճակի մէջ եմ տեսնում, ասաց
նա իւր ձեռքը կողցնելով որդու գողգողա-
ցող ձեռքին: Ապա դասնալով ուսուցչապետ
կադմօն-Հօրին՝ աւելացրեց, —կյուսամի, պ.
ուսուցչապետ, որ այս փորձութիւնը ձեզ
շատ չչարչարեց:

Ուսուցչապետը նայեց նորա վրայ, —
զարմանալի և օտարութիւն էր այդ գէմքի ար-
տայայտաւթիւնը, նոյն իսկ բազմանշանակ
էր և այն ժպիտը, երբ նա պատասխանեց.

—Պէտք է խոստովանեմ, միսալը վե-
լիսկուրտ, որ ոչինչ փորձութիւն չկար, ևս
կատարելապէս բազգաւոր էի զգում ինձ...
և ասածո զուտ ծշմարտութիւն է:



ԺԳ.

Առաւոտեան հիանալի, տաք եղանակ
էր, արեւ պայծառ փայլում էր՝ Երբ Լիօ-
նէլը յիշեցրեց ուսուցչապետին երեխուայ
խոստումը, նա խկայն նորից հաստատեց իւր
տուած խոստումը՝ Որովհետեւ Լիօնէլը վե-
րին աստիճանի բարեխիղճ երեխայ էր, ուստի
նա հենց այդեւդ յայտնեց ուսուցչապետին,
որ զրուանկի ժամանակ մոտագիր է թեթև
կերպով աչքի անցնել լատիներէն քերակա-
նութիւնը, —որին, սակայն, ուսուցչապետը
հաւանութիւն չտուեց:

—Ոչ, ասաց նա, դա բոլորովին առեւ-
լորդ է, այսօր դուք պէտք է հանդստա-
նաք, իսկ վաղը, դուցէ, որ և է զբաղմունք
կունենանք:

Ուրախ ժպիտով Լիօնէլը իւր չնորհա-
կալիքը յայտնեց նորան, վերցրեց գլխարկը
և ուրախ զուարթ պարտէզ վազեց։ Այս,
նա ուրախ էր . . . բայց միւնպին ժամանակ,
կարծէր, ամաչում էր խոստվանել այդ . . .
Չէ որ իւր կեանկի մէջ ոչինչ նոր փոփո-
խութիւն չեղաւ այն պատճառով, որ արեն
այսօր պայծառ էր փայլում, և թուչուները
իրենց երգերն են գայլայլում, և ինքն էլ
գնում էր սիրելի փոքրիկ ժեսմինայի մատ-
—Ոչինչ չէր փոխուել. —նա դարձեալ նոյն
խեղճ, մեն-մինակ մնացած, մօրից մոռաց-
ուած, երեսից ձգուած մանուկին էր —միթէ
այդքան շուտ մոռացաւ նա այդ րոշով, —
մոռացաւ և նորան՝ իւր մայրիկին . . . Ոչ,
նա չմոռացաւ . . . նա նոցանից չէր, որոնք
մնուանում են . . . բայց երխասարդութիւնը
միշտ էլ երխասարդ է մնում, և ինքն իրեն
ցոյց կտայ՝ հակառակ բոլոր վշտերի, իւրա-
քանչիւր ճնշման, —այդ ծիծաղկոտ առաւօ-
տեան նա ոչ մի կերպ իրեն տխուր զգալ
չէր կարող։

Հասած ոսկեգոյն արար, ծառերի
թանձր սաղարթը, շրջապատող բոլոր բնու-
թիւնը գոհունակութեամբ և ուրախութեամբ

Եր համակուած,—և երբ նա պարտիզից
ելու և դէպի Կօմիօրտինի հինաւուրց եկեւ
զեցին տանող կածանը բանեց, որտեղ յոյս
ունէր, թէ պիտի գտնէ Ռուբէն Դէյլին և
իւր աղջկանը, կարծես, չորս կողմը բռնած
ընդհանուր կենդանութեամբ ինքն ևս հա-
մակուեցաւ։ Քանիթ-քանի բաղմառեսակ ծը-
րագիրներ մէկը միւսին յաջորդում էին արա-
գապէս նորա գլխում, —նա վերջնականապէս
կապուել էր ուսուցապետ Կաղման-Հօրին
և նա անպատճառ կինդրէ նորան, որ
հաճէ մի քանի տարի ևս պարապել իրեն
հետ՝ իւր զեկավարութեամբ, բայց միայն
իւր տանը՝ այսինքն, հէնց ուսուցապետի
տանը։ Նա կարծում էր, ոչ հայրն ևս հա-
կառակելու առիթ չի ունենայ, —և, շա-
րունակեց մտածել նա ինքն իրեն, «Թէի
ինքը ուսուցապետն անգամ, պարզ է, որ
չէ կարսպանում բացատրել այն, ինչ որ ես
կամենում եմ իմանալ Հիւլէի մասին, —բայց
նա կարող է կամաց-կամաց առաջնորդել
ինձ դէպի այն ուղին, որով ես ինքս, գու-
ցէ, համենում այն բանին, ինչ որ կամենում
եմ իմանալ, ես կարծում եմ, որ նա ևս
մի փոքր սիրում է ինձ . . . Կեվերլիում»

մենք այնպէս բարեկամացել էինք, աւելի
մօտիկ ճանաչեցինք միմեանց, —թէև նորա
արտաքինը խիստ խոժոռ է, բայց նա բարի
է, —նա հասկանում է ինձ, բայց, երեխ
թէ, շատ դժուար բան է, որ ծերունին
ըմբռնէ փոքրիկ երեխայի դլութիւնը . . . Այ
և եկեղեցին Որչափ գեղեցիկ լուսաւորել
է նորան արելք Ա՛, այնուեղ է և մը-
Դէյլը, —և սովորականի համաձայն —գեղեց-
ման է փորում . . . »

Ժպտերես, նա քայլերն շտապեցրեց,
իսկ մի քիչ յետոց բոլորավին վազեց, վա-
զելով մինչև գերեզմանատան գռնակը, նա
սուսիկ բաց արաւ և անլսելի քայլերով,
ոտների մասների ծայրերի վրայ վազեց նեղ
կածանով, նա կամենում էր յանկարծակիի
բերել փոքրիկ Ժեսմինացին, եթէ նա այդ-
մօտիկ տեղերն էր գտնւում։ Ազդէն երկու-
երեք քայլ էր մնացել, որ համենէր Ռուբէն
Դէյլին, —և յանկարծ կանգ առաւ —ինչ որ
սարսուռ անցաւ նորա մարմնի միջով, Դէյլը
նորան չէր նկատում —նորա ալեվարդ գրուխը
բոլորովին կորացել էր գործի վրայ —և խուլ,
սիրտ կարտող հեծկլտանք էր լուսում նորա
լվծքից, հետզէտէ, քանի որ թիսկ առ

թիւակ խոնաւ հողը դուրս էր ձգում կանաչի վրայ—իսկ այնուեղ խորքում, կազմուել էր մի փոքրիկ, քառանկիւնի խորութիւն—մանկական գերեզման . . .

Նորա աչքերը մթնեցան, — կոկորզը ջղածորէն սղմում էր, շնչառութիւնն արտելելով—նա ամրօղապէս դողդողում էր և ձեռները սլարդելով գէպի Ռուբէնը՝ հազիւ արտասանեց։

—Մ-ը Դէյլ . . . 0', մ-ը Դէյլ . . .

Այդ ժամանակ Ռուբէնը գլուխը բարձրացրեց, — արտասորքի խոշոր կաթիլները գլորում էին նորա գէմքի վրայով և մի զարհութելի, համր յուսահասութիւն էր արտացոլում նորա իւրաքանչիւր դիմագիծը . . . նա լուս էր, և Լիօնէլը, երկիւղից, չկարողացաւ մի բառ անդամ արտասանել։ Մի տանջող զգացում—մի ինչ-որ բան, որից նորա սիրտը սառչում և մարտում էր,—ճընշում էր նորան . . . նա սպասում էր, —բայց միենայն ժամանակ և վախենում էր Ռուբէնի ձայնը լսելուց . . . և յանկարծ Ռուբէնը խօսեց . . .

—Նա յաճախ յիշում էր քեզ, իմ սիրելիս, այս, յաճախ էր յիշում. նորա վերջին

խօսքերն էին «Լիլիային տացէք, որ ես նորան սիրում եմ»։ Երբէք, երբէք չեմ մասնայ ես այդ, — չեմ մասնայ և այն երանաւէտ, հրեշտակային ժպիտը, որով նա ժպտում էր և առում,— այս, իմ Ժեսմինտ, իմ անուշ ծաղիկս . . . «Սիրում եմ Լիլիային» . . . այդ ասաց նա և—մի բողէից յետոյ—վախճանուեցաւ . . .

—Վախճանուեցաւ . . . շնչառպառ, կարծես ոչ-իւր ձայնով արտասանեց Լիօնէլը— Մեռաւ . . . Ժեսմինտն . . . Ժեսմինտն մեռած . . . Ոչ, ոչ, ոչ, անկարելի բան է, այդպիսի բան չէ կարող սպասահել։ Դուք ինքնիրդ էլ շատ լաւ գիտեք այդ . . . գոր, երեկի, հիւանդ էք, զառանցում էք,— այդ Ճմարիտ լինել չէ կարող . . .

Այսուղ, կարծես, հեղեղատի որոտը խացրեց նորան, նորա աչքերը լցուեցան արխինով և ինչոքէս վիրաւորուած, վէրքից կատաղած փոքրիկ գաղան, նա վայրենի աղաղակով յարձակուեցաւ Ռուբէնի վրայ, ջղածդաբար բռնեց նորա ձեռքից, և գուշալով ամրող մարմնով, նորան կուտ։

— Ոչ, ոչ, դա փոքրիկ Ժեսմինտն չէ, մեռնողը նա չէ . . . 0', մի առեք այդ բանը։

Այստեղ՝ այդ խոնաւ ու սառն հողի մէջ
նորսան չէր դնիլ։ Մեր ժեսմինային չէր
դնիլ։ Այս, բոնեցեք ինձ . . . ամուր բոնեց-
եք, — և վախենում եմ . . . 0°, ժեսմինա . . .
նա կենդանի է, — դէ, շուտ ասացէք, սխալ
է չէ, որ իբր նա չկայ այլ ևս . . . դա չա-
փաղանց անգութ բան կլինէր — արդէն չա-
փաղանց անխղճութիւն կլինէր . . .

Թուբէն Դէյլը տեսնելով այս անհուն
յուսահատութեան սարսափելի արտայոյ-
տութիւնը, մի առժամանակ մոռանալով իւր
սեփական վիշտը, մի կողմ ձգեց իւր թիսկը
և գորովանօք գրկելով խեղճ երեխային,
սզմեց իւր վշաացած, վիրաւոր սրտին և աշ-
խատում էր, հնար եղածին չափ, հանգիստ
երկալ, որ գոնէ նորան կարողանար հան-
գատացնել։

— Միթէ դու չէիր լսել այդ մասին,
սիրելիս, սկսեց նա ընդհատուող, մեղմ ձայ-
նով։ Այս, այն, — և մոռացայ, դու չէիր
կարող լսել, դու այդ ժամանակ, ախր, այս-
տեղ չէիր։ Ես իհարկէ լսեցի, որ դու հի-
ւանդ էիր, և որ քեզ կլեփելի տարան.
բայց, քեզ ով պիտի հասցնէր խեղճ, ան-
հան մարդուն հասած գերազութեան լու-

րը։ Ես ինքս եկայ քո հօր բնակարանը, որ քեզ
իմաց տամ, — որովհետեւ նա չէր դադարում
քո մասին հարցնելուց, — հէնց որ բուկը վու-
քը ինչ մաքրուեցաւ և հնարաւոր եղաւ
խոսելու, — ահա այն ժամանակն էր, որ
իմացայ, թէ դու մեկնել ես այստեղից։ Նա
բանուեցաւ բկուռուցքից, — ամբողջ գիւղի
մէջ զարհուրելի կոտորած եղաւ, — և տան-
ջուեցաւ միայն չորս օր։ Եւ մենք ամէն բան
արինք իմ սիրատն թոշնակի համար, ինչ
որ հնարաւոր էր, մը Պարտէյն էլ — թող
Աստուած պահէ նորան — չէր հեռանում
նորանից ոչ ցերեկը, ոչ գիշերը, — շատ լու,
շատ բարի մարդ է նա, — կարծէր, նա էլ
պատրաստ էր ինձ հետ՝ իւր կեանքը զոհել,
որ գոնէ նորան փրկել կարողանար։ Բայց
ամէն ինչ իզուր . . . տեսնում ես, իմ սի-
րելի, նա մեղ պէս մեղաւորների համար
բացուելու ծաղիկ չէր, չափաղանց գեղեցիկ
ծաղիկ էր — ուստի և Տէրը վերցրեց տա-
րաւ նորան . . . նա արդարադատ է, նա
աղատ, ինքնիշխան է անելու այն, ինչ որ
իւր ժառանգութեան հետ անել կամենայ։
— Բայց ինձ, ինձ համար, խեղճ, ողորմելի,
ուժապառ եղածիս համար որչափ ծանր է,

—իմ ազաւնեակ . . . Առաջ մօրը, յետոյ—
զաւակս . . . Տէր Աստուած, Թռհ ոյժ ներա-
շնչիր ինձ ասելու՝ «Եղիցին կամք քո»։ Ես
արդէն ուժասպառ եմ եղել, ես այժմ՝ մրըր-
կից ջախջախուած եղէքն եմ։

Ռուբէն Դէյի գլուխը թեքուեցաւ գէ-
պի մանկան գլուխը, որն ամուր սզմուելով՝
նորան բողէ առ բողէ ցնցւում էր և սըր-
տայսյդ հառաչումն նոցա գլխավերիը կա-
պուտակ երկինքը բալորսվին ջինջ էր, — արե-
գակն արքայափայել փառքով փայլում էր և
նորա ոսկեհուր շողերն, ինչպէս արքայու-
թեան աւետաւորներ, գեղւում; թափւում
էին փոքրիկ, կիսատ գերեզմանիկի խորքերը։

Յանկարծ Լիօնէը գլուխը վեր ըարձ-
բացրեց և կամացուկ, անհուն երկիւղի ար-
տայայտութեամբ, աչքերը չորս կողմը յա-
ծեց, — նորա աչքերը վառւում էին տեհ-
գային բոցով, ճակատը ծածկուել էր կնճիռ-
ներով, ինչպէս ծերուկի ճակատ. — նա, կար-
ծեր, տառը տարով ծերացաւ . . .

— Դուք նորան այնաե՞ղ կդնէք, շարն-
չաց նա, մատնացոյց անելով գերեզմանէը, —
փոքրիկ ժեսմինային . . . դուք նորա դանդ-
րիկները, նորա երկնադոյն աչերն այս սե-

հողնի պիտի ծածկէք. միթէ դուք այդքան
հոգեկան արխութիւն կունենաք։ Նա ծիծա-
զում, խայտում և պարում էր, — նա այլ ևս
ոչ կխայտայ և ոչ կապրէ . . . իսկ դուք ընդ-
միշտ, յաւխտեանս կծածկէք այստեղ, — նո-
րա ձայնը գողաց, — և երբէք, երբէք այլ ևս
չենք տեսնիլ նորան, — երբէք 0՝, Ժեսմին
նա, իսմ Ժեսմինս . . .

Ռուբէնը, մինչեւ հոգու խորքը յուղ-
ուած վշտի այգ յուսահատ վեզումներով,
որը այնուամենայնիւ ամբողջապէս խր վրայ
էր ծանրութեամբ, — ինքը դիտէր միայն մի
միիթարութիւն, այն, որ նա ստանում էր
իւր առ Աստուած ունեցած պարզ և զօրեղ
հաւատից։ Մեզմիկ փայփայերով մանկան
գանգուրները խր խոշոր, կոշտ ձեռքով, նա
շարունակեց համուարտիկ.

— Նո քեզ սիրում էր, յիշում էր քեզ
մինչեւ վերջին բողէն — դա քեզ պիտի միխւ-
թարէ, սիրելիս . . . իսկ մի անգամ, երբ
ցաւը թեթեացաւ և կարող էր համարեա
պարզ խօսել, ասաց. «Ասացէք Լիլիային, որ
ես նորան շուտով կտեսնեմ — տեկի շուտ,
շուտ տեկի կանուխ, քան նա կմեծանայ» —
սոքա հենց իւր խօսքերն են, — անուշ դա-

ւակս . . . երեխ նորտ միաքն աղպէն սկսել
էր փոքր ինչ շփոթուիլ, և չէր իմանում, թէ
ինչ էր առում՝ Բոլորովին հանգիստ վախ-
ճանուեցաւ — գոհութիւն Աստուծոյ՝ Երէկ
չէ, անցեալ գիշերը նա իւր փոքրիկ բա-
զուկները վզովս փաթաթեց, գրկեց ու
տաց, «Հայրիկ-ջան», բոլորովին ուրախ—
այդպէս էր առում նա այն ժամանակ, երբ
դեռ ևս փոքրիկ, շատ փոքրիկ էր — յետոյ
ժպանց — «Սիրում եմ Լիլային» արտասա-
նեց — և թուաւ . . . Եւ այժմ պառկած է
իւր փոքրիկ դադազի մէջ մի փունջ յասմիկ
պսալիկ թաթին բռնուծ — մենք քաղեցինք
մեր յասմիկի ծառի բոլոր ծաղիկները — ում
են պէտք այժմ նորա . . .

Նորա ձայնը ընդհատուեցաւ և նա նո-
րից հեկեկաց:

Իսկ կիօնէլը արտասուքի ոչ մի կաթիլ
չդրեց: Նո յանկարծ ջղային ցնցմամբ
աղատուեցաւ Ռուբէնի քնքշաբար գրկած
բազուկներից և բուռն յուզմամբ ծունկ չո-
քեց մուայլ, բերան-բաց գերեզմանի մօտ:

— Այնտեղ-այնտեղ պիտի գնեք նորան,
խոպոտ ձայնով շշնչում էր նա: — Այնտեղ
պիտի լինի ժեռմինան . . .

Զդաճգաբար ողմելով և բանալով իւր
ձեռները, նա աւելի ու աւելի ուշագրաւ
էր գիտում՝ գերեզմանի խորը, կարծես,
երկիւղը գամել էր նորան տեղն ու տեղը:
Ռուբէնը քնքշութեամբ և դորովով ձեռքը
դշեց նորա ուսին:

— Ոչ, սիրելիս, տաց նա, նորա ձայնի
մէջ արտասուքի նշաններ էին երեսում և մի
ինչ-որ անբացատբելի սրտայոյդ շեշտ կար
նորա մէջ: Ոչ այնտեղ, այդպէս չպէտք է
մտածել: Այլ այնտեղ, իմ սիրելիս, այ
նտեղ: Եւ նա աչքերը լինջ, անհամակ երկնքի
կապուտակին ուզգեց: «Այնտեղ, Աստուծոյ
օթևաններում, — այնտեղ է այժմ մեր Ժեռ-
մինան, այնտեղ՝ ուր նորա սուրբ Հրեշտակ-
ներն են: Այժմ նա նոյն իսկ Քրիստոսի
մօտ է . . . և այսպէս աւելի լաւ է, աւելի
լաւ . . . Երեխ, նա գիտէր, որ նորա մահ-
րիկ, քնքոյշ ոսները չեն կարող երկար ըն-
թանալ կեանքի վշոտ ճանապարհով, — և
խղճալով իւր մօտ կանչեց նա և ժամանա-
կից աւելի կանուխ Հրեշտակ դարձրեց նո-
րան, այս մէկն արդէն ճիշտ է, որ հենց այս
բոսկիս նա Հրեշտակ է, — Բարձրեալի դա-
հոյրի մօտ գտնուած մաքրափայլ Հրեշտակ . . .

Եւ Ժեսմինստի չէ, որ եռ այդանեղ կծածկեմ
ծաղիկների մէջ, այլ նորա սիրուն, գեղեցիկ
արտաքինը միայն, — իհարկէ չեինք կարող
մէնք ամէնքս չփրել և այդ արտաքին կե-
ղը, — բայց և այնպէս նա չէ մեր Ժեսմի-
նստ, — մեր Ժեսմինստ կենդանի և նա ապ-
րում է և սիրում... և ոչ մի բան չէ կարող
խանգարել, որ մէնք սիրենք միմնանց: Թէ
մայրը և թէ զաւակը՝ երկուսն էլ այժմ
Աստուծոյ մօտ են, — նորա ուրախութեամբ
փայլում են, — եռ եմ տխուր միայն, բայց
մի քանի տարուց յետոյ եռ էլ կերթում
նոյտ մօտ և այն ժամանակ կիմնամի, որ
ամէն ինչ դէպի բարին էր ուզդուած, —
այժմ դա դազմնիք է ինձ համար, ուստի
և — դժուար է անջատումը... .

Լիօնէլլ յառած նայում էր նորան, —
նորա դէմքը բոլորովին սպրդնած էր, շըր-
թունքները սեզմ:

— Եւ դուք հաւատում էք այդ բոլո-
րին, բացադանչեց նայ Դուք սխալում էք,
սխալում: Դա ճշմարիտ չէ — դա միայն ան-
միտ նախապաշարում է: Աստուծած — չկայ:
Յաւխունական կեանք — դոյութիւն չունի:
Զկան այնպիսի արարածներ ինչպէս Հրեշ-

տակները: Թշուառ, թշուառ մարդ... Միթէ
դուք երբէք ոչինչ չէք սովորել: Մահուանից
յետոյ — չկայ ոչինչ: Հասկանո՞ւմ էք: Փոքրիկ
Ժեսմինստին դուք այլ եռ երբէք չէք տեսնիլ:
Երբէք, երբէք:

Նա վեր կացաւ չօքած տեղից: Նորա
գէմքը մինչ այն աստիճան օտարուախ, գա-
զագուած էր, վայրենի, — որ Սուրբնը կարծեց,
թէ չար սպի է տիրել նորան, և նա ակա-
մայից յետ-յետ քաշուեցաւ:

— Այդպէս ուրեմն, դուք վճռել էք,
որ այնտեղ կզնէք նորան, շարունակեց Լիօ-
նէլլ, կիշեցնէք փոքրիկ գաղաղը, կծածկեք
յասմիկների պատկերով և յետոյ կթաղէք
հողով և շուտով... որդերը կառզան նորա
չընալ գէմքի վրայով, կիմնեն նորա գանդ-
րիկների մէջ, նորան այժ կդարձնեն, որին
ինքներդ անդամ կխռասիէիք մօտենալ...
Եւ, սակայն, դուք սիրում էիք նորան: —
Երեխան դոզում էր ամրող մարմարվ: «Եւ
դուք՝ զեռ ևս կարող էք խորհրդածել —
Աստուծոյ մասին... . Միթէ դուք չէք հառ-
կանում, որ այն Աստուծած, Որը կարող է,
առանց որ և է պատճառի իրել ձեզնից ձեր
Ժեսմինստին, — ողէտք է լինի մի հրէշ, — մի

զարհութելի, չար, անդութ հրէշ... Խոնջն էր
ստիպում նորան պարգևել ձեզ ձեր զա-
ւակը և յետոյ, առանց որ և է պատճառի
ու նպատակի, սպանել նորան, ձեզ էլ այդ-
պիսի տանջանք կրելու դատապարտել։ Ոչ,
ոչ, Աստուած—չկայ։ Դուք ոչինչ չեք կար-
դացել, ոչինչ չեք ուսումնասիրել, ուստի և
ոչինչ հասկանալ չեք կարող։ Զկայ Աստուած,
կայ միայն—Հիւլէ, իսկ նորա համար—բա-
լորը մէկ է։

Ռուբէնը սկսել էր արգէն լուրջ կեր-
պով երկիւղ կրել խեղճ երեխայի ուղեղի
դրսթեան մասին, —նա նորից կամեցաւ
դրկել նորան, բայց Լիօնէլը սարսուսով
յետ մղեց «Խեղճ, խեղճ երեխայ, նա բո-
լորովին խելոյեղ է եղել անակնունելի հար-
ռածից և այժմ էլ չի խմանում, թէ ինչ է
խօսում» մասնում էր բարեսիրտ Դէլլ աչք
չհեռացնելով այն փոքրիկ դէմքից, որ մի
տեսակ քարացած դրսթեան մէջ կանգ-
նած էր գերեզմանի կողքին։ «Եթէ նա կա-
րողանար լաց լինել, նա կթեթեանար» ան-
ցաւ նորա մտքով, ուստի և բարձրածայն,
որոշակի ասաց։

—Զես դայ ինձ հետ, սիրելիս, տեսնես

Ժեսմինային, —ինչպէս քնած է նա ծաղկի-
ների գողում, —այդ բանից չես վախենայ,
—նա, կարծէք, ժպատացող քնած Հրեշտակ
լինի, —իսկ Աստուածային ոէրը հովանուո-
րում է նորա դէմքը։ Դնանք։

—Ոչ, գրգռուած պատասխանեց Լիո-
նէլը։ Զեմ գնայ։ Դուք, երկի, մուացաք,
որ ես եկայ այստեղ, ենթադրելով, որ նա
կենդանի է, —որ նա ուրախ-զուարթ կը-
դիմաւորէ ինձ, —որ նորա աչքերը կփայ-
լին, —և ես այնչափ երջանիկ էի զգում
ինձ, —իսկ նա այդ բովէին էր . . . ոչ, ոչ,
չեմ կարող նորան այդպիս տեսնել, —ապա
թէ ոչ բոլոր ժամանակ աչքիս առաջ պիտի
պատկերանայ գերեզմանը —որդեքը . . . այ,
այ նոքա . . . այ տեսէք . . . ահա մէկն արգէն
ուզում է այնուն և . . . և նա զարհութելի
քրքիչ բարձրացրեց, որ ընդհատուեցաւ
անարցունք հեծ կլասցով։ «Եւ դուք —դուք
զես ևս կարող էք հաւատալ, որ այն Աս-
տուածը, որ սպանել է Ժեսմինային —զթա-
սիրտ է»։ Նա ձեռքերն իրար կցեց և ոկոց
վագել, վագել առանց յետ նայելու, աւելի
ու աւելի հեռու դէպի Կօմիօրտինից վեր
սելին տուող անտառը։

վաշանած, բոլորովին վախեցած մուշէն Դէյլը երկար նայում էր նորա յետեխց։ —Տէր Աստուած, օգնիր խեղճ երեխային, ազերսալից արտասանեց նաև ինձ այնպէս է թւում, թէ բացի իմ ժեռմինայի մտհից, ինչոք մի ուրիշ բան էլ է կրծում նորա սիրոք, —մի բան, որին օդնելը —իմ խելքից վեր է . . . Մայրը թողել փախել է . . . խեղճ երեխայ . . . Այդ տեսակ անջառութիւն առաւել սրտամաշ է . . . ինչ կարող եմ անել . . .

Եւ նորից վերցրեց իւր թիակը և ոկտեց իւր տխուր սպարտականութիւնը շարունակել։ Հոգտատարութեամբ և քնքշանիքով իւր իսկ ձեռնիւրով հաւասարեցնում և ողորկում էր իւր սրտին մօտիկ, թանկադին գերեզմանի սպատերի հողը, և զգուշութեամբ, առանց զգուշանք զգալու, հանեց այն տեղից մի խեղճ որդուկ, որին մատնացոյց էր արել լիօնէլը, և երեւում էր, որ նորա աչքում Աստուծոյ արարածներից այդ ամենաչնչինն անգամ իւր արժէլն ունէր, ինչպէս մի փոքրիկ մասնիկ այն ամբողջութեան, որին Տէրը կենդանութիւն է սպարդել և սրբադորձել իւր Հոգւովից «Գմուար

է հասակաւոր մարդու համար որ և է փորձութիւն կրել — բայց կրկնակի ծանր է այդպիսի փոքրի համար — նորա վշտի մէջ դեռ ևս Աստուծոյ ներկայութիւնը չէ երեւում . . . փորձութեան մէջ նա միայն լոկ վիշտ է նկատում։ Տէր Աստուած, օգնիր մեղ ամէնքիս, ակարներիս և մեղաւորներիս ժեռմինա, ժեռմինաւ իմ զաւակս, իմ անոյշ աղջիկս իմ սիրատարփիկ ծաղիկս, ով կարող էր սպասել, որ դու այդքան կանուխ պէտք կլինիս քո Տիրոջը։ Արցունքները յորդահոս ժայթքում էին նորա աչքերից և գլուխում գերեզմանի մէջ, որ նու հետզհետէ խորացնում էր։ «Բայց նա, չէ որ սիրոյ Աստուած է։ Նա չի բարկոնայ իմ արցունքները տեսնելով և իւր ժամանակին նա ինքը կառաջնորդէ իմ խեղճ, ցաւատանջ հոգին դէպի այն գիտակցութիւնը, թէ ամէն ինչ ուզզուած է ի բարքնեն, իմ ամէն ինչ ուզզուած է ի բարքնեն . . . և կառաքէ իմ յետեխց երկու հրեշտակներիս, երբ ժամանակս կհամնի . . . բայց արդէն մօտ է, այժմ այլ ևս երկար չեմ սպասիլ . . . շատ չի քաշիլ, իմ անգին ծաղիկս . . . Մի ձեռքով սրբեց նա իւր արցունքները և համրների ժամանակից

Խոր տիսուր աշխատանքը՝ վերջապէս, փոքրիկ գերեզմանն արգէն պատրաստ էր,— ներսն ամբողջապէս կղպած էր մրտենու տերեներով, և այժմ աւելի նմանում էր փոքրիկ, փափուկ, կանաչ բոյնիւ Երկու փոքրիկ տախատակով ծածկելով, որպէս զի դիշերը ցող չնստէ, նա ծանր թխակն ու բաճը ուսին դըեց և տուն ուղղուեցաւ, ճանառ պարհին մտմուլով անհուն թախիծով, թէ ինչ պիտի լինի հետեւեալ տռաւուտեան իւր դրութիւնը, երբ իւր զաւակից մնացած վերջին նշխալիներն անգամ, ազօթքով ու օրհնութեամբ, հողին պիտի յանձնուի:

Մինչ այդ՝ Լիօնէլը անոտանելի հոգեկան տանջանք էր կրում: Նա գուրս վազեց գերեզմանատից, հաղիւ դիտակցելով, թէ ինչ է անում և ուշքը վրան եկաւ միայն այն ժամանակ, երբ կանգնած էր եղենիների ու կաղնիների մուպյլ հովանու տակ: Նորտ գլուխն այրուում էր, իսկ չորացած աչքելը, կարծէք, կրակ լինէին կորած—նա փոռուեցաւ փափուկ խոտի վրայ և սոխուց ինքն երեն մոռածեց: Եւ այսպէս ուրեմն՝ Ժեսմին մեռառ: Այն լուսափայլ, երկնադոյն-կապուտիկ աչքերով, և քնքոյշ, մանկական

ժողոտով արարածն այժմ՝ պառկած է անշշունչ, դիակնացած՝ գագաղի մէջ՝ Ինչպէս կարելի էր հաւատալ այդ բանին: Նա մտարերեց, թէ ինչպէս տեսաւ նորան վերջին անդամ, նայում էր իսր ծաղիկների միջից և այնպիսի խանդաղատանքով, մեղմիկ ու տիսուր ձայնով ասաց, «կեղծ Լիւլիա, վախենամ, որ այլ ևս երբէք ինձ չեռ տեսնիլու: Իսկ յետոյ—նորա վերջին հրաժեշտը «մնաս-բարեւ, Լիլիա, բայց ոչ ընդերկար»:

—Ոչ ընդ-երկար . . . իսկ այժմ՝ դուրս եկաւ—մեաս բարեւ յաւիտեան: Օ՛, փոքրիկ Ժեսմինաս: Խեղճ, խեղճ, փոքրիկ Ժեսմինա, աղիսղորմ հեծեծում էր նա: Նա չէր լալիս —վիշար չորացրել էր բարերար արցունքի աղբիւրը . . . եւ ինչու համար էր այս բուրբը, հարցնում էր ինքն իրեն, բուրը այն վատահ գուրգուրանքները, այն սքանչելի անմեղութիւնը, այն միամիտ, խորհրդաւոր հաւատը, որ տածում էր դէպի Քրիստոս և նորա հրեշտակները,—ինչու համար էին:— Ա՛խ որքան անդութ է այս բուրը, բարձարածայն աղաղակեց նա, իւր գունատ, այւակերպուած դէմքը դարձնելով դէպի ծաւ

սերի սստերի միջից հազիւ երեացող երկինքը։ Անդթութիւն էր ստեղծել և նորանի—անդթութիւն էր ստեղծել և ինձ—եթէ ամէն ինչ այսպէս է վերջանում . . . 0°, մինչ որ աստիճան և՛ անդութ, և՛ անմիտ, և՛ գաժան է . . . նա կանգնեց, ուղղուեցաւ և մի քանի բոլէ անշարժ մնաց ամուր սղմած բռունցքներով և խոնարհած հայեացքով։ «Իսկ եթէ յանկարծ այնպէս պատահի, որ այդ բոլոր դիտնականները սիսալում են . . . յանկարծ դուրս գայ, որ հէնց այդ Հիւլէն է—Առառուած իսկ Քրիստոսը—առասապէլ չէ, այլ Ս.յն, Որի մասին այնքան հրաշալի կերպով յայտնում է Աւետարանը,—այդ դէպրում, Ժեսմինան այժմ—այնտեղ է . . . որովհետեւ այս կեանքից յետոյ կայ և մի այլ կեանք . . . Բայց ինչպէս, ինչպէս իմանան ճշմարտութիւնը։ Մտախոհ մի քանի քայլ արեց դէպի առաջ և, յանկարծ, մի միտք լրւաւորեց նորա գիտակցութիւնը, որից նորա աչքերը փայլատակեցին և կարմրութիւնը պատեց նորա դէմքը։ «Այո, այո,—այսպէս ես կիմանամ այդ գաղտնիքը, շնչում էր նա ինքն իրեն, —ուրիշ կերպ՝ անկարելի է, իսկ այսպէս՝ ամէն բան, ամէն բան ինքո կիւ

մանամ»։

Ինչ որ հանդիսաւոր հանդստութիւն տիրեց նորան, որ երեսում էր նորա հայեացքի և իւրաքանչիւր շարժման մէջ Յուշիկ դուրս եկաւ անտառից, յամրաքայլ իջաւ սարից, ուր բարձրացել էր քիչ առաջ խելագարի նման, և ծանր-ծանր, աչքերը գետին յառած, բռնեց այն ճանապարհը, որ անցնում էր եկեղեցու մօտով։ —գերեզմանատան մօտեցած ժամանակ՝ նա մինչև իսկ աչքերը այն կողմը չդարձրեց։ Հէնց իրենց տան մօտ նա հանդիպեց ուսուցչապետին, որ եռանդուն յետ ու առաջ էր քայլում մեծ ծառուղու միջով։

—Ե՞, ինչպէս է, բացադանչեց ուսուցչապետը, —զբուաները յաջնող էր։

Լիօնէլը ոչինչ չպատասխանեց։ Ուսուցչապետը յառած նայում էր նորան։

—Ի՞նչ է, նորից ձեզ վատ էր զգում, հարցրեց նա։

—Ո՞չ, այնչափ էլ վատ չեմ զգում ինձ, —ժպտալ աշխատելով, պատասխանեց Լիօնէլը, —բայց ես գերեզմանատանն էի և ժամկոչն այնտեղ գերեզման է փորում իւր աղջկայ համար, որ վախճանուել է բկուռուց-

քից՝ երբ մենք դեռ ևս կլեզերի էինք,
—նա դեռ ևս շատ փոքր էր,—միայն վեց
տարեկան էր—ես ճանաչում էի նորան—
անունը Փեսմինա էր:

Ուսուցչապետ Կաղման-Հօրը փոքր ինչ
անհանգստացաւ, երեխայի անտարբեր, հան-
գիստ ձայնի շեշտերը, նորա տարօրինակ
յառած աչքերը, վշտահար, խոժոռած դէմ-
քը անհաճոյ տպաւորութիւն թողեցին և
զարմացրին նորան։ Փեսմինայի մասին ոչինչ
տեղեկութիւն չունենալով, նա իւր ուշքը
այդ կէտի վրայ էլ չկենդրոնացրեց և շեշ-
տակի ասաց,

—Բոլորովին աւելորդ է պարապ տեղը
գերեզմաններում թափառել—անհաճոյ, խո-
նաւ . . .

—Այս, նորա խօսքը կտրեց Լիօնէլը,
մի տարօրինակ ժպտով,—բայց և այնպէս
մենք ամէնքս այնտեղ կերթանք—մեղ էլ
կդնեն այնտեղ, ուր որդերն են սողում—
գորանով և ամէն ինչ կվերջանայ . . .

Ուսուցչապետի յուղումն աւելի ու աւելի
էր աճում։

—Յիմայութիւններ մի դուրս տաք,
Լիօնէլ, բարկացած ասաց նա, քանի ան-

դամ եմ տաել արդէն, որ այսպիսի խօսքեր
ասելին անտեղութիւն է բոլորովին։

—Ինչու, հարցրեց մանուկը, չ՞ որ
ամէնքս էլ պիտի մեռնենք,—այնպէս չ՞։

—Իհարկէ, իհարկէ, բայց ոչ մի կարկը
չկայ մոտածելու այդ մասին, արտասանեց
ուսուցչապետը։ «Ապրեմ՝ քանի կարելի է
ասպրել» հին յոյների սիրելի առածն էր,
որոնք գիտէին օգտուել և կեանքով և դի-
տութեամբ,—շատ իմաստուն առած է, ուս-
տի աւելորդ չէր լինի, եթէ մենք ևս դի-
տենայինք։

—Միթէ, յիրաւի դուք այդպէս էք
հաւատացած։ Միթէ, —ինչոր հեգնական
շեշտով հարցրեց Լիօնէլը։ Զէք կարծում,
որ նորա, այնուամենայնիւ, գարձեալ տգէտ
էին—նոցա բոլոր գիտութիւններն ի՞նչ ելքի
հասցըն նոցա, —նոքա էլ ամէնքը մե-
ռան . . . ամէն քան աննպատակ և, ուստի
և անմիտ է և մինչ այն աստիճան յիմար,
որ երեակայել իսկ դժուար է։

Ուսուցչապետը խոժոռած նայեց նո-
րան։

—Ինչպէս երեւում է, չափազանց յոդնել
էք դուք, —շինծու սառնասրութեամբ նկա-

տեց նա։ Խորհուրդ կտայի երթաք ձեր
սենեակը և պառկէք։ Ձեր ոյժերն սպա-
ռել, մանաւանդ այժմ, ձեզ խիստ վնաս է։
Եւ ինչ կարիք ունէիք, անպատճառ գերեղ-
մանատուն գնալ, —և տեսնել, թէ ինչպէս
են գերեզման փորում, ես մինչև անդամ
երեակայել չեմ կարող և ոչ էլ հասկանալ։
—Ես գերեզմանատուն էի գնացել, —
ինչ որ անբնական ձայնով արտասանեց Լիօ-
նէլլ, —ոչ այն նպատակով, որ տեսնէի, թէ
ինչպէս են գերեզման փորում Առա հա-
մար, —այլ որպէս զի տեսնէի հէնց Առան
իրեն . . . Ես կարծում էի, որ նա կենդանի
է, —ես չգիտէի . . . Ես չէի կարող սպասել,
որ նա . . . —այն զարհուրելի բառն արտա-
սանել չկարողացաւ նա . . . բոպէաչափ սպա-
սեց, ատամներն ամուր իրար կցած, և յե-
տոյ հանդիստ շարունակեց, —դուք գիտէք,
ես արդէն քանի-քանի անդամ ասել եմ
ձեզ, —ես չեմ կարող ինձ հաշիւ տալ, թէ
ինչու համար է մեզ կեանք պարգևած, —
այդ վերջին դատապարտութեան, մահուան
սպասելու ժամանակամիջոցը . . . Ամէն ինչ,
կարծէք, կարելի է բացատրել, բացի դո-
րանից, —մինչև խոզ դուք անդամ չեք կա-

բող ասել ինձ այն ամէնն, ինչ որ ես եմ
ուզում իմանալ, —ինչ արած, մնում է, որ
ես՝ ինքս աշխատեմ պարզել ինձ համար
այդ հարցը, —նա ինձ չափաղանց հետա-
քրքրում է։

Դարձեալ տարօրինակ, կրկին անընա-
կան շեշտով էր հնչում նորա ձայնը, —նա
բարձրացրեց իւր փոքրիկ գլխարկը, ողջու-
նեց և յամրաքայլ տուն գնաց։

Ուսուցչապետն անհանդիստ յուզմամբ
դիտում էր և հետեւում նորան, կարծէք,
մի չարագուշակ բանի նախազգացում տի-
րեց նորան . . .

—Տարօրինակ երեխայ է, շատ տարօ-
րինակ, —մտածում էր նա ինքն իրեն, —
բայց միենոյն ժամանակ և ընդունակ և
խոհուն, և հնազանդ . . . Եթէ նորա մարմա-
կան ոյժերը բաւէին, նա ուժեղ, կարող
մարդ դուրս կգար. Փայլուն ապագայ է
սպասում նորան, —այս վատ է միայն, որ
առողջութիւնը թոյլ է . . . Նա կրկին ան-
ցաւ ծառուղին մեծ-մեծ քայլերով և յան-
կարծ կանգ առաւ, բարեսրտութիւնից բըդ-
խած ժպիտը լուսաւորեց նորա կնճռոտ գէմ-
քը։ «Զարմանալի բան է, —ճշմարիտ զար-

մանալի է, որ եռ սիրեցի այս երեխային։
Այս, իսկապէս սիրեցի։ Այդ, իհարկէ, և
օտարութիւն է ճշմարտանման չի թուայ, բայց
խոստովանում եմ պարզապէս, — սիրում
եմ։ Եւ նա ծիծագեց։ Առհասարակ ծիծա-
զը նորա գէմքին ոչ մի գրաւիչ արտայայ-
տութիւն չէր տալիս, բայց այս անգամ՝ նո-
րա մարտծ աչքերի մէջ փայլեցաւ մի բան,
որ յիշաւի կարելի էր գեղեցկութիւն
անուանել։



ԺՊ.

Յաղաղ պարզ գիշերը վրայ հասաւ-
լուսնեակ դեռ ևս չկար, — երկնքի կապու-
տակութեան մէջ փայլում էին միայն ասու-
զերը։ Հօրիզոնի եղեցածի վրայ ամէն ինչ
թափանցկէն մշուշի մէջ ընկզմուած, — որի
միջից ուրուների պէս սկին էին տալիս
հեռաւոր սարերը և այնպէս էր թւում, թէ
չէնց նոցա քնքոյշ գծագրութիւնների յե-
տեր թագնուած է կախարդական, անհա-
սանելի աշխարհը։ Անշարժ օդի մէջ տա-
րածուած էր անուշաբոյր կոռնկանի և հէնց
նոր հարած խոտի հօտը, մուգ-կանաչ դոյն
ստացած, բայց դեռ ևս հիւթեղ խոտերի
կանաչների տեսքի մէջ աշնան մօտենալու-
նշանների ինչ-որ ակնարկ էր նշմարւում, —

իսկ այդ բոլորի վրայ թագաւորում էր խորհրդավառը, անխոռով լուսութիւնը. կազմէք, բնութեան բազմաթիւր ձայները յանկարծ լոել էին նորա հրամանով, որ մի ժամանակ հրամայում էր լոել և ծովի ալիքներին և փոթորկին . . .

«Մեծ-տամ» մէջ, — գիւղում այդպէս էին կրչում այն տունը, որ ժամանակաւորապէս բռնել էր մ-ր Վելիսկուրաը, —նոյնպէս տիրում էր խորին լուսութիւն։ Ամէնքը քնած էին —միայն Լիօնէին էր, որ գեռ ևս քնած չէր։ Նա նստած էր իւր մահճակալի ծայրին, նորա լայն-բացած աշքերի մէջ քնի հետք անդամ չէր երեսում։ Նորա դէմքը այրում էր ներքին յուղումից, երեսում էր, բոլոր նեարդերը խիստ լարուած էին և ուղեազափազանց գործում էր, —բայց այն ժպափ մէջ, որ երեխնակի փայլում էր նորա կիսաբաց շրթունքների վրայ, ինչ-որ բոլորովին մանկական անոյշ բան էր երեսում . . . ինչ-որ անմեղ-ուրախառիթ բան կար . . .

Այդ երեկոյ՝ սովորական ժամին դնաց քնելու։ Նա հրաժեշտ տուեց հօրը, որ զբաղուած լինելով երեկոյեան լրագրի ընթերցանութեամբ, հայեանցի նոյեց նորան

և հազիւ գլուխ շարժումով պատասխանեց։ Հրաժեշտ տուեց և ուսուցչապետ կադմօն-հօրին, որը քնիքաբար սեղմեց նորա ձեռքը և աչք չհեռացնելով առաջը բաց դրած հաստ գլրից, անուշագիր, անդիտակցաբար խօսում էր ինքն իրեն, — «Հրաշալի է, այս, այն—իհարկէ։ Գնում էր քնելու, շատ լուեց, —երթաք բարի»։

Հրաժեշտ տուեց և Լիւսիին, որ իւր համար բոլորովին արտասովոր բան էր. սանակուղքների վերևից նա բարձրածայն գոչեց, — «Լիւսի, մնաք-բարեւ», և հեռու խոհանոցից լսուեցաւ զարմացած և հիացած Լիւսիի հաճելի ձայնը «Երթաք բարեւ, մ-ր Լիւնէլու։ Երբ եկաւ իւր ննջարանը, նա չհանուեցաւ, միայն հանեց կօշիկները և հանգարտ, առանց ազմուկի ու շատկի սկսեց քայլել սենեակում, —տարօրինակ, բոլորն էլ այնպէս օտարոստի մոփեր էին խռնւում նուրա դլասում, նորա, կարծէք, ձեան փաթիլ ներ լինէին, այնքան շուտ-շուտ էին յաջորդում միմեանց, —թաւալում, գլորւում էին, իրար էին կալչում, միանում, նորից բաժանուում, — բոլորովին ներհակ, օտարոստի և բազմազան ձեւեր ընդունելով . . . Նա հանդ-

ցրեց ճրագլը՝ Մի առանձին հաճոյք էր զդում վթութեան մէջ յածիլ, —մթութեան մէջ այնպէս կենսալից կերպով էր պատկերանում իւր առաջ այն բոլորն, ինչ որ երեւակայութիւնը թելագրում էր իրեն։ Օրինակ, նա երեակայում էր, որ այդ բոլովին իւր մօտն է իւր մայրը . . . որ նստած է այն միենոյն բաղկաթուի վրայ, որի վրայ նըստած էր այն ժամանակ, երբ իրեն այնքան գորովով ու քնքանքով գոկած, իւր «փոքրիկ» մանկիկ» էր անուանում . . . և մինչ այն աստիճան զօրեղ էր յուղումը, մինչ այն առափանի էր հասցել նա ինքն իրեն, որ լուս ծունկ իջաւ սիրեցեալ երեակայական պատկերի առաջ և արտասանեց. «Մայրիկ, մայրիկ-ջան, ես սիրում եմ քեզ։ Եւ միշտ կսիրեմ քեզ» . . . Նա սիմափուեցաւ — և յիշեց . . . այս բոլորը միմիայն իւր վառ երեւակայութեան խաղն էր . . . Նու հեռացել, գնացել է իրենից, — ինքն այժմ բոլորովին միանակ է . . . Դառն ժպտով նա տեղիցն ելաւ և լուսամուտին մօտեցաւ։ Երբ ակնապիշ նայում էր խաղաղ, աստղալից գիշերուայ մթութեան մէջ, նորան յանկարծ այն պէս թուեցաւ, որ այնտեղ՝ պարտիզում,

հէնց իւր լուսամուտի առաջ, երկնագոյն աչքերն իրեն յառած կանգնած է — ինքը՝ ժեսմինան . . . և շատ պարզ և որոշակի լուսում է նորա ձայնը, որ իրեն էր կանչում. «Լիլիա, Լիլիա, երթանք խաղանք միասինու։ — նա, հէնց այն է, կամենում էր շամապով բանալ պատուհանը, որ ցատկէ անակնունելի կերպով եկած, սիրեցեալ այցելուհու մօտ . . . բայց — ուշքի եկաւ . . . ժեսմինան մեռել էր, — նորա փոքրիկ գերեզմանը պատշաճ էր, — նա երբէք, երբէք այլ ևս չի կանչիլ իրեն . . .

Նորան այնպէս էր թէ այն պատուհանից, որի մօտ կանգնած էր ինքը, շատ պարզ տեսնում է նորան . . . և շատ ծանր թուեցաւ տեսնել այդ փոքրիկ, խըզնուկ սերտականը, որ մեն—մենակ կանգնած էր ընդարձակ, մոյզ—կանաչ սէզի վրայ . . . Նա սարսուաց, սթափուեցաւ — և երեսը շուռ տուեց։ Ապա բարձրացաւ իւր բարձր, փոքրիկ մահնակալի վրայ և նորից խորասուգուեցաւ իւր մտածմունքների մէջ։ Նա լուսում էր, թէ ինչպէս իւր հայրը ծանր, հաւասարաչափ քայլերով բարձրանում էր սանդուղներից, ինչպէս մտաւ իւր ննջարանը, փառ

կեց դուռը և կողպեց, յետոյ՝ ինչպէս ուշ սուցչապետը բարձրաձայն հազարով և հողաթափերը քստացնելով ուղղուեցաւ միջանցքի միւս ծայրում գտնուող իւր սենեալիները, ինչպէս հինաւուրց «պապի» պատի ժամացոյցը խփեց տասն և մէկը Ապա տիրեց խորին լուռթիւն, այն ազդու լուռթիւնը, որ, կարծէք, իւր մէջ է թագցնում տմէն բան, ինչ որ անբացատրելի, անըմբոնելի է . . . Լիօնէլն ամբողջապէս այդ լուռթեամբ համակուեցաւ, մինչ այն աստիճան, որ հէնց այդ լուռթիւնը նորան զարհուրելի թուեցաւ . . . նա թռաւ մահճակալից, վառեց ճրագը և, նեարդային յուզմամբ չորս կողմը գիտելով, կարծէք երկիւղ կրելով թէ մէկին կտեսնէ, շտապով մօտեցաւ պատի մէջ շինած պահարանին: Զգուշութեամբ բաց արեց և, բարձրանալով աթուի վրայ, վերին գարակից հանեց մի փոքրիկ փաթեթ՝ այն մետաքսեայ գօտիկը, որ մայրը իւր վերջին հրաժեշտի ժամանակ նորան էր տուել ի յիշատակ: Բաց անելով լայն, կապտագոյն ժապաւէնը և բոպէաչափ, մի տեսակ մտախոհութեամբ դիտելով նորան,— նորից փաթաթեց, դրեց իւր բաճկոնակի

գրպանը, հագաւ կօշիկները, տուաւ վառ մոմով աշտանակլը, հաղիւ-հազ բաց արեց իւր ննջարանի գուռը և, շունչը պահած՝ սկսեց ականջ դնել . . . ամէն ինչ հանդիսատ էր և խաղաղ . . . տան մէջ ամէն բան ընկղմուած էր խոր քնի մէջ . . . Արագ, առանց ձայն համեկու, սանդուզներից վար վագեց: Դասարանի գուռը բաց էր և երբ նա այդ գուռն ևս փակեց իւր յետեից, ազատ շունչ քաշեց, կարծէք, մտադրեալ նպատակին արգէն հասած էր համարում իրեն . . . «Դասարանում» աւելի լոյս էր, քան իւր սենեակում, ծառերը նորա պատուհանի առաջը չեին բւնում և մեծ ապակիների միջից աստղերն իրենց արծաթագոյն փայլով լուսաւորում էին: Աշտանակլ դնելով այն պարապելու սեղանի վրայ, որի մօտ այն քան սրտամաշ ժամեր էր անցրել ձանձրալի աշխատութիւնների վրայ, Լիօնէլն այն տեղից թուղթ ու գովիչ հանեց և սկսեց գրել: Ամենայն հոգատարութեամբ մի թերթ գրելով, նոյն հոգատարութեամբ ծալեց, գրեց ծրարի մէջ և հասցէն գրեց. յետոյ սկսեց մի ուրիշը,—և երբ երկրորդ նամակն ևս պատրաստ էր, երկու ծրարն ևս կողք-

կողքի դժեց սեղանի վրայ և մի ահմեղ ինքնաբաւականութեամբ նայեց գեղեցիկ, պատուական ձեռքին, որով հասցէներն էին դրուած, — իմ նայր Զօն Վեշիկուրափին. Ուստիցապետ Կարմօն-Հօրին:

— Այս, ասաց նա կիսաձայն, հեղիկ ժպտալսվ, այս բարբար, կարծես, այնպիսի ձեւ է ստանում, որ իրը թէ ես փախչել եմ ուզում: Բայց իսկապէս, չէ որ աս եւ նսյնն է . . . իհարկէ, ես պատրաստում եմ փախչելու: — Նորա ժպիտն աւելի վայլ առաւ: Յիշում եմ, Վիլի Մօնտողը խորհ հուրդ էր տալիս չվհատիլ, այլ աւելի լու կանեմ՝ եթէ փախչեմ: Իդէպ — չէ որ ես գետ Վիլիին իւր Հոմերոսը չեմ ուզարկել: Նա ելաւ, գարակից առաւ գիրքը, փաթաթեց թէր թղթի մէջ, հասցէն գրեց և նորից գրին առաւ՝ երրոշի նամակը պատրաստելու համար:

— Սիրեցեալ Վիլի, գրեց նա, Զեր մեկնելու ժամանակ մոռացմամբ այստեղ թողիք Զեր սիրելի գիրքը — Հոմերոսը, վազուց կամենում էի Զեր ուզարկել, բայց միշտ էլ մոռանում էի: Այժմ, ինձնից յետոյ, կարող է կորչիլ, ուստի և յանձնում

եմ ուսուցչապետ Հօրին (նա պատուական ծերուկ է), որ Զեր հասցնէ: Ենորհակալ եմ Զեղնից ամէն բանի համար: Վիլի, Դուք շատ բարի էիք իմ վերաբերութեամբ, այդ ես միշտ յիշում էի և կարծում եմ, որ երրիք չեմ մսանայ . . . իմ մասին, այժմ, դուք չպէտք է անհանգիստ լինիք — լաւ եմ: Ենորհապարտ և ձեզ սիրող

Զեր Լիօնէլ:

Այս նամակն էլ ծրաբի մէջ դնելով, նա զրեց կապած զրբի վրայ և հենց այլտեղ, մի առանձին թերթիկի վրայ, ուսուցչապետ Հօրին մի քանի բառ զրեց, իմնգրելով նուրան գիրքն ուզարկել ըստ պատկանելոյն:

— Ե՞, այժմ — ամէն ինչ կատաշեալ է, ասաց նա, սրբելով զրիշը և թանգարամանը տեղը դնելով: Մայրիկին զրելու կարիք չկայ, նամակս նորան չեն հասցնիլ:

Վեր կացաւ, մօտեցաւ պատուհանին և բաց արեց: Հրաշալի գիշեր էր: Օգի մէջ ոչ մի ձայն չէր լուսում, ամէն ինչ մարած էր և մինչ այն աստիճան լուսութիւն էր տիրում, որ նոյն իսկ ալիքների ծփանքը չէր լուսում . . . Այս գիշերներից մէկն էր, երբ սշբազան ահօթի պէս ուրախութեան իւզով լիքը,

Հաւատացող սիրաը հոգին թեաւորում և հոդիացած՝ հրեշտակային օրհներդներ է կրկնում, —երբ Աստուծային աշխարհի գեղեցկութիւնը ոգիացած է լինում և մարդզգում է, որ բարի է ապրել, բարի է աշխատել, և բարի է սիրել, —որ Տիրոջ բոլոր գործերն սքանչելի են: Բայց այդ կենսաձիր գիշերն ա՛յդ չեր թելադրում այդ հրաշալիքը գիտող խեղճ մանկանը . . . Նա բնութեան մէջ միայն հակասութեան արհաւիրքն էր տեսնում, —հակառակ, միշտ մաքառող ոյժերի պայքարն ու ոխը, արարածների անընդհատ, աննպատակ գոյացութիւնն էր տեսնում որոնք առանց որ և է նպատակի կեանք էին ստանում և նոյնպէս աննպատակ կերպով նորից անդոյութեան խաւարը գտնում:

«Ազատ մտածողութեան» հաւատապատումից (Եղիար Մօնտէյ), վերջին տասն տարուայ ընթացքում Թրանսիայի համարեաբոլոր տարրական գալուցներում տարածուած և մտցրած այդ բարոյագիտութեան կանոնագրքից, «անաստուածութեան» օրէնքանոնագրքից, «անաստուածութեան» օրէնքով կրթուած գժբաղդ փոքրիկ արարածները իմանում են, որ «մարդկային կրքերը

նորա ամենայուսալից առաջնորդներն են» և որ «Աստուած մի խրտուիլակ է, որ հնարել են տէրտէրները թուլամիտ մարդիկներին երկիւղ ազգելու համար»: «Եթէ այժմ մի անգամ լնի միշտ արդեն ապացուցուած է, յայտնում է հաւատապատումի հեղինակը, որ նոգին մի անդեմ եռ վախճանական բան է, —ապս ապագայ կեւաճքը գոյութիւնն ըունի»: Մարդուս սարսուռ է տիրում, երբ մտածում է, թէ մինչ ուր կարող է հասցնել այդ «նոր» հաւատոյ գաւանութիւնը . . . Որպէս զի փոքր չափով գոնէ գաղափար ունենանք այն ապականող և կազմալուծող ոյժի մասին, որ ունի նա, բաւական է, եթէ հարևանցորեն գոնէ ծանօթանանք նամատի ուսումնարանական շրջանի խորհրդի վիճաբանութիւններին, որի անդամները հետեւեալ որոշումն են արել. — «ի նկատի ունենալով, որ անչափահամների և երեխաների մէջ ինքնասպանութեան թիւը (որի մասին մինչև այժմ գաղափար անդամ չունեինք) համար է մի սարսափելի գումարի՝ տարեկան 443 հոգու, և ի նկատի ունենալով գարձեալ երեխաների շրջանում անհաւատալի չափերով տարածուող բարքերի ապա-

կանութիւնն ու մոլի ախտերը, — մենք հանգիստոր երդումն ենք տաշխ, որ այսուհետեւ այս շրջանի բոլոր դպրոցների մէջ բարոյականութեան ուսուցումը ձեռք-ձեռքի տուած կերթայ կրօնի ուսուցման հետ, — որ սու Ասոռուած ունեցած պարտաւորութիւնների կատարումը իրա հիմք կծառայէ մարդկային միւս բոլոր պարտաւորութիւնների նկատմամբ»։ Այս է ահա նաևաի ուսումնարանական շրջանի իմաստուն որոշումը։ Դժբաղդաբար այդ օրինակին հետեւցին ֆրանսիայում շատ ու շատ տեղէ Համարեա ֆիացած բոլոր շրջաններում «ազատ մտածողութեան» հաւատապատումը շարունակում է իւր աւելիչ գործը, — մարդուն դարձնելով մի ինչ-որ վայրենի, անսանձ գաղանից աւելի վատթաջ էակ և այդպիսով աղդային կործանումն պատրաստելով։

«Ազատ մտածողութեան» հաւատապատումը մուտք է գործել այժմ՝ նաև Անդիմայի մի քանի քաղաքային դպրոցների մէջ, որովհետեւ այս նոր վարդապետութեան քարոզիչները ոչնչով պակաս չեն փրկութեան բանակի եռամնդուն և նախանձախնդիր անդամներից իրենց նենդամիտ վարդապետու-

թիւնը տարածելու արուեստի մէջ, — այնպէս որ այժմ՝ աստուածավախ Անդիմայում յաշակակի կարելի է հանգիստել այնպիսիներին, որոնք իբր ճշմարտութիւն են ընդունում այդ սրբապիղն, մահացնող, սուտ վարդապետութիւնը, որ հետեւեալ բառերի մէջ է բովանդակում։ «Քանի որ այժմ ապացուցուած է, որ հօգին մի ինչ-որ անդէմ և վախճանական բան է, — հետեւարար ապագայ կեանք գոյութիւն չունի»։ Սակայն «կենդաննի» հօգին չէ կամենում խոնարհուիլ այդպիսի մի վճռի առաջ . . . և այժմ, գուցէ, առաւել քան մի այլ ժամանակ, նա պահանջում է, որ իրեն ձանաշեն և՛ ընդունեն։ Եւ հէնց իւր անմահութեան շնորհիւ է, որ կանգնած անգիտելիի նախադասն առաջ, բարձրածայն ողբում է. «Բացէք, բացէք, Յետ քաշեցէք ծածկոյթը, թողէք տեսնեն այն, ինչ որ վազուց նախագուշակել էի, ինչ որ գգում եմ, — բայց որն արատայայտել չեմ կարող» . . . Որովհետեւ հոգին, ինչպէս երբեմն Պաիմեան, զգում և Ասոռուածութիւննիւ, — և, երկրային անգիտութեան խաւարի մէջ, սրտատրոփ ջջափելուն է ձգուում այն անտեսանելին, որի

թար ոճիրի համար, որովհետեւ ասած է, «Մի վախենաք նոցանից որո՞ք սպանում են մարմինը և յետոյ ոչինչ անել չեն կարող, — այլ վախեցէք նորանից, որ սպանելուց յետոյ իշխանութիւն ունի գեհենի մէջ ձգելու»։ Հոգի սպանելն այժմ մի տեսակ սիրելի զբաղմունք է դարձել, այսպէս կոչուած, «յառաջադէմ մարդիկների» համար, տարածելով իւր վաս և կորստաբեր՝ ազգեցութիւնը մամուլի միջոցով։ Նոքա արդէն իրենց նպատակին հասած են համարում, երբ յոռետեսութեան և անաստուածութեան դարշանքի մէջ թաղուած ընթերցողն այլ ևս չետեսում Աստծուն իւր անվերջ գթարտութեամբ, այլ տեսնում է միայն անվերջ չարիք, վերին աստիճանի ցաւալի է, որ չկայ մեր ժամանակ այնպիսի մի հակաքրիստոնէական հեղինակ, այլ թէ կին, որ դրաւած մինէր հասարակութեան համակրաքը և վատահ չինէր մատակալու միայն ամենաբարձր փիլիսոփայութեան բանալին»։ Վայ նոցա, որոնց վարդապետութիւնը խափանում է մատաղ հոգիների գերակային ձգտելու զարգացման աճելութիւնը, — նոքա առաւել վատթար են քան մարդասպանները, և պատասխանատու կլինին մարդասպանութիւնից առաւել վատ-

մէջ արդէն նա իւր ուրախութիւնն է դառել։ Քայց գիտութեան լապտերի մէջ ձէթը պակաս է, նորա աղօտ բոցն անզօր է նոր լոյս սփռելու յաւիտենական լուսափայլ շողերի վրայ, — որի ճառագայթների մէջ նա ինքն ըստ ինքեան մարում, անհետանում է... Փոքրիկ ի լիօնէին աչքերը յառած հեռաւոր աստղերին, որոնք իբր ոսկէ-աչեր երկնքից իրեն էին նայում, այդ ամենը աղօտ կերպով գիտակցում էր — և նորա «անմահ» հոգին ամեն թափով ձգտում էր իւր հարցերի պատասխանն ստանալ, — բայց անաստուածութեան իմաստակութիւնները չեն կարող գոհացնել նորան, տալով այն, — այլ մնարոն, ի վերուստ լուսաւորուած միաքը միայն կարող է գոհացում տալ զարթող հոգու պահանջներին, — և շատ արդարացի է խտալական ասացուածը։ «Ի՞նչն ամենաբարձր փիլիսոփայութեան բանալին»։ Վայ նոցա, որոնց վարդապետութիւնը խափանում է մատաղ հոգիների գերակային ձգտելու զարգացման աճելութիւնը, — նոքա առաւել վատթար են քան մարդասպանները, և պատասխանատու կլինին մարդասպանութիւնից առաւել վատ-

այն եղբակացութեանն է գալիս, թէ «ազատ մոտածովութեան» հաւատապատումն ոյժ է ստանում . . . Ո՞վ գիտէ, գուցէ և մենք ես, մեղ երեխաների այն հարցին՝ թէ,— ով է ստեղծել երկինքն ու երկիքը, այսպիսի պատասխան կը տանք.— Ոչ երկինքը, ոչ ել երկիքը ստեղծուած չեն եղել,— չկայ նախապատճառ, որովհետեւ այն ամէնն, ինչ որ գիտակիսն ճանապարհով հաստատել չէ կարելի, — գոյութիւն չունի . . .

Հենց այդուեղ էր կենդրոնացած Լիօնել մանուկի ամբողջ գժբաղդութիւնը. նա չէր կալուդ «գիտական եղանակով ապացուցանել» այն, որի ներկայութիւնն զգում էր և չէր կարող հրաժարուիլ այն անշօշափելի «բանից», որ իւր մէջ էր ամփոփուած. — ինքն զգում էր այդ, — ամէն ինչ իրեն համար:

Երեխան շարսնակում էր մոտախոհ գիտել աստղալից անհօնութիւնը և ինչ որ անսահմանութեան, — ստեղծագործութեան անսահման գեղեցկութեանն ու սքանչելիքի, և նորան ստեղծագործող Սիրոյ տպաւորութիւնը հետզհետէ տիպում էր նորա հոգուն և, ինչպէս մի այլ աշխարհի աւետիք, այն-

տեղ՝ իւր հոգու մէջ—խաղաղութիւն էր սփոռում:

— Այն, մեղմիկ արտասանեց նա: Որ չափ հրաշալի, որչափ անսահման գեղեցիկ է այս ամէնը . . . և երբ մոտածում եմ, որ շուտով, շատ շուտով այդ բոլորը ես ինքս կիմանամ, հրաշալի չէ հենց և այս: Եւ յանկարծ ինձ այնտեղ կհանդիպէ իս սիրելի Ժեսմինան . . . ով գիտէ . . . գուցէ լաւ չէ, որ ես կամենում եմ ամէն րան իմանալ շուտով. . . բայց, ճշմարիտ, այսպէս ապրել ես այլ ևս անկարող էի—սովորել, անդադար սովորել՝ ամէն օր ամէն անպէտք բան և միայն մի րանի մասին երբէք, ելուրէք ոչինչ չլսել . . .

Յանկարծ նեարդային յուզմամբ նա դարձաւ և աչքի անցրեց սենեակը. տառզերի ազօտ լցոն անհամաշափ կերպով լուսաւորում էր այդ սենեակը, որի մի մասը մնում էր խաւարի մէջ. մժաղդած, մնայլ կազնի առասատղի գերաններից մէկից կախած մեծ կեռերից մէկը, որ ներքից լուսաւորուած էր մոմի տատանող լոյսով, կարծէք, միւսներից աւելի ուշագրաւ էր և Լիօնելի ուշագրութիւնը դրաւեց: Ինչոք

առանձին հետաքրքրութեամբ մօտեցաւ նուրան, բարձրացաւ ամոռի վրայ և սկսեց դիտել, զննել կեռը՝ ձեռքով շօշափելով, — տիտուր, մտախոհ, հաղիւ նշմարելի ժպիտ անցաւ նորա շրթունքների վրայով, մտաբերեց սքանչելի կլեվերլին—և այն անցուորը, որ կախուել էր հնացած նուարտանի տակ, մտաբերեց և ծերունի նաւաստիի խօսքերը՝ «լորանից աւելի հեշտ բան չկայ—պէտք է միայն մեխ ու թոկ» . . . Եւ մեղմիկ, մի առանձին քննչանորով հանեց նա բաճկոնակի տակից իւր մօր վերջին ընծան,—իւր «փոքրիկ-մանկան» հիմնալի կապտաւոն գօտիլը, — բոլորովին բաց արեց, ձգեց, մի ծայրը կապեց մեծ կեռին, միւս ծայրին օղակ շինեց, և ամոռից իջաւ, բայց աթոռը թողեց՝ կախուած, մեղմիկ օրօրուող երիզի տակ . . . յետոյ երկշատութեամբ դիտելով չորս կողմը, ճրագը հանգցրեց . . . սենեակի կիսալսաւարից, որտեղ ինքն էր գտնւում, նորա հայեացքը բնազգօրէն ընկաւ լուսամուտից ներս թափանցող, հաղիւ առկայծող լոյսի շերտի վրայ, — դայթելով մի քանի քայլ արեց դէպի առաջ, — այնտեղ, որտեղից երկում էին բաց երկնքի մի կտորը և մեղ-

միկ լուսաւորուող աստղերը—և չոքեց: Զեռաները խաչելով, իւր գժգոյն, հայցող, բոլորովին յուզուած փոքրիկ դէմքը բարձրացրեց դէպի գիշերային վեհ լուսաւորները, որոնք իրենց խորհրդաւոր շրջանն էին կատարում երկնակամարի վրայով, — և նորա վշտահար, ցաւող և կարտուող սիրտը բացուեցաւ աղօթքի խօսքերով . . .

— Ամենակարող Հիւլէ, մեղմիկ սկսեց նա, ես աղօթել եմ կամենում, թէև երբէք աղօթած չեմ և ես չգիտեմ՝ թէ ուրիշներն ինչպէս են աղօթում . . . Գուցէ դու չես կարող լսել ինձ, և եթէ կարողանայիր անշգամ, գուցէ, չկամենայիր իսկ, — բայց այս նուամենայնիւ, ես զգում եմ, որ կայ մէկը, որի առաջ պիտի բանամ սիրտ . . . 0°, սիրելի Հիւլէ, եթէ վերջ ի վերջոյ յայտնուի, որ գու ամենևին Հիւլէն չես, — այլ Աստուած, կենդանի, բարի, սիրող, դժառաստ մի Աստուած դէպի իւրաքանչիւր տանջուող մարդ, որոնց նա է ստեղծել, — ապա դու ինձ ևս կխղճաս . . . դու կիմանաս, թէ ինչն եմ գալիս քեզ որոնելու . . . չէ՞ որ ես մեղաւոր չեմ, որ այստեղ ապրելն ինձ համար դարձ հուրելի է, որ ես այնպէս ձգտում եմ:

իմանալու, թէ այս աշխարհիցս առաւել լաւագոյն մի բան կայ, այստեղից՝ ուր մենք երբէք չենք կարողանում պահպանել մեզ համար այն, ինչ որ սիրում ենք, ուր ամէն ինչ ենթակայ է մահուան և մոռացութեան . . . 0՝, եթէ դու Աստուած ես, ես գիտեմ, որ դու կիսդաս ինձ Ես միշտ այնպէս ցանկանում էի հաւատակ քեզ ինչպէս—Աստուծոյ, և ինչպէս կսիրէի քեզ,—եթէ նորս չարդելին ինձ . . . իսկ եթէ դու, յիրաւի, ուրիշ ոչինչ չես բացի Հիւլէից, ես չեմ հասկանում, ինչի՞ ես պէտք դու, և այնուամենայնիւ ինձ թւում է, որ թեզ ես ստեղծել է մեկը . . . Եւ ահա, այդ պիտի իմանամ—և կիմանամ . . .

Նորա ձայնը ընդհատուեցաւ, մի փոքր լուց և յետոյ նորից շարունակեց.

—Այս բոպէխս չեմ կարող ասել ինչ չու—բայց զգում եմ, որ Դու պէտք է Աստուած լինիս... Աստուած բարի, Յաւիսենական, կենդանի . . . Դու գթառատ կլինիս զէպի ինձ և ինձ կտանես ուզիդ Քեզ մօտ և ցոյց կտաս, թէ ուր են Քո Հրեշտակ ները. Եւ եթէ որ և է վատ բան եմ արել, —ես կարծում եմ, որ Դու կներես. չէ որ

Դու գիտես, որ ինձ սովորեցրել են չաւատալ Քեզ։ Խղճալի են այն մարդիկը, որոնք ապացուցանում են, որ Դու գոյութիւն չունիս. — նոքա անշուշտ մի բան կդդան, երբ մեռնելու ժամանակները կհամնի։ Կը ներես այն ժամանակ Դու նոցա այն բոլոր չարիքը՝ որ հասցրել են ուրիշներին, որովհետեւ մենակ ես չեմ; այլ շատ, շատ ուրիշներն ես, որոնք տանջւում, լալիս և տառապում են նոցա խօսքերից։ — Ահա, խեղճ Ռուբենը, նա լալիս է այլ կերպ, — նա Քեզ է կոչում և հաւատում է, որ ուրախութեան լուսաւոր աշխարհում։ Դու նորա Ժեսմինային իբեն կդարձնես։ Եւ այսպէս, ոչ թէ Հիւլէին, այլ—Աստուածն եմ վերառաքում իմ առաջին և վերջին աղօթքո՞յ այս աշխարհից։ — Տէր Աստուած, անսես շառնես իմ մայրիկիս։ Երբ ես Քեզ մօտ կդամ, ցոյց կտաս, թէ ինչպէս պէտք է խնամեմ նորան։ Եթէ Ժեսմինայի պէս ես էլ պիտի Հրեշտակ դառնամ, — այն ժամանակ կտրող կլինէի միշտ իմ խեղճ մայրիկիս հետ լինել և պահպանել նորան չարիքից... ինքո անկարող եմ այս բանը յաջողեցնել, — և ես կարծում եմ, որ ամէն մարդ ինքն

իրեն ոչինչ չէ կարող—միայն Դու ամէն ինչ
կարող ես,—օգնիր ինձ պահպանել մայրի-
կիս նորա չեխ կամենում, որ ես Քեզ—
Աստուած ճանաչէի, ես զգում եմ Քեզ,
բայց չգիտեմ; կարող եմ հաւատ ընծայել
իմ զգացողութեանս—և ահա՝ այդ եմ կա-
մենում իմանալ,—և ուրիշ ճանապարհ—
չկայ... Դու, Ով որ էլ ես, Որ ստեղծել է
աստղերն ու երկինքը, արեն ու ծովը, ծա-
ղիկներն ու բոլոր գեղեցկութիւնը— Քեզ
մօտ եմ գալիս... Եթէ Քո արարածներից
ոչինչ չէ կորչում, ապա թոյլ չես տայ, որ
ես ես կորչեմ... Դու կորսնես ինձ—և ես
կդժնեմ Քեզ... Ապրել այսպէս՝ զարհու-
րելի է ինձ համար... իսկ Քեզ մօտ գալ՝
ես չեմ զարհուրում, Տէր...

Մի առանձին ջերմեռանդութեամբ էին
հնչում այդ խօսքերը գիշերային խաւարի
մէջ և թւում էր, թէ մէկը ընդգրը-
կում և երկնային խորութեան անհունու-
թիւնն էր տանում—հասցնում այդ բա-
ռերը... իսկ լիօնէլը գեռ ևս շարունակում
էր չոքած մնալ, աչքերը յառած պայծառ
աստղերին, որոնք նոյնքան պայծառութեամբ
արտացում էին նորա աչքերում...

—Մի բան էլ առեմ դարձեալ, մոտա-
խոհ շնչաց նա: Այն, կասեմ այն, ինչ որ
կասէր անշուշտ փոքրիկ ժեսմինան, եթէ
նա այս բոպէիս այստեղ լինէր:


Պայծառ ժպիտը,—հրեշտակային ժպտի
նախագուշակը—սրբազն ուրախութեամբ
լուսաւորեց նորա նիշարած, դժգոյն դէմ-
քը,—և մեղմ, հեղիկ ու քնքոյշ ձայնով նա
որոշակի կրկնեց սրտադրաւ տողերը.—

Դու, որ մանկանց կոչում էիր դէպի Քեզ,
Դու, ով Փրկիչ, տես ինչ խեղճ ու փոքր եմ ես,
Աղաչանքիս ձայնին, Յիսուս, Դու լսի՛,
Ով քաղցր Յիսուս, ինձ էլ Քեզ մօտ ընդունիր:

Յետոյ, կրկնի՝ մի անգամ ևս նայելով
աստղերին ու երկնքին և քնէած աշխարհի
ամրողջ գեղեցկութեան վրայ—նա ելաւ և
սողոսկաց, մօտեցաւ այն տեղին, որտեղ
վերից վար՝ առաստաղից կախուած էր լայն,
կապոյտ երիզը նա կանգ առաւ, յառած
նայեց վեր—մտարերելով, որ դուռը բոլո-
րովին վակած չէր, մօտեցաւ նորան, վակեց
և կողպեց բանալիքով,—և այդ փոքր երե-
խան, տանջուած կեանքի զարհուրելի գաղտ-
նիքի ձեռքին, աներկիւղ ոտք դրեց այն
ճանապարհի վրայ, որ, ինչպէս յոյս ունէր,

ողեաք է տանէր իրեն այն Աստուծոյ մատ,
Արին ծարաւի էր իւր հոգին, Արին մաշդա-
կային ամբարհաւաճ գոռօզութիւնն ու չա-
րամտութիւնը աշխատում էին գորս կոր-
պել նորա սրտից:

Լսուեցաւ մի խուլ ձայն . . . կարծէք
Գլորուող աթոռի ձայն լինէր . . . խոկ յետոյ
— այլ ևս ոչինչ չվրդովեց տիրող լոռութիւնը,
— միայն մի չարագուշակ բան անցաւ և, կար-
ծէք, սառնութիւն փշեց իւր չորս կողմը . . .
այդ՝ աներեցիթ թռիչքով սաւառնող մահա-
մեծ Հրեշտակն էր, որ վերացաւ . . .



ԺԵ.

Առաւոտ էր: Դեռ շատ կանուխ էր:
Լեռները, գաշտերը, արտերը — ամէն ինչ
ողողուած էր ոսկեհուր շողերով, և զուարթ
զեփիւուը մի առանձին կենդանարար զովու-
թիւն էր ուզզում ծովից թարմ, նոր ծագող
առաւոտեան: Ամէն ինչ կենսալիր սրախու-
թեամբ լցուած էր թւում, զուարթ ձայ-
նում՝ զնդում էին խոտհարների գերանդի-
ները, ուրախ հնջում էր նոր հարած խոտը
եղաններով ցրցուղ երիտասարդների և աղ-
ջիկների ծիծաղը, — ուրախ բղզում էին մեռ-
զուները և ճռուսդում թռչունները:

Երբ մ-ը Վելիսկուրովը սեղանատուն
իջաւ առաւոտեան թէյ վայելելու, նա մինչ
այն աստիճան համակուեցաւ այդ կենսու-

բախ առաւտեան ազդեցութեամբ, որ ինքն անձամբ բաց արեց պատշգամբի գոմերը, որպէս զի այն կեհսատու օդը, որ այնպիսի ալիների բաւականութեամբ չնշում էր, կարողանար և ներսը՝ սենեակները թափանցել:

Այս անդամ նա դոհ էր երեսում բնութեան կարգաւորութիւնից և երբ, խիստ լաւ տրամադրութեամբ, կամենում էր թէյի սեղանի մօտ նստել, յանկարծ սեղանատուն վաղեց Լիւսի աղախինը և յուզումից դուզացող ձայնով, անկապ բառերով յայտնեց, որ միստը Լիօնէլլ իւր ննջաբանում չէ և որ անկողինը մնացել է առանց ձեռք տալու, իսկ «գասարանի» դուռը բանալիքով կողպած է . . .

—Ախ, պարսն, այս անդամ արդէն հեծկտալով շարունակեց նա, ինձ այնպէս է թւում, որ մի սարսափելի բան է պատահել . . . չէ որ վերջին ժամանակներս նա իրեն լաւ չէր զգում . . .

—Ո՞վ չէր իրեն լաւ զգում: Ի՞նչ է պատահել, անհամբերութեամբ հարցրեց ու սուցչապետ Կաղմօն-Հօրը, որ այդ բոպէին երեեցաւ յանկարծ դռան շէմքում:

Մը Վելիսկուրով դարձաւ դէպի նա

և, բարկութիւնից կապտելով, ասաց.

—Բանից դուրս է գալիս, որ Լիօնէլն իւր սենեակումը չէ և, ինչպէս ասում է աղախինը, նա չէ էլ քնել իւր ննջաբանում: Պարզ է,—այդ բոպէին նորա աչքերը փոքրացան և օձի աչքերի տեսք ստացան և չարագուշակ եղանակով փայլեցին,—որ նոհետել է մօր օրինակին—իսախել է:

—Դատարկ բաներ են, խստութեամբ նկատեց ուսուցչապետը: Այդպիսի երեխայ չէ: Նա չափազանց վեհանձն է . . . չափազանց աղնիւ է . . . Ամէնից հաւանականն այն է, որ գիշերը նա անքուն անցնելուց յետոյ կամեցել է փոքր ինչ թարմանալ, և դուրս է եկել մի քիչ զրօննելու մինչեւթէյը.—Ի՞նչ մի զարմանալու բան կայ այս տեղ:

—Աղախինն ասում է, որ «գասարանի» գուռը բանալիքով կողպած է, յօնքերը կիտելով շարունակեց մը Վելիսկուրալ և, գառնալով երկիւղից իրեն կորցրած Լիւսին, հարցրեց,—բայց ինչպէս է փակած, ներսից թէ դրսից, բանալին հանած է:

—Ոչ, պարսն, բանալին փականքի մէջն է և դուռը ներսից է կողպած, և զարմա-

նալին հենց այդ է։ Ուրքան դուռը ծեծեցի,
որչափ ձայն տուի—իզուր։ Զէ որ անհաւա-
նական չէ, որ միստը Լիօնէլը նորից ու-
շաթափուած լինի—և այժմ ընկած է այն-
տեղ, բոլորովին միայնակ . . . 0՝, դա սար-
սափելի բան կը լինէր . . . —և արտասուրը
հոսեց նորա աշքերից։

—Հեռու ճանապարհից, գրդոռուած բա-
ցագանչեց ուսուցչապետը։ Թողէք, վերջու-
պէս, անց կենամ։ Ինքս այժմ կհետախու-
զեմ, թէ ինչ է նշանակում այս բոլորը։ Այդ-
դուռը ես լաւ եմ ճանաչում, փականքը
հազիւ է փակւում, —շուտով մի մուրճ բե-
րէք, գժուար չի լինիլ բաց անել։

Արագ քայլերով դիմեց գէպի դասա-
րան—սենեակը, —Վելիսկուրտը հետեւում էր
նորան, —Լիւսին վազեց ջերմոցից մուրճ բե-
րելու և շուտով եկաւ պարտիզապանի հետ
միասին, որ բացի մուրճից վերցրել էր և
այլ փականական գործիքներ։

—Լիօնէլ, բարձրածայն կանչեց ուսուց-
չապետը։

Պատասխան չկար։

Միայն լուսթեան այդ պահուն լա-
րուած լսողութիւնը կարող էր լսել ինչ—որ

տարագնաց թուչնակի քննոյշ, հեռուից լսուող
դայլայլիկը . . . իրեն համար մի անհասկա-
նալի երկիւղով պաշարուած, ուսուցչապետ
Կադմն-Հօրը նայեց Վելիսկուրտին։

—Աւելի լաւ չի լինիլ, որ դուք դնաք
այստեղից, շշնչալով հարցրեց նա, —եթէ,
յանկարծ, մանկանը մի . . . բան պատահած
լինի . . .

Բայց Վելիսկուրտը չթողեց, որ նա
վերջացնէ։

—Հաւատացէք, որ անհանդստանալու
բան չկայ, —ասաց նա ժպտալով ակամայից,
ինչ—որ չար ժպտավ. —դա ուրիշ ոչինչ չէ,
բայց եթէ մի խարս, —նա իւր մօր արժանա-
ւոր զաւակն է և ուրիշներին փառաւոր
կերպով խարելու բոլոր շնորհքը ժառանդել
է. նա դուռը փակել է միայն նորա համար,
որպէս զի մեզ շփոթեցնէ, —իսկ ինքը փա-
ռաւորապէս լուսամուտից դուրս է թուել։
Ամենահաւանականն այս է։

Ուսուցչապետը ոչինչ չպատասխանեց,
այլ պարտիզապանի հետ գործի կողաւ. յիւ-
րաւի, դուրս եկաւ, որ փականքը հին է
եղել և կոտրելու համար շատ էլ չարչարանիք
պէտք չէր, —մի քանի բողէից նա դուրս

թռաւ տեղից և դուռը զրիմկոցով յետ բացաւեցաւ—դորան հետեւց լիւսիի սրտակոտոր ձայնը . . . և . . .

—Աստուած իմ, Աստուած իմ, յուս սակառը հեծեծում էր ուսուցչապետը, դիմելով այն Աստծուն, որի գոյութիւնն այն պիսի. յամառութեամբ բացասում էր . . . Վելիսկուրտ—դուրս գնացէք, հեռացէք . . . մի նայէք, ախ, — մի նայէք . . . երեխան կախուել է . . .

Բայց Վելիսկուրտը, հրելով նորան, սենեակ մտաւ—և կանգնեց տեղն ու տեղը . . . զարհուրելի պատկեր նկարուեցաւ նորա աշքի առաջ—մի տեսարան, որը տեսնելու ժամանակ սարսում և լալիս են Աստուծոյ Հրեշտակները . . . մանկան անշունչ գիտկը կախուած էր առաստաղից լայն, քնքոյշկապտաւուն երիզով . . .

«Եյս երեխան—միթէ իւր որդին էր ինը որդի՞ն—որի կամքը, կարծում էր, թէ կարողացել է ամբողջապէս նուաճել . . . իւր որդին,—որից, իւր անձնական փառասիրութեան յագուրդ տալու համար, մտադիր էր մոքի զարդացման և դիտութեան ճուխութեան կողմից մի արտաստվոր մարդ-

պատրաստել, — և ակամայից յիշեց իւր կնոջ խօսքերը. «վաղ թէ ուշ, բայց նա կազմուի ձեզնից»:

Նա կարծես քնի մէջ էր լսում լիւսիի բարձրաձայն հեծկտանքը — և բոլորին սառնարիւն կերպով հետեւում էր ուսուցչապետի իւրաքանչիւր շարժումին, որ պարտիզանի օգնութեամբ հոգատարութեամբ յետ արեց մետաքսեայ, կապտաւուն երիզը, որից կամաւոր կերպով մահուան դորձիք էր պատրաստուած, և ապա խնամքով ու քնքութեամբ գետնի վրայ դրեց խեղճ երեւխայի անհնչացած գիտկը: Դողդոջ, ծերացած ձեռքով ուսուցչապետը շօշափեց այն մատաղ սիրտը, որ վագուց էր դադարել բարախելուց, մօտեցրեց հայելին սառած, սեզմ Մթունքներին, յուսալով որ կարսդ է շընչ շառութեան որ և է նշոյլ կորզել—բայց ամէն ինչ իզուր էր . . . լիօնէլը, երեւում էր, միւանդամից էր խորասուզուել անհասանելի գաղտնիքի անդունդը—այլ ևս դարձ չկար նորա համար:

—Աստուած իմ, նորից յուսահատութեամբ հեծեծաց ուսուցչապետը և նորա ծերացած աշքերը աշտաստքի ծով դար-

ձան,—մինչեւ ուր հասցրին նորան... խեղճ,
գժբաղդ մանուկ . . .

Այդ ըոպէին մ-ը Վելիսկուրտն առաջին
քառն արտասանեց.

—Ի՞նչ է—կեանքի նշոյլ չկայ, անորոշ
արտասանեց նա:

—Չկայ—ոչ մի նշոյլ չկայ . . . և ինչ
զարհուրելի բան է այս . . . Լիւսի, հոգիս,
խնդրեմ, մի լաք այդպիս, —առանց այն էլ
սիրաս կորատում է . . . աւելի լաւ կանէք,
եթէ օգնէք ինձ նորան այստեղ պառկե-
ցնենք, այստեղ՝ գահաւորակի վրայ.—այո,
այդպէս, —այսպէս աւելի լաւ է . . . Տէր
Աստուած, այսպիսի էլ վախճան... և, ախր
մի բոլորովին փոքր երեխայ . . . Զարհուրելի
է: Հրէշային բան է այս: Վելիսկուրտ, որ-
շափ խղճում եմ ձեզ: Հիանալի մանուկ էր
նա . . .

Ուսուցչապետը երեսը շուռ տուեց և
դէմքը ծածկեց ձեռներով: Լիւսին, խո-
նարհած Լիօնէլի դիսկի վրայ, գառնապէս
լսլիս էր. նա խաչեց նորա փոքրիկ թեւերը
կրծքին, քնքանիքով ուզզեց, յարդարեց նո-
րա մետաքսանման խոպոպիկները և, յան-
կարծ, նորից բարձրածայն հեծկլաց, տպ-

շած և, միևնոյն ժամանակ, հիացած այն
արտայայտութեամբ, որ նոր միայն նկատեց
նորա սիրելի դէմքի վրայ.—ինչ որ անձա-
մօթ, խոժոռ, խիստ խորհրդաւոր բան էր ար-
տացոլում նորա դէմքի գծերի վրայ,—իսկ
շրմթունքների վրայ, կարծես, մի անբացա-
տրելի ուրախութեան լուսափայլ, արտայոյզ
ժպիտ էր զգացրում . . .

—Ժամանակաւոր խելագարութիւն . . .
պարզ է . . . հատ-հատ արտասանեց Վելիս-
կուրտը հանդիսատ ձայնով: Այսպիսի դէպ-
քեր, թէկ սակաւ, բայց պատահում են և
մանկական հասակում—և . . .

Նա յանկարծ գաղարեց խօսելուց—և
մի փոքր ցնցուեցաւ, —ինչոր թախիծ ճնշում
էր նորան, տեսնելով իւր առաջ դրուած այդ-
անշաւնչ մարմինը, —նա մինչեւ իսկ սիրտ
չարեց մօտենալ նորան, —անհուն զգուանք
էր ազգում այդ դիսկի իրեն, —նա կիամեւ-
նար շուտով, շատ շուտով թափցնել նորան—
հեռու մի տեղ . . . այնտեղ—հողի մէջ . . .
որպէս զի այլ ևս ոչ մի անգամ չյիշէր այդ
խղճալի, չարատանչ դէմքը, որի ներկայու-
թեամբ նա, ինչոր պատճառով, չէր կարու-
զանում հետեւզական և պարզորոշ կերպով

արտայայտել իւր նիւթապաշտական մեկնութիւնները,—այդ անսպասելի «դէպքի» առթիւ։ Միւնոյն ժամանակ և, նայելով իւր որդու ապականացու աճիւններին, նա զայրագին հարցնում էր ինքն իրեն—այդ ում կամքն էր, որ շարունակ իւր կամքի հակառակ էր կանգնում, ում կամքը հիմնայատակ կործանեց իւր փայփայած ցնորդները։

—Տեսէք, յանկարծ ասաց նա, ուսուցչապետ Կադմն-Հօրի ուշադրութիւնը դարձնելով պարապելու սեղանի վրայ եղած նամակների վրայ, —երկու նամակ՝ մեկը—ձեր անունով, միւսը—իմ։

Նա մի անվտահութեամբ, կարծէք ակամայից, վերցրեց այն ծրագը, որի վրայ իւր անունն էր գրուած, գաղտագողի մի հայեացք ձգեց իւր մեռած որգուն...—ինչ էր գրել երեխան նորան պյտ նամակի մէջ։ Այդեօք մեղադրում էր նորան, բացատրելով, թէ ինչն է իրեն խոկապէս ստիպել այդ դարչուրելի քայլն անելու...։

Ոչ բացարութիւն, ոչ էլ յանդիմանութիւն կար նամակի մէջ, —նա միայն հետեւալի էր բովանդակում։

«Դուք ինձ յաճախ էք կրկնել, որ մար-

դու համար բոլորովին միևնոյն է՝ թէ մահից յետոյ ինչ կանեն նորա մարմինը—հողին կյանձնեն, կայրեն, թէ ծովը կնետեն, ուստի և ես առանձնապէս կիմուկէի ձեզ, որ թոյւլատրէք իմ մարմինս թաղեն Կօմիօրտինի գերեզմանատանը։ Սաղմոսառաց Ռուլէնը սքանչելի գերեզման է փորում—ես կցանկայի, որ նա իւր աղջկայ Ժեսոմինայի գերեզմանի մօտ ինձ համար ևս գերեզման փորէր։ Ես խաղում էի նորա հետ և սիրում էի նորան։ Այժմ նա մեռել է, ես էլ ձեզ անհաճոյ չի լինիլ, որ ես պառկած կլինիմ նորա մօտ—սրովհետեւ մեռածների մասին չարժէ հոգալ։ Մեռածներին ամէնքը շուտով մոռանում են և դուք ևս ինձ կմոռանաք։ Ես չէի կարող—ձշմարիս եմ ասում, չէի կարող այլ ևս այսպիս ապրել . . .

Դարձեալ ինձ համար ցանկալի կլինէր, որ ինձ հետ թաղէիք և իմ կապտաւուն երիզը—և, եթէ հարկաւոր կհամարէր, յայտնեցէք երբ և իցէ իմ մօրս, որ ես սիրում եմ իրեն։

Զեր որդի
Լիօնէլ Վելիսկուրուս»
Մինչ նա կարդում էր, ուսուցչապետը

նեարդօրէն հազում էր և շուտ-շուտ ակնոցները մաքրելով, կարդում էր իրեն գրած նամակը:

«Սիրելի ուսուցչապետ,

Շատ, շատ շնորհակալ եմ ձեզնից, որ այժմ այնքան բարի էք դէպի ինձ—սկըզբում, գիտեմ, չելք սիրում ինձ։ Յուսով եմ, որ դուք շատ խստութեամբ չեք դատապարտիլ ինձ այն բանի համար, որ ես այլ ևս անկարող եմ այսպէս ապրել . . . Չէ որ ստիպուած պիտի լինէի երկար, շատ երկար տարիներ սովորել այն բոլորն, ինչ որ կարեար է գիտնական լինելու համար—և ես զգում եմ, որ սովորել, չիմանալով թէ ինչո՞ն հասնար եմ սովորում, այդ ինձ միայն պիտի տանջէր . . . Հասկանալի է, որ ամէն մարդու համար ամէնից առաւել կարեոր է որ և է բան գիտենալ Աստուծոյ մասին,— բայց մինչեւ անդամ դուք խոկ չելք կարողանում ոչ մի բան բացատրել . . . Եթէ այդ բացատրուած լինէր, այն ժամանակ որ և է նողատակ կունենար աշխատել և խելօք, և բարի լինէր. խոկ այսպէս, հաւատացէք, չարժէ չաշչարուել—միայն իզուք ժամանակի վատնումն է դուրս դալիս . . . Այս բոլոր

բաների մասին ես շատ եմ մտածել, և այժմ, երբ ինձնից հեռացաւ իմ սիրելի մայրիկս, երբ մեռաւ փոքրիկ, սիրելի ժեռամնան, ինձ համար, կարծէք, առելի ապրասիելի եր շարունակ լսել, որ կայ միայն Հիւլէ, որի համար ամէն բան միենոյն է . . . Ես չեմ կամենում հաւատալ գորան . . . և ես կամենում եմ այժմ գնալ Աստուծոյ մօտ—Նա կը բացատրէ ինձ ամէն բան, ինչ որ այստեղ ոչ ոք չէ կամենում բացատրել ինձ,—ես չեմ զարմանայ, եթէ ես այսօր և եթ զոնկում նորան, որովհետեւ հէնց այս բողէիս, ինձ համար այնպէս զգալի է նոռարա մերձաւորութիւնը . . .

Յիշում էք, ինչպէս մենք միասին տուրում էինք չընազ կլեփերլիսում, ինչպէս մի անդամ դուք պատմեցիք ինձ Պսիխէայի և Աիրայ մասին։ Ահա, ես էլ, ինչպէս և Պսիխէան, ամէն ջանք գործ էի գնում տեսնել իմ փոքրիկ կանթեզի թոյլ, ազօտ լուսով ամէն ինչ։ Բայց այժմ, կարծում եմ, որ առելի լաւ է բոլորովին հանգցնել նորան— Աստուծային լոյն ինքը ամէն ինչ կը ուսւորէ . . .

Դուք գիտէք, թանկագին ուսուցաւ

պետս, որ այն գիտական գլուխը, որ մենք միասին ուսումնավիրում էինք, ամէնքն էլ լիքն էին հակասութիւններով—մի քանիար մի բան են ապացուցանում, միւսները ուրիշ բան, իսկ սմանկը հերքում են թէ մէկը և թէ միւսը, այնպէս որ մարդ ստիպուած է լինում անվերջ տաճիուել, վրդովուելով ամէն տեսակ յիմար, անմիտ փաստաբանութիւններից և երբէք չհասնել այն բանին, որին ծարաւի է՝ հասկացողութիւն ունենալ Աստուծոյ մասին . . . իսկ ես, հէնց նորա համար եմ կամենում գնալ նորա մօտ, որ զգում եմ, թէ նա գոյութիւն ունի . . . Սիրելի, պատուական ուսուցչապետ, լաւ խորհնեցէք այդ մասին և վերջնականապէս մի վճռէք — թէ կայ միայն Հիւլէ՛ Տեսնում էք, որ դուք ինքներդ անդամ բոլորովին հաւատցած չեք, որ Աստուած չկայ — և եթէ նա կայ — և ապրում է նա իւր սքանչելի օթևաններում, և մեր կենդանի հոգին, մահուանից յետոյ՝ հրեշտակի պէս նորա մօտ է սաւառնում, — ապա ես այժմ կսպասեմ ձեզ այսուեղ և այնչափ ուրախ կլինէի, ձեզ նորից տեսնելու — Սկզբում ինքս էլ չեի սիրում ձեզ — բայց կլեվերլի ձեզ շատ,

շատ սիրեցի՛ ես մինչև անդամ կամենում էի խնդրել՝ հօրս, որ իրաւունք տայ ուսամանս բոլոր տարիները ձեզ հետ անցնեմ, — բայց երբ մեռաւ փոքրիկ Ժեսմինան, ամէն ինչ փոխուեցաւ իմ մէջու, — չեմ կարող նառաստալ, որ յանկարծ մի այդպիսի չքնաղ արարած բոլորովին շինի, — որ Ժեսմինան գոյութիւն չունի — ոչ մի տեղ — և ես կարծում եմ, որ Աստուած բարի է, և կասէ ինձ . . . Եւ այսպէս, մնաք բարեւ, սիրելի, թանկագին ուսուցչապետաւ եթէ դէպէ լինի, որ կրկն փոքր մանսւկների հետ պարապէք, ես կարծում եմ, որ ամէնից լաւն այն կլինէր, որ դուք սովորեցնէլիք նոցահաւատալ Աստծոնն, — այն Աստծուն, որ ամէն ինչ ստեղծել է և սիրում է ամէնքին և ինքը կբանայ մեր առաջ, ժամանակին, ստեղծագործութեան հրաշալի և մեծ խորհուրդը. — այն ժամանակ որչափ առաւել երջանիկ կապրէին նոքա . . . իհարկէ, դուք այս բոլորը լաւ կորոճաք, բայց և այնպէս, իսկը իմ, չմոռանաք այս. երբ կակսէք մի ուրիշ երեխայի հետ պարապէլ, թող նա ես այնպէս դժբաղդ շինի՝ ինչպէս ես: Կրկն և կրկն յայտնելով ձեզ իմ շնորհաւ

կալիքս այն բարութեան համար, որ ունէիք
գէպի ինձ,

մնամ երախտապարտ ձեզ, ձեր սահիկ
լիօնէլ վելիսկուրուս:

Ի պատիւ ուսուցչապետի պէտք է առել,
—որ նա չէր ամաչում այն արցունքներից,
որ անընդհատ, մէկը միւսի յետելից, գլոր-
ւում էին նորա կնճիռներով ծածկուած
գէմքի վրայով, մինչդեռ նա կարդում էր
տանջուած մանկական հոգու այդ տարօրի-
նակ, հոգեվարքից առաջ գրուած խսուու-
վանութիւնը, որ այնքան անմեղ կերպով
արտայայտում էր իւզ դժգոհութիւնը մարդ-
կային անդժութեան գէմ և իւր յոյսը գէ-
պի անցյատ, բայց հոգով զգացուող Աս-
տուածը: Աչքերը սրբելով իւր մեծ, գունա-
ւոր մետաքսէ թաշկինակով, նա դարձաւ
գէպի Վելիսկուրով և խորին վշտակցու-
թեամբ նայեց նորան: Վելիսկուրով կանգ-
նած էր անշարժ, աչքերը յառած իւր մե-
ռած որդուն: Զգալով ուսուցչապետի իւր
վրայ դարձրած հայեացքը, նա մի տեսակ
շփոթութիւն զգաց և հանդարտ ու ծանր
ասաց.

—Զարմանալի է մահուանից յետոյ

նմանութեան այս արտայայտութիւնը: Մինչ
որ աստիճան այս մահուան, այս րոպէիս,
յիշեցնում է իւր մօքը: Կարծէք՝ մի ինձոր
լինին միջից կէս արած,—կատարելապէս նո-
է: Ամէն ժամանակ էլ խենթութեան մի
դիծ կար նորա մէջ,—և սա էլ իւր կեանքը
վերջացրեց կատարեալ խելագարութեամբ:
Մօր հակումնեցը միշտ ստորին կաշդի էին,
չին համապատասխանում իւր հասարակա-
կան բարձր գիրքին և սա էլ իւր մահուան
նից աւատջ ինչ-որ փոքրիկ գեղջկուհու, աղ-
քատ ժամկոչի աղջկայ մօտ թաղուելու ցանա-
կութիւնից լաւագոյն ցանկութիւն չունեա-
ցաւ: Իհարկէ, այդպիսի ցանկութեան ես ոչ
մի նշանակութիւն չեմ տալիս,—մարմինը
կուղարկուի մեր ժառանգական կալուածը
և կթագուի տոհմական գամբարանում:

—Վելիսկուրուս, ամաչեցէք ձեր այդ
խօսքերից, բուռն զայրոյթով և տաքացած-
բացադանչեց ուսուցչապետը: Դուք, ինչպէս
երեսում է, սիրու էլ չունիք... ինչպէս կա-
րող էք, նոյն խկ ձեր մեռած զտակի
գիտակի առաջ, մինչև անգամ ձեր մոքովն
անցնել մերժել նորա խոնարհ, չնչին խըն-
դիրը: Ձեզ համար միննոյն չէ, թէ ինեղն

Երեխան սրտեղ թազուած կլինիւ իւր ամշը բողջ կեանքի ընթացքում դուք ոչ մի բանով չուրախացրիք նորան. — Հեղ, համանդ, նա հլու հպատակութեամբ կատարում էր ձեր չափազանց խստասիրտ պահանջները. — մինչև իսկ ես, որ ամբողջ Անգլիային յայտնի եմ իմ կրթութեան եղանակի խստութեամբ, ես ապշած էի մնացել ձեր ծրագրի խստութեամբ, որով ձեր որդին պիտի դաստիարակուել և սնիլիսգործնի էի համարում այն... ես վճռեցի, և բժիշկ Գարտլէյի հետ ունեցած խօսակցութիւնն առաւել ես ամրապնդեց իմ որոշումն, չթողնել, որ դուք տանչէք այդ երեխային, — որ պահեմ, պահպանեմ այդ քնքոյց, փոքրիկ արարածը, — և յիշրաւի ես ամէն կերպ պահպանում էի նորան, — բայց, Աստուած իմ, ես գլխահորը աչքաթող արի... թող այդ յանցանք չհամարուի ինձ համար . . .

— Ես խիստ գարմացած եմ, պարոն ուսուցչապետ, ձեզնից այսպիսի խօսքեր լսելուս համար, զսպուած արտասանեց Վելիու կուրտը: Ենորհ արէք, հանգստացէք: Դուք, յիշրաւի, չափազանց զիջող և բարի էիք դէպի որդիս և, իհարկէ, եթէ այդ ձեղ հա-

ճոյք կարող է պատճառել, — ես կկատարեմ նորա խելապատակ ցանկութիւնը, — բայց այդպէս չհամարել այդ ցանկութիւնը՝ անկարող եմ: Ես կարծում եմ, որ ես պիտի գնամ բժիշկ Գարտլէյի մօտ և նորան յանձնեմ այս դործը: — Իհարկէ, քննութիւն կնշանակուի, — խիստ ձանձրալի է այդ բոլոր դործողութիւնը:

Ուսուցչապետը համբերութեամբ լսեց նորան մինչև վերջը և դառնութեամբ հանգարտորէն ասաց.

— Վելիսկուրտ, դուք երբէք չեք սիրել ձեր որդուն . . . եթէ սիրէիք, անկարող կը լինէիք այժմ՝ այդպէս խօսել . . . և նա մատնացոյց արեց գահաւորակը, որի վրայ հանգչում էր, կարծէք, հանգիստ քնած մանուկը:

Վելիսկուրտը սառնութեամբ և հանգիստ պատասխանեց.

— Սիրոյ մասին կարիք չկայ յիշատաւկել, — հօր և որդու մէջ խիստ քնքալական զգացումների մասին խօսք լինել չէ կարող: Յիշրաւի, ես որդուցս շատ բան էի սպասում, — բայց այժմ՝ կատարելապէս խօստավանում եմ: որ ժամանակին խիստ հիսութափուած պիտի լինէի նորա վերաբերու-

թեամբ . . . նորա խոհական կարողութիւնը
թոյլ էր,—ուստի և, առանց որ և է պատ-
ճառի, իրեն կեանքից զրկեց,—և, գուցէ,
աւելի լաւ բան անելու էլ ընդունակ չի-
նէր . . . Սակայն, ժամանակ է բժիշկ Գարտ-
էյին որոնել . . .

Առանց շտապելու, սովորական հան-
գարտ՝ քայլերով ելաւ սենեակից։ Նորա
պաղ, քարասիրտ գէմքն արգէն ամէն ինչ
ասում էր իւր վերաբերութեամբ — ուրիշ
մեղադրանք պէտք չէր . . .

Ուսուցչապետ Կաղմօն-Հօրը մեաց միայ-
նակ,—հանգիստ, մի առանձին երկիւղա-
ծութեամբ մօտեցաւ նա փոքրիկ նեցեա-
լին և խորասուղուած ծանր խոհերի ան-
գունդի մէջ, շուտով մոռացաւ բոլորովին
թէ իրեն, թէ իւր բոլոր «աեսութիւնները»։
Սիրով և քնքանքով նայում էր նա մանկա-
կան այդ փոքրիկ գէմքի հեղահամբոյր գծե-
րին և կիսաձայն խօսում էր։

—Առանել շահ շահ անել անկարող
էլ . . . Այս, գուցէ, և հէնց այդպէս էլ է . . .
խեղճ, խեղճ մանուկ,—այսպիսի հօր, այս-
պիսի մօր հետ, և այսպիսի դաստիարակի
գեկավարութեամբ . . . ով գիտէ որչափ մեծ-

է իմ սեփական մեղքս ևս նորա առաջ . . .

Այդ բոպէին տեղի անեցաւ մի սար-
սափելի, մի կատարելապէս զարմանալի
բան, — ուսուցչապետը իւր թեւերի վրայ առաւ
մեռած մանկանը, բարձրացրեց, քնքու-
թեամբ իւր կրծքին սեղմեց և, համբուրե-
լով նորա պաղ փոքրիկ գլուխը, բարձրածայն
ասաց.

—Այս, Իիօնէլ, ես խոստանում եմ
այդ: Ես խստանում եմ, ի սէր քո, որ եթէ
առիթ ունենամ մի ուրիշ մանկան գառ-
տիարակ լինելու, ես վազորօք կմտածեմ,
թէ արգե՞՞ք առաւել լաւ և առաւել բանա-
ւոր չի լինիլ, որ նախ և առաջ նորան Սիրոյ
Աստուծոյ գիտակցութիւնը ներշնչենք և
իմացնենք, — իսկ յետոյ — յանձնել իրեն հէնց
այդ Սիրոյ խնամքին և գիտութեան . . .





ԺԶ.

ԳԺԵԱՂԴ մանկան ողբերգական մասնուան լուրն իսկոյն տարածուեցաւ ամբողջ գիւղում և կարեկցութեան զգացումը, որ յատուկ է մարդկային հոգուն, ինչպէս ելքքարական հոսանք, անցնում էր տնիցտուն, սրտէ ի սիրտ, այնպէս որ ամբողջ կօմօրտինում չկար ոչ մէկը՝ այր թէ կին, թէ մանուկ, որ անհունս յուզուած և ցաւած չլինէր խեղճ Լիօնէլի անժամանակ մահուան վրայ:

Քննիչ յահճնաժողովի կաղմած արձանագրութիւնն ասում էր, որ «ինքնասովանութիւնը կատարուել է խելադարսութեան բոպէին»: Բժիշկ Գարտէլզը, որ իբրև քննիչ

կանչուած էր այնտեղ, յայտնեց, որ երեխային այդ սարսափելի ոճիրը գործել է տուել ուղեղի կատարեալ յոգնածութիւնը, որ տուածացել է նորա ոյժերից շատ վեր մտաւոր աշխատութիւններ ունենալուց: Այդ կարծիքը հաստատեց նոյն խոկ ուսուցչապետը, բայց նա անյարմար համարեց նոյն խոկ այդտեղ արտայայտել այն խորին համոզումը, որ արդէն կաղմուած էր նորա հոգու մէջ և որ աւելի ու աւելի տիրում էր նորան, որ—դաստիարակչական գործի մէջ կրօնական սկզբունքների կատարեալ բացակայութիւնը, եւ ոչ թէ մի այլ բան, այդ մատաղ կեանքը կորսոփ հացըրեց:

Վերջապէս հասու և թաղման առաւտութը Ամբողջ Կոմիորտինը, մեծից մինչեւ փոքր, մասնակցում էր Լիօնէլի յուղարկաւորութեանը:

Ռուբէն Դէյլը իւր թանկագին ազջկայ գերեզմանի մօտ պատրաստեց մի նոր, փոքրիկ գերեզման ևս, և այժմ՝ յենուած իւր թիակին, արցունքներով ողողած աչքերով, խորին երկիւզած ուշադրութեամբ նայում էր գիւղուած ամբոխի վրայ և յուղուած լուսմ էր, թէ ինչպէս ալեզարդ քահան

նան, յուղումից յաճախ ընդհատուող ձայշ նով, մեղմ և հանգարտ կարդում էր այնքան անդամ լսած, վեհ-յաղթական բառերը:

— «Այսպէս և մեռեաների յարութեան ժամանակը՝ Սերմանեւում է ապականացու և յարութիւն է առնում անապական, սերմանեւում է անարդանքով և յարութիւն է առնում փառքով. սերմանեւում է անզօր և յարութիւն է առնում զօրութեամբ. սերմանեւում է մարմին չնշաւոր և յաջութիւն է առնում մարմին հոգեոր . . . եւ երբ այս ապականացուն կզգենու անապականութիւն, և այս մահկանացուն կզգենու անմահութիւն, այն ժամանակ կկատարուի գրուածը, թէ Մահ, ուր է քո խայթոցը, դժնիք, ուր է քո յաղթութիւնը»:

Ուսուցապետ Կադմօն-Հօրը կանգնած էր կոր ի գլուխ, մի առանձին քնքշութեամբ էր նայում այն տեղին, ուր, ամբողջապէս ծաղիկների մէջ թաղուած, հանգչում էր Լիօնէլի փոքրիկ գաղաղը. Ծաղիկների ծով էր գա, ամբողջ գիւղը այդ ծաղիկներով իւր սիրոյ առհաւատչեան էր ձօնում սիրելի մանկան հողին:

ամէնից աւելի աչքի էր ընկնում՝ յարտղուարծ, անուշաբոյր այծտերկիկների հիանալի գրասանզը, որ հիւսել էր բարեսկրտմու Պէնը, իւր պարտիզի մինչև ամենաշվերջին ծաղիկները քաղելով. — թշուառ «խենթն» ևս բերել էր իւր նուերը — հրաշալի սպիտակ վարդերի մի սքանչելի ճիւղ. — իսկ Ռուբէն Դէյլը գերեզման իջեցրեց սպիտակ յասմիկի մի ոստ՝ մի ամենահամեստ, բայց իւր խորհրդաւոր խմասով ամենաթանկագին ընծայ . . . ծերունի, ալեւ զարդ քահանան շաշունակում էր կարդալ և ուսուցչապետի աչքերը մինեցին արցունքների շիմերից, — նա իւր ամբողջ էռութեամբ մարմնացած լուզութիւն էր դարձել — և իւր մէջ ամփոփում այն մեղմ խօսքը, որ զալուած հեծկանքի միջից լուսում էր . . .

— Այն յուսով, որ մեր Տէր Յիսուս Քրիստոսը իւր անձառելի գթասրտութեամբ իւր մէջ է ընդունել այժմ իւր հանգուցեալ ծառայի Լիօնէլ մանկան հողին, մենք նորամարմինը յանձնում ենք հողին . . . Մէնք անյոզգոզդ հաւատում ենք մեռեաների յարութեանը և յաւիտենական կեաննըին՝

փափկութեան դրախտում, արդարների օթեանում, այնտեղ, ուշ Աստուածութիւնն է լուսաւորում»:

Մ-ը Վելիսկուրաը արհամարհանքով յօնքերը կիտեց—նորա սիլտը չարութեամբ էր վառւում... նորա համար անտանելի էր այն բոլորը, որին իւր կամքի հակառակ մասնակցում էր, իւր համար ատելի եկեղեցական ծխակատարութիւնը, այն՝ որ իւր որդու մարմինը հողին էր յահճնուում, նուրան կատաղեցնում էր։ Եւ երբ «Հայր մեր» տոելու ժամանակ ամենքը ծնկաչոք գետին խոնարհուեցան, նա հպարտութեամբ ուղղուեցաւ ամբողջ մարմնով և արհամարհու հայեացը նոյեց ուսուցչապետին, որ իւր զառամեալ հասակի պատճառով անկարով լինելով ստքի դալ և չոքեր բոլորովին խոնարհել էր գլուխը՝ ի նշան երկիւղածութեան։

Վերջապէս ոլաշտամունքը վերջացաւ Բարեսիրտ ծերուկ քահանան մի առանձին աղերսանքով և սրտայոյդ ձայնով արտասանեց սովորական օրհնութիւնը,—օրհնեց և կնքեց գերեզմանը, — ապա, թողնելով որ Ռուբէնը վերջացնէ գերեզման ծածկելու

գործը, ծերուկի անհաստատ քայլերով դիմեց դէպի եկեղեցիւ Փողովուրդը լուսւթեամբ յրուիլ սկսեց,—ոմանք գաղտագողի իրենց արցունքն էին սրբում, վերջին հայեացք ձգելով փոքրիկ գերեզմանի վրայ, ոմանք, ի թիւս որոց և մ-ո Պէյնը, դեռևս գառնագին լալիս էին, ուրիշներն աշխատում էին հանդստացնել թշուառ Լիւսիին, որն այնպէս էր լալիս, որ կարծէր, իւր սիրան էին կտրտում։ Նատերն էլ շշնչալով իրար հազորդում էին այն վհատեցոցիչ տպաւորութիւնը, որ թողել էր մ-ը Վելիսկուրաը ամենքի վրայ՝ թաղման հանդիսի ժամանակ, — իսկ «իւենթ»ը, մեն-մենակ նըստած վանդակապատի տակ, չեր կամնենում միսիթարուիլ . . .

— Ոչ, ոչ, անկապ-անկապ խօսում էր նա քթի տակ և պատասխանում նոցա, որմանք համոզում էին տան գնալ, — ես այստեղ կմնամ . . . կմնամ երեխաների և վարդերի մօտ։ Բոլորն էլ վարդ են . . . ամենքը երեխայ . . . ամեն բան, ամեն բան մեռաւ . . . ես նոցա մօտ կմնամ — ուրախութիւն չկայ, կորաւ . . .

Վելիսկուրաը գերեզմանատանը մնաց,

մինչեւ որ փոքրիկ հասարակութիւնը բոլոշ
րովին ցրուեցաւ։ Որդու գերեզմանի մօտ
կանդնած՝ լուռ, յառած նայում էր նորան։

Ռուբէն Դէյլը մի բողէ իւր բարի,
վշաակցող հայեացըլ նորան դարձրեց և
կարեկցութեամբ լի ձայնով, կամացուկ
ասաց։

—Թող Աստուած Ինքը գթայ ձեղ,
պարոն։ Նա ինքը միայն կարող է ձեղ
ոյժ ներշնչել այս ծանր վիշտը կը ելու
համար։

Մը Վելիսկուրտը ցնցուեցաւ, և, դառա
նալով ուսուցչապետ Կադմօն-Հօրին, գրդը ու
աւած ասաց։

—Զլինի աւելորդ մի բան է ուզում
պոկել քան ինչ որ արժէ իւր աշխատանքի
ուհամանեալ վճարը։

—Ա՞լի, ոչ, ոչ, —շտապով պատասխա-
նեց սւսուցչապետը. —ըստ երեսյթին նա
հասկացաւ Ռուբէնի ընաւորութիւնը և աշ-
խատում էր, որ նա չնկատէ Վելիսկուրտի
այդ բարսովին անաեզի վարմունքը։ Սակայն
Ռուբէնը և լոել, և ըմբռնել էր պատասխ-
ած խօսքերի իմաստը։

—Ինչպէս տեսնում եմ, դուք չհաս-

կացաք ինձ, պարոն, սկսեց նա, մի քիչ
կարմրելով և ապա շաղունակեց բոլոշովին
ազատ և այն արժանապատութեան զգա-
ցումով, որ յատուկ էր նորան։ Հինգ օր է,
ինչ եռ՝ իմ սեփական ձեռներով թաղեցի
այստեղ իմ հոգուս հատոր զաւակո և իմ
արցունքները ողողում էին նորա փոքրիկ
գերեզմանը, —և թէև դուք աղնուատոհմ
մէկն էք, իսկ եռ՝ մի խեղճ բանուոր, բայց
և այնպէս մի ընդհանուր կապ այժմ մեր
մէջ, —համանման վիշտը պէտք է իրաշ մա-
տեցնէ մեր վշտաբեկ սրտերը։ Զէ որ մեր
մանուկներն այստեղ միասին խաղում էին...
և իմ Ժեսմինայի վերջին խօսքերն էին —
«Ասացէք Լիլիպային, որ ես նորան սիրում
եմ»։ Դժբաղդ մանկան ցանկութիւնը՝ թա-
ղուիլ Կօմիօբախնում — նորա մօտ, պարզ
ապացոյց է, որ նա ևս մտածում էր նորա
մասին, երբ յօժարակամ իւր համար այդ-
զարհուրելի մահն էր որոնում... Աստուա-
ծային ճանապարհները — մեր ճանապարհ-
ները չեն, պարոն, — ինչ-որ խորհրդաւոր
բան է կատարուել այս երկու մանկական
հոգիների մէջ... մեզ անյայտ է այդ, բայց
յայտնի է Ցիբոջը, Որ երկուսին ևս իւր

մօտ կանչեցւ նորա հեռացան, գնացին մեզ
նից . . . դառն է մեզ համար առանց նոցա
ապլել . . . գիտեմ, ինձնով եմ չափում, թէ
մինչ որ սատիան դառն է,—ուստի և հա-
մարձակութիւն ստացայ ասել ձեզ, թէ—թող
Աստուած ինքը գթայ ձեզ,—դորանով ես
չեի կամենում ձեզ վիրաւորել,—այլ միայն
արտայայտել համանման հանդամանկներում
գտնուած մի մարդու ի որտէ վշտակցու-
թիւնը միւսին:

Վելիսկուրտաը զարմանկըով լսում՝ էր այս
գեղջուկի երկար բանախօսութիւնը, այդ
ժամկոչի ճառը, որ համարձակուում էր իրեն՝
Վելիսկուրտին մնարանոր համարել . . . և,
գոռող հայեացք նետելով նորա վրայ, սառ-
նութեամբ արտասանեց.

—Ենորհակալ եմ: Գուցէ ձեր մտադրու-
թիւնը շատ գովելի է,—բայց իմացէք, որ
ես չեմ ընդունում, որ գոյութիւն ունին
«Աստուածային ճանապարհներ», և այս բո-
լոր պատմութեան մէջ ամենելին Աստուածոյ
մասնակցութիւն չեմ տեսնում—այն ամե-
նահասարակ պատճառով, որ—ես չեմ հա-
ւատում Աստուածոյ:

—Միթէ ինչ որ սսացիք, ճշմարիտ էք

ասում, պարոն . . . մեղմ վշտակցութեամբ
ասաց Ռուբէնը,—այդ գեղջում ես առա-
ւել ևս խղճում եմ ձեզ . . . խղճալի, յիշ-
րտի խղճալի է այն մարդը, որ Աստծուն
չէ զգում իւր հետ . . . և կեանքն էլ զար-
հուրելի է նորա համար, և մահն էլ... ինչ
անէ մեն-մենակ իւր վշտի հետ,—նու չի
հեռանայ, չի անհետանայ,—ինչ ուզում էք
ասացէք, բայց նա ձեզ հետ է,—դուք ձեր
հարազատ դաւակը թաղեցիք . . .

Վելիսկուրտը նայեց ժամկոչին, նայեց
փոքրիկ գերեզմանին և նորա արհամարա-
հոտ զթունկների վրայ հեգնական ժպիտ
խաղաց:

—Նա այնպիսի կորուստ է, որ—կարելի
է ուզգել, ես կարող եմ նորից ամուսնու-
նալ . . . Նա շուռ եկաւ և հաւասարաչափ
քայլերով գեղի գերեզմանատան գուռն
ուզգուեցաւ:

Ուստւցչապետ Կադմօն-Հօրը, բոպէա-
չափ շփոթութիւն զգալուց յետոյ, մի ձեռա-
քով վեր բարձրացրեց իւր փափուկ, հին
գլխարկը, իսկ միւսը մեկնեց Ռուբէնին:
Ռուբէնը, արցունկներ նկատելով նորա ձեռ-
բացած աչքերում, հասկացաւ բանի էուշ-

թիւնը,—և առանց շիոթուելու իւր կոշտացած, խոշոր ձեռքսվ ամուր սեղմեց դիանականի նիհար ձեռքը:

—Ես սիրում էի նորան—սիրում էի այդ փոքրիկ երեխային, —դոզդոջ ձայնով արտասանեց աւսուցչապետը, ես, որ երբէք ոչ ոքի չեմ սիրել, —սովորեցի սիրել նորան։ Բարի մարդ էք դուք, սրտապեղ էք, դուք, իհարկէ, չեք զլանալ հոգատար լինել գերեզմանին... նորա հայրն, ինչ ասել կուզէ, այլ ևս չի մտաբերիլ, և ինձ համար չափազանց ցաւալի կլինէր մոտածել, որ դժբաղդմանկան վերջին հանգստեան վայրը երեսից ձգուած է։ Եթէ որ և է ծախք պահանջուի, ես պատրաստ եմ... —բայց այդտեղ Ռուբէնը նորա խօսքը կտրեց։

—Ի՞նչ ծախք, տէր իմ. ծախք՝ միայն իմ արցունքներիս նկատմամբ կլինի, —իսկ այդ ել առաւել կնալաստէ ծաղիկների աճելուն։ Զէ որ նա բոլորտին կոզք-կոզքի է պառկած իմ ժեսմինոյի հետ, —և քանի որ ես ապրում եմ և իմ ձեռներս չեն զլանալ ինձ ծառայելուց, նոցա թանկագին փոքրիկ գերեզմանները դեղեցկութեամբ կպճնուին։ ծախքս կլինի՝ միայն արցունք ու ոէր...

Աւսուցչապետը նորից ձեռք մեկնեց Ռուբէնին և Ռուբէնը կրկին ամուր սեղմեց այդ ձեռքը։

—Մնաք-բարեւ Աստուծոյ օրհնութիւնը ձեղ վրայ լինի, ասաց նա։

—Տէրը պահապան լինի ձեղ, պատուիսանեց Ռուբէնը։

Եւ նորից, մի վերջին հայեացք ևս ձգեւով սիրելի գերեզմանի վրայ, աւսուցչապետը մոտախոհ իւր միայնակ ուղին բռնեց։

* * * * *

Երեկոյանում էր Գերեզմանատանը վաշզուց էր գատարկուել։ Միայն եկեղեցում գես ևս մնացել էր երգեհոն նուազովը, որ կիբակնօրեայ ժամերգութեան էր պատրաստում, —և «Յո հրաշալի օթեանները կմոնեմ...» քազզրածայն, խանդապատանօք լի մելամազիկ հնչիւնները գալիս, փարում էին նոր բարձրացած փոքրիկ հողաթումը — գերեզմանին, որի վրայ, իբրև հրեշտակային գայխան՝ փռուած էր երկարուղէ ձիւնափայլ շուշանի ծաղկած ցողունը։ Համանման մի ուրիշ ցողուն զար-

դարսւմ էր Ժեսմինայի գերեզմանը, — իսկ
գերեզմանների տրանքում, թփերի մէջ
թագնուած մշտհաւը երգում, գայլայլում:
Էր իւր թախծալից երեկոյեան մեղեղին,
մինչեւ որ տրել մայր մտաւ և գիշերը վրայ
հասաւ:



847

15m

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0266458

